G. 57

388

910.4
Ա-58
W-13383
ՀԱ
34394
730

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 188

ԱՆԴՐԱՆԻԿ

ՏԷՐՍԻՄ

ԱՌՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՏԵՂԱԿԻՈՒԹԻՒՆ

Ի Զրոյց ուսուցչի Զեղուսի Թարգմանեալ գրաբարէ ի հայոց լեզու Հաւատարմութեամբ.

2.50 18 24 32

ԹԻՖԼԻՍ

Արազատիպ Մն. Մարտիրոսեանցի

ՄԻՔԱՅԵԼԵՆ ՓՈՂՈՑ № 81.

1900

388-ш

Дозв ценз. Тифлисъ, 22-го Августа. 1900 г.

290-2013

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

ԴԷՊԻ ՑԷՐՍԻՄ

ԸՆԹԱՑԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

Ա

ՔՂԻ-ՂԱՍԱՊԱՅԷՆ ԱՂԹՈՒՆ ՀԻՍԷՑՆ

Գարնանային պարզ գիշեր մ'էր. լուսինն իր արծաթափայլ շողերով կլուսաւորէր Քեղուայ սարերն ու ձորերը, որոնց թարմ բուսականութիւնը գիշերուան մեղմ զեփիւռին առջև խուլ սօսափիւն մը կարձակէր և որոնց անճառելի տեսարաններուն առջև մարդ կաքանչանար ու պահ մը կվերանար՝ ինք զինքն այս աշխարհէս դուրս կարծելով։

1888 թուականն էր այդ, կենացս տասն և չորրորդ գարունը։ Կուրծքս անհամեմատ կրարախէր, կցանկայի ուղևորել ու ուղևորել աշխարհի մէկ ծայրէն միւս ծայրը։ Ձիերն արդէն պատրաստ էին և, վերջապէս, կրկին պիտի ուղևորէինք, բայց այս անգամ դէպի Տէրսիմ, դէպի անծանօթ աշխարհ մը, որի մասին թէև շատեր կխօսէին, բայց քիչեր գիտէին ու տեսած էին զայն։

Ուղևորութեան միակ ընկերս, որ միանգամայն հօր մը պէս կսիրէի՝ «գնանք» ըսաւ ու ես ակնթարթի մը մէջ ձիուս վրայ նստած էի։ Չի նստաւ և ինք, ընկերս, և բոլէապէս հրաժեշտ տալով Քեղուայ Ղասապային՝ յառաջ քշեցինք անցանք հայոց

թաղը, ուր ձայն չչուկ չկար. անցանք պազարը, ուր գիշերապահներն արագ-արագ կսուլէին միմեանց. անցանք թրքաց թաղը, ուր բոլորովին լռութիւն կը տիրէր, և վերջապէս անցանք քաղքի կամուրջը, որ ձգուած էր յորդառատ վտակի մը վրայ, որ Ղասապան երկու մասի բաժնելով՝ սրընթաց կթափէր Լըշըգ-չայի մէջ։

Ամբողջ գիշերը ճանապարհորդեցինք, մինչև որ արևածագին հասանք Սերկեւիլիկ հայաբնակ գիւղը։ Գիւղը մօտաւորապէս կլինէր 250—300 տուն, որոնցմէ 5—6 տունը միայն քրդեր էին։ Գիւղին մէջ կը տեսնուէր եկեղեցի մը և նորան կից ուսումնարան մը։ Գիւղի մէկ կողմը կտեսնուէր խիտ անտառ մը, ուրկէ գիւղացիներն իրենց վառելափայտը կկտրէին, իսկ միւս կողմը՝ փոքրիկ դաշտագետին մը, ուր գիւղացիներն ունէին բաւականաչափ վարելահողեր։ Գիւղին առջև ջրակի մը մօտ կանգ առինք, ուր գիւղացի կանայք իրենց երեսները կլուային և շտապ շտապ կուժերը ջուր կլեցնէին տուն տանելու համար։ Կանանց մէկն իր երեսը ծածկելով համեստաբար՝ մէկ-մէկ թաս ջուր տուեց մեզի։ Ջուրը խմեցինք և հեռացանք Սերկեւիլիկ գիւղէն, որն արդարև սերկեւիլի մը ձևն ունէր։

Սերկեւիլիկ գիւղէն հեռանալուց երեք ժամ յետոյ հասանք Աղթուն-Հիսէյն գիւղը, որ զարդարուած էր պտղատու պարտէզներով ու սակաւ ինչ այգիներով։

Գիւղը բաղկացած էր մօտաւորապէս 300 տուներէ, որոնց 8—10 տունը քրդեր էին, իսկ միւսը՝ հայեր։ Հայերն ունէին եկեղեցի մը ու փոքրիկ ուսումնարան մը. այս վերջինը սակայն, ուսուցիչ

չունենալուն պատճառով փակ էր։ Գիւղը բաւական ճոխ կերևէր, և բնակիչներն՝ առանց բացառութեան, բոլորն ալ երկրագործութեամբ կզբաղէին, որովհետև գիւղի շուրջը կտեսնուէին բաւականաչափ վարելու հողեր, թէև մեծ մասամբ անջրդի։

Գիւղը զարմանալի դիրք մ'ունէր. նա չորս կողմերէն շրջապատուած էր անտառապատ բարձր լեռներով, որոնք կձևացնէին իրենց մէջ քառակուսի ընդարձակ փոս մը, որուն ճիշտ մէջտեղը՝ բլրակի մը վրայ հաստատուած էր գիւղը։ Նորա հիւսիսային կողմէն երկու-երեք փոքրիկ վտակներ գիւղի շուրջը բոլորուելով՝ կհոսէին դէպի հարաւ։ Եթէ գիւղի հարաւային կողմը՝ սոյն վտակներու անցքերը փակուէին՝ անտարակոյս մօտ ժամանակի մէջ Ալթուն-Հիւսէյնի տեղը կգոյանար լճակ մը, որուն մէջ անշուշտ գիւղը կլինէր փոքրիկ կղզի մը։

Այս գիւղի քահանան, որ Կ. Պոլսոյ մէջ ուսում առած և բաւական զարգացած էր, երբեմն դատ բացեր էր Դերջանի և Խուզուչանի զանազան քուրդ պէկերու դէմ, որոնք Խուզուչանի հպատակութենէն յետոյ սկսած էին ընդհանրապէս տեղացի և մասնաւորապէս Ալթուն-Հիւսէյն գիւղի հայերուն նեղել, հարստահարել և գրաւել նոցա հողային կալուածները։ Քահանան դիմելով Կ. Պոլիս Հայոց պատրիարքարանին և Բարձրագոյն Դուռն՝ սկսեց պաշտպանել ազգային և եկեղեցական (Խուզուչանի համար միայն) բոլոր շահերը, որոնց խիստ մօտալուտ վտանգ մը կսպառնար։ Նա սոսկ դիմումներով չբաւականանալով՝ գնաց ուղղակի Կ. Պոլիս և այնտեղ սկսեց անձամբ պաշտպանել իր բաց արած դատը։ Այդ միջոցին այլևս քահանային և

Բ. Դուան մէջ ինչ դարձաւ, ինչ չդարձաւ՝ չգիտենք. միայն այսչափ գիտենք, որ Բարձրագոյն Դուռը քահանային պահանջներուն մասամբ գոհացում տալով՝ վերադարձուց նրան իր տեղը, որ սակայն իր տեղն հասնելուց անմիջապէս յետոյ դատ բացեց ուղղակի Շահ-Հիւսէյնի պէկ Բ.-ի դէմ (1877 թուի պատերազմէն յետոյ)։ Նա երկար ժամանակ մաքառեցաւ Շահ-Հիւսէյնի դէմ, և վերջապէս քանիցս Կ. Պոլիս երթալ-գալով հանդարտեցաւ, մինչև որ Օսմանեան կառավարութիւնը Շահ-Հիւսէյնին զանազան ձեակերպութիւններով հրաւիրեց յերզնկա և այնտեղ բանտարկեց նրան։ Շահ-Հիւսէյնն երկար ժամանակ բանտարկուած մնալով՝ վերջապէս կարողացաւ իր հարիւր հազար ոսկիներով կաշառել Օսմանեան կառավարութեան բարձրաստիճան բոլոր պաշտօնեաներուն և ազատուիլ՝ իր տունը վերադառնալու պայմանով։ Սակայն նա Երզնկայէն դեռ ճանապարհ չելած՝ բարձրագոյն հրամանով *գայմագամ* նշանակուեցաւ ընդհանուր Խուզուշանի և վերադարձաւ իր տունը՝ օսմանցի հարիւր զինուորներ իր տրամադրութեան տակ ունենալով հանդերձ։

Անցանք գիւղի մօտով և տասը բոպէի չափ գնացինք հիւսիս, ուր զառիվայրի մը վրայ շինուած էր Շահ-Հիւսէյնի պէկ Բ.-ի եղբօր Իպրահիմ պէկի խօնախը։ Խօնախի դուռն առջև իջանք։ Երկու ծառաներ դիմաւորեցին մեզի, որոնցմէ մէկը ձիերը քաշեց, իսկ միւսը առաջնորդեց մեզ սէլամլըգ-օտասին (դահլիճ կամ հիւրերու ընդունարան), ուր ուրիշ ծառաներ, ըստ տեղական սովորութեան, սառն ջրով մեր ոտքերը լուացին և ապա թէ հրամցուցին գեղե-

ցիկ գորգերու վրայ նստիլ հանգստանալ։ Նոքա մեզի մէկ-մէկ շէքէր-շէրպէթի (շաքարով օշարակ) տուին և յետոյ գնացին մեր մասին լուր տուին իրենց պէկին։ Հինգ րոպէ չանցած՝ Ապաս պէկն ու Զահ-Հիւսէյնի պէկը (Իպրահիմ պէկի որդիքը) ներս եկան և սիրալիր ընդունելութիւն մը ցոյց տուին։ Ծառաները սուրճ բերին, որու հետ կար նաև վարդի անուշ։ Սուրճը խմելուց յետոյ երկու պէկերը հեռացան՝ մեզ հանգիստ թողնելու համար։ Երրոր մենակ մնացինք՝ ընկերս ըսաւ. «Սոցա հայրն, Իպրահիմ պէկը՝ վաղուց մեռած է։ Նա երկու կին ունեցեր է, որոնց առաջինէն ծնած է Ապաս պէկը, իսկ երկրորդէն՝ Զահ-Հիւսէյնի պէկը. այս վերջինը 15 տարեկան է, իսկ առաջինը 17 տարեկան։ Զահ-Հիւսէյն ունի իրմէն փոքրիկ քոյր մ՝ալ, Էմիշ անունով, որ 13 տարեկան է»։

Նա սկսեց ի միջի այլոց կարգ մը խրատներ տալ ինձ, որ եթէ քիչ յետոյ դիս կանանոց հրաւիրեն ու զանազան բաներու մասին կանայք ինձմէն հարց ու փորձ ընեն՝ պատասխանեմ այսպէս և այնպէս։

Ճիշտ այս խօսակցութեան ժամանակ երկու ծառաներու առաջնորդութեամբ ներս մտաւ գեղուհի մը. դա Զահ-Հիւսէյն պէկի փոքրիկ քոյրն էր—Էմիշը, որի մասին խօսեցաւ ընկերս։ Նա քաղաքավարութեամբ բարեւելով մեզ՝ նստեցաւ և սկսեց խօսել սովորական բաներու մասին։ Նա երեք-չորս րոպէ խօսակցելէն յետոյ, ըսաւ ընկերոջս. «Թոյլ տուէք այս երիտասարդին—ցոյց տալով դիս—որ ինձ հետ կանանոց գայ, որովհետև մայրերս ցանկութիւն յայտնեցին տեսնել սրան»։

Թոյլ տուաւ ընկերս, և ես հետևեցայ օրիորդ Էմիշին, որն առաջնորդեց զիս երկյարկանի տան մը դռան առջև, որ սէյամլըգ-օտասիէն 30—40 քայլ հեռու՝ դէպի արևմտեան կողմն էր. դա հէրամլըգն էր (կանանոցը)։ Մտանք ներս ընդարձակ բակի մը մէջ, ուր կտեսնուէին անճաշակ կերպով դասաւորուած ծաղկանոցներ, քանի մը պտղատու ծառեր և ի միջի այլոց, բակին մէջ կարածին խառն ի խուռն նաև շատ մը հաւեր, հնդկահաւեր, սագեր, բադեր և վերջապէս քանի մը ընտելացած վայրի կենդանիներ։

Օրիորդն այս ամենը մէկիկ-մէկիկ ցոյց տալով՝ ինձ առաջնորդեց քարէ սանդուխներէ մը վեր, ուր կանանոցի տիվան-խանէն (դահլիճ) էր։ Սա քառակուսի խոշոր սենեակ մ'էր, ճերմակ գաճով ծեփուած, որի ներսը զարդարուած էր ամենագեղեցիկ գորգերով ու կապերտներով և կահաւորուած էր արևելեան ճաշակով։ Պատերէն վար կախած էին լաւ-լաւ արծաթապատ դէնքեր և ի միջի այլոց փոքրիկ հայելի մը, որուն առջև, երկար գամերու վրայ՝ հորիզոնական դիրքով շարուած էին արծաթ թելերով հիւսուած ծխախոտի երկար-երկար չպուխներ։ Սենեակի երկու կողմերը կրացուէին երկու փոքրիկ դռներ, վարագուրուած մետաքսեայ վարագոյրներով, որոնք խանումներու մէկին ու միւսին ննջարաններն էին։ Երկու խանումները նստած էին սենեակի վերևի կողմը, որոնց՝ լեռնցու միայն յատուկ հոկայական հասակները և գեղեցկութիւնները կմրցէին միմեանց հետ։ Սոցա մէկը Ապաս պէկի մայրն էր, իսկ միւսը՝ Զահ-Հիւսէյնի պէկին ու օրիորդ Էմիշին։

Մտնելով սենեակէն ներս՝ քաղաքավարութեամբ

մը բարևեցի երկու գեղեցկուհի խանումներուն, որոնք, սակայն, ընդունելով բարևս՝ թոյլ չտուին իրենցմէ հեռու նստիմ, այլ ուղղակի իրենց երկուքի մէջտեղը հրաւիրեցին։ Նստեցայ։ Բալի օշարակ բերին խմելու, որը խմելուց յետոյ՝ խանումներն, ի միջի այլոց, հետաքրքրուեցան քաղաքի կեանքով։ Մանրամասն տեղեկութիւններ պահանջեցին թրքուհիներու և հայուհիներու կեանքէն և հետաքրքրուեցան նոցա զարդերով ու տարազներով։ Նոքա պահանջեցին ինձմէ, որ համեմատեմ թրքուհիներու և հայուհիներու կեանքը, գեղեցկութիւնը և տարազն ու զարդը։ Ես նկարագրեցի այս ամենը և ըստ կարելւոյն գոհացում տուի նոցա կանացի միակ հետաքրքրութեանը և ի վերջոյ սկսեցի բոլորովին պարզամիտ բառերով համեմատել իրենց կեանքը, սովորութիւնները, տարազներն ու զարդերը քաղաքացի կանանց հետ։ Այս վերջի խօսակցութեան ժամանակ նոքա խիստ կծիծաղէին իւրաքանչիւր երկու բառ արտասանելուց յետոյ, որովհետև, ինչպէս ասի՝ պարզամիտ բառերով կխօսէի, մանաւանդ որ խօսակցութիւնս հայ-թրքախառն բարբառով էր, և այնպէս որ երբեմն ամբողջ նախադասութիւններ չը հասկանալով՝ նորէն կրկնել կուտային խօսքերս։

Խօսակցութիւնն արդէն վաղուց փոխուած էր ուրիշ նիւթերու վրայ՝ երբ խումբ մը կանայք հիւր եկան, որոնք Դերջանի պէկերու կանայքն էին, որ իրենց տղամարդերով միասին ուխտ կերթային Հաւլորու Ս. Կարապետ վանքը։

Հիւրերը ներս մտան սենեակէն, իսկ ես պատրաստուեցայ դուրս գնալ։ Նոքա, հիւրերը, խանումներէն հարցուցին իմ մասին, թէ «քիմմո» (ո՞վ է)։—

«Արմենեկо» (հայ է) պատասխանեցին խանումները, և վայրկենապէս սկսեցին նախորդ խօսակցութիւններէս քանի մը կտորներ բացատրել նոցա և ծիծաղել կուշտ-կուշտ։

Վերադարձայ սէլամլըգ-օտասին, ուր Դերջանի պէկերը շրջապատել էին ընկերոջս և զանազան հարցերու մասին կվիճէին միմեանց հետ։ Վիճաբանութիւնը, որ հետզհետէ սուր կերպարանք կստանար՝ քանի մ'ոստիններով վերջապէս հասաւ այնտեղ, որ այլևս ուղղակի մեր ազգային արժանապատուութիւնը կշօշափէր։ Ընկերս սկսեց սուր-սուր պատասխաններ տալ նոցա։ Եւ նոքա, որ գլխաւորապէս 15—18 տարեկան երիտասարդներ էին աւելի վիճաբանողները՝ հրաւիրեցին ընկերոջս ասպարէզ գալ հրացանաձգութեան և ճիրիթի [1])։ Բայց ընկերս հեգնական ծիծաղ մ'արձակելով՝ պատասխանեց. «Ես երբէք թոյլ չեմ տար ինձ՝ ձեզ նման երեխաներու հետ մրցիլ այդպիսի չնչին խաղերու մէջ։ Եթէ կը ցանկաք անպատճառ ցոյց տալ մեզ ձեր շնորհքը՝ թող այս մեր փոքրիկ ընկերը—ցոյց տալով զիս—մրցի ձեզ հետ»։ Եւ դառնալով ինձ՝ ըսաւ. «Վեր կաց և հեծիր ձիս, և եթէ կարող ես՝ ցոյց տուր շնորհքդ սոցա, որ մեզ կծաղրեն։

Այլևս մեռնել ինձ համար շատ քաղցր էր, քան թէ յաղթուիլ, որ ուրիշ տեսակ մեռնիլ ըսել է։ Ըն-

---

[1]) *Ճիրիթ՝ տեսակ մը ձիարշաւ է, որու մէջ երկու խմբի բաժնուելով խաղցողները՝ պատերազմական ձևով կսկսին միմեանց փայտէ անվնաս նետեր արձակել, մինչև որ յաղթութիւնն որոշուի։*

կերս վստահ էր վրաս, անվստահելին միմիայն ձիս էր, որ այն էլ փոխեց ընկերս, իր ձին տալով իմինիս փոխարէն։ Զէնքերը պատրաստ էին. ձիերն էլ պատրաստ էին։ Հեծանք ձիերը և գնացինք գեղեցիկ մարգագետնի մը վրայ, ուր բաւական հեռու տեղ մը նշան տնկելով՝ սկսեցինք հրացանաձգութիւնը։ Նոցա հինգէն երեքն յաջող էին, իսկ երկուքը ոչ լիովին։ Կարգն եկաւ ինձ. հրացանս արձակեցի, բայց չընդունուեցաւ այն՝ դիպուածական կարծուելով։ Երկրորդն արձակեցի. այն էլ լիովին չընդունուեցաւ, մի այլ պատճառաբանութեամբ. երրորդին արդէն բաւական համարուեցաւ։ Ձիերը դարձուցինք միմեանց դէմ՝ ճիրիթ խաղալու։ Ինձ ընկերացան Շահ-Հիւսէյնի պէկը և երեք հատ էլ ուրիշներ, որպէս զի հաւասար ոյժ ունենանք դիմաց դէմ։ Ծառաները մէկ-մէկ խուրձ փայտէ նետեր տուին մեզի [1]), և մենք խաղն սկսեցինք։ Բաւական երկար միմեանց դէմ մաքառելուց յետոյ, նոցա մէկն հարուածեց դիս. իսկ ես ոչ միայն նորա հարուածին փոխարինեցի հեծած ձիուս շնորհիւ, այլև զինքն իր ձիուց վար գլորեցի, որը սակայն ախորժելի տպաւորութիւն չթողուց երիտասարդ պէկերուն վրայ։ Նորա խիստ նախանձէ թելադրուած՝ ոգևորուեցան. բայց ընկերս վրայ հասաւ՝ ըսելով. «Էյ, եթէ հասկցաք՝ այսչափն էլ բաւական էր։ Հիմայ դուք մրցեցէք միմեանց դէմ, և ոչ թէ ընկերոջս։

---

[1]) Իւրաքանչիւր խուրձ տասը փայտերէ կրաղկանայ։ —Այստեղ ինքնագովութիւն չընելու համար՝ ճիրիթի մանրամասնութիւնները կլռեմ։

Չիէս վար իջայ և տղայական պարզամիտ հրապարտութեամբ մ'սկսեցի քաշել այս ու այն կողմ. սակայն ընկերս զգուշացուց զիս, որ այլ ևս ոչ վիճեմ և ոչ ալ եղածն յիշեցնեմ նոցա, որ խիստ անախորժ հետևանք կարող էր ունենալ:

Երեկոյ էր, երբ վերադարձանք խօնախն: Խանումները զիս նորէն կանչեցին: Գնացի: Նոցա մէկը զիս իր մօտ նստեցնելով՝ ըսաւ. «Ճաւրաշ սուվարի, լուսամուտէն կդիտէի ձեր խաղերը. ինչու քեռորդուս ձիուց վար գլորեցիր, չի վախցար՝ նոքա խնայեցին քեզի. հապա որ նոքա ալ քեզ վար գլորէին»: Տուած պատասխանս նոցա միայն ծիծաղեցուց, և նոքա գնահատեցին զիս փոքրիկ նուէրներով:

Եւ երբ վերադարձայ ընկերոջս մօտ՝ հետաքրքրութեամբ մը հարցուցի, թէ ինչ կնշանակէ «Ճաւրաշ սուվարի» խօսքը: Նա պատասխանեց որ «Ճաւրաշ սուվարի» կնշանակէ սևաչեայ ձիաւոր:

Բ

ԱԼԹՈՒՆ-ՀԻՍԷՅՆԷՆ ԱՂԱՅԻ-ՉԷՆԼԻՔԸ

Ամիս մ'ամբողջ մնացինք Ալթուն-Հիսէյնի մէջ: Պատրաստուած էինք երթալ Աղայի-Չէնլիքը: Ձիերը պատրաստ էին: Մեզ ընկերացաւ Ապաս պէկն ու Շահ-Հիսէյնի պէկը և 12—15 զինեալ քրդեր:

Ճանապարհը շարունակեցինք և բաւական ելևէջ-

ներէ անցնելուց յետոյ՝ երեք ժամէն հասանք Աղայի Զէնլիքը, Շահ-Հիւսէյնի պէկ Բ.-ի խօնախը։ Խօնախը, որ կառուցուած էր ծառազարդ ձորահովտի մը մէջ՝ կատարեալ դղեակի մը տպաւորութիւնը կթողնէր տեսնողին վրայ։ Նորա առջևը, արևելքէն արևմուտք, ձգուած էր խոր ձոր մը, որի միջէն կհոսէր զուլալ ջրով փոքրիկ վտակ մը։ Ձորի վերևի կողմը, հիւսիսային ափին վրայ, հաստատուած էր գիւղը, Աղայի-Զէնլիքը, որ բաղկացած էր 25—30 զուտ քրդարնակ տներէ, որոնց բնակիչներն առ հասարակ Շահ-Հիւսէյնի պէկ Բ.-ի ծառաներն են։ Խօնախի հիւսիսային կողմը կտեսնուէր կանանոցը, որ հոյակապ չինութիւն մ'էր. իսկ հարաւային կողմը, ճիշտ ձորի բերանը՝ կար փոքրիկ պարտէզ մը, որու մեծագոյն մասը լոկ բանջարանոց էր։ Խօնախի դռան առջև, ութը-տասը քայլ հեռաւորութեամբ դէպի արևմուտք, կար Շահ-Հիւսէյնի պէկ Բ.-ի տոհմային գերեզմանատունը, որ զարդարուած էր գեղեցիկ ծառերով, ծաղիկներով ու վարդենիներով։ Գերեզմանատան ճիշտ մէջտեղը կար մարմարիոնէ սիւներով կանգնած գեղեցիկ նկարներով գմբէթ մը, որուն տակ կհանգչէր հռչակաւոր Շահ-Հիւսէյնի պէկ Ա., գեղեցիկ ու նուրբ քանդակուած մարմարիոնէ շիրմաքարի մը տակ, որուն վրայ արաբական տառերով փորագրուած էին գեղեցիկ իմաստներով տապանագրեր։ Սորա կողքերը պառկած էին իր ամուսինը, տղան— Ալի պէկը և վերջապէս իր տոհմը, որ 100—150 տարուայ ընթացքին մէջ եկեր ու գնացեր էին։

Այս գերեզմանատունը տեսնողը—եթէ ծանօթ է տէրսիմցիներու անցեալին—կամայ-ակամայ կմտա-

բերէ 1855 և 1861 թուականները, երբ օսմանեան բանակն Ալի պէկի օրով վերջնականապէս մտաւ Խուզուչանի սահմաններն, ամենուրեք մահ ու հրդեհ սփռելով։ Եւ, չնայելով որ նա Խուզուչանի մէջ այնչափ գիւղեր հրդեհեց, այնչափ մարդեր կոտորեց և վերջապէս այնչափ թշուառներ գերի վարեց դէպի Գ. Պոլիս՝ այնու ամենայնիւ նա իր մոլեգնութիւնն յագեցնելու համար քանդեց ու աւերեց նաև այն տոհմային գեղեցիկ, արևելեան ճաշակով զարդարուած գերեզմանատունն ալ, որու ամբողջ մարմարիոն շիրմաքարերը կոտրեց ու սրբեց տապանաքարերը, որ նոցա յիշատակն իսկ անհետ լինի։

Այս գերեզմանատան մօտ ես չէի կարող չյիշել լուսաւորուած ու քաղաքակրթուած գերմանացիները, երբ կտեսնէի կիսաքաղաքակիրթ օսմանցիներու ճիւաղային գործերը, կոտրած ու փշրած գերեզմանաքարերը. ասի գաղափարաց զուգորդութեան արդիւնք է. զի նոքա ևս, երբ վերջին Ֆրանս-Գերմանական պատերազմի ժամանակ արշաւեցին մինչև Փարիզ՝ խորտակեցին ֆրանսական կայսրների շիրիմները և կոտրեցին ու փշրեցին նոցա մարմարիոնները, նոցա յիշատակն իսկ ոչնչացնելու նպատակով թերևս, որոնց մէջն էր նաև հայոց վերջին թագաւոր Լևոն Զ.-ի գերեզմանը։

Չիերէս վար իջանք և յանձնեցինք ծառաներուն։ Ապաս պէկն ու Զահ-Հիւսէյնի պէկն առաջնորդեցին մեզ դէպի սէլամլըգ-օտասին։ Նախ մտանք ծածկած բակ մը, որու մէկ կողմն էր ձիերու ախոռը (թավլան), իսկ միւս կողմը դրուած էին փայտէ սանդուխներ. ապա սոյն սանդուխներէն վեր բարձրա-

նալով՝ մտանք միջնասենեակ մը, ուր 15—20 ծառաներ միշտ պատրաստ կսպասէին։ Այս միջնասենեակը միանգամայն հասարակ մարդերու համար դահլիճ էր, որու չորս կողմերը կբացուէին զանազան մեծ ու փոքր դռներ, որոնք զանազան դասակարգի պատկանող հիւրերու ննջարաններն էին։ Միջնասենեակին ուղիղ դիմացը կբացուէր նաև մեծկակ դուռ մը, ուրկէ ներս մտանք մենք։ Դա մեծ և պայծառ սալօն մ'էր, որ զարդարուած էր ամենագեղեցիկ գորգերով և կահաւորուած էր արևմտեան և արևելեան խառն ճաշակով։ Սալօնի չորս կողմերը շարուած էին կարմիր թաւիշով պատած զանազան աթոռներ, թիկնաթոռներ, լանջաթոռներ և ընկոյզէ գեղեցիկ տախտակներով մեծ ու փոքր սեղաններ։ Պատերը ծեփուած էին ճերմակ գաճով, որոնց վրայ պարզ կտեսնուէին պարսկական և արաբական ճաշակով զանազան բոյսերու, կենդանիներու և մարդերու նկարներ։ Նոցա ճիշտ մէջ տեղուանքը կարգով դասաւորուած էին ոսկեպատ և արծաթապատ ամենաընտիր սրեր, թրեր, տապարներ, վահաններ, հին և նոր ձևով ատրճանակներ, ըէվոլվէրներ, տեսակ-տեսակ հրացաններ և այլն, և այլն։ Սալօնի ուղիղ կեդրոնը՝ առիքէն վար կախուած էր մեծ դիրքով ջահ մը։ Նորա դիմաց, սալօնի արևմտեան ճակատը՝ դրուած էր խոշոր հայելի մը, որուն առջև դրուած էր նաև գեղեցիկ զարդարուած թիկնաթոռ մը։ Թիկնաթոռին վրայ վեհապետի նման բազմած էր Շահ-Հիւսէյնի պէկ Բ.-ը, որ տակաւին 45—48 տարեկան, սև մօրուքով, միջահասակ և տոկուն կազմուածքով մարդ մ'էր, որու դիմաց երկու ծառաներ, ձեռք կապած՝

290-2813

կսպասէին իրենց տիրոջ հրամանին, և ոտքէ ցգլուխ զինուած դրութեան մէջ՝ մէկ-մէկ հոգիառ հրեշտակը կնմանէին։

Շահ-Հիւսէյնի պէկ Բ.-ը ընդունեց մեզ։ Ցառաջ գնացինք։ Ընկերս բարևեց նրան և նորա հրամանով՝ սալօնի մէկ կողմը նստեցաւ. իսկ ես, մերձենալով պէկի աթոռին՝ նորա ձեռքն համբուրեցի։ Նա թեթև ծիծաղ մ'արձակելով հասակիս ու տարազիս վրայ՝ աթոռ մը ցոյց տուաւ, որուն վրայ նստեցայ։ Ծառաները սովորական օրէնքով նախ սառն օշարակ բերին, յետոյ սուրճ և ապա, հինգ բոպէ չանցած՝ նախընթրիք բերին, որովհետև արևը մայր մտնելուն մօտ էր։ Նախընթրիքը բաղկացած էր լաւաշ հացէ, սերէ, ձագու մեղրէ, կարագէ ու մածունէ։ Ուտելուց յետոյ Ապաս պէկն իր եղբօր հետ հեռացան սալօնէն, մենք մնացինք մենակ Շահ-Հիւսէյնի պէկ Բ.-ի հետ։ Նա սկսեց զանազան բաների մասին հարց ու փորձ ընել ընկերոջմէս։ Նա թէև հետաքրքրութեամբ կհարցնէր ու կխօսէր, բայց այնու ամենայնիւ լաւ տրամադրութեան մէջ չէր երևէր, որովհետև դեռ նոր վերադարձեր էր Երզնկայէն, ուր նա երկար ժամանակ տանջուեր ու չարչարուեր էր թուրք պաշտօնեաներէն և գրեթէ իր հարստութեան մեծ մասը փչացուցեր էր՝ սորան ու նորան կաշառք տալով։

Երեկոյ էր. ծառաները սալօնի ջահը վառեցին և ընթրիքի սեղան պատրաստեցին։ Մեզ սեղանակից եղան Շահ-Հիւսէյնի պէկ Բ.-ը և իր երկու երիտասարդ տղաները—Հայտար պէկն ու Մըստաֆա պէկը, և Ապաս պէկն իր եղբօր Շահ-Հիւսէյնին հետ։ Ընթրիքը խիստ ճոխ էր. նա բաղկացած էր տապակած

գառէ, բրինձէ փլաւէ և զանազան բանջարեղէն կերակուրներէ. այս վերջինները միշտ համեմուած էին հաւկթով։

Ընթրիքը վերջացուցինք. սեղանը վերցուցին։ Հայտար պէկին հետ սալօնէն դուրս եկայ միջնասենեակը, ուր, տեսայ՝ երեք տեղ սեղան դրած էին, որոնց մէկի շուրջը շարուած էին 20—25 առաջնակարգ ծառաներ և 6—7 հոգի ալ սովորական հիւրեր, որոնք մօտակայ գիւղերէն եկած էին. երկրորդ սեղանի շուրջը բոլորուած էին 18—20 հոգի միջնակարգ ծառաներ. իսկ երրորդ սեղանին շուրջը՝ խառն ի խուռն շարուած էին 35—40 հոգի ստորին կարգի ծառաներ, որոնց հետն ալ խառնուած էին 5—6 հատ ալ պահապան շներ։ Սեղանները ճոխ էին, և կերակուրները համեղ ու առատ. ամենքն ալ կուտէին խիստ ախորժակով։ Երբ ես Հայտար պէկէն հարցումներ ըրի սեղաններու մասին՝ նա պատասխանեց. «Օրական միջին հաշուով 35—40 լիտր հաց, 3—4 ոչխար կամ 2 ոչխար և մէկ կով մսացու, 15—20 լիտր բրինձ ու պղլուր և սոցա հաշուով ալ՝ սեղանի հետ անմիջապէս կապ ունեցող անհրաժեշտ ուտելիքներ կսպառուի մեր տան մէջ։ Ամեն օր հիւր կայ, առանց հիւրի մեր օրն օր չէ»։ Նա աւելցուց ըսելով. «Թլփատութեանս հանդէսին օրը հօրս հրաւիրանօք ներկայ էին աւելի քան 200 մեծամեծ հայեր ու տաճիկներ, և աւելի քան 2000 ինքնակոչ հիւրեր, որոնք այստեղ մեր տան մէջ մնացին ամբողջ ամիս ու կէս։ Դոցա զուարճացնելու համար հայրս վարձած էր 55—60 զանազան տեսակ նուագածուներ, զանազան խմբերու բաժնուած։ Եւ երբ հիւրերը պիտի վե-

բաղառնային իրենց տեղերը՝ հայրս նոցա իւրաքանչիւրին զանազան տեսակ—ըստ մարդու արժանիքին —թանկագին նուէրներով ճանապարհ ձգեց»։

Թող տալով հայտար պէկին, որ արդէն պատրաստուած էր կանանոց երթալու՝ գնացի մտայ մեզ համար նշանակուած ննջարանը, որը կահաւորուած էր խիստ ճաշակով և զարդարուած էր բաւական լաւ գորգերով։ Նստեցայ և սկսեցի օրագրիս մէջ արձանագրել օրուան տպաւորութիւններս։ Այդ րոպէին յանկարծ ներս մտան Մրստաֆա պէկը և իր հօրեղբօրորդին՝ Շահ-Հիւսէյնը։ Մօտեցան նոքա ինձ և սկսեցին հետաքրքրութեամբ դիտել գրուածքս։ Նոքա հարցուցին, թէ «Ի՞նչ են այդ թղթի վրայ բարակ-բարակ գծուածները»։—«Օրուան տպաւորութիւններս», պատասխանեցի։ Պահանջեցին որ կարդամ։ Կարդացի, և նոքա զարմացան, թէ ինչպէս այդչափ երկար խօսքեր կպարունակեն իրենց մէջ այդ մանրիկ-մանրիկ նշխերը, որ մատիտով գծուած էին։ Նոքա լուր տուին այս ու այն կողմ։ Ծառաներէն շատերը խռնուեցան շուրջս և սկսեցին ապուշապուշ դիտել ու զարմանալ։ Այդ միակ գիրը նսեմացուց նոցա բոլոր քաջագործութիւնները։ Նոքա ցանկութիւնին յայտնեցին սովորել և մանաւանդ պահանջեցին որ գրերու գաղտնիքը պարզեմ։ «Գաղտնիք չունին գրերը, ըսի. սովորելու համար հարկաւոր է երկար ժամանակ»։ Բայց չհաւատացին։

Այս գրի հրաշալի լուրը՝ «բերնէ բերան՝ եղաւ գերան» և կայծակի արագութեամբ տարածուեցաւ ամբողջ խօնախին մէջ։ Քրդերը—ծառայ, հիւր և այլն—հետզհետէ խռնուեցան շուրջս։ Շահ-Հիւսէյնի

պէկ Բ.-ը նկատելով այդ արտասովոր իրարանցումը՝ ընկերոջս հետ սալօնէն դուրս ելան և տեսնելով որ ամեն ինչ շուրջս կդառնայ՝ եկան մօտս և սկսեցին հարց ու փորձ ընել, թէ ինչու հաւաքուած էին։ Եւ երբ Զահ-Հիւսէյնի պէկ Բ.-ը իմացաւ գործի եղելութիւնը՝ հետեւեալ ծիծաղաշարժ դէպքը պատմեց, որ չորս-հինգ տարի առաջ տեղի ունեցեր էր։

Անգամ մը Զահ-Հիւսէյնի պէկ Բ.-ը տասը հատ ոչխարի գառներ և նամակ մը կյանձնէ ծանօթ քրդու մը, որ տանի զայն Երզնկա և յանձնէ շորրորդ բանակի հրամանատար Միւշիր փաշային։ Քուրդն առնելով գառներն ու նամակը՝ ճանապարհ կընկնի դէպի Երզնկա։ Նա առաջին օրը կհասնի իրենց գիւղը, ուրկէ շատոնց բաժանուած է եղեր։ Եւ որովհետև քուրդն իր տան մէջ այդ օրն հանգիստ պիտի ընէր՝ կբռնէ գառներէն մէկը և կմորթէ, բայց նախ քան գառան մորթելը, նամակը կտանի գոմին մէջ կպահէ, որ կատարուելիք գողութենէն նա տեղեկութիւն չունենայ, որովհետև թղթերն աչքեր ունին տեսնելու եւ կխօսին միայն քաղաքացիներու հետ»։ Եւ երբ յաջորդ օրը կհասնի Երզնկա, գառներն ու նամակը կտանի Միւշիր փաշային տունը և այնտեղ կյանձնէ ծառաներուն, որ ըստ պատկանելոյն հասցնեն։ Միւշիր փաշան նամակը կկարդայ և կհարցնէ ծառային, թէ «Արդեօք լմա՞ն են ղրկուած տասը գառները»։ Ծառան կպատասխանէ, որ «գառները տասը հատ չեն, այլ իններ հատ են»։ Միւշիր փաշան անձամբ տեսնելու համար դուրս կելլէ և բակին մէջ հաւաքել կուտայ գառները և կտեսնէ, որ իրաւ իններ հատ են։ Կկանչէ դո-

ցա բերող քրդուն և կհարցնէ. «Ա՛յ քուրդ, քեզի տասը հատ գառներ յանձնած են, իսկ դու՝ ինները հատ միայն բերած ես. ուր է մէկը»։ «Այո՛, փաշա էֆէնտի,—կպատասխանէ քուրդը.—տասը հատ յանձնեցին, և ահա բոլորն ալ այստեղ են»։—«Ո՛չ թէ տասը, այլ ինները հատ են այստեղ»։—«Այո՛, ինները հատ»։—«Բայց թուղթը կըսէ թէ տասը հատ»։—«Այո՛, փաշա էֆէնտի, տասը հատ, և բոլորն էլ այստեղ են»։

Միւշիր փաշան կտեսնէ, որ այդպիսով չպիտի կարողանայ քրդուն համոզել՝ կըսէ. «Քուրդ, եթէ բերած տասը գառներդ տասը հոգու վրայ բաժնենք, իւրաքանչիւրին քանի՞ հատ կընկնի»։—«Մէկ-մէկ հատ»,—կպատասխանէ քուրդը։

—Դէհ, ուրեմն հիմայ համրէ այս ծառաները և տես, քանի՞ հոգի են։ Քուրդը կսկսի համրել. մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը»։—«Մէկն ալ դու»։ «Ինները»։—«Մէկն ալ ես»։—«Տասը»։—Դէհ, հիմայ իւրաքանչիւրդ մէկ-մէկ հատ բունեցէք, նայինք, թէ քանիսկոն հատ կընկնի», կըսէ ու ինքը կսկսի դիտել։ Իւրաքանչիւր ծառայ մէկ-մէկ գառ կբունէ։ Միւշիր փաշան կհարցնէ քրդին. «Քուրդ, հապա իմս ուր է»։—«Ա՜խ, կպատասխանէ քուրդը.—եթէ ես առաջուց գիտենայի՝, նորա հոգին կհանէի։ Ես գիտեմ ախբրի, փաշայ էֆէնտի, այդ սատանայ թուղթն ըսած է քեզի թէ... Բայց ինչ ընեմ, խօմ քօռ չէիր. թող դու ալ առաջուց բունէիր բաժինդ. միթէ ես յանցաւոր եմ, որ դու ծոյլի պէս անշարժ մնացիր»։

Միւշիր փաշան միայն կծիծաղի դորա տուած պարզամիտ պատասխանին վրայ, և դարձեալ կեր-

թայ իր սենեակը։ Հետևեալ օրը փաշան նամակ տալով քրդուն՝ յետ կուղարկէ։ Իսկ քուրդը, կարծելով որ այդ թուղթը միևնոյն թուղթն է, որն իր դողութիւնը մատնեց՝ ճանապարհին կդնէ քարին տակ և կսկսի լաւ մը հարուածել զայն, որպէսզի ուրիշ անգամ կամ վերադարձին այդպիսի մատնութիւններ կրկին չկատարէ։ Եւ երբ խօնախն հասնելով նամակը կյանձնէ Շահ-Հիւսէյնի պէկ Բ.-ին, այս վերջինը դեռ նամակը չբացած՝ բարկութեամբ մը կը հարցնէ նամակարեր քրդէն. «Ի՞նչու այս թուղթը քարով ծեծեր ես, որ այսպէս պատռտեր է»։—«Քա՜ւ լիցի,—կպատասխանէ քուրդը.—ես երբէք ծեծած չեմ զայդ»։—«Ա՛յ անիրաւ, ծեծեր ես և ահ՛աւասիկ կտեսնուի»։—«Ես ահագին մարդ մ՚եմ, պէկ, դու ինձ չես հաւատար, ու այդ փշրանք մը սատանայ թղթին կհաւատաս»։—«Ի՞նչպէս հաւատամ քեզի, ստախօս, որ արդէն ծեծեր ես և այնպէս ես ըրեր, որ այլևս միջի գրերը երբէք չեն կարդացուիր»։—«Այսինքն լեզուն առնուեր է»։—«Այո՛»։—«Այդ՝ ծեծուածն ու լեզուն առնուածն է, պէկ, որ այդչափ ստեր կխօսի. հապա որ ծեծուած չլինէր ու լեզուն բաց լինէր, ո՞վ գիտէ, տակաւին ո՞րչափ խայտառակ ստեր պիտի խօսէր»...։

Գ

ԱՂԱՑԻ-ՉԷՆԼԻՔԷՆ ՀԷՐՏԻՎ

Անցաւ տասնեհինգ օր, ու մենք պատրաստուած էինք ճանապարհ ընկնել դէպի Քարբերդ։ Զահ-Հիւսէյնի պէկ Բ.-ը խոստացաւ մեզ սէյիդ առաջնորդ մը տալ մինչև Ղըզըլ-Քիլիսէ հասցնելու համար մեզ, որովհետև այդ ճանապարհները խիստ վտանգաւոր էին. բայց ընկերս չընդունեց սէյիդի առաջնորդութիւնը և ոչ էլ ուրիշի մ'առաջնորդութիւնը խնդրեց, այլ հեծնելով իր ձին՝ «գնանք» ըսաւ։ Վերջին հրաժեշտ տալով մեծ ու փոքր պէկերուն՝ ձիս հեծայ և հետևեցայ ընկերոջս։

Կէս օր էր։ Խոր ձորի մը միջով ճանապարհը շարունակեցինք դէպի հարաւ։ Ամբողջ ժամ մը ճանապարհորդելուց յետոյ հասանք Սիլպուզ լեռան արևմտեան ծայրի ստորոտը, ուրկէ վեր կբարձրանար ոլոր-մոլոր նեղ շաւիղներով ճանապարհը։ Լեռն ամբողջ ոտքէն մինչև գլուխ պատած էր ամենախիտ անտառով, որու մեծագոյն մասը պտղատու ծառերէ կբաղկանար։ Ժամ մ'ամբողջ բարձրացանք, մինչև որ հասանք լեռան գագաթը, և նոյնչափ ժամու մէջ ալ՝ լեռնէն վար իջանք։ Ամենուրեք անտառին մէջ կտեսնուէին 2—3 տներէ բաղկացեալ փոքրիկ գիւղեր, որոնց մէջ քրդեր կբնակէին։

Սիլպուզ լեռն անցնելուց յետոյ՝ մտանք խիտ ու թարմ անտառի մը մէջ, ուրկէ նեղ, հաղիւ նշմարուելիք շաւիղ մը կտանէր դէպի Հէրտիվ գիւղը։

Անտառի արտաքին տեսարանն որչափ հիանալի էր՝ այնչափ նաև զարհուրելի էր նորա ներքին տեսարանը։ Մշտնջենական մռայլ մը կտիրէր այնտեղ։ Անկէ անցնողը կտեսնէր միայն իր առջևի նեղ շաւիղը, որ ծածկուած էր խիտ մացառներով. կը տեսնէր դէպի վեր՝ սաղարթախիտ ոստերու մթին կամարը, ուրկէ հաղիւ կարելի կլինէր նշմարել արեգակի շողերը. կտեսնէր իր աջ և ձախ կողմերու դարևոր կաղնիներու անթափանցիկ ցանցը, որ, կենդանի պատուարի մը պէս, կպարփակէր ճանապարհի եզերքը։

Այս անտառի լայնութիւնը ճեղքելով՝ մէկ ու կէս ժամ շարունակ ճանապարհորդեցինք, մինչև որ արևամուտին հասանք Հէրտիվ հայաբնակ գիւղը։ Գիւղը, որ բաղկացած էր աւելի քան 300 տուներէ՝ հաստատուած էր գեղեցիկ կանաչազարդ լեռնալանջի մը վրայ։ Նորա հարաւային և արևմտեան կողմերը կեցած էին բուն Ցէրսիմի սոսկավիթխաբ, մռայլ անտառներով լեռները, որոնց արտաքին տեսքն իսկ սոսկում կազդէր տեսնողին վրայ. հիւսիսային կողմն արդէն կար Սիլպուզ լեռը, ուրկէ մենք անցանք, իսկ արևելեան կողմը, որ ծաղկաւէտ փոքր-փոքր լեռներով ամբողջ շեղջակոյտ մը կկազմէր՝ բաց էր մինչև Պինկիոլի լեռնագօտին, որ կերևէր Հէրտիվէն։

Մտանք գիւղի մէջ։ Գիւղի քահանան, որ անտառէն դուրս գալուց ի վեր կդիտէր մեզ՝ մարդասիրաբար հրաւիրեց իր տունը։ Մենք շնորհակալութեամբ ընդունելով քահանայի հրաւէրը՝ ուղղակի իջանք իր տան դռան առջև, ուր նորա երիտասարդ եղբայրները մեր յոգնած ձիերը քաշեցին ներս, ախո-

ուը, իսկ մենք աղաղաւելով այն հոգսերէն՝ բարձրացանք վեր, ուղիղ չարտախը, ուր նստած էր քահանան։ Նա պարտ ու պատշաճ բարևը տալուց ու ընդունելուց յետոյ, աթոռներ բերել տուաւ մեզ համար, և մենք նստեցանք։ Նորա փոքրիկ աղջիկը, ըստ տեղական սովորութեան, նախ սառն օշարակ բերեց և ապա սուրճ։ Սուրճը խմելուց յետոյ տան բոլոր անդամները, իրենց կնոջ առաջնորդութեամբ, մէկիկ մէկիկ գալով մեզ մօտ՝ բարևեցին և քահանայի միջնորդութեամբ ծանօթացան մեզ հետ։ Նոքա ամբողջ կէս ժամ մեզ հետ խօսակցելէն յետոյ,—որ գլխաւորապէս հետաքրքրուեցան քաղաքի և մանաւանդ հեռաւոր աղգայիններու կեանքով,—հեռացան մեր մօտէն՝ մեզ հանգիստ թողելու նպատակով։ Մենք մնացինք մենակ, քահանայի հետ։

Չարտախէն, որ գիւղի ամենաբարձր դիրքն ունէր՝ ամբողջ գիւղը և մանաւանդ գիւղի մեծ մէյտանը (հրապարակ) պարզ հայելու մը պէս կտեսնուէր մեզի։ Մենք սկսեցինք հետաքրքրութեամբ նայել դէպի հրապարակը, ուր հարիւրաւոր գիւղացիներ անց ու դարձ կընէին։ Նոքա բոլորն ալ ժրաջան գործաւորներ էին, որոնցմէ ոմանք արտերէն և ոմանք ալ անտառէն կվերադառնային։ Քահանան նկատելով, որ մենք ուշադրութիւնիս դարձուցինք դէպի հրապարակը և կդիտենք իւրաքանչիւր անց ու դարձ ընողին՝ սկսեց մէկ-մէկ պատմել. «կտեսնէք այն կարմիրերես առոյգ երիտասարդները, որ մէկ-մէկ փէտհատ ուսերուն վրայ դրած՝ գիւղ կվերադառնան. դոքա, առաւօտեան դեռ արևը չծագած, գացեր էին լեռնային արտերը հերկելու, այսինքն փէտ-

հատով փոքելու, որովհետև այն տեղերը խոփ ու արօր չեն բանիր։ Կը տեսնէք այն հասակաւոր մարդերն ու ալևորները, որ խոփերը շալկած՝ եզները քշելով տուն կվերադառնան. դոքա նոյնպէս առաւօտեան գնացեր էին արտերը մշակելու, հերկելու և, ոմանք ալ, ցանելու։ Կտեսնէք այն ժրաջան հարսներն ու աղջիկները, որ մէկ-մէկ պարկ շալկած՝ խաղալով ու խնդալով գիւղ կվերառառնան. դոքա գնացեր էին անտառի մէջէն գազպէ (մանանա) հաւաքելու. այժմ ճիշտ ժամանակն է այդ երկնատուր բարիքին, մեղր ու շաքարին։ Կտեսնէք այն խումբ մը երիտասարդները, որոնց ոմանք կացիններ շալկած, ոմանք ալ հաստ գերաններ ջորիներու բեռցուցած՝ գիւղ կբերեն. դեռ առաւօտեան գնացեր էին անտառին մէջ գերան ու կցակ կկտրէին մեր գիւղի նոր կառուցանելիք վարժարանին համար. դոքա օրական վարձք չեն ստանար, այլ ձրի կգործեն, որովհետև գիւղի իւրաքանչիւր տուն—նայելով նորա բազմանդամութեան—պարտաւոր է կարգով տալ 1—2 մշակ օրական, մինչև որ վարժարանը շինուի ու գլուխ գայ։ Եւ վերջապէս, կտեսնէք այն փէյլըվանները (լարախաղներ), որ պատրաստութեան մէջ են. դոքա եկած են Մուշէն և, կըսեն որ, այդպիսի փէյլըվանութիւններով դրամ պիտի հաւաքեն ի նպաստ Մշոյ Ս. Կարապետ վանքին»...

Զարմանալի ոգևորութիւն մը կտեսնուէր այդ գիւղին մէջ. ոչ ոքի վրայ տխրութեան նշոյլ մ'իսկ չէր նկատուէր. ամենքն ալ ուրախ, ամենքն ալ զուարթ և վերջապէս ամենքն ալ գործունեայ մար-

դեր էին, որ, այս վերջի տեսակը, հաղուագիւտ է լեռնական ժողովրդի մէջ։

Գիւղն ունէր եկեղեցի մը և հին-չէնք վարժարան մը՝ «Հայոց Միացեալ Ընկերութեան» իրաւասութեան ներքոյ, որուն մէջ կպաշտօնավարէին տեղացի երկու երիտասարդ ուսուցիչներ, Կ. Պոլսոյ «Կեդրոնական վարժարան»-էն ելած։ Այս գիւղացիները Միրաքեան տոհմին կպատկանին, որու անունով նաև կճանչցուին։

Երեկոյ էր։ Ընթրիք բերին։ Սեղանին մասնակցեցան գիւղի ականաւորներէն ոմանք և, ի միջի այլոց, երկու երիտասարդ ուսուցիչները իրենց խմբով, որովհետև այս կողմերը սովորութիւն կայ, որ երբ հիւր մը պատահի իրենց, լինի նա ծանօթ կամ անծանօթ, հայ կամ այլազգ՝ պիտի պատուեն իրենց կարողութեան չափով, որպէսզի հիւրը դժգոհ չը մեկնի գիւղէն։ Ուսուցիչները խօսեցան, և երգեցիկ խումբը, որ բաղկացած էր վեց յառաջադէմ մանուկներէ՝ երգեց քանի մ'ազգային երգեր, որոց թէ եղանակները և թէ բառերը յարմարցուցած էին իրենց ճաշակին և լեզուին։ Գոհ մնացինք ամենքս և շնորհակալութիւն յայտնեցինք եռանդուն ուսուցիչներուն։ Ընկերս խրախուսական ճառ մ'արտասանեց և ի միջի այլոց ըսաւ. «Եթէ աշխարհիս մէջ կայ ամենամեծ զէնք մը, կամ որ նոյնն է, ոյժ մը, որով մարդ կարողանայ ներկայ դարուս մէջ իր գոյութեան համար կռիւ մղել՝ դա ուսումն է...։

Ընկերոջս այս վերջին խօսքերը մեծ վիճաբանութեան մ'առիթ դարձան, որու համար ալ գիւղացիներն սկսեցին տաք-տաք վիճել։ Երկու ուսուցիչ-

ներն ընկերոջս կողմը բռնեցին, և մինչև որ այդ ըմբռնել տուին գիւղացիներուն՝ արդէն կէս գիշերն անցեր էր։

Դ

ՀԷՐՏԻՎԷՆ ՂԸԶԸԼ—ՔԻԼԻՍԷ

Առաւօտեան, դեռ արևը չծագած՝ ճանապարհը շարունակեցինք Հէրտիվէն ուղիղ դէպի հարաւ-արևմուտք և տակաւին հինգ րոպէ չանցած՝ մտանք ամենախիտ անտառներով պատած վիթխարի լեռներու մէջ։ Սոսկալի էին այդ անտառապատ լեռները. խաղաղութեան ժամանակ կանհետացնէին մենաւոր ճանապարհորդներուն, իսկ խռովութեան ժամանակ՝ կուլ կուտային ամբողջ վաշտեր։ Այնտեղ կտիրէր մշտնջենական մռայլ մը, ուրկէ անցնողն հազիւ կարողանար նկատել իր առջևի նեղ շաւիղը, որ լաբիւրինթոսի մը նման անթիւ ճիւղերու բաժնուելով՝ շարունակ ոլոր-մոլոր կդառնար դարաւոր կաղնիներու անթափանցելի ցանցերուն մէջ։ Վտանգաւոր էր ճանապարհը։ Երբէք բան չէր տեսնուէր. եթէ մարդ տասնեակ աչքեր ալ ունենար՝ դարձեալ անկարող կլինէր նկատել, թէ ո՞ր կողմէն կուգար վտանգը։ Խեղճ ու միամիտ ճանապարհորդներուն կարելի էր հանդիպել ամեն մէկ վարկենին և ամեն մէկ քայլափոխին զարհուրելի վտանգ —մահ։ Արիւնարբու աւազակները, որ անգութ որսկաններու նման միշտ կրսպասեն որսի՝ պահուած էին տերևախիտ կաղնիներու

հովանոյն տակ և մամռոտած ծառերու ծերպերուն մէջ, և իրենց սգլոցէն յանկարծ մահարեր գնդակներ կարձակէին։ Նոքա վարժուած էին սողալ մերկարմատ ծառերու խոռոչներուն մէջ և մէկէն ի մէկ դուրս պոռթկալ սուր ի ձեռին։ Նոքա կապիկներու նման կմագլցէին ոստերու բարձր հիւսուածքին մէջ և այծեամի նման կցատկոտէին մէկ ժայռէն դէպի միւսը և այնտեղերէն ահ ու սարսափ կսփռէին իրենց շուրջը։

Նեղ ու դժուարագնաց ճանապարհի վրայ, որով յառաջ կերթայինք մենք, երբեմն կկաղմուէին պատնէշի նման փայտէ ամրարտակներ։ Ծառերը կոտրուեր և այնպէս, առանց ճիւղակտոր լինելու, դիզուեր էին ճանապարհի վրայ։

Սոյն վտանգաւոր ճանապարհով ամբողջ երեք ժամ շարունակ յառաջանալով՝ վերջապէս հասանք դալարագեղ մարգերով օժտուած ձորահովտի մը մէջ, ուրկէ անտառներու մէջէն ծորող զանազան աղբիւրներէ կազմեալ փոքրիկ զուլալ վտակ մը կհոսէր վար, դէպի արևմուտք։ Ձորահովտի հիւսիսային կողմը կբարձրանային Խութի-Տէրէսիի մռայլ լեռները, իսկ հարաւային կողմը կեցած էին Ղըզըլ-Քիլիսէի լեռները, որ, որպէս ամբողջ լեռնագօտի մը՝ կերկարէր ու կվերջանար մինչև Փախայ և Խռանի մօտերը։

Ձիերուց վար իջանք ու թող տուինք մարգերուն մէջ արածելու, իսկ մենք գնացինք նստեցանք վտակին եզերքը և սկսեցինք լուացուիլ ու հանգըստանալ, որովհետև այդ դժուար ճանապարհը չափազանց յոգնութիւն պատճառած էր մեզի։ Լուացուե-

լուց յետոյ քաշուեցանք փոքրիկ ուռենու մը զովաբար հովանոյն տակ, որ ճաճած էր վտակի եզերքը, և սկսեցինք ճաշել մեր համեստ պաշարով, որ բաղկացած էր միմիայն չոր հացէ ու պանիրէ։

Ցուշ,—նկատեց ընկերս,—քուրդ մ'անտառէն դուրս գալով՝ խուճապով դէպի մեզ կուգայ. զգուշութիւն։

Դարձայ դէպի Խութի-Տէրէսիի անտառները և տեսայ, որ կիսամերկ քուրդ մը, փէտհատն իր ուսին վրայ դրած՝ բարկութեամբ մը վար կիջնէ լեռան զառիվայրէն և կղմէ ուղիղ դէպի մեզ։ Նա հասնելով մեր ձիերու մօտ՝ ձեռքի փէտհատովն ուժգին հարուած մը տուաւ ձիուս գլխուն։ Ձիերը խրտեցան։ Ես ըէվոլվէրս հանելով՝ վազեցի քրդուն վրայ, իսկ ընկերս արդէն նորա առջևը կտրած էր։ Բացատրութիւն պահանջեցինք քրդէն, թէ ինչո՞ւ զարկաւ ձիուն։ Նա պատասխանեց. «որովհետև այս մարդերն ինձ կպատկանին, և դուք իրաւունք չունիք սոցա մէջ ձեր ձիերն արածել»։ Ընկերս բարկացաւ, և չգիտեմ խելքին ի՞նչ փչեց, որ յանկարծ ինքզինքը օսմանեան կառավարութեան պաշտօնեայ ձևացնելով՝ ըսաւ. «ես քննիչ եմ այս կողմերն ուղարկուած. դուք ինչո՞վ կը հաստատէք, որ այս մարդերը ձեր սեփականութիւնն են. ո՞ւր են ձեր հողային կալուածներու քաղաքները (պաշտօնական վաւերաթղթեր)։ Քուրդն սկսեց լուռ ու մունջ դիտել մեզ։ Նա մեր ոտքէն ցգլուխ զննելուց յետոյ, բացագանչեց։ «Դուք օսմանցի՞ և միանգամայն կառավարութեան պաշտօնեանե՞ր. այնպէս չէ՞. այս բոպէիս ցոյց կուտամ ձեզի, թէ ինչպէս կըլլին օսմանցին ու նորա քննիչ պաշտօնեաները։

Խնդիրը ծանր կերպարանք ստացաւ։ Նա մեր ձիերու սանձերը բռնելով, որ մենք չփախչինք՝ սկսեց «հաւարը» կանչել այն կողմէն, որ կողմէն որ ինքը եկած էր։ Դորձի հետեանքն աղէտալի էր. միջոց չկար, ինչ պիտի ընէինք։ Ընկերոջմէս հարցուցի հայերէն լեզուով. (մինչև այդ ժամանակ խօսակցութիւնը թրքերէն լեզուով կլինէր).

—Ցանկալի չէր երբէք,—ըսի,—որ այսպիսի դէպք մը պատահէր մեզ հետ այսպիսի սոսկալի անտառներու մէջ. բայց որովհետև պատահեցաւ՝ ես այժմէն կգնդակահարեմ սրան, որ մեր վրայ գալող քրդերէն մէկ հատը պակաս լինի։—«Ոչ,—պատասխանեց ընկերս.—տակաւին համբերէ»։

Քուրդը թող տուեց ձիերու սանձը, վար ձգեց ձեռքի փէտհատը և մեղմութեամբ մը մօտենալով ինձ՝ Միրաքեաններու բարբառով հարցուց. «Աղբար, դուն հայ ես»։—«Այո», պատասխանեցի։—«Հրպը ատ մարդը ինչ ա»։—«Նա ալ հայ է», —ըսի։—«Վայ, Աստուած ձեր հոգին առնա, ու Քիստոս ձեր տունն աւրա. հրպը ինցու ըսիք քի՝ տածիկ ենք»։—Դու հայ ես»,—հարցուց ընկերս։—«Ցէ, ես քուրդ եմ»։—«Հապա ուրկէ սորված ես հայերէն խօսելը»։—«Ես Հալորու Ս. Կարապետ վանք ատ մնացեր եմ, ան տեղայ տէրտէրն ինծի սորվեցուց հայերէն խօսալ»...

Դեռ այս խօսքերը չէր վերջացուցեր՝ անտառէն յանկարծ դուրս եկան 15—20 զինեալ քրդեր և հաւարով դիմեցին դէպի մեզ, որ օգնութեան հասած էին Հասօյի ձայնին,—այսպէս էր մեզ հետ կռուող քրդի անունը։ Նոքա հասնելով մեզ մօտ՝ Հասօյէն հարցուցին, թէ ինչ պատահած էր։ Հասօն պատաս-

խանեց հայերէն լեզուով—որովհետև նոքա ևս հայերէն գիտէին.—«Քրիստոս աստնց տունն աւրա. ինծի սուտ խարեցին, ըսին քի տածիկ ենք, հալպաքի (մինչդեռ) հայ են եղած... Բան ցի կայ ըլ, բան ցի կայ»։

Քրդերն իրենց զէնքերը վար առին և նստեցան մեզ մօտ։ Նոքա մեր հացն ու պանիրն առնելով—որովհետև իրենք պանիր չինել գրեթէ չգիտեն և որ պանիրը շատ թանկ է իրենց մէջ—մեզ համար իրենց կորեկ հացէն բերին և պանիրի փոխարէն ալ խորոված պատրաստեցին։

Ճաշը կերանք վերջացուցինք։ Նոքա վերջապէս իրենց անցեալ և ներկայ կեանքէն քանի մը բաներ պատմելուց յետոյ, երկու ժամուայ ճանապարհ ալ մեզ հետ ընկերացան, որպէսզի ճանապարհին որևէ վտանգ չպատահի, որովհետև ճանապարհները խիստ վտանգաւոր էին՝ քան առաւօտեան ճանապարհները, որ մենակ եկած էինք։

Երեկոյ էր, երբ հասանք Ղըզըլ-Քիլիսէ։

Ե

ՂԸԶԸԼ-ՔԻԼԻՍԷԷՆ ՓԵՐԻՆ

Առաւօտեան ճանապարհը շարունակեցինք։

Ղըզըլ-Քիլիսէն և Ցէրսիմի մութ ու մռայլ անտառները թողնելով մեր յետև՝ ուղղուեցանք դէպի

հարաւ և անցանք Խուանի վանդաւոր ու արիւնահոտ դաշտը, աջակողմ թողնելով միանգամայն Փախն ու Մեծկերտը։ Անցանք քրդական շատ մը փոքրիկ գիւղերու մօտով և վերջապէս երեկոյեան արևմտուց հասանք Շար-Սանճագի գիւղաքաղաքը Փերին, ուր այլևս «կեանքի ապահովութիւն կայ» կըսէին։

Ամբողջ չորս օր մնացինք Փերնայ մէջ։ Պտտեցանք ու դիտեցինք ամեն կողմ։ Ծանօթացանք շատ հայերու և քիչ տաճիկներու հետ։ Հետևեալ օրը Փերնայ կարաւանը պիտի ուղևորէր դէպի Քարբերդ. մենք ևս պատրաստուեցանք սոյն կարաւանին հետ ճանապարհուիլ, որովհետև Փերնայ-Ջրին և Արածանու միջավայրը, ուրկէ պիտի անցնէինք՝ «վախ կայ» կըսէին։ Ալի-զայա անունով քուրդ աւազակ մը բոյն դրած էր այդ կողմերը, և թուրք կառավարութիւնն զբաղուած էր միմիայն նորանով, բայց անկարող կգտնուէր սանձահարել այդ միակ աւազակին, իսկ աւազակն անխտիր կկողոպտէր անցուդարձ ընողներուն։

Զ

ՓԵՐԻՆԷՆ ՔԱՐԲԵՐԴ

Առաւօտ էր. Փերնայ-Ջրի աջ ափին վրայ պատրաստ կեցած էինք, ձիերուս սանձերը բռնած։ Ո՛չ լաստ կար Ջրին վրայ և ոչ էլ կէմի (մեծ մակոյկ), որով կարողանայինք Ջրի միւս կողմն անցնել, այլ պիտի անցնէինք «կէչուտ»-էն, այսինքն Ջրին մէջ

մանելով պիտի անցնէինք միւս կողմը։ Կարաւանը, որ բաղկացած էր 40—50 բեռնաւորուած ջորիներով, ջորեպաններու օգնութեամբ մաւ ջրին մէջ՝ միւս կողմն անցնելու համար, իսկ մենք հետևեցանք կարաւանի ուղղութեան, և տասը բոպէ չանցած՝ ամենքս ալ միասին հասանք ջրի միւս կողմը, ձախ եզերքը։

Կարաւանը ջրէն անցնելուց յետոյ, միմեանց յետևէ շարուելով—ինչպէս շոգեկառքի վագոնները—ճանապարհը շարունակեց, և արդարև, այդ կարաւանը Փերնայ և Բաբերդի միջև շոգեկառքի մը դերը կը կատարէր. շոգեկառքի սրընթաց անիւներու խրոխրոցի ձայները, իսկ դանդաղաքայլ կարաւանի ճընկլախներու շընկշընկոցի ձայները միևնոյն տպաւորութիւնը կթողնէին կարծեմ տեսնողին ու լսողին վրայ, որովհետև երկուքն ալ իրենց ահագին ձայներով օդը կխլացնէին։

Կարաւանի դանդաղ գնացքով՝ ամբողջ օրը գրեթէ ճանապարհորդեցինք. անցանք Փերնայ-ջրի և Արածանու միջավայրի փոքրիկ տարածութիւնը, մինչև որ հասանք Ղթ-եօգուշին, Արածանու աջ ափին վրայ, ուղիղ Պէստէկ գիւղի հիւսիսային կողմը։ Ղթ-եօգուշին, որ սոսկալի դաւիվայը մ'էր, $^3/_4$ ժամ տևողութեամբ, կվերջացնէր այլևս Չար-Սանճաղի դաշտը, որ $^3/_4$ ժամ կամ, լաւ է ըսել՝ աւելի քան 1000—1200 ոտք բարձր էր քան զԲաբերդի դաշտը։

Բաբերդի դաշտի արևելեան մասը, Ուլլ-Օվան, որպէս պարզ հայելի մ'այլևս մեր աչքերուն առջև կերևար։ Կարող եմ ըսել, որ ամբողջ Փոքր-Հայոց և Մեծ-Հայոց գեղեցիկ դաշտերու գեղեցկագոյնն էր այն, որ բազմաթիւ ու բազմամարդ հայ գիւղերով,

արուեստական անտառներով, պարտէզներով ու այգիներով տարածուած էր Տէրսիմ և Տօրոս լեռներու միջավայրը, Արածանու կամ Մուրատի ձախ կողմը։ Նորա արևելեան ճակատը, ուր այլևս կվերջանար Քարբերդի դաշտը՝ հսկայի մը նման կեցած էր Մասդառ լեռն՝ իր սուր-սուր գագաթներով, իր ծաղկաւէտ հովիտներով ու իր անդնդախոր ձորերով, որոնց մէջէն բազմաթիւ վճիտ ու սառն աղբիւրներ դուրս կժայթքէին և կոռոգէին ու կկենդանացնէին ստորոտի ամբողջ բուսականութիւնը, և վերջի վերջոյ բոլորն ի մի խառնուելով՝ կթափէին պատմական Արածանուն մէջ։ Իսկ դաշտի հարաւային կողմը, որպէս անխորտակելի պարիսպ՝ երկարած էր Տօրոսի լեռնաշղթան, որու գեղեցիկ ու արգաւանդ լանջին վրայ լճացած էր Ծոփաց լիճը—այժմու Ծովք կամ Կէօլ-Ճիւքը [1]), որ իր մշտադալար ափերուն վրայ հիւրընկալած էր Հաֆդասարի (Հաւկայ-սար, Հաւուկայ-սար) դրախտանման գիւղերը։ Իսկ հիւսիսային կողմը աստիճանաբար միմեանց վրայ բարդուած էին Տէրսիմի լեռնաշղթակոյտը, որոնց ստորոտէն վիշապի նման գալարուելով կհոսէր Արածանին, որու վրայ սակայն հայ գիւղացիներն, մասնաւորապէս Ախոռ գիւղացի-

---

[1]) Ծովքն աւելի քան 1000 ոտք բարձր է Քարբերդի դաշտէն։ Ծովքի ջուրը բարձրացաւ ժամանակի ընթացքում և շատ արտեր իր մէջը պարտքկեց։ Նա մօտալուտ կերպով կսպառնար Քարբերդի դաշտին՝ նոր ջրհեղեղ մը ստեղծելու նպատակով. բայց տեղացի ժողովուրդը Ծովքի հարաւ-արևելեան կողմէն ծակեց և բաւական քանակութեամբ ջուր խառնեց Տիգրիսի սկզբնական ճիւղին հետ, որով նա աղաստուեցաւ մեծ փորձանքէ մը։

ները, ջրի հոսանքին ընթացքով՝ մեծ կամ փոքր լաստախմբերով կնաւարկէին, որոնց ոմանք միայն ձկնորսութիւն կընէին, ոմանք Բալահովտէն կամ Բարբերդի դաշտէն մեծ քանակութեամբ ցորեն, գարի, բամպակ, թութ (չոր), գինի, չամիչ, տախտակ, գերան և այլն և այլն, կփոխադրէին դէպի վար—Քարբերդ, Կապան-Մատէն, Մալաթիա և մինչև իսկ դէպի Ասորիք—Միջագետք, մինչև Մուսուլ (Նինուէ), Բաբելոն։ Ցաճախ կպատահէր, որ Քարբերդի հայ գիւղացիներն իրենց լաստային խմբերով, որոնց պէտք է Եփրատի վրայ երթևեկող լաստային նաւատորմիղ անուանել, կնաւարկէին դէպի Մուսուլ և դէպի Բաբելոն, տանելով իրենց հետ Հայաստանի բերքերը, որոնք անշուշտ այն կողմերը չէին գտնուիր. տարածները կծախէին և այնտեղէն իրենց հետ կբերէին գլխաւորապէս արմաւ (խուրմայ), մսացու ոչխարներ և այլն և այլն, ինչ բան որ վերջապէս չի գտնուիր Հայաստանի մէջ։ Դոքա կվերադառնային ցամաքային ճանապարհով, ամբողջ Միջագետքն անցնելով (Տիգրանակերտի գծով) և կհասնէին Քարբերդ։

Եւ ահա այս ընութեան հրաշալի գեղեցկութեան մէջ սքանչելի դիրք մ'ունի Քարբերդի դաշտը, որ կը տարածուի 6—7 ժամ լայնութեամբ և 13—15 ժամ երկարութեամբ։ Նորա մէջ հաստատուած էին աւելի քան 300 գիւղեր (50—1500 տուներէ բաղկացեալ), որոնց մեծագոյն մասն հայեր են [1]) և բոլորովին երկրագործութեամբ պարապողներ։

---

[1]) Քարբերդի քաղաքն իր շրջակայ մօտիկ գիւղերով կհաշուուի աւելի քան 300,000 հայ բնակիչներ։

Չիերը մեր յետևէն քաշելով՝ մեծ դժուարութեամբ հաղիւ Ոթ—եօգուշիէն իջանք և հանդիստ առինք Պէստէկ քրդարնակ գիւղին մէջ։ Գիւղը բաղկացած էր 35 —40 տուներէ, որոնց բնակիչներն ընդհանրապէս կպարապէին երկրագործութեամբ և մանաւորապէս ձկնորսութեամբ։

Մօտեցանք դէպի գետեղերքը։ Կէմին պատրաստ կեցած էր այնտեղ, որով պիտի անցնէինք ամենքս։ Կէմին խարխուլ տաշի մը նմանութիւնն ունէր. իր մէջ հաղիւ թէ տեղաւորուէին 9—10 ջորիներ և 10—15 մարդեր։ Ժողովուրդն այդ կէմիներուն շատ անգամ էճէլ պէշիկի (մահուան օրօրոց) կանուանէր, որովհետև յաճախ նա չկարողանալով ուղիղ գծով յառաջանալ՝ ջրի հոսանքին հետ կերթար և կընդհարուէր գետակի ժայռերուն և կխորտակուէր, որուն մէջ գտնուողներն անտարակոյս մեծ մասամբ կենթարկուէին կորստեան վտանգին։ Լաստախմբով ճանապարհորդել գետի վրայէն մինչև Բաբելոն աւելի հեշտ և ապահով էր, քան թէ այդ էճէլ պէշիկի կէմիներով գետի մէկ ափէն դէպի միւս ափն անցնել. որովհետև լաստի հարիւր տիկերէն եթէ երկու—երեք կամ նոյն-իսկ մէկն ալ որ ողջ մնար՝ դարձեալ նրանով մարդ կկարողանար ազատուել և մինչև իսկ իր նպատակին ալ հասնել. բայց, Աստուած մի արասցէ, եթէ կէմիին մէկ տախտակն ալ պոկուէր՝ ալ ազատում չկար։ Ջուրը կլեցուէր նորա մէջ, և վայրկենապէս նա կխորասուզուէր ջրին տակ։

Կէմին հաղիւ կարողացաւ, 8—9 անգամով, ամբողջ կարաւանն անցընել Արածանու միւս ափը։ Վերջին անգամով մենք ևս մեծ դժուարութեամբ ան-

ցանք միւս ափը, ուր կար Ախոռ հայաբնակ գիւղը, որ բաղկացած էր 90—100 տուներէ։

Կարաւանն յետ թողնելով՝ ճանապարհը շարունակեցինք գեղեցիկ ծառուղիներու միջով, որ կազմուած էր թթենիներով ու բարտիներով, մինչև որ չորս ժամէն հասանք Քարբերդի սիրուն քաղաքը, երբ արդէն մութ գիշեր էր։

ԵՐԿՐՈՐԴ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԳԷՊԻ ՏԷՐՄԷՄ

Ա

ՀԱՒԱՒԷՆ ՃԱՆԻԿ

Հաւաւը, ուրկէ պիտի մեկնէինք դէպի ճանիկ՝ 220 տուներէ բաղկացեալ զուտ հայաբնակ գիւղ մ'էր, որուն չորս բոլորտիքը շրջապատուած էր կաղնի անտառներով, գեղեցիկ այգիներով ու պտղատու պարտէզներով։ Նորա հարաւային կողմը, քառորդ ժամ մը հեռուն, անտառապատ լեռան մը ծաղկաւէտ լանջին վրայ կառուցուած էր Քաղցրահայեաց Ս. Աստուածածնի հոյակապ վանքը, որ իր բնական գեղեցկութեամբ ու շքեղութեամբն աւելի դիւթական երևոյթի մը կնմանէր, քան թէ իրական և արուեստական վանքի մը։ Գիւղի և վանքի մէջտեղէն կը հոսէր վտակ մը, ստուերախիտ անտառներն ու պար-

տէղները ճեղքելով, որը մօտիկ լեռներէն սկիզբ առնելով և գրեթէ Բալահովի մէկ մասն ողողելով՝ սրընթաց կերթար կթափէր Արածանու մէջ։

Երբոր մարդ հեռուէն կնայէր դէպի Հաւաւը՝ կարծես աչքերուն առջև կղատկերանար այն դրախտը, ուր Աստուած ստեղծելով մարդկութեան առաջին զոյգը՝ բնակեցուցեր էր այնտեղ, Եդեմական պարտիզին մէջ։ 1895, Հոկտ. 3-ն էր։ Առաւօտեան կանուխ բարեկամներուս վերջին հրաժեշտ տալով՝ Հաւաւին «մնաս բարով» ըսինք ես և իմ երկու առաջնորդ ընկերներս, որոնք բնիկ հաւացի էին։ Նոցա մէկն, Օհան-Վարժապետը, երկար տարիներ ուսուցչութիւն ըրած էր Մեծկերտի մէջ, իսկ միւսը, միականի Վարդան Պոյաճեանը, տասը տարիներէ ի վեր ապրեր էր Ցէրսիմի զանազան կողմեր, այլևայլ ցեղերու մէջ։

Ճանապարհը շարունակեցինք։

Օդը պարզ և մեղմ էր։ Կապոյտ երկնակամարին տակ գիշերուայ խաւարին մէջ փալփլացող աստղերն սկսած էին նսեմանալ նուազիլ պայծառ արշալոյսին առջև։ Գիւղացիներն «առաւօտք» ելլելով՝ ամենքն ալ սկսած էին դաշտ երթալ աշխատելու։ Ամենուրեք դաշտին մէջ ներդաշնակութիւն մը կտիրէր ու կլսուէր. հովիներու պարզկէկ երգերու մեղամաղձիկ ու թրրթռացող եղանակները, անասուններու մերթ ընդ մերթ բառաչն ու խրխնջիւնը, թռչուններու ճռուողիւնն ու անուշ դայլայլիկն ամբողջ դաշտը կդղրդեցնէին. հովիտն արձագանգ կուտար նոցա ու օդն ամբողջ կխլացնէր։ Եւ մարդ կարծես կամայ-ակամայ կհրապուրուէր ու կանգ կառնէր դիտելու և մտիկ ընելու զինքը շրջապատող գեղեցիկ տեսարանը, ուր

մարդ միայն կղմայլէը ու կվերանար բոլորովին։ Ուշադրութեամբ նայիր այնտեղ, ուղիղ գիւղի մեծ ակին վրայ, և ահա պիտի տեսնես դու, որ գիւղացիները— կին, աղջիկ, ծեր, տղայ, մանուկ—անսեղի բառերով աղօթք մը մրմնջալով կդիմեն դէպի ջրին ակը. պիտի տեսնես այնտեղ ու պիտի լսես, որ մէկը «Տէր, եթէ զշրթունս իմ բանաս» հոգերուխ սաղմոսն երգելով կլուացուի ու կսրբուի և երեսը խաչակնքելով կդիմէ դէպի դաշտն աշխատելու. միւսը՝ աշխատաւոր եղները կջրէ, կլուայ ու կպատրաստէ նոցա՝ մինչև իրիկուն աշխատելու, և նոյնպէս կդիմէ դէպի դաշտ։ Դարձեալ պիտի տեսնես այնտեղ, ջրակին վրայ, ուր կարմիր, կայտառ կանայք ու աղջիկներ իրենց հոլանի թևերը սօթած՝ արագ-արագ ջուր կկրեն կժերով, որպէս զի աշխատաւորներուն ճաշ պատրաստեն։ Նայիր գիւղի չորս կողմերը, ուր որ հնաւուրց խաչքարեր տնկուած կան, և դու պիտի տեսնես այնտեղ, որ գիւղացին իր եղներով գիւղէն դուրս գալով՝ խաչքարին առջև ծունր դրած՝ լռելեայն իր առաւօտեան աղօթքը կմատուցանէ առ Աստուած։ Նա ջերմեռանդաբար կաղօթէ ու իր Տիրոջմէն կխնդրէ «աշխարհի խաղաղութիւն, աղգիս Հայոց՝ սէր, միութիւն, տառապելոց՝ այցելութիւն, բանտարկելոց՝ ազատութիւն, ճանապարհորդաց՝ յաջողութիւն, առողջութիւն և հիւանդաց՝ բժշկութիւն, ննջեցելոց՝ արքայութիւն, մեղաւորաց՝ մեղքին թողութիւն և իր գործին յաջողութիւն»,—կաղօթէ ու կխնդրէ այս ամենը և ապա թէ գործի կսկսի՝ նախ «Հայր մեր» երգելով։—Տես այստեղ, գիւղի նեղքև, ուրիէ փոքրիկ հոտաղներ գառներն ու ուլերը քշելով՝ կանցնին վար-

դենիներով պատած ծառուղիներու մէջէն, և դու պիտի լսես, թէ ինչպէս ժողովրդական անուշ երգ մը երգելով կդիմեն դէպի ծաղկաւէտ արօտատեղիները։ Նայիր գիւղի վերև այգիներու մէջ, ուր այգի պահող փոքրիկ գեղջկուհիներն անընդհատ կոստոստեն ծառերու մէկ ճիւղէն դէպի միւսը. մտիկ ըրէ նոցա, և դու պիտի լսես, թէ ինչպէս նոքա «Առաւօտ լուսոյ» և ուրիշ ժողովրդական սրտառուչ մրմունջներ կերգեն, և աղու ձայները խառնուելով պայծառ առաւօտեան մեղմ զեփիւռին հետ՝ կպարզուին ամենուրեք Բալահովտի մէջ։ Վերջին անգամ նայիր այգիներու մացառապատ ճանապարհները, և դու պիտի տեսնես այնտեղ, որ կոկիկ հագուած կարգ մը հարսներ ու աղջիկներ իրենց թևերուն վրայ կողովներ անցուցած՝ ուրախ-դուարթ կդիմեն դէպի այգին՝ այգեկութ ընելու համար. պիտի նկատես նոցա անմեղ կատակները. վերջապէս պիտի տեսնես նոցա շատերը, որ յանկարծ մացառի մը և կամ վարդենու մը թփին յետև կծածկուին՝ իրենց սիրականներուն, նշանածներուն չերևալու համար, որոնք որպէս թէ պատահաբար հանդիպեցան իրենց։

Հաւատա, սիրելի ընթերցող, որ եթէ աչքովդ տեսնես ու դիտես դոցա կատակներն ու շարժումները, և ականջովդ եթէ լսես դոցա հոգերուխ աղօթքները, երգերը, մրմունջներն ու զուարճախօսութիւնները՝ պիտի սքանչանաս, սքանչանալէ աւելի՝ պիտի զգածուիս, լայ պիտի լինիս ու աղի արցունք թափես, երբ մանաւանդ ուշադիր հայեացք մը ձգես շուրջդ, ուղիղ դէպի վանքին Անապատը (վանքի հարաւային կողմը լեռ մ'է), ուր չպիտի տեսնես

պղտոր կամ ցամքած աղբիւրներ ու ակեր և կամ լճացած ու հոտած ճահիճներ, չպիտի տեսնես նաև խորշակահար բուսականութիւն, այլ վճիտ ու զուլալ աղբիւրներ ու առուակներ, որոնք ժայռերու ծերպերէն դուրս ցայտելով և ադամանդեայ հաղարումէկ գոյն տալով արևու ջինջ ու պայծառ շողերուն առջև՝ կարկաջելով կգլտորտկուին արծաթ խիճերու՞վրայէն, որոնց երկու կողմերը, որպէս անկուշտ ու տափոտ սիրահարներ, պարփակած էին մանիշակն ու շուշանը և, դեռ լինչ գիտնամ, զանազան գոյներով ու անուշ հոտերով սիրուն-սիրուն ծաղիկներ։ Ագռաւներու սուր կռինչն այնտեղ ականջներուդ մէջ չի պայթիր, այլ սոխակներու քաղցրիկ դայլայլիկը, ճնճղուկներու ճըլվըլոցը, կաքաւներու կարկնջոցը և վայրի աղաւնիներու տափոտ «զումո՜ռ, զումո՜ռ» սիրտ գալարող մեղեդիները կհնչեն ականջիդ, որոնք օրն ի բուն անընդհատ կթափառին վանքի գմբէթին ու խաչին շուրջը, ջինջ ու պայծառ օդի կապոյտին մէջ։

Քայրհատի [1]) բարձրութեան վրայ էինք։ Քանի մ'ընկերներ եկած էին մեզ ճամբեցնելու։ Նոցա դէմքին վրայ կնշմարուէր յուսահատական բան մը, որ կարծես վերջի անգամն ըլլէր մեզ հետ տեսնուելնին, որովհետև մենք պիտի ուղևորուէինք այնպիսի մի աշխարհ, որպիսին է հեքիաթներու մէջ պատ-

---

[1]) Քայրհատն Հաւաւի հիւսիս-արևելեան կողմը, հինգ բոպէ հեռաւորութեան վրայ, մեծ քարայր մ'է, ուրկէ գիւղացիները գերեզմանի, եկեղեցւոյ և այլ շինութիւններու համար քար կհանեն, որու քարն ամենաազնիւ տեսակն է Բալահովտի մէջ։

մուած եօթը գլխանի վիշապներու, գևերու, հրէշներու և երևակայական դիւցազներու աշխարհը, որու սահմաններէն դէպի ներս յառաջացողն այլևս չէր կարող ողջ-առողջ դուրս գալ, մինչև որ նոցա մէկ որոշ պահանջքը չկատարէր։

Մեզ ճամբեցնող ընկերներն ողջերթ մաղթելով մեզ՝ յետ դարձան. իսկ մենք Քայրհատի միւս կողմն անցնելով՝ սկսեցինք դառի վայր մ'իջնել, որ կշարունակուէր մինչև Փերնայ շուրջը, ուրկէ այլևս մեր աչքերէն խուսափեցաւ Հաւաւը, խուսափեցաւ նաև ամբողջ Բալահովիտը և պարզուեցաւ այլ տեսարան մը.—Ցէրսիմի ամբողջ լեռնաշղջակոյտն այլևս կերևէր մեզի, որ աստիճանաբար բարդուած էր միմեանց յետև։

Ճանապարհի աջ և ձախ կողմերն յաճախ կերևէին փոքրիկ գիւղեր (հայ), որոնք թաղուած էին ստուերախիտ պարտէզներու և այգիներու մէջ։ Գիւղացիներու հօտերը փոքրիկ հովիւներու և հովուուհիներու խնամքին յանձնուած՝ կարածէին խոտաւէտ սարերու վրայ և ձորերու մէջ։ Այդ փոքրիկ հովիւներն ու հովուուհիներն, որոնք անմեղ հրեշտակներու նման անընդհատ կթուչկոտէին ազատ սարերու վրայ՝ մեզ տեսածնուն պէս կվազէին կուգային մեր առջև, ճամբուն վրայ, և խղճալի ակնարկներ կարձակէին մեր վրայ։ Նոքա յաճախ կհարցնէին մեր ինչ ազգի պատկանելը և ուր երթալը. կոտանային պատասխանը, կխթէին միմեանց և կծիծաղէին, կժպտէին... Ո՜ գիտէ, արդեօք ինչ կմտածէին այդ անմեղ արարածները։

Կէսօր էր՝ երբ հասանք Փերնայ-ջրին եզերքը,

«Արաբ-կէշուտին» (Արաբի անցած տեղը), ուրկէ ոտքով պիտի անցնէինք ջրի միւս կողմը։ Ջուրը պղտոր և սոսկալի հոսուտ էր։ Անկարելի էր, որ մարդ տեսածին պէս չսոսկար այնպիսի կատաղութեամբ հոսող ջրէ մը, որն ամպի նման գոռալով՝ յատակէն փրփուր ու աւազ դուրս կհանէր։ Լաթերնիս հանելով՝ փաթաթեցինք վզերնուս վրայ և դող ի դող մտանք ջրին մէջ։ Ջուրն առաջին անդամ մինչև ծնկերնիս բարձրացաւ, յետոյ քիչ մ'աւելի, և այսպէս հետզհետէ մինչև կուրծքերնիս թաղուեցանք։ Ո՛րչափ որ յամրաքայլ կյառաջանայինք՝ այնչափ նաև կը սկսէինք արագ-արագ հեւալ ու հեւալ։ Եւ մինչև որ ջրին մէջտեղն հասանք՝ ես արդէն գոյնս փոխած էի, գլուխս սկսած էր դառնալ ու աչքերս մթնտել։ Ամբողջ լեռներն սկսած էին շուրջս դառնալ. ես այնպէս կերևակայէի, թէ ես կեցած եմ, ջուրն ալ կեցած է, այլ միմիայն լեռներն են որ շարունակ պտոյտ կընեն մեր շուրջը։

Տասը բոպէ չանցած՝ ջրի միւս եղերքն արդէն հասել էինք, ուր տաք-տաք աւաղներուն վրայ նստելով՝ սկսեցինք լաթերնիս հագնիլ։

Սա՝ Տէրսիմի սահմանն էր, որ Բալահովտէն անցանք։

Ճանապարհը շարունակեցինք ուղիղ գետեղրն իվեր, որն անընդհատ ելևէջներով զառիվեր մ'էր։ Գետն իր կատաղի յորձանքը զարնելով գետափի ապառաժներուն՝ պղտոր ջուրն անձրևի նման մեր գլխուն վրայ կսրսկէր։

Երեկոյ էր՝ երբ հասանք ճանիկ գիւղը։ Գիւղն 35 տուներէ բաղկացեալ հայ-քրդախառն աղքատիկ

գիւղ մ'էր, հաստատուած փոքրիկ լեռնադաշտի մը վրայ, որու 15 տունն հայեր էին, իսկ 20-ը քրդեր։ Հայերն ոչ եկեղեցի ունին և ոչ ալ դպրոց։ Նոքա տարին մէկ-երկու անգամ մօտակայ գիւղերէն հայ քահանայ կհրաւիրեն իրենց տները՝ խոստովանելու և հաղորդուելու համար։ Իսկ երեխաները կուղարկէին նոյնպէս մօտակայ հայ գիւղերը գիր-կարդալ սովորելու համար։

Գիւղի տեսարանը խիստ չոր էր. նա զուրկ էր ճոխ բուսականութենէ։ Նոքա առջևի կողմը կտեսնուէին քարերով պատած քանի մ'արտեր, որոնց մէջ կորեկ ու կըլկըլ ցաներ էին գիւղացիները։ Գիւղն անշուք, տունները՝ ցած ու գետնափոր, փողոցներն՝ անկանոն և խիստ աղտոտ էին։ Պատերուն վրայ կոդեր էին կշկու (աթար), որու պատճառաւ ալ խիստ զզուելի գարշահոտութիւն մը կբուրէր գիւղէն, որ կարծես ամբողջովին ախոռ մը լինէր։ Քուրդ աղաները նստած էին այդ աղտոտ փողոցներուն մէջ, դռներուն առջև, ու իրենց երկայնափող չպուխները լիքը ծխախոտով՝ կուշտ-կուշտ կծխէին և անընդհատ կատակներ կընէին միմեանց հետ։ Նոքա հագնուած էին երկար փէշերով էնթարիներ և կապոյտ չուխայով բաճկոններ. մէջքերնին կապեր էին պարսկական մէկ-մէկ շալ, գլուխներուն վրայ դրած էին մէկ-մէկ երկար դիրքով կարմիր ֆէս, որոնց վրայ սակայն փաթաթեր էին գոյնզգոյն—կարմիր, դեղին, կանաչ կայլն—լաչակներ. իսկ ոտքերնին հագեր էին կարմիր կամ դեղին կօշիկներ (եէմէնի կամ չուստ)։ Նոցա առջև պատրաստ կանգներ էին քանի մը հայ ծառաներ՝ աղաներու հրամաններ կատարելու—ջուր,

կրակ եայն բերելու համար, որոնք սակայն հագնուեր էին մաշուած ու աղտոտած՝ այծի մազէ գործուած շալվարներ և մէկ-մէկ հատ ալ ջուլէ բաճկոններ, միանգամայն կուրծքերնին բոլորովին բաց։ Ոմանց գլխուն վրայ կար ձիթոտած հին ֆէս մը, իսկ ոմանցն ալ՝ քրքրուած քուլայ մը (քօլօզ). ոտքերնին բոլորովին բոպիկ էր։

Վարդանն առաջնորդեց մեզ հայու մը տան դռան առջև, ուր նա իր ձեռքը դռան սողնակը կոխելով՝ խարխլած դռան փայտէ կողպէքը բացեց և ներս անցաւ, իսկ մենք հետևեցանք իրեն։ Տունը գետնափոր այր մ'էր, քան թէ տուն։ Լուսամուտներ չունենալուն համար սաստիկ մութ էր. երբէք բան չէր տեսնուէր, միայն մութ անկիւններէն կլսուէին անասուններու շնչառութեան ֆրսֆրսուկի ձայներ։ Վերջապէս տան պատերն ու սիւները խարխափելով՝ հազիւ կարողացանք հասնել մինչև «կրակ-տունը» ուր ծխացող օճախի մ'առջև բոլորուած նստած էին տնեցիները։

Կրակ-տունը բաղկացած էր քառակուսի խոշոր ու մութ սենեակէ մը։ Նորա վարի կողմը, սենեակի ներքև, շինուած էր կիսապատ մը, որու յետևի կողմը կապած էին տանը տաւարները. ուստի դա ախոռն էր, որու մէջ կլինէր նաև, անշուշտ, «ախոռ-սէքիսի» մը, որ ընդ միշտ հիւրատան տեղ կծառայէ դիւղացիներու համար։ Ախոռի հանդէպ, կրակատան վերևի կողմը, կտեսնուէին կարգ մը հողէ փեթակներ, որոնց մէջ լեցուած էին իրենց տարուան ուտելու պաշարը։ Նոցա առջև շարած էին խոնը (փայտէ կլոր սեղան), դգալնոցը, հողէ աղամանը և կարմիր հողէ շին-

ուած ջրի կուժը, որ այս վերջինի վրայ կար նաև կարմիր «կոտիկ» մը (թաս)։ Սենեակի մէկ անկիւնը դիզուած էին կարգ մը մաշուած դոշակներ ու վերմակներ, իսկ պատերէն վար կախուած էին մրոտած զանազան գոյներով կտաւէ տոպրակներ, որոնց մէջ լեցուցած էին չորցուած բանջարեղէններ։ Իսկ միւս անկիւնը խարխլած օճախ մը կմխար, որուն երկու կողմերը փռուած էին քանի մը կարտած շուլեր՝ վրան նստելու համար։ Օճախին յետեւի կողմը դրուած էր կերակուրին պուտուկը, որու մօտ նաև երես ի վար կործուած էին մէկ-երկու չանախներ, որոնց միջով կուտէին ամեն տեսակ կերակուրներ։ Օճախին դէմ՝ ուղիղ տան կենդրոնը, տնկուած էր հաստ, մրոտած ու ձէթոտած սիւն մը, որմէ վար կախեր էին «ճրագդիլ» մը, որուն վրայ ագօտ լուսով կպլպլար ձէթէ փոքրիկ ճրագը։ Եւ ահա ինչ որ կկազմէր տան կահկարասիքը։ Զմռռանամ ըսելու նաև, որ դուռն յետեւի կողմը դրուած էին խոփն ու արօրը և երկրագործական քանի մը գործիքներ։

Վառուող օճախի շուրջը բոլորուած էին Կիրօ-Քէյան—այսպէս էր տանտիրոջ անունը—և նորա պառաւ կինն ու զաւակները։ Նոքա մեզ տեսածնուն պէս, բացի Կիրօ-քէյայէն, ամենքն ալ ոտքի վրայ ելան և ամենայն սիրով հիւրասիրեցին մեզ։ Մենք առաջ երթալով՝ բարեւեցինք բոլոր տնեցիներուն և ապա անցանք օճախի մէկ կողմը, Կիրօ-քէյայի դիմաց նստեցանք։

Կիրօ-քէյան ըստ երեւոյթին խիստ համակրելի բնաւորութիւն մ'ու համակրելի դէմք մ'ունէր։ Գիրուկ, միջահասակ, ամուր կազմուածքով 90—95 տարեկան ծերունի մ'էր։ Նա հագնուած էր գեղջկական

պարզ տարաղ. մաղէ շալվար մը, ճերմակ կտաւէ բաճկոն մ'ու կապոյտ կտաւէ կրկնաբաճկոն մը. մաղոտ կուրծքը կիսով չափ բաց, և որպէս գոտի՝ մէջքէն փաթաթեր էր 5—6 արշին կապոյտ կտաւ, որմէ վար կախուած էր ծխախոտի փոքրիկ կարմիր քէսան (տոպրակը), և նորա կողմն ալ՝ ծխափողի երկայն չպուխը. իսկ գլխուն դրած էր խոշոր քուլայ մը, որուն վրայ փաթաթեր էր նաև քանի մը կանգուն գոյնզգոյն շիթեր, որոնց մաշուած ու քրքրուած թելերը սակայն կախուեր էին նորա սպիտակախառն թաւ յօնքերու և կապոյտ ջրալից աչքերուն վրայ:

Երբ կարգ մը խօսակցութիւններէ յետոյ Կիրոքէյայէն հարցուցի, թէ ինչու՞ իրենց տներն այդպէս գետնափոր շիներ են և ինչու՞ այդպէս անկանոն ու անճաշակ հագնուեր են փոխանակ լաւի՝ նա ի միջի այլոց պատմեց հետեւեալ պատմութիւնը, որն իր բարբառով ու ոճով յառաջ կբերեմ այստեղ:

«Մեր Զար-Սանճախն օր (որ) կայ,—սկսեց նա այսպէս—Տէրսիմու մենծ մասն ա, ու շատ ըլ գեղեր ունի: Շատ մի աշիրաթներ կային—կան—ատ գեղերուն մէջ, օր հին ատենները, պապս կըսէր, օտար տեղերէ եկած ու ընակուած են աս մեր կո(ղ)մերը. անոնց շատերը մառան, անցան գացին. հիմա անոնց մինակ մենծերը Իսախ պակն ու Օսման պակն են. մէկալները շատ բանի չեն ի գար:

«Աղայիս ըսիմ, աղէկ մտիկ էրա ինծի, օր հասկնաս: Հիմայ իմ աս տարիքս տօխսան—տօխսանը հինգ (90-95) կայ. ե(ր)բօր ես 15 տարեկան էի նը՛, աղայիս ըսիմ, աս մեր կո(ղ)մերը Ենիշարի ու Տարապակիներ կային, օր ատոնց մինակ չորս

հատը գլխաւոր էին։ Հա, ատոնք իրենց ձառքին տակ շատ մի քուրդ աղաներ ունենալէն զատ, աս տեղաց հայերն ալ իրենց մէջ թախսիմ (բաժանում) էրած էին. ինչու օր ամենքս ալ անոնց հսիր (գերի) էանք։ Հիքիմաթ (կառավարութիւն) չի կար ան ատենը. աս տեղաց հիքիմաթն ալ իրենք էին ու թագաւորն ալ։ Ինչպէս օր աստեղ հիքիմաթ չի կար՝ անպէս ալ՝ Խարբերդ, Բալու, Ըրաբկեր, Ակը, Մալաթիա, Ֆինչ գինամ ալ, Ցիարպաքիր, պիթուն (բոլոր) կո(ղ)մերն ալ տարապակիներուն ձառքով էր։ Էրկրի հողերը, ջրերը, տները, մալերն ու միլքերը պիթունն ալ տարապակիներունն էր։ Տարապակին թէ օր ուզէր՝ մեզի կը պէյէր (պահէր), թէ օր չուզէր՝ չէր պէյէր—ինչպէս հիմայ ալ. թէ օր ուզէր՝ կը մորթէր, թէ օր չուզէր՝ չէր մորթէր։ Ու, կէօզինի սավտիկիմ (աչքդ սիրեմ), ասի ասպէս, հայերս տարին տասներկու ամիս՝ օլուկով ու ճուճուկով կը բանէանք, կդատէանք մինակ անոնց համար։ Շատ հեղու (անգամ) կըլլէր օր, ե(ր)ը մէկ տարապակին մէկալ տարապակուն դէմ տուշմանութէն ունենար՝ մեզ—էրկու կո(ղ)մի պակերուն հայերս—դիմաց դէմ կկայնըցընէին ու մէկմէկու դէմ ծեծիւ (կռիւ) էնել կուտային. հազկէ օր (մինչև որ) մէկ կո(ղ)մինը աղկէկ մի ջարդուէր ու ալթ ըլլէր (յաղթուէր)։ Ե(ր)ը որ հայերուս մէջ աղկէկ հարս մի, աջխին (աղջիկ) մի, եա (կամ) կըրիճ տղայ մի օր տեսնային՝ եա (ս)պաննել, եա տանկցնել պիտի տային... վար հասըլի (վերջապէս), մենք պիթունս ալ անոնց համար կապրէանք ու կաճէանք... մէկ խօսքով—մեղայ, մեղայ—մեր ասուաղն (Աստուած) անոնք էին։

«Հեղ մի, միտքս կուգայ օր պիթուն պակերն ու աղանները մէկմէկու հետ պարբշուեցան (հաշտուեցան), և պիթունն ալ մէկտեղ թօփուեցան (հաւաքուեցան) աստեղ՝ քէֆ էնելու։ Աղայիս ըսիմ, ինչ տեսնանք, աղէկ ա. հեղ մալ տեսանք օր պիթուն պակերն ու աղանները իրենց հայերը թօփեցին ու ըսին. «պիտի էլլաք ատ եաղինը (դաշտ) փոսերուն մէջ նստէք (մէկ արշն խորութեամբ), օր պակերն ու աղանները ճիրիթ պիտի խաղան ձեր վրայէն»։

«Ա՜խ, սև օր, սև՜ օր,—բացագանչեց ու լացեց խեղճ Ծերունին և շարունակեց.—Չատ լացանք, չատ աղաչեցանք, չատ պաղատեցանք ու գացանք ատ պակերուն ոտքերը պագանք, որ խղճան մեզի. ըմբ ինչ ֆայտայ (օգուտ). մեր լացն ու աղի-արցունքը նա՛ (ոչ) Ասուաղ լսեց, նա՛ ալ ատ անասուաղ պակերը։ Պիթունիս ալ (տղամարդեր) հանեցին ու եաղնին մէջ փորած փոսերուն մէջ նըստըցուցին, ու պաշլըյէցին (սկսեցին) ձիանը ատ ու ան կո(ղ)մ քշել ու խաղցնել մեր վրայէն... Վա՜խ, վա՜խ, վա՜խ, սէֆի՜լ (խեղճ) հայերը... Պաղիսին (ոմանք) մառան, պաղիսուն գըլօխը ճըղքաւ, պաղիսուն փառթը (փորոտիք) դուրս թափաւ, պաղիսուն ալ թեը կոյրաւ (կոտրեցաւ), ճուռը կոյրաւ, աչքը ելաւ... վա՜յ գիտնայ, ալ ինչեր եղաւ։

«Ես օր քառասուն տարեկան եղայ՝ տահա (դեռ) ատ կո(ղ)մերն ատպէս էր։ Ասսու օրը՝ մեր գեղերուն մէջ թապուռներով (վաշտ) Ենիչարիներ, Զաշաններ, Զարքաղներ, Առնաուտներ ու ֆասլիներ կուգային։ Ու ատոնք օր հոս կուգային նը՝ մեր տըվներուն մէջ կնստէին, կկայնէին, կուտէին, կխմէին ու գիշերները կպառկէին։ Ե(ր)բ որ հաց ո՛ուտէին (պիտի

ուտէին), ավա՛լ-ավա՛լ (ամենէն առաջ) միշ քիլասի (աստամներու վարձք) կուղէին մեր մընէ, աղայիս ըսեմ. օր չի տայեանք՝ ալ խալըսում (ազատում) չունէանք անոնց ձառքէն։ Գիշերն օր տըվներնուս մէջ մընային՝ ալ հարս աշխին չէին թողուր, կքաշէին ու իրենց ծոցը կառնէին։ Ըմբ մենք ինչ կընայինք ընէր անոնց՝ օր թուր ու թըֆանք ունէին իրենց ձառքին մէջ, ու մենք ալ՝ հէչ բան մի չունէանք. հասկցա՞ր, աղաս։

«Վա՛ր հասըլի, մեր աս տեղաց հալն ատպէս էր, հա՛ղկէ օր Խոդամպուլէն (Կ. Պոլսէն) Ռաշիտ փաշան եկաւ Խարբերդ, ու, աղայիս ըսիմ, պաշլայեց պիթուն տարապակիներուն, աղաներուն, շէխերուն, խոշոր գլօխներուն ու մեծամեծներուն կախել, կըյրել, քերդել ու տիկ հանել [1]... Կէօղինի սավտիկիմի, ողորմած հոգի Ռաշիտ փաշան օր ատպէս չերբա՞ց, պիթուն տաճիկներուն ու քրդերուն մէջ ահ ընկաւ։ Ճատերը կըսէին քի, «աստ փաշան կեավուռ ա. օր ե(ր)ր անի ասկէ դիպի Ցիարպէքիր գնաց նը՛ անտեղ աղուլեղին (թունաւորեցին) ու մառցուցին աստ խեղճին, ըսելով քի՝ «ասի կէավուռ ա, ու կէավուռներուն թագաւորութին 'տի կայնըցընա»։

---

[1]) Այս վերջի մասը լսած էի նաև 120 տարեկան մեծ մօրմէս, որն ականատես եղած էր Քարբերդի մէջ՝ Ռաշիտ փաշայի գործքին։ Նա կպատմէր, որ Ռաշիտ փաշի գալած ժամանակ, Քարբերդի Հօթել Ճատէ Հաճի-խանըմը մեծ բազմութեամբ սոսկալի դիմադրութիւն ցոյց տուեց Օսմանեան բանակին, որ բարենորոգմանց համար Կ. Պոլսէն ղրկուած էր, —և շատ զինուորներ ջարդել տուեց. բայց տեղացի հայերը եռանդուն աջակցութիւն ցոյց տուին Ռաշիտ փաշին, մինչև որ նա երկար ժամանակ պատերազմելուց յետոյ, կարողացաւ միացեալ եփրատն անցնելով՝ Քարբերդ մտնել։

«Ի՞նչ գլօխդ ցաւցնիմ, վար հասըլի, մենք օր լսեցանք քի Ռաշիտ փաշան եկած ա Խարբերդ ու անտեղաց հայերուն կպաշ(տ)պանա՝ օղորմած հոգի աղբօրս հետ խորուրդ էրինք, օր էլլանք դոր Խարբերդ էրթանք ու աս տեղաց պակերուն վրայով գանկատ տանք։ Ըմը աս տեղաց պակերն օր լսեցին, քի ատպէս բաներ կայ (Ռաշիտ փաշի ջերմ պաշտպանութիւնն առ հայս)՝ Զար-Սանճախի չորս բոլորտիքը մարդ կայնըցուցին, օր աստեղաց հայերը Խարբերդ չերթան ու իրենց վրայով բաներ չի նախլեն (պատմեն)։ Թող անոնք ատպէս մարդ կայնըցնեն, մենք ըլ աս կո(ղ)մը մեր գործուն հայինք։ Աղայիս ըսեմ, օր մի էս ու իմ լուսահոգի աղբարս գիշերով էլանք փախանք գացանք դոր Խարբերդ, ու հոն հասսաղներուս պէս, ալա (լաւ) արդուհալ մի (աղերս) տօնանտուրմիշ էրանք (գարդարեցինք) ու տուանք Ռաշիտ փաշին. ըմը ինտուր արդուհալ օր, դիտէս, շունն օր ուտէր անի՝ կկատղէր. ալ մի հարցնէր դուն։ Հա, ատ արդուհալը տալէն երկու օր սողը (վերջը), կէօղինի սավտիկիմի, ինչ տեսնանք աղէկ ա. հեղ մ'ըլ տեսանք օր, մեր Զար-Սանճախի պիթուն պակերուն, աղաներուն, չէխէրուն ու մեծամեծներուն ձառքերն ետևները կապտուած՝ դոր Խարբերդ բերին։ Մէկ իրկունը բերին, մէկալ վաղվընէն (առաւօտը) պիթունին ըլ մէկ տեղ հանեցին տարին Ասլան-Աղբիւրին դոը[1]), ու անտեղ պաղիսուն կախեցին, պա-

[1]) Ասլան-աղբիւր՝ Քարբերդի հին և նոր քաղաքներու ճիշտ մէջ տեղն է, լեռան ստորոտը, ուր կմիանան ու կրաժնուին զանազան մեծ ու փոքր ճանապարհներ՝ զանազան քաղաքներ երթալու համար։

զիսուն գլխատեցին, պաղիսուն խաղուին (հաստ ցից) հանեցին, պաղիսուն վրան խաղեաղի (նաֆթ) լեցուցին ու վառեցին, պաղիսուն քերթեցին ու տիկ հանեցին, պաղիսուն ըլ՝ աչուղ պուրդուսին զարկին. վով գիտէ, ալ ինչեր ըսես օր չբերին ատոնց գլխուն: Հրպա ատոնց ձաներնին!!, մեղայ Տէր, ալ մի ըսեր դուն, արարոց-աշխարհք լեցաւ... եաման-մատաթ (օգնութիւն, Աստուած), պիթուն լառները ինկիլամիշ (վայնասուն) կըլլէին... Հասկցար մի, աղա՛ս. ալ սիրտ չէր դիմանար:

«Ասսու օրն ատտեղ 8—10 հատ խոշոր գլօխ մենծամենծներ պիտի բերէին ու պիտի կախէին ու կըլրէին: Տաճիկները հրպը, հէչ չես հարցներ, մկան ծակ մի հազար քէսայի [1]) կրընտուտէին, ըմի, ինչ ֆայտայ, չի կար: Զատ ու շատ պէթաբ (գէշ) կը վախնային ատ փաշայէն, չունքի (որովհետև) Ռաշիտ փաշան մէկէն ի մէկ չէր մաուցնէր ատոնց, օր խալըսէին (ազատուէին). հրպը անոնց թանթախ (կակուղ) մսերէն կկախէր չանկալներուն վրայ, օր իրեք չորս օր անպէս կպօռայիր, կպօռայիր ու կսատկէին:

«Ռաշիտ փաշան ասպէս Խարբերդու մէջ քանի մ'ամիս մնալով՝ օրթալըղը (մէջտեղը) էփէյի (բաւական) խաղաղութիւն էրաց: Տաճիկներն ալ ասիութիւն (ապստամբ) չէին էնէր. պիթունն ըլ հրռաթ (հանդարտ) էին, չունքի Ռաշիտ փաշան աղքատի խըլըխ (կերպ) մտած՝ ամեն հեղ, ամեն տեղ թապտիլ (ծըպտած) կոլըրտէր ու կհայէր էրկրի հալը, էրկրի դրու-

---

[1]) Իւրաքանչիւր քէսան հաւասար է հարիւր հազար (100,000) ղուրուշի:

թինը... Ալ վոմ կընար ճրգտուք հանել, ձան հանել. վոմ կընար հայուն ըսել քի աչքիդ վրայ ունք (յոնք) կայ-չի կայ, եա տա (կամ թէ) դուն վոմ ես—վոմ չես, ուր կերթաս—ուր չես երթար. չունքի, ափանտը՛մ, ամեն տեղ նիզամ՝ (օրէնք, ոստիկանութիւն) կար. վոմ որ մէկուն ծուռ հայէր՝ ալ Ասուաղ անտեղ բան չունէր. անոր հախէն կուգային։

«Անցաւ քանիմ՝չարաթ. կէօղինի սավտիկիմի, հե(ղ) մ՝ըլ տէսանք օր, ըսին քի՝ Ռաշիտ փաշան Խարբերդու պիթուն իշուանները (իշխանները) կանչած ու ըսած ա.—«Օղուլներս, ես կտեսնամ օր դուք աս տաճիկներու ձառքը շատ կնեղուիք ու օր-արև չէք տեսնար. հիմայ ես կուզեմ օր, աս ազգը զատեմ ձեր մընէ, ու եա ձեզ Եարպաքիր (Տիգրանակերտ) ճամբեմ ու անտեղաց տաճիկները աստեղ բերել տամ, եա աստեղի տաճիկները անտեղ ճամբեմ ու անտեղաց հայերը աստեղ բերել տամ. ո՞ր կուզէք, ըսէք ինծի օր, անպէս ընեմ»։—«Փաշա ափանտի, ըսին մենծամենծ իշուանները. մենք ինտո՞ւր, ի՞նչ թավուր (պէս) 'տի զատուինք. կվախնանք օր անոնք ան տեղն մեր վրայ պասխուն (արշաւանք) դան»։—«Օղո՛ւլ, ըսաց փաշան. ես ատոնք պիթունն ըլ գիտեմ ու խորհեր եմ. ինչ թավուր էնէլն՝ իմ բանս ա։ Հիմայ դուք ձեր մէջ օրոշեցէք՝ ո՞ր մի տեղը կուզէք. ես ձեզ իրարու մընէ կդատիմ. ու ձեզի սիլահ (զէնք) ըլ կուտամ, ամեն բան ըլ կէնիմ ձեզի համար. ան վախթը դուք ձեր մընէ նիզամ (ոստիկանութիւն) ըլ չինեցէք, ու ակար (եթէ) Ասուած ինծիս սաղ-սալիմ (ողջ-առողջ) Խոդամպուլ օր հասցուց նէ՝ ես ձեզի մէկ խելացի հայ փաշայ մ՝ըլ կճամբեմ. դուք մինակ

քի՝ ձեր վերկուն (զինուորական տուրք) տարուց տարի ճամբեցէք մեր թագաւոր ապրածին»։—«Փաշայ աֆանտի, ոտքդ պագնենք,—կինա ըսին մեր իշուանները.—թող թագաւոր ապրածը օղջ կենայ. մեզի իրէք օր մէյլաթ (միջոց) տուր, օր մենք մեզի աղէկ մի խորհինք։

«Փաշան երեք օր մէյլաթ տուեց իշուաններուն, օր, աղայիս ըսիմ, էրթան խորհուրդ էնեն։ Իշուանները թօփան գացին խորհուրդ ընելու։ Մենք ալ՝ լուսահոգի աղբօրս հետ գացանք առ մայլիսին (մէճլիս, ժողով) գտուեցանք։ Նէրս մտանք, էլէօղինի սավտիկիմի, ու դոր գացանք ախոռ սաքուսին, օր ինչ տեսնանք, աղէկ ա. տեսանք օր պիթուն ճերմակ մօրուք մեծամեծ իշուաններ շարուած էին թախտին վրայ ու կիյա (իրրև) խորհուրդ կէնէին մէկմէկու հետ։ Դուն հոն ըլլէիր ու հե(ղ) մի անոնց գլօխները տեսնայիր՝ զար տ'ըսէիր (պիտի ըսէիր) քի՝ գլօխները մենծ ա, քան գլուխները։ Գինին ու արաղը մէջտեղ դրած՝ կխմէին։ Մեզ օր տեսան՝ կանչեցին ու պաշլայեցին մեզի ալ խըմցնել, ըմը օղորմած հոգի աղբարս չի խըմեց։ Ի՞նչ գլօխդ ցաւցնեմ. ալ էփէյի գլօխները տաքացած ու պիթունն ալ ճերմակ ու կարմիր ձիանը հեծած էին։[1])

Մայլիսի ռայիսը (նախագահը) ըսաց. «Է՞հ, տղա՛ք, գիտեմ քի դուք ալ էփէյի բան տեսած ու լսած էք, էփէյի բան գիտէք ու կհասկընաք. հիմայ

---

1) Սա տեսակ մ'այլաբանօրէն ըսուածք է, որ կգործածեն՝ երբ մէկը խմած ու հարբած է. եթէ մարդն օղիով հարբած է՝ կըսեն. ճերմակ ձին է հեծեր, իսկ եթէ գինիով՝ կըսեն. կարմիր ձին է հեծեր։

դուք ինչ տ՝ըսէք Ռաշիտ փաշի աս խօսքին»։ Մարդ մի անդիէն ելաւ ու ըսաց. «աղբրտիք, ասի յատուկ Աստու մրնէ է, օր տաճիկ փաշան կուզա մեզի զատել աս անօրէններուն ձառքէն... Դ՝եկէք (դէհ, եկէք) օր զատուինք»։ Ուրիշ մ՝ըլ անդիէն ըսաց քի՝ ակար կուզէք օր զատուինք՝ եկէք օր Եարպաքիրն ուղենք, օր անոր քաղաքը պատան ունի (պարիսպով է)։ Մէկը «հա» ըսաց, մէկալն ըլ «չէ» ըսաց, ու ասպէս մայլիսը խառնեցին ու պաշլայեցին պօռալ ու պօռպըռալ. մարդ մարդու խօսք չէր կրնար հասկնար։ Օղորմած հոգի աղբարս ըլ ատ վախթը ելաւ ու ըսաց. «ձաներնիդ վար դրէք օր, աղբրտիք, ես ըլ բան մի տ՝ըսիմ։ Հա. գիտէք ինչու աս տաճիկները կըյրիճ ու հարուստ եղած են. անոր համար օր անոնք երկրին աղկէկ տեղուանքն են նստած ու բընակըռած, ըմը մենք դոր եաղիններուն մէջ ենք լեցուած։ Մենք կբանինք, կդատինք. անոնք կուգան կխլեն մեր ձառքերէն. անոնք զանկին (հարուստ) ու մենք՝ աղքատ... Հիմայ օր ակար կուզէք մարդ ըլլիլ՝ դ՝եկէք օր զատուինք ու աս Խարբերդն ուղինք, ինչու օր աստեղ շատ աղէկ ա. ամեն բան կըլլի։ Ե(ր)բոր աստեղայ տաճիկներն անտեղ ճամբեն ու անտեղայ հայերն ըլ օր աստեղ բերեն՝ շատերնիս կերթանք Տէրսիմու բարս (բարձր) լառներուն վրայ կընակըուինք. հոն փատ (փայտ) ըլ շատ կայ, մէյվայ (միրգ) ըլ շատ կայ, ու ամեն բան ըլ շատ կայ. օշխար ըլ կպէյինք. հերիք ա օր փաշան մեզի սիլահ ըլ կուտայ. ան վախտն ամեն բան շատ կըլլի ու աղէկ կըլլի։ Ե(ր)բոր տուշման մի գայ մեր վրայ՝ ան վախտն մենք ըլ կըյրիճի պէս կծեծուինք (կռուիլ) հետերը.

ալ վոմ կրնայ մեզի դէմ կենալ։ Ակար օր մենք մէկ սիրտ ու մէկ հոգի ըլլինք՝ Աստուած վկայ, ալ մեր կրնակը դեռին չիդար։ Ըմը Եարպաքիր ըսած տեղդ՝ տուզ օվա ա (դուրան դաշտ է). անոր Եարպաքիրու չօլը (ճահիճ) կըսեն. մարդուս մարը կլացնա, գիտէք. պիթունս ըլ անտեղ կմառնինք. անտեղ չենք կրնար բնակուիլ, չունքի չենք սորված անտեղաց հավային (կլիմային)... Վար հասըլի, մեզի պէս մարդոց համար աղէկ չա անդէս տեղ, ինչերուս պէտք ա, եկէք օր աստեղ ուղենք, աղբրտիք, ինչու կվախնաք»։

«Կինա մէկն «հա» ըսաց, մէկալն ըլ «չէ» ըսաց, ու կինա խառնուեցան իրար։ Ռայիսն ատ վախտն ըսաց. «տղաքս, մի պօտպուաք, դուք տահա ճահիլ էք, ըմը ես ձեզի պէս տղաքներ ունիմ. հէյ, աս ճերմակ գլօխս նէշա՞-նէշա խարսանպաներու ա ըռաստ եկած (քանի՞-քանի փորձանքներու պատահած է) ու պիթունն ըլ անցուցած։ Հիմայ կեցէք օր ըսիմ. իրա՛, փաշան հարնախատար օր (սրշափ որ) ըսաց՝ ըմը տահա անի աղէկ չի գիտեր մեր տարտը, մեր ցաւը. անոնք (տաճիկները) իշու պըտուր (իշու աղբ) են. ինչ վախդ օր ջրին մէջ ձգես՝ կինա էրէսը կելլան. ըմը մենք՝ կովու թըրիք ենք. ինչ վախդ օր ջրին մէջ ընկնինք՝ ալ չինք կրնար էրէսն ելլալ, կմնանք ատ ջրին (յ)ատակը. հասկցա՞ք, տղաքս։ Կինա ամենէն աղէկն ան ա, օր էրթանք փաշին օտն ու ձառքն ընկնինք ու ըսինք քի՝ փաշայ աֆանտի, Աստուած թագաւոր ապրածին ու ձեզի էրկար կեանք տայ, օր ասչափ խաղաղութիւն ձգեցիք էրկրին մէջ. հիմայ մենք շատ ու շատ ըռազի

(գոհ) ենք տաճիկներէն. անոնք մեր մենծ աղբըրտիքն են, ու մենք ըլ անոնց պըղտիկները. անոնք մեր պաշ թաճին (գլխու թագ) են. մեր բերանները կծուի, օր մաղի չափ բան մի ըսենք անոնց... Մենք ալ բան չենք ուզէր։—Հիմայ դուք ինչ թավուր կըսէք հրպը. աս խօսքերս ինտուր կտեսնաք. իմ առաջ խաթերըս համար ըսէք. մի վախնաք, տղաքս»։

«Մայլիսը կինա խառնուեցաւ. պաշլայեցին պիթունն ըլ պօռպռալ ու ռայիսին քըֆրել (հայհոյել)։ Լուսահոգի աղբարս ըլ հերսոտեցաւ (բարկացաւ) ու թողեց դուրս եկաւ ատ ախոռ-սաքիսի մայլիսէն. ես ըլ անոր ետևէն գացի։

«Աղայիս ըսիմ, ինչ գըլօխդ ցաւցնիմ. վար հասըլի, մէկալ օրը Ռաշիտ փաշան ատ մայլիսի ռայիսին կանչեց ու հարցոց.—«ինչ էրիք, խուղիներս»։ Մենծամենծ իշուաններէն ավալ ռայիսն ըսաց. (ինչ որ որոշեր էին նախորդ երեկոյին)։ Աղայ, ա՛տ փաշան օր չի լսեց քի հայերն ատպէս օրոշած են, կէօղինի սավտիկիմի, դուն մի ըսէր, հերսոտեցաւ ու քաշել տուաւ ատոնց փալախային տակ ու աղկէկ մի ծեծել տուաւ, ու սողը պիթունն ըլ իրեն քովէն խըստեց (վռնտեց)։

«Իրէք-չորս ամիս անցաւ ատոր վրայ, աղայիս ըսիմ. աղբօրս հետ մենք կինա էլանք ու էկանք ատտեղ։ Ալ էփէյի աղկէկ էր. հաւթութիւն կար աս կո(ղ)մերը, չունքի պիթուն տարապակիները (ս)պաննած էին, ու անոնց լակոտանքն ալ չէին մարթէր, օր ավալքու պէս ասիութին էնէին։ Կինա, հարնախատար օր էրկրի հողերն ու ջրերը

անոնց ձառքին տակն էր՝ մենք էփէյլի վրայ էկանք (հարստացանք)։

«Սող անճամի (վերջապէս), աղայիս ըսիմ, Ռաշիտ փաշան քանի օր Խարբերդ էր՝ մենք պիթունս ըլ աղէկ ու ըռահաթ էանք, ըմբ և(ը)բոր անի անցաւ գնաց նէ, կինա ան առջի (առաջուան) պակերուն լակոտանքը եկան իրենց պապերուն պէս եղան... Հիքիմաթն ըլ անոնց կո(ղ)մը բռնեց, Ասուած ըլ անոնց կո(ղ)մը բռնեց ու ամեն բան ըլ՝ անոնց կո(ղ)մը բռնեց։ Հիմայ հա՛մ (թէ) պակերը մեր վաստկածը մեր ձառքէն կխըլեն, հա՛մ ըլ հիքիմաթը։ Թէ օր ավալ մենակ պակերն էին օր մեզի կթալանէին, հիմայ հիքիմաթն ըլ անոնց հետ մէկ եղած՝ մեզի կթալանեն. չունքի ատ հիքիմաթին մէջ նստող մարդիկն ըլ ատ անօրէն պակերու լակոտանքն են. ալ որո՞ւ էրթաս տարտդ պայան էնէս (ցաւդ յայտնես), ո՞ւր էրթաս, ո՞ւր մնաս... ա՜ կէօղըմ. ո՞ւր օր ըլ էրթաս, կինա հօխան չորս հարիր տրամ ա (միևնոյն անարդարութիւնն է). քու ձանըդ հէչ լըսող ու մտիկ էնող չի կայ. անոր մէկ սուտը՝ քու հարիր իրաւէդ իստին ա (աւելի է)... Դ'եկոյ տեսնիմ սիրտդ ինչ կուզա, ու տեսնըմ քի ինչ թավուր մարդ տ'ըլլիս, եախուտ (կամ թէ) ինտո՞ւր տուն-տեղ տ'ըլլիս ու օղլուշաղ (ընտանիք) տի պէյէս։ Եա՛, աղա՛ս, անոնք աւազակութին ըլ կէնէն, մարդ էլ կ(ս)պանեն, գողութին ու բոզութին ըլ կէնէն, ու ակար մեր քով աղկէկ բան մ'ըլ օր տեսան՝ ա՛ն ըլ կխլեն մեր ձառքէն. ըմբ մենք խեղճ ինք, սէֆիլ ինք, նա՛ (ոչ) աւազակութին կընանք էնէլ, նա՛ մարդ թալանել ու (ս)պանել գիտենք, նա՛ գողութին ու նա՛ ըլ բոզութին

էնել կմարթինք։ Մենք կբանինք, կդատինք, կվատակինք. անոնք կուգան մեր ձառքէն կխլեն ու կուտեն։ Մեր ճակտին քրտինքը անոնց մարդ էրած ա, եօխսայ (թէ ոչ՝) անօթութինէ գլօխները կուռենար։ Դեհ, ե(ր)բոր սիլահ ըլ չիկայ, ալ մենք ինչ գլօխնիս լանք ու ինչ թավուր մեր տըվնին ասպէս մըդարայի (որջ) պէս չի շինենք, ինտուր հին լաթեր չի չիհագնինք ու ինտուր մեր կընիկները իրենց էրէսները չի կալցընեն ու թըրիքով չի շրխեն... Դուն օր ըլլէիր մեր տեղը, հրպը ինչ ա՛ընէիր, ե(ր)բոր տեսնայիր քի վասատակդ՝ քուվդ չա, տունդ՝ քուվդ չա, հոդդ, ջուրդ, մալրդ ու միլքդ՝ քուվդ չա, նամուսդ՝ քուվդ չա, օղլուշադդ՝ քուվդ չա, վար հասըլի չոր հոդի մ՛ունիս, ան ըլ քուվդ չա... Ա՜խ, ալ վոր մէկն ըսիմ, խուռպան, վոր մէկը խօսամ ու վոր մէկը լամ... Թողէ՛ք, թողէ՛ք, օր աս պէմուրատ ձանըս վար դընիմ. աս սիրտս եարալու ա, իրար մի տաք... Ասուած ինձի ըլռանք (լռութիւն) տայ, ու ձեզի ըլ՝ համբերանք, որ համբերէք, տղաքս»։

Կիրօ-Քէյան լմնցուց իր պատմութիւնը և սկսեց երեխայի պէս լալ ու հեկեկալ. այն-ինչ սենք մոմի պէս սառած՝ անթարթ կնայէինք իր աչքերուն մէջ՝ նոր բան մ՛ալ հասկնալու համար. սակայն, աւա՜ղ, նա աւելցուց միայն ըսելով. «Ալ մի հայէք ինձի, օր նոր բաներ նախլիմ (պատմեմ). ակար էրկու-իրէք տարի ավալ եղած օր ըլլէինք՝ պալքէ (թերևս) մարթէի ձեզի շատ բաներ նախլել, ըմը հիմայ կը տեսնաք իշտէ, օր ըղթիարցած (ծերացած) իմ, թոլցած ու խուվաթբս (ոյժս) հատած ա. աս ըլ օր նախլեցի նը՝ սանքէ (գրեթէ) զօրով կրցայ, ան

ել իմ հէրսըս հանեցիք տէյի, ատոր համար նախլեցի, եօխսայ հէչ մուքին (կարելի) չէր, որ մարթէի նախլել»։

Բ

ՃԱՆԻԿԷՆ ՄԵԾԿԵՐՏ

Ծերունոյն պատմած թէ երեկոյեան պատմութիւնը և թէ գետնափոր տան գիշերուայ օդի չափազանց ապականութիւնն ուղղակի մեր ուղեղին վրայ վատ ներգործելով՝ խիստ անհանգիստ գիշեր մ՚անցուցինք, որովհետև հազարումէկ տեսակ այլանդակ սև-սև պատկերներով երազներ պաշարած էին մեր ուղեղները։

Տակաւին արշալոյսը չծագած՝ Կիրօ-քէյեան իր անկողնէն վեր կենալով լաթերն հագաւ և «Տէր, եթէ զշրթունս իմ», սաղմոսը երգելով գնաց դուրս՝ աղբիւրին առջև լուացուելու։ Տան մէջ եղողները բոլորն ալ զարթեցան ու վեր կեցան իրենց տեղերէն, որպէս զի երբ «բարի հրեշտակները բարի լուսոյն խրսմաթ (բախտ) տարտրղնեն» (բաժնեն)՝ իրենց քնած գտնելով՝ յետ չդառնան։ Տանտիկինն ու հարսը փութացին ճրագ ու կրակ վառել։ Նորա բոլոր անկողինները վերուցին, տունն աւլեցին ու խստրկեցին և երբ Կիրօ-քէյեան աղբիւրէն վերադարձաւ՝ մեզ ալ հրաւիրելով՝ նորա յետև շարուեցան աղօթք ընելու։ Կիրօ-քէյեան, որ միանգամայն իր տան մէջ հոգևո-

բականի մը դեր կկատարէր, քանի մը հոգեբուխ շաբականներ ու մաղթանքներ երգելով և մէկ-երկու գլուխ Աւետարան ալ անգիր կարդալով՝ ի խորոց սրտէ խնդրեց՝ «նեղեալներուն, կարօտեալներուն, բանտարկեալներուն ու ճամբորդներուն օգնութիւն, այցելութիւն և յաջողութիւն». յետոյ երեսն երեք անգամ խաչակնքելով՝ օրհնեց մեզ ամենուս և նստեցաւ իր տեղը, օճախին մէկ կողմը, և սկսեց իր ծխախոտի կարմիր փոքրիկ տոպրակն հանելով՝ չղուխը լեցնել և կուշտ-կուշտ ծխել։

Առաւօտը լուսացաւ. պատրաստուեցանք ճանապարհուիլ։ Ճանտիկինը ճանապարհի համար պէտք եղած պաշարն—հաց, պանիր, ձու, ցամաք սեր և այլն—արդէն պատրաստած էր՝ Վարդանին հետն ունեցած տոպրակին մէջ։

Ճանապարհը շարունակեցինք ուղիղ դէպի արևմուտք ուղղուելով և սկսեցինք զանազան էլեէջներէ ու թումբերէ անցնիլ։ Ճանապարհը բոլորովին անորոշ էր. մերթ արտերու մէջէն և մերթ խոպան տեղերէ կքալէինք, առանց սակայն ճանապարհի որոշ շաւիղ մ'ունենալու։

Կէս օր էր, երբ հասանք Ղոզնգեղ հայաբնակ գիւղը։ Գիւղն ամբողջ՝ 55—60 տուներէ կբաղկանար, որոնց բնակիչներն առ հասարակ Միրագեան ցեղին կպատկանէին։ Գիւղն հաստատուած էր բարձր դիրք ունեցող տեղ մը։ Տունները՝ պարզ, փոդոցները նեղ, բայց մաքուր էին։ Գիւղն ոչ եկեղեցի ունէր և ոչ ալ դպրոց։ Մեծկերտի քահանան տարին մէկ-երկու անգամ կայցելէր այս գիւղը, որովհետև Մեծկերտէն ուղիղ դէպի արևելք՝ շատ հեռուն չի մնար

այստեղ։ Գիւղի հիւսիս-արևելեան կողմը ցորենի կալերն էին շինած, որոնց իւրաքանչիւրին մէջ երկուերկու, երեք-երեք մարդեր կաշխատէին իրենց եղնեերով միասին։ Փոքրիկ մանուկներ—տղայ կամ աղջիկ—նստած էին փայտէ հաստ-հաստ կամերուն վրայ և նոցա կայծքարէ սուր-սուր ատամներուն տակ՝ ցորենի ոտագին խուրձերը կկամնէին—կփշրէին ու երթ (յարդ) կդարձնէին։ Իսկ հասակաւոր երիտասարդներ—կին կամ տղամարդ—թևերը վեր սոթած ու հոսելուն ամուր մը բռնած՝ անդադար կը քրքրէին կամնուած կալը, որպէսզի միմեանց վրայ բարդուած ու միմեանց վրայ սեղմուած ցորենի խուրձերը շուտով փշրուին։ Նոցա քրտինքը, կիզիչ արևու թափանցիկ ճառագայթներուն առջև, կաթիլ-կաթիլ կկաթկըթէր կարմրած այտերու վրայէն, և քանի կը քրտնէին նոքա՝ այնքան նոցա այտերը կկարմրէին ու վարդի գոյն կստանային. բեռներով առողջութիւն կար նոցա մէջ։

Օհան վարժապետի առաջնորդութեամբ մտանք տուն մը և անցնելով տան ընդարձակ բակը՝ հասանք կրակատունը։ Կրակատունը մութ, միայարկ և մի լուսամուտով, այսինքն մինակ երդիքով՝ խոշոր սենեակէ մը կբաղկանար։ Նորա մէկ անկիւնը, ուրկէ գործիքի մը ձայն կլսուէր՝ հորուն[1]) մէջ նստած էր ծածկերես հարս մը, որն, առանց վայրկեան մ'իսկ դադարելու, իր ոտքերով ու ձեռքերով հորի փայտէ

1) Հոր՝ կտաւ գործելու գործիքմ'է, որ տեղացիները կպատրաստեն։

գործիքները կշարժէր, որով չըգը՛ր-չըգը՛ր-չըգը՛-
ըի խիստ ներդաշնակ ձայն մ'ելլելով՝ կտաւ կգոր-
ծուէր։ Հորու մէկ կողմը, կլոր ճախարակի մ'առջև
նստած էր կարմիր-երես գեղեցիկ օրիորդ մը, որն
իր ձախ ձեռքին մատներով բամբակի երկայն պա-
տրոյգը բռնած, իսկ աջով ալ՝ ճախարակի կլոր բու-
դակն անընդհատ դարձնելով՝ բամբակը մաքուր թել
կշինէր։ Սենեակի մէկ կողմն ալ օճախին մէջ կպըլ-
պըլար կիսաշէջ խարոյկ մը, որու աղօտ լուսոյն առջև
նստած էր 25—27 տարեկան բարձրահասակ, գեղեց-
կադէմ, սև աչերով, սև յօնքերով, կարմիր ու կայ-
տառ երիտասարդ մը, որ զբաղուած էր ծխախոտի
պատրաստութեամբ. սա տանը կրտսեր տղան էր։
Մարտիկի սիրուն սև ու երկայն գիսակները թափ-
թփած էին մինչև ուսերուն վրայ։ Նա հագած էր
լեռնականի հագուստ. մէջքէն կապած էր սիլայլըղ
(զինանոց) մը, որուն մէջ տեղաւորուած էին դանակ,
դաշոյն, ատրճանակ և այլ մանր-մունր զէնքեր։ Ու-
սէն վար կախուած էր երկու կարգ փամփշտանոց՝
փամփուշտներով լեցուն։ Մարդ նորա երեսն իսկ տես-
նելուս՝ խորին պատկառանք մը կզգար իր ներսի դին։
Նա կարծես կատարեալ Գաբրիէլ հրեշտակ մ'էր, որ
վայրկենապէս պատրաստ էր աշխարհէն վերցնել այն
մարդու կեանքը, որ իրեն անհաճոյ կերևար։

Երիտասարդը, որ վաղուց ծանօթ էր Օհան վար-
ժապետին հետ՝ ամենայն սիրով հիւրընկալեց մեզ և
փութաց փայտէ աթոռակներ բերել մեզի՝ նստելու
համար։ Նստեցանք։ Ըստ տեղական սովորութեան
նախաճաշ բերին—կրեկ-հաց, սեր, մածուն և խա-
ղող—(այս վերջինը հագուագիւտ է Տէրսիմի համար)։

Նախաճաշիկի ժամանակ ուշադրութիւնս գրաւեցին մութ ու մխրած պատերէն վար կախուած կարգ մը զէնքեր, որ ադամանդի նման մութ տեղն իսկ կփայլէին։ Դոցա մէջ առաջին տեղը կբռնէին Տէրսիսի շէշխանէները (խորշերով հրացաններ, որ յատուկ են միայն Տէրսիմի համար), որ ոսկիով ու արծաթով պատած էին։ Միւնոյն շարքին մէջ կախուած էին նաև ամենալաւ պէռատանդաներ, ընտիր մարթինիներ ու այլ տեսակ կատարելագործուած ընտիր ընտիր հրացաններ։ Կային նաև ըէվոլվէրներ, երկփող ատրճանակներ (փիշդոֆ), տապարներ, վահաններ, սրեր, աղեղաձև թրեր։ Վերջիններու լայն շեղբերուն վրայ կնշմարուէին անընթեռնելի կարգ մ'արձանագրութիւններ ու զանազան կենդանիներու պատկերներ՝ ոսկի թելերով բանուած։ Եւ երբ Մարտիկին հարցուցի, թէ այս զէնքերն ուրկէ ձեռք ձգած էր՝ նա այնպիսի սուր պատասխան մը տուաւ, որ ես ամօթէս կարմրեցայ։ Իսկ երբ հարցուցի հին բորբոստած սրի մը մասին, որու վրայ հազիւ նշմարելի նկարներ կային՝ պատասխանեց. «Ատի իմ պապուս տատային աթային (նախահարց) թուրն ա»։

Երիտասարդը յայտնեց, որ ինքը ծերունի հայր մը և, բացի իրմէն, եօթն եղբայր ալ ունի, որոնք իւրաքանչիւրն իր զէնքերով գնացեր են այլևայլ կողմեր այլևայլ գործերու։ Նա ի միջի այլոց պատմեց, որ Տէր-Օվան դաշտագետինը, որ իրենց գիւղէն դէպի հիւսիս-արևելք 3—4 ժամուայ ճանապարհ է՝ իրենց սեփականութիւնն է։ Նա Միրագեաններու բուն հայրենիքն է, որ Տէր-Օվանէսի մ'անունով անուանուած է Տէր-Օվան։ Տէր-Օվանէսը, ըստ տեղական աւան-

դութեան, եղած է Միրագեաններու նախահայր—նահապետը, իսկ Միրազ անունը ժառանգեր են դարձեալ նոյն Տէր-Օվանէսէն, որուն ազգանունն եղած է այն, և որն, ըստ Միրագեաններու, Մամիկոնեաններէն սերած ու յառաջացած է[1]։

Ժամանակով Միրագեանները բոլորն ալ միասին Տէր-Օվանի մէջ կընակին եղեր. բայց յետոյ, ժամանակի ընթացքով, երբ հետզհետէ բազմանալով անբաւականութիւն զգացեր են բնակութեան տեղի՝ մէկ մասը բաժնուեր եկեր է Մեծկերտի և Տէրսիմի այլ կողմերը բնակութիւն է հաստատեր, միանգամայն Տէր-Օվանի մէջ մնացողներէն թազգիր (ստորագրութիւն) առնելով, թէ իրենք ևս սեփականութիւն ունին նոյն տեղոյն մէջ. իսկ այն մասը, որ մնացեր է Տէր-Օվանի մէջ՝ ժամանակի զանազան հանգամանքներու ազդեցութեան տակ, զգալաբար կամ անզգալաբար իր մայրենի լեզուն կորցնելով՝ քրդացեր է. բայց մի փոքր մասը դարձեալ իր ազգային աւանդութիւններն ու լեզուն պահելով՝ մնացեր է որպէս հայ-Միրազ։ Որմէ յետոյ անցան շատ ու շատ տարիներ, և Տէրսիմի այս ու այն կողմը ցրուած Միրագեաններէն ոմանք ցանկութիւն յայտնեցին վերադառնալ իրենց նախնի ծննդավայրը և այնտեղ կանոնաւոր բնակութիւն հաստատել. բայց տեղացիները (քրդերը) մերժեցին միանգամայն նոցա բնակութեան տեղ և հող տալը, առարկելով, թէ իրենք երբէք չեն ճանչնար նախապէս տրուած թուղթ-գիրը, որ իրենց պապերն

---

[1]) Բայց Բալահովի հայերը մինչ Միրազ կկոչեն նոցա, որոնք Միհրան անունն ունին։

ստորագրած ու կնքած էին։ Եւ այս առթիւ վէճ ծագեցաւ Միրագեաններուն ու Տէր-Օվանի քրդերուն մէջ. վէճը սաստկացաւ ու խիստ սուր կերպարանք ստացաւ։

Այս դէպքերը պատմելուց յետոյ Մարտիկն աւելցուց ըսելով, որ հարկաւոր են տակաւին շատ ու շատ զէնքեր, որոնցմով կարողանան բռնի կերպով տիրել իրենց սեփականութեան։ Ես հարցուցի, թէ ինչ հարկ կայ զէնքի դիմելու, քանի որ կանոնաւոր կնքուած թղթեր կան, որոնցմով կհաստատուի Տէր-Օվանի դաշտագետնի ձեր սեփականութիւն լինելը. ուրեմն ինչու՞ կառավարութեան չէք դիմեր, որ խաղաղութեամբ վերջացնէ գործը։ Նա հարցուց նախ. «Կառավարութիւնն ինց ա»։—«Հիքիմաթն է», պատասխանեցի։—«Է՞, մենք ատ հիքիմաթը ցինք ծանցնար, ցունքի անի անօրէն ա, դատաստան էնէլ ցի գիտա. մենք մինակ սիլահը կծանցնանք»։—«Ի՞նչ կարող էք ընել, ընդամենը քանի՞ հոգի էք, որ սիլահը կճանչնաք»։—«Սատուր ենք,—պատասխանեց.—պիթունս ըլ սիլահ կառնենք ու կերթընք անոնց մարերը կլացնենք» [1])։—«Թէ որ կառավարութիւնն ալ նոցա կողմն անցնելով ձեր մայրերը լացնէ, ինչ կընէք այն ժամանակ»։—«Կրուվրուութին ըսածդ վով ա, Ասուաղ օր սիրես, սիտակ խօսա, հասկնանք»։—«Հըսի՞, որ հիքիմաթ ըսել է»։—«Հա, միտքս եկաւ հիմայ։ Դուն տահա ցաղա (երեխայ) ես, քու խելքդ տահա

---

[1]) «Մայրերը կլացնենք» կնշանակէ՝ բոլորին կսպաննենք, որով նոցա մայրերը կսկսին ողբալ իրենց զաւակներուն վրայ։

տեղ ցի ընէր...։ Մեղի Միրաք օղլի կըսեն, գիտես. մենք ան հիքիմաթին բերանը հաղար հեղ ցափեր ենք»։

Երիտասարդն այս խօսքերը այնպէս խստութեամբ կարտասանէր, որ կարծես պատրաստ էր կռուելու և կամ հոն եղած լինէր՝ ուր պէտք է արիւն թափէր իր սեփականութիւնը գրաւելու համար։

—∞—

Կէս օրն անցեր էր. օրն սկսած էր զովանալ, երբ թողնելով Խոզնգեղը՝ ճանապարհը շարունակեցինք ուղիղ դէպի հարաւ ու երկարուձիգ առուակի մը մարգոտ եզերքը բռնելով և նորա անուշ անուշ կլկլուկին մտիկ ընելով՝ 3/4 ժամէն հասանք Ղզըլճուղ հայաբնակ գիւղը։ Սա բաղկացած էր 25—30 տներէ, որոնց մեծագոյն մասը Միրագեանններն էին, իսկ 2—3 տունը—քրդեր։

Այս գիւղացիներն ևս եկեղեցի ու դպրոց չունէին։

Կէս ժամի չափ Ղզըլճուղ մնալուց յետոյ, ճանապարհը շարունակեցինք դէպի արևմուտք, և զանազան մեծ ու փոքր ելևէջներէ անցնելուց յետոյ, արևմտուց հասանք Մեծկերտի Չիֆթլիկը, որ քաղքէն 1/4 ժամ հեռաւորութիւն ունի դէպի հարաւ։

Օհան վարժապետը առաջնորդելով մեզ խրճիթի մը մէջ, միանգամայն յանձնարարելով դմեզ խըրճիթի տիրոջ, պառաւին՝ ինքն հեռացաւ գնաց քաղաք—Մեծկերտ։

Պառաւ տանտիկինն ընդունեց մեզ, և մէկ-երկու չուլի կտորներ փռելով օճախի շուրջը՝ հրամցուց մեզի նստել հանգստանալ։ Նստեցանք։ Խրճիթի մէկ

անկիւնը, ուր նստած էինք, խարխուլ օճախի մը մէջ քանի մը կաղնիի թաց փայտեր կմխբրտային շարունակ. օճախին վերևի կողմը «կիսապատի» մը վրայ դրուած էր ձէթէ փոքրիկ ճրագ մը, որն իր աղօտ լուսով հազիւ կլուսաւորէր խրճիթի մէկ կողմը միայն: Խրճիթը կբաղկանար միայն մէկ սենեակէ մը. իր մէկ կողմը քանի մը տեղ առանձին առանձին կուտած էին կալէն բերուած ցորենն ու գարին, կոբեկն ու կըլկըլը: Սենեակի մէջ տեղը մրոտած սիւնի մ'առջև երեսն ի վար կործուած էր մեծ սարաթ (կոդով) մը, որուն տակ պահած էին իրենց թանը, մածունը, կաթը և այլ տեսակ կերակուրներ, որպէսզի կատուներն ու շները, որ յաճախ մուտք կգործէին սենեակին մէջ՝ չկարողանային գողնալ. ուստի այդ սարաթը մառանի տեղ կծառայէր:

Տանտիկինն ելաւ, այդ սարաթի տակէն քիչ մը թթի ռուպ (ալէքմէդ) և քանի մ'հատ ալ գարիէ հաց բերաւ մեզ, որպէս ընթրիք: Ընթրեցինք խեղճ պառաւի համեստ ընթրիքը և խնդրեցինք իրմէն, որ բարեհաճի մեզ համար անկողին պատրաստել, որովհետև չափազանց յոգնած էինք: Պառաւը քանի մ'անգամ տքալով ու տըքտքալով ելաւ ու երկու կտոր մաշուած ու աղտոտած սև շուլի կտորներ փռեց խրճիթին սառն ու խոնաւ յատակին վրայ, որոնց մէկն որպէս վերմակ, իսկ միւսն որպէս տոշակ պիտի գործածէինք երկու հոգու համար:

Ես ու Վարդանը գլուխնիս միմեանց հակառակ կողմը դարձնելով կամ դնելով, միանգամայն կօշիկներնիս մեզ բարձ ընելով՝ այդ սև շուլին մէջ պըլլուռելով պառկեցանք և այնքան հանգիստ քնացանք,

որքան հանդիստ չէր կարող քնել իշխան մ'իր տան մէջ պատրաստուած փափուկ անկողինի մէջ։

Գ

ՄԵԾԿԵՐՏԷՆ ԹԻՐԻՉՄԷԿ

Առաւօտ էր։ ճանապարհը շարունակեցինք Չիֆթ-լիկէն ուղիղ դէպի արևմուտք, և առանց Մեծկերտ քաղաքը մտնելու՝ կողմնակի ճանապարհով մ'անցանք գնացինք մինչև մեծ ճանապարհը, ուրկէ պիտի երթայինք Թիրիչմէկ գիւղը։

Մեծկերտէն մեզ հետ ընկերացան, որպէս հմուտ առաջնորդներ, հսկայ տղամարդ մ'ու կին մ'իր փոքրիկ կաթնակեր երեխայով. որովհետև Օհան վարժապետը Մեծկերտէն անդին չշարունակեց առաջնորդել մեզ՝ իր տասնեհինգ տարուայ մնացած վարժապետական վարձքի ապառիկներն հաւաքելու համար մեծկերտցիներէն։

ճանապարհն անտառապատ և միանգամայն խիստ դժուարագնաց էր, ուրկէ շատ մ'ելևէջներէ և ոլորապտոյտ նեղ շաւիղներէ անցնելով՝ հասանք Մեծկերտի աղահանքը, ուր ձորահովտի մը մէջ կտեսնուէր 8—10 սենեակներով երկյարկանի պանդոկ մը, որուն մէջ կընակէին և կառավարութեան կողմէն կարգուած՝ աղահանքի թուրք պաշտօնեաները, և զանազան երթևեկող մեծ ու փոքր աղ վաճառող կարաւանները։ Այս աղահանքի մասին կպատմեն, թէ տակաւին քանի մը տարիներ առաջ բացուած չէր. մի-

այն մօտակայ լեռան տակէն փոքրիկ աղի աղբիւր մը կբխէր, անխնամ երեսի վրայ թողուած, ուրկէ մեծ-կերացիներն ու մօտակայ հայ և քուրդ գեղացիները կերթային կուժերով ու կարասներով աղի ջուր կբերէին իրենց տներն՝ ամբողջ տարին դայն աղի տեղ գործածելու համար։ Բայց վերջերս Թուրք կառավարութիւնը քարբերդցի քանի մը հայերու խորհրդով ձեռնարկեց սոյն աղահանքը կանոնաւորել. փորել տուեց նա քանի մ'աւազաններ, որոնց մէջ կլեցուի աղի ջուրը, որ քանի մ'օրուան մէջ կէս առ կէս կսառի ու ամենամաքուր ճերմակ աղ կդառնայ։ Կառավարութիւնն այնուհետև արգելեց տեղացի ժողովրդեան՝ վերցնել սոյն աղի-ջրէն՝ առանց որոշուած մաքսը վճարելու. բայց երբ տեսաւ, որ սոսկ արգելելն անօգուտ է՝ կառոյց այդ երկյարկանի պանդոկը և նորա մէջ դրաւ աղահանքին վրայ հսկող զանազան Թուրք պաշտօնեաներ, որոնք ամենախիստ կերպով սկսեցին հալածել աղի ջուր զողցողները։

Անցնելով աղահանքի մօտով՝ ամբողջ երկու ժամ սոսկալի զառիվայր մ'իջանք, մինչև որ հասանք Թիրիշմէկի դիմաց, Մնձուր գետի ձախ ափին վրայ, ուրկէ նոյնպէս կէշուտ պիտի անցնէինք։ Գետը Թէև չափազանց հոսուտ, բայց ջուրը խիստ վճիտ էր, որու ջինջ ալեաց մէջ բիւրաւոր կարմրախայտ ձկներ վեր ու վար կլողային։ Գետափին վրայ կարգ մը քուրդ կանայք լուացք կընէին, ու կարգ մ'ալ երիտասարդներ—աղջիկ, տղայ—կլոգնային սառն ջրի մէջ։ Մեսրովբը—այսպէս էր մեր նոր առաջնորդի անունը—գետին մէջ լողացող երիտասարդներէն մէկուն կանչեց և հարցուց, Թէ ջրի կէշուտն ուրկէ կանցի։ Երի-

տասարդը ցոյց տուեց կէշուտը. բայց մենք ցանկութիւն յայտնեցինք, որ նա, քուրդը, անձամբ առաջնորդէ, ու մենք իր վարձքը կվճարենք՝ որչափ որ կուզէ: Քուրդն համաձայնեցաւ. բայց ես հարցուցի նախ, թէ որչափ է իր վարձքը: Նա ամենայն լրջութեամբ պահանջեց մէկ փունջ գլանիկի (սիկարայի) թուղթ: Ես զարմացայ և կարծեցի, թէ մեզ հետ կատակ կընէ. ուստի առաջարկեցի նորան՝ տալ հինգ դահեկան, եթէ կկամենայ անցընել մեզ գետէն. բայց նա կրկին յամառեցաւ իր պահանջին վրայ՝ ասելով. «Եթէ թուղթ մը կուտաք՝ լաւ, կառաջնորդեմ, իսկ եթէ ոչ՝ ոչ»:—«Տասը դահեկան կուտամ», ասելցուցի:—«Չէ, չէ, աղայ,—պատասխանեց քուրդը.—ես այդպէս բաներ չգիտեմ. դուք քաղրցի էք, սատանայ մարդ էք. դուք մարդն իր կեցած տեղը կխարէք... ինչուս պէտքն է այդ տասը դահեկան ըսածդ. թէ որ հիմայ սիկարայի թուղթ մը կուտաք՝ ձեր հետի կինն ու երեխան ալ շալկելով կանցընեմ գետէն, իսկ թէ որ չէք իտար՝ ես չեմ կրնար անցընել, ուրիշ մարդու նայեցէք»:

Հասկցայ այլևս, որ քրդու համեստ պահանջը բոլորովին անկեղծ է և միանգամայն ինքն ալ միամիտ է, ուստի հանեցի մէկի փոխարէն երկու թուղթ տուի: Եւ երբ նա երկու թուղթն առաւ՝ մէկն յետ դարձուց՝ ասելով. «Ես մէկ հատով պաղար ըրի, դուք սխալմամբ երկու հատ տուիք. առէք մէկը»:—«Այդ ալ քեզի նուէր թող լինի», ասի: Քուրդը զարմացաւ: Նա քրդերէն լեզուով հարցուց Մեսրովբին, թէ այս մարդը շատ հարուստ է:

Քուրդը մերկացաւ և Մարխաթունին—այսպէս

էր մեզ հետ ընկերացող կնոջ անունը—իր ուսերուն վրայ առնելով՝ միանգամայն նորա փոքրիկ երեխան ալ իր գրկին մէջ պահելով՝ ամենայն համարձակութեամբ մտաւ ջրին մէջ։ Մենք հետևեցանք քրդուն ուղղութեանը և հինգ բոպէի մէջ շատ հեշտ կերպով անցանք գետի միւս կողմը, թէև ջուրը մինչև կրծքերէս վեր ելաւ։

Լաթերնիս հագնելուց յետոյ, թող տուինք Մընձուր գետն այդտեղ ձորին մէջ, և ոլոր-մոլոր ճանապարհով մը բարձրացանք դէպի վեր, ուր, 180—200 ոտք բարձրութեամբ Մնձուրի մակերևոյթէն, փոքրիկ լեռնադաշտի մը վրայ հաստատուած էր 25 տուներէ բաղկացեալ Թիրիշմէկ գիւղը, ուր որ պիտի օթևանէինք այդ գիշեր։ Գիւղի արևելեան կողմը, ճիշտ Մնձուրի աջ ափի բարձրութեան վրայ, կանգնուէր քար ու կիրով շինուած հսկայ շինութեան մը կիսակործան աւերակը, որի մասին առաջնորդներս զանազան կարծիքներ յայտնեցին, բայց ինչպէս լսեցի գիւղացիներէն՝ դա հին ժամանակները բաղանիք է եղեր, թէև ոմանք ըսին, թէ Հայոց թագաւորութեան օրերէն մնացած բերդ մ'է, որ հետզհետէ աւերակ է դարձեր։

Երեկոյ էր, երբ մտանք գիւղը։ Փողոցներն աղտոտ, տունները՝ միայարկ և խրճիթներու ձև ունէին։ Ծխախոտի մշակութեան պատճառով գիւղացիները դատապարտուած էին նաև մեղու չունենալ. ունեցողներուն ալ մեղրը խիստ դառն ու կծու էր, որովհետև մեղուները շատ հեռու տեղեր չգնալով՝ ստիպուած էին ծխախոտի հիւթով պատրաստել իրենց մեղրահացերը։

Մարխաթունն առաջնորդեց մեզ իր քրոջ տունը, որովհետև նա այնտեղ ամուսնացած քոյր մ'ունէր։ Մտանք տունը. մութ ու ցած կրակատուն մ'էր այն, որու մէկ կողմը, թոնրեզերը, ամբողջ տնեցիները միմեանց մօտ շարուած՝ ձէթէ ճրագի մ'աղօտ լուսովը ծխախոտի դեղնած տերևները երկայն թելերու վրայ կշարէին՝ չորցնելու համար։ Թոնիրին մէկ կողմը կմխրտար մրոտած օճախ մը, որուն մէկ կողմը բաղմած էր տանտէր Մինաս քէյեան։ Նա տեսնելով մեզ՝ առանձին յարգանօք մ'ընդունեց և օճախին շուրջը տօշակներ ձգել տալով՝ հրաւիրեց նստել հանգստանալ։ Նստեցանք։ Ցան բոլոր անդամները, տանտիկինէն սկսեալ մինչև ամենափոքրիկ մանուկը, մէկիկ-մէկիկ եկան կարգով և ըստ տեղական սովորութեան բարևեցին մեզ։

Սոքա ևս, ամբողջ գիւղը, Միրագեան ցեղին կը պատկանէին։ Ո՛չ եկեղեցի ունէին, ոչ դպրոց։ Գիւղին մէջ 4—5 տուն քրդեր կային միայն։

Բաւական երկար խօսակցութենէն յետոյ, երբ Մինաս քէյան իմացաւ մեր դէպի Հալորու և դէպի Խութի-Տէրէսին երթալը՝ որպէս փորձառու մարդ խորհուրդ տուեց, որ յետ կենանք մեր ուղևորութենէն, մանաւանդ Խութի-Տէրէսի երթալու դիտաւորութենէն, ուրկէ խիստ դժուար էր ուղևորի մ'ապահով վերադարձը։ Եւ երբ ևս յայտնեցի, թէ վճռած եմ եթէ ոչ Խութի-Տէրէսին, գէթ մինչև Հալորու Ս. Կարապետ վանքն հասնիլ՝ նա խորհուրդ տուեց, որ իրենց գիւղէն սէյիտ առաջնորդ մը վարձեմ հետևեալ օրուայ ճանապարհին համար, որովհետև այդ ճանապարհը կարծուածէն աւելի վտանգաւոր էր։ Հա-

մաձայնեցայ, և սէյիտ մ'ընտրելու և նրան վարձելու գործն իրեն թողուցի, որպէսզի կարողանայ աւելի փորձառու և տեղւոյն ու դիրքին ծանօթ մէկը գըտնել։ Նա յանձն առաւ այդ, և անմիջապէս կանչեց մեզ մօտ 30—35 տարեկան, լեցուն, միջահասակ և ուժեղ երիտասարդ մը, Սէյիտ-Խալօ անունով, որ սիրով յանձն առաւ առաջնորդել մեզի մինչև Ապասանցիներու կամ Տուժիքի սահմանը՝ գլխու սև լաչակ մը միայն իրեն վարձք առնելով։

Դ.

ԹԻՐԻՋՄԷԿԷՆ ՀԱԻԼՈՐՈՒ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔԸ

Առաւօտեան կանուխ, դեռ անկողնէն վեր չելած՝ մեզ առաջնորդող Սէյիդ-Խալօն իր զէնքերովն օճախին առջև կըկոչած՝ մեզ կսպասէր։ Նա զինուած էր պատերազմական ձևով, որովհետև ճանապարհին, այսինքն իրենց ցեղային—Եուսուֆանի—սահմանն անցնելուց յետոյ, իր դրութիւնը շատ աւելի վատ կլինէր, թէև նա խոստացած չէր սահմանէն անդին անցնել։

Դեռ արևը չի ծագած՝ ճանապարհը շարունակեցինք Թիրիշմէկէն ուղիղ դէպի հիւսիս-արևմուտք։ Ճանապարհին զանազան և անհատնում եղէջները վերջին ծայը չարշարանք ու յոգնութիւն կպատճառէին մեզի։ Վտակներն ու առուները, սարերն ու ձորերը, ժայռերն ու խիտ անտառը միշտ մեր անրաժան ըն-

կերն էին։ Իրաքանչիւր քայլափոխին մեզ կհանդիպէին լեռներու սուր-սուր գագաթներ՝ միմեանց վրայ կուտակուած։ Սաղարթախիտ կաղնիներու մթին կամարները կարծես մինչև երկինք էին բարձրացեր, որոնց շատերը դարերու ընթացքով աճեր բաղմացեր և անտէր ու անխնամ մնալով՝ իրենք իրենց փտեր, այրեր ու մոխիր էին դարձեր։

Քանի յառաջ կերթայինք՝ այնքան կնեղանար ու անորոշ կդառնար ճանապարհը, որ մերթ իրրև նեղ շաւիղ կերևէր մեզի և մերթ բոլորովին կանյայտանար, այնպէս որ մեր առջև պատնէշի պէս կպարփակէր կաղնիներու անթափանցելի ցանցը, ուրկէ հազիւ-հազ կարող կլինէինք յառաջանալ։ Ինչպէս որ Ափրիկէի ամենամեծ անապատի մէջէն կարելի չէ առանց կողմնացոյցի ճանապարհորդել՝ այնպէս և անկարելի է Տէրսիմի սոսկավիթխար լեռներու վրայէն, անդնդախոր ձորերու և սաղարթախիտ անտառներու մէջէն ճանապարհորդել առանց տեղւոյն քաջածանօթ բնիկ քրդու մ'առաջնորդութեան։ Տէրսիմի մէջ կողմնացոյցն այնչափ մեծ նշանակութիւն չունի ճանապարհի համար՝ որչափ որ նա կունենայ անապատի մէջ ճանապարհորդութեան համար, որովհետև Տէրսիմի անտառներուն մէջ եթէ մարդ ուղիղ ճանապարհէն անդամ մը շեղի ու եթէ երբէք իր ցանկացած կողմն ալ գնացած լինի՝ դարձեալ չէ կարող շարունակել ու իր նպատակին հասնել, որովհետև այդ շեղակի ճանապարհներուն մէջ ուղևորին միշտ կհանդիպին լեռներու այնպիսի սոսկալի բարձր դահավէժներ, վիհեր և անմագլցելի ժայռեր և դառիվայր ու -վերեր, որպիսիք աշխարհիս մէջ հազուագիւտ են և

որոնց դիմադրաւելն մարդկային կարողութենէն շատ վեր է։

Սէյիտ-Խալօն, որ Տէրսիմի հարազատ զաւակը և նորա տեղոյն դիրքին քաջածանօթ մէկն էր, իր վարժ աչքերէն երբէք չէր վրիպէր ճանապարհի ուղղութիւնը. իւրաքանչիւր լեռ ձոր, քար, ժայռ, ծառ և ամենափոքր մացառի թուին իսկ նորան ծանօթ էին։ Նա գիտէր, թէ որ կողմէն կամ որ քարի և ծառի մօտէն անցնելով կարելի էր ճանապարհի ուղղութիւնը պահպանել։ Նա այս ամենն այնչափ լաւ սերտած էր ու կհասկնար, որչափ որ մէկն իր տունը կամ թաղի անկիւնները։ Նա մեզմէ առաջ անցած և երկու ձեռքերը ծալապատիկ իր յետևի կողմը բռնած՝ աշխոյժ եղանակով երգ մ'երգելով անընդհատ յառաջ կերթար անտառի խիտ առ խիտ ցանցերը ճեղքելով։

—Ես Խալօն եմ Կուրէշցի,
Ես զաւակն եմ բուն Տէրսիմի.
Ձոր ու հովիտ, լեռ ու անտառ.
Կողջունեն դիս՝ որպէս կայտառ
Ու քաջ զաւակը լեռներու
Եւ բնակիչն հովիտներու...
Անտառի մէջ ես եմ միայն,
Ես եմ նաև տէր և իշխան.»..[1])

Նա իր երգն ընդհատելով՝ հաստատուն ընկուզենու մը տակ կանգ առաւ ըսելով. «Ահա այս վիթխարի ընկուզենին է մեր և Ապասանցիներու սահմանը, ուրկէ անդին չեմ կարող անցնիլ. ուրեմն նրս-

---

[1]) Այս երգը Վարդանի միջոցով թարգմանեցի Սէյիդ-Խալօէն, որ իրը թէ ինքն հեղինակած էր։

տինք այստեղ՝ քիչ մը հանդստանալու, որովհետև ասկէ յետ պիտի դառնամ»։

Յոգնած ու թմրած էինք։ Սէյիդ-Խալօն հրացանն իր գիրկն առնելով՝ նստեցաւ. իսկ մենք կարգով շարուեցանք նրա շուրջը՝ ընկուզենու զովարար ու հոտաւէտ ստուերին տակ և հանդստացանք, ուր, բացի Մարխաթունէն, որ իր երեխան ծծցնելու համար մեզմէն հեռացեր էր՝ միւսներն յոգնածութենէ ննջեցին գեղեցիկ հովանոյն տակ։ Ես նստած միայն ու միայն կդիտէի բնութեան գեղեցկութիւններն ու նորա հրաշալիքները, որ կտեսնուէին ամենուրեք լեռներու մէջ։ Լեռնական հովիւներու խրոխտ երգերու աշխոյժ եղանակները խիստ կոգևորէին զիս ու տարօրինակ տպաւորութիւն մը կթողնէին վրաս, որով ես զիս անհունութեան մէջ կկարծէի։

Կէսօր էր։ Հարկաւոր էր ճանապարհը շարունակել, որովհետև դեռ 4—5 ժամուայ ճանապարհ ունէինք երթալիք։ Ընկերներս զարթեցան։ Սէյիդ-Խալօն ողջերթ մաղթելով՝ վերադարձաւ դէպի Թիրիշմէկ, իսկ մենք ճանապարհը շարունակեցինք, որը փոխանակ երթալով դիւրամատչելի ու դիւրագնաց լինելու՝ ընդհակառակը աւելի դժուարամատչելի ու դժուարագնաց կդառնար։ Անտառն աւելի կխտանար ու գրեթէ անթափանցելի կդառնար։ Մարդ մ'իր ոտնաձայնէն իսկ կզարհուրէր. երբ ամենափոքր շշուկն իսկ խոր արձագանգ կուտար այդ լեռներու մէջ՝ կը զարհուրէր մարդ, որովհետև սոսկալի էր այդ մռայլ անտառը։ Սոսկալի նախազգացում մը զիս պաշարեր էր, որ անփսրձանք չպիտի կարողանանք տեղ հասնել։ Եւ այս առթիւ Վարդանն ինձ յիշեցուց, որ մօտս

գտնուած դրամ կամ կարևոր թուղթ եթէ կան՝ յանձնեմ Մարխաթունին, որովհետև տէրսիմցի աւազակները կնոջ երբէք չեն մօտենար, եթէ նոյն-իսկ նա ամբողջովին ոսկի ու ադամանդ ալ լինի։ [1]) Մտիկ ընելով Վարդանի խորհրդին՝ մօտս ինչ որ կարևոր ու արժէքաւոր բաներ կային՝ յանձնեցի Մարխաթունին. ըէվոլվէրս անգամ, որ անձնապաշտպանութեան համար միայն ինձ հետ առած էի՝ նոյնպէս յանձնեցի Մարխաթունին, որովհետև վրաս պահելու հարկ չկար. պարզապէս յիմարութիւն կլինէր մեր կողմէն՝ եթէ ըէվոլվէրով դիմադրութիւն ցոյց տայինք տեղացի աւազակներուն. կարող էինք գործածել զայն միայն վայրենի գազաններէն պաշտպանուելու ժամանակ. ուրիշ ոչինչ։

Այսպէս նախապատրաստուած, բայց սրտերնիս դող ի դող, յառաջ կերթայինք մութ անտառի մէջէն։ Դեռ հաղիւ $^3/_4$ ժամուայ ճանապարհ յառաջացեր էինք

---

[1]) Երջանկայիշատակ Դ. եպ. Սրուանձտեանցն երբ իր ուղևորութեան ժամանակ Հալորու Ս. Կարապետ վանքը կայցելէր քանի մի կին և տղամարդ ուխտաւորներու հետ՝ ճանապարհին քուրդ աւազակներ, կարծելով թէ սա բողոքական միսիոնար է, որովհետև չդիտեմ ինչ բանէ թելադրուած՝ տէրսիմցիները սատիկ կատեն միսիոնարներուն—կյարձակուին նոցա վրայ, կթալլեն և կուզեն սպաննել սրբազանին. բայց ուղեկից կանանց մէկն իր գլխու լաչակն անմիջապէս կձգէ սրբազանի գլխուն վրայ և կքօղարկէ, որով աւազակները միանգամայն մեղք համարելով կխնայեն նորա կեանքին։ Եւ երբ սրբազանը կհասնի Ս. Կարապետ վանքը՝ տեղոյն վանահօր կպատմէ միառմի սոյն պատահարը, որ և այս վերջինն անձամբ պատմեց ինձ։ Բայց կասկածելի է, թէ ինչպէս է որ Դ. եպ. Սրուանձտեանց սոյն պատահարն իր «Թորոս Աղբար» մէջ չէ նկարագրած։

Սէյիտ-Խալօէն բաժանուելուց յետոյ՝ յանկարծ անտառի խորերէն դուրս պօռթկացին 7—8 զինեալ արիւնարբու աւազակներ, որոնք ոչ միայն լեռնային արիւնռուշտ աւազակներու յատուկ պատկառանքն ունէին, այլ և սադայէլի մը և կամ նորա արբանեակներու զարհուրելի կերպարանքն ունէին։ Փախչելու փորձեր ըրինք, բայց ի զուր. որովհետև նոքա կայծակի արագութեամբ փակելով ճանապարհի երկու նեղ անցքերը, որ անթափանցելի հինամեայ կաղնիներով պատուած էր՝ շրջապատեցին մեզ, հրացաններն ուղղելով մեր կրծքերուն։ Միջոց չկար։ Ի՞նչ պիտի ընէինք, կամ ի՞նչ կարող էինք ընել. միթէ կարող էինք կատաղի գազաններու հետ կռուել իրենց զարհուրելի որջին մէջ, և յաղթել.—անկարելի էր այդ։

—Դիմադրե՞նք, ի՞նչպէս կուզես որ ընենք, հարցուց Վարդանն ինձմէն։

—Բոլորովին զուր է դիմադրել, պատասխանեցի. եթէ մենք նոցա երկու կամ երեքն սպաննենք՝ անտարակոյս նոքա մեզ բոլորիս ալ կխողխողեն. և միթէ կարժէ՞ մեր մէկի կեանքը փոխել վայրենի քրդու մը հետ, կամ ի՞նչ շահած կլինինք, եթէ փոխենք. աւելի լաւ է առանց դիմադրելու կողոպտուել, որով թերևս կարողանանք գէթ մեր չոր կեանքն ազատել։

Հազիւ վերջին խօսքս դուրս էր եկեր բերնէս՝ նոքա մեր ընկեր կնոջ՝ Մարխաթունին բաժնեցին մեզմէն, որ չլինի թէ նա յանկարծ իրենց գործը խանգարէ, ու իրենք ալ սխալմամբ վնաս մը հասցնեն նորան, որ ինքնին մահացու մեղք մ'է կնոջ վրայ ձեռք բարձրացնելը. ապա բոլորուեցան շուրջս և բռնեցին զիս, միանգամայն բաց թողնելով Վարդանին

ու Մեսրովբին, որովհետև նոցա ցնցոտի հագուստներն իսկ մատնանիշ կընէին զիրենք, որ կողոպտուելու ոչինչ չունէին։ Հանդարտ, արձանի մը նման կանգնեցայ աւազակներու մէջ և ձեռքով նշան ըրի նոցա, որ երբէք նեղութիւն չքաշեն հագուստներս քաշքշելու, այլ ամեն ինչ որ ունիմ՝ կամովին կուտամ իրենց։ Եւ սկսեցի վրայէս մէկիկ-մէկիկ հանել հագուստներս և տալ իրենց։ Բոլորը տուի։ Նոքա ապշեցան, որ իրենց հետ այսպէս կվարուիմ։ Կարգն եկաւ փանթալօնիս, որ պատրաստուեցայ այն ալ հանել. բայց ես ես զարմացայ ու ապշեցայ, երբ նոքա նշան ըրին, որ չհանեմ այդ միակ փանթալօնս, որովհետև ամօթ է, ըսին, կարծելով թէ տակէն հագած վարտիք չունիմ. եթէ գիտնային՝ անշուշտ չէին խընայեր։ Հանեցի, և շատ ուրախացայ, որ նոքա հասկանալով ամօթը՝ գէթ խնայեցին փանթալօնիս։

Երբէք չէի հոգար, որ կողոպտուեցայ, այլ կը հոգայի, որ մերկ մնալով՝ կարող էի հիւանդանալ տեղւոյն անսովոր կլիմային։ Իսկապէս ես շատ գոհ կլինէի՝ եթէ իմինիս փոխարէն նոքա իրենց ցնցոտի շուլերէն մէկ-երկու կտորտանք տային ինձ հագնելու համար։ Բայց արդեօք նոքա կխղճային վրաս.—քաւ լիցի. եթէ խիղճ ունենային՝ անշուշտ դիս չէին կողոպտեր, այսինքն չէին մերկացներ դիս հագուստներէս։ Ուրեմն ինչ պիտի ըսէի. ինչ միջոց կար նոցա սիրտը շահելու, որով կարողանայի յետ պահանջել եթէ ոչ հագուստներս, գէթ իրենց հագած շուլերէն մէկ-երկու կտորտանք, որոնցմով պատսպարուէի ցըրտէն։ Այս միջոցին յանկարծ միտս եկաւ փորձառու ծերունու մը հետևեալ խրատը, որ քանի մը տարի-

ներ առաջ աւանդեր էր ինձ. «եթէ կուզես թշնամուդ յաղթել կամ գոնէ չյաղթուիլ՝ առ երեսս դու զքեզ բարեկամ ձեւացուր իրեն, եթէ սակայն նա լուսաւորուած է. իսկ եթէ վայրենի է՝ մի յապաղիր նորա ախորժակը գրգռել ուրիշ աւելի մեծ-մեծ բաներով, որով դու աղատուած ու միանգամայն յաղթած կը լինիս նորան»։

Ճիշտ ժամանակն էր, որ ես օգտուէի ծերունու խրատէն։

—Գնացէք,—ըսի ընկերներուս.—յետոյ կուգամ ձեզ կգտնեմ։

—Կխողխողեն զքեզ. քալէ որ երթանք,—պահանջեցին ընկերներս.—մեր հագուստներէն կուտանք քեզի, հագիր։

—Գնացէք, կրկնեցի.—ես կուզեմ մնալ սոցա մօտ։ Եթէ առ առաւելն երկու օրէն կրկին ձեզ գտայ՝ լաւ, իսկ եթէ ոչ՝ երկու օրէն յետոյ եկէք այս տեղերն որոնեցէք զիս, եթէ սակայն գաղանները վաղուց կերած չլինին զայն։

Ընկերներս գնացին ու անհետացան անտառի մէջ, իսկ ես մնացի միս-մինակ այդ աւազակներու շրջանակին մէջ, որ տակաւին զիս շրջապատած՝ ապուշ-ապուշ կդիտէին զիս։ Նոքա երբ տեսան վարմունքս՝ սկսեցին առանձին-առանձին նկատողութիւններ ընել վրաս։ Նոցա մէկն ըսաւ. «խենթ է սա». միւսն ըսաւ. «սատանայ է». երրորդն ըսաւ. «խելք կմտածէ». չորրորդն ըսաւ. «կերևի թէ կպատրաստուի մեզ հետ կռուիլ, բայց մենք զինքը կսպաննենք, եթէ այդպէս ախմախութիւն ընէ»։ Վերջապէս իւրաքանչիւրը բան մ'ըսելէն վերջ՝ ճամբայ տուին ինձ հեռանալու։ Բայց

ես չհեռացայ, այլ ընդհակառակը, աւելի ես հաստատ կացայ տեղս։ Նոցա մէկն հարցուց ինձմէն տաճկերէն լեզուով, թէ «Ինչո՞ւ չես երթար, ինչ կպահանջես»։—«Ոչինչ ունիմ պահանջելու, պատասխանեցի.— այլ կդարմանամ միայն ձեր վրայ։—«Ինչո՞ւ»։—«Նստեցէք այստեղ, որ ըսեմ, թէ ինչո՞ւ», ըսի։

Ու նստեցայ։ Նորա շարուեցան շուրջս, իւրաքանչիւրը տեղ մը նստելով։ Ծխախոտ պահանջեցի։ Մէկն իր չպուխը լեցուց ծխախոտով և վառած խաւն ալ վրան դնելով՝ տուեց ինձ ու ես սկսեցի ծխել։ Ամենքն ալ անհամբեր կսպասէին, թէ ինչ պիտի ընեմ։

— Ինչո՞ւ զարմացար, հարցուց տաճկերէն գիտցողը։

—Զարմացայ նորա համար, որ դուք լինելով մէկ-մէկ հսկայ կարիճներ՝ ձեր արժանիքը կստորացնէք այսպիսի չնչին գործերով։ Արդարև, ես քիչ թէ շատ աւազակներու հանդիպեր էի, բայց տակաւին ձեզի պէս չինկեանէ աւազակներու չէի հանդիպեր, որ երկու կտոր լաթի համար խեղճ ճանապարհորդի մը մերկացնէին։ Ի՞նչ շահեցիք դիս մերկացնելով, կհարցնեմ ձեզի. այդ ձեր ինչ տեղը կլեցնէ, կամ իւրաքանչիւրիդ ո՞րչափ բաժին կընկնի։ Ընկած բաժինը չնչին է, և դուք իդուր կողոպտեցիք զիս։

—Հապա ինչ ընէինք։

—Կարող էիք մեծ-մեծ կտրաւաններ և... կողոպտել, որոնցմով վաստակած կլինէիք հաղարաւոր ոսկիներ, լաւ-լաւ ձիեր և ընտիր-ընտիր զէնքեր։ Օրինակի համար, դուք կարող էիք երթալ, Խօջաթէն Բարերդ տանող ճանապարհին վրայ դարանամուտ լինել, ուրկէ անց ու դարձ ընող ամեն մէկ... կարող էիք կողոպտել և այլն։

Աւաղակները սկսեցին միմեանց հետ խօսել բոլորովին անկանոն կերպով։ Դեռ մէկն իր խօսքը չի վերջացուցած՝ միւսն արդէն կսկսէր ահագին դոռում դաշումով խօսել։ Տաճկերէն գիտցողն հարցուց ինձմէն.

—Մեզի կառաջնորդէս մինչև այդ ըսած տեղը։

—Եթէ դիս որպէս ընկեր ընդունէք ձեզ հետ՝ կառաջնորդեմ։

Դարձեալ սկսեցին խօսել ու վիճել։ Նոքա բաւական վիճելուց յետոյ՝ ինձմէ յափշտակած լաթերը քաշքշեցին միմեանց ձեռքերէ և վերադարձուցին ինձ՝ ըսելով. «Հագիր որ չի մրսիս»։ Նոցա մէկն հարցուց ինձ, թէ նշան դարնել գիտես։—«Փորձենք», ըսի։ Մէկն իր հրացանը լեցնելով՝ տուեց ինձ, որ բաւական հեռու տեղ մը նշան դարնեմ։ Նոքա ցոյց տուին նշանը, ու ես հրացանս արձակեցի։ Գնդակը դիպուածով մ'իր նպատակին դպաւ։ Աւաղակները տեսնելով զայդ՝ բոլորը մէկէն սկսեցին փաղաքշել դիս՝ ըսելով. «Վա՛լլահ ա, ճամէր ա». («Աստուած վկայ, կտրիճ է»)։

Հագայ լաթերս և հետևեցայ նոցա, որ անտառի մէջէն կողմնակի ճանապարհով մ'առաջնորդեցին դէպի իրենց գիւղը։ 1/4 ժամ յետոյ հասանք աւաղակներու գիւղը, որ Փախ կկոչուէր։ Գիւղը բաղկացած էր 8—10 տուներէ և ընկած էր խոր ձորի մը մէջ, որուն չորս կողմերը բարձրացած էին անտառապատ բարձր լեռներ։

Մտանք գիւղը։ Գիւղացիները տեսնելով դիս իրենց երիտասարդներուն մէջ՝ ապշած ու զարմացած դիմաւորեցին։ Նոքա հարցուցին աւաղակներու գլխաւորէն. «Հասո, ընէ քմմո» (ո՞վ է այդ)։ Հասոն

ծիծաղելով պատասխանեց. «Անտառէն բռնեցինք»։ Այլ հազիւ այս խօսքերն արտասանեց Հասօն՝ ամբողջ գիւղացիները— ծեր, երիտասարդ, երեխայ—թափուեցան վրաս և սկսեցին ապուշ-ապուշ դիտել։ Կղարմանային։ Նոցա շատերն սկսեցին մատներով շօշափել զիս։ Մէկն ատամներս կնայէր, միւսն աչքերուս կնայէր բոլորովին զարմացած, ուրիշ մ'ալ ձեռքերուս, ոտքերուս կնայէր. ալ ո՞վ գիտէ։ Ամեն մէկ կողմս դիտեցին ու զննեցին. կարծես լեռան մէջէն վայրենի մը բռնած էին։ Անկարելի էր, որ այլևս կարողանայի ծիծաղս զսպել։ Հասօն ևս ծիծաղեցաւ ու ըսաւ. «Ա՛յ մարդեր, նա ոչ թէ լեռնէն բռնուած անասուն է, որ այդպէս կզարմանաք, այլ մեզի պէս մարդ է։ Մարդը ճանապարհորդ էր, մեզի հանդիպեցաւ. հիւր բերինք այստեղ։ Մարդ է՞և հայ է։—«Հա՛յ է,—բացագանչեց խրոխտ երիտասարդ մ'անդիէն.—դուն հա՛յ ես, աղբար»,—հարցուց ինձ մօտենալով։—«Այո, հայ եմ», պատասխանեցի։—«Եա ի՞նչպէս աս սուներու ձեռքն ընկար։

Երիտասարդը Միրագեան ցեղին պատկանող հայ մ'էր, որ այդ գիւղին մէջ ինքը մինակ իր ընտանիքով քրդերուն հետ կրնակէր։ Եւ երբ պատմեցի նորան, թէ ինչպէս նոքա ճանապարհին եկան մեզ կողոպտելու, ինչպէս կողոպտուեցայ ու ինչ միջոցով լաթերս կրկին յետ առնելով ընկերացայ նոցա՝—յայնժամ սա կատաղի բարկութեամբ մը դիմեց Հասօյին և ըսաւ. «Թող տուէք այս տղան. սա հայ է. դուք ի՞նչ իրաւունքով հայ ուխտաւորներուն կկողոպտէք, անիրաւներ... Թող տուէք, եթէ ոչ՝ հաւատացէք, մայրս թող իմ կինս եղած լինի՝ եթէ ես հիմայ այս գիւ-

ղին մէջ արիւն չի հոտեցնեմ»։—«Մենք չենք բռներ, —կարճ պատասխանեց Հասօն,—և ոչ ալ կողոպտեր, որ դու այդպէս կբարկանաս. հիւր ենք բերեր մեր գիւղը։ Նա մեր աղան է։ Նա մեզի պիտի առաջնորդէ լաւ-լաւ տեղեր, որ ձի, զէնք և ոսկի պիտի բերենք։ Կարօն երբ լսեց ձիու, զէնքի և ոսկու անունները՝ անմիջապէս մեղմացաւ, մանաւանդ երբ հասկցաւ, որ ես համաձայն եղած եմ նախապէս նոցա առաջնորդելու մինչև աւարի տեղը։ Նա հաշտուեցաւ Հասօին հետ և ինքն ևս մեզ հետ ընկերանալու ցանկութիւնն յայտնեց։ Գիւղի ամբողջ երիտասարդները, որ 25—30 հոգի կլինէին՝ բոլորը մէկէն խռնուեցան շուրջս և իբրև իրենց պետը՝ սկսեցին խնդրել ինձմէն, որ իրենց ևս ընկերացնեմ մեզ հետ։ Նոքա իրենց բոլոր զէնքերը բերին, ցոյց տուին ինձ, որ տեսնեմ և համոզուիմ, թէ լաւ են, որոնցմով կարող կլինին կռուել։ Բացի զէնքերէն նոքա սկսեցին իրենց անհատական ուժերն ալ ցոյց տալ ինձ, որ հաստատ համոզուիմ և, եթէ ոչ բոլորին տանիմ՝ գէթ նոցա մէջէն ընտրութիւն ընեմ։

—Բոլորդ ալ լաւ էք, բոլորդ ալ կարիճներ էք ու ձեր զէնքերը կատարեալ են,—ըսի.—բայց ես չեմ կարող ձեզ առաջնորդել, մինչև չգտնեմ առաջնորդ ընկերներս, որոնք ինձմէն առաջ գնացին։ Թող տուէք ինձ երթամ Հալորու գիւղը, ուր անտարակոյս կը գտնեմ ընկերներս, որմէ յետոյ կկարգադրեմ այնտեղի գործերս ու ընկերներով միասին կվերադառնամ կուգամ այստեղ, որ յարմար ժամանակին երթանք՝ ուր որ հարկաւոր է երթալ։ Պատրաստուեցէք դուք մինչև վերադարձս։

Նոքա ոչ միայն կհամաձայնէին առաջարկիս, այլ և մինչև իսկ սիրով կընդունէին՝ եթէ ըսէի, թէ եկէք ջրին մէջ թափուինք, միայն թէ պահ մ'առաջ շռայլօրէն խոստացածս աւարը ձեռք ձգէին։ Նոքա ինձ աղայ կոչեցին, իրենց պետը, որու ամենախիստ հրամանն ու պահանջքն իսկ կատարելու համար իրենց թրերուն ու հրացաններուն վրայ երդում կընէին։ Նոքա սիրով ընդունեցին առաջարկս։ Բերին խաթ մը լաւ ղէնք կապեցին վրաս և նոյն ոճով զինուած 8—9 երիտասարդներ ալ տուին ինձ, որպէս ընկեր կամ որպէս ծառայ. բայց ես մերժեցի այդ ամենը՝ միայնակ երթալու ցանկութիւն յայտնելով։ Նոքա նախ դժգոհութիւն յայտնեցին, երբ տեսան որ ես կմերժեմ, բայց յետոյ, երբ համոզեցի նոցա, որ անյարմար է նախ քան որոշ գործ մ'ընելը յայտնուիլ ուրիշներուն առջև որպէս իրենց առաջնորդող մէկը՝— լռեցին և բոլորովին թողուցին իմ կամքիս։ Ես միայն Կարօին ինձ հետ առայ, որ մինչև Հալորու գիւղն առաջնորդէ ինձ և առանց գիւղը մտնելու յետ դառնայ։ Խոստացայ նաև, որ մէկ շաբաթէն յետ դառնամ և կրկին իրենց գիւղը գամ և գտնեմ զիրենք։

Հաւատացին խօսքերուս և թող տուին ինձ։

—oo—

Կէս օրն անցեր էր՝ երբ հասանք Հալորի։

Հալորին Մնձուր գետի աջ ափին վրայ փոքրիկ հովտի մը մէջ հաստատուած 55—60 տուներէ բաղկացեալ հայ-քրդախառն գիւղ մ'էր, շրջապատուած անտառապատ բարձր լեռներով և ընկուզի ու զանազան պտղատու ծառերով։ Գիւղի արևելեան կողմը

փոքրիկ, բայց գեղեցիկ մշակուած դաշտագետին մը կար, որու մէջ դեռ նոր սկսած էր ցորենն աճել ու կանոնաւոր հասկեր տալ, մինչդեռ դաշտային կողմերը վաղուց հնձած էին ցանքերը։ Գիւղի տներն ու փողոցները, համեմատելով տեղւոյն կիսավայրենի ժողովրդեան հետ՝ բաւական մաքուր ու ճաշակաւոր էին, և բոլոր բնակիչներն ալ—այր և կին—գործունեայ և աշխատասէր մարդեր կերևէին, որ լեռնական ժողովրդի մէջ կպակսի այդ։

Կարօն, առանց գիւղը մտնելու՝ յետ դարձաւ, միանգամայն ստիպելով ինձ, որ վերադարձիս ուղղակի իրենց տունն ինչնեմ, հիւր լինիմ. իսկ ես մտայ գիւղը, ուր առաջնորդ ընկերներս քանի մը հայ Միրագեան երիտասարդներով պատրաստուած էին ինձ օգնութեան հասնել։ Բայց երբ նոքա անակնկալ կերպով զիս տեսան առանց կողոպտուած լինելու՝ զարմացան։ Նոքա անմիջապէս հարցուցին ինձ, թէ ինչպէս կարողացայ յետ ստանալ աւարուած լաթերս։ Եւ երբ բոլոր եղելութիւնը մի առ մի պատմեցի նոցա՝ զարմանալէ աւելի ապշեցան յաջողութեանս վրայ։

Ուրախ զուարթ շարունակեցինք ճանապարհը դէպի Հալորու Ս. Կարապետ վանքը, մեզ առաջնորդ առնելով միանգամայն վանքի Համբարձում անունով հաւատարիմ ծառաներէն մէկը, որ պտղի հաւաքելու համար այցելած էր շրջակայ հայ և քուրդ գիւղերը։ Գիւղէն $^1/_4$ ժամ ճանապարհորդեցինք դէպի հիւսիս և հասանք Մնձուր գետի եզերքը, ուրկէ կսկսէր ահռելի ձոր մը և կշարունակուէր մինչև վանքը ամբողջ 3—3 $^1/_2$ ժամ։ Ձորի մէջէն սոսկալի կատաղութեամբ կհոսէր Մնձուրը, որու երկու կողմերը կբարձրանային

կուսական անտառներով (մեծագոյն մասն ընկուզենի) պատած՝ երկու բարձրաբերձ լեռնագոտիներ, որոնք շարունակութիւններ էին Տուժիք-Պապայ և Ղունի-Պապայ սոսկավիթխար լեռներուն։ Զորի բերանը, ուր այլևս գրեթէ կվերջանային այն լեռները՝ երկու մեծ աղբիւրներ, ճիշտ դիմաց դէմ, միապաղաղ ժայռերու լայն ծերպերէն ուժգնապէս դուրս դէպի վեր կպօռթկային և կամարաձև միմեանց խոնարհելով և միմեանց պատառ-պատառ ընելով՝ որոնց մէջէն կարծես ելեկտրական բուռ-բուռ կայծեր դուրս կցայտէին՝ կթափէին Մնձուրին մէջ, այս վերջինն իր կատաղութիւնը մեղմացնելով այդ կատաղի աղբիւրներուն առջև, հեզիկ ու հանդարտիկ ոլոր-մոլոր յորձանք տալով յառաջ՝ դէպի վար կհոսէր։

Տեսարանն յոյժ գեղեցիկ էր։ Նա աւելի դիւթական հրապոյր մ'ունէր, քան թէ զմայլեցուցիչ երևոյթ մը։ Երբ Համբարձումէն հարցուցի սոյն ակի անունն ու նշանակութիւնը՝ նա պատասխանեց. «Խուռպան ըլլիմ ես անոնց զօրքին զօրացը. ցաղա (երեխայ) ցունեցող մարդն օր խըմա ասկուց, կուզովնայ ու կխըլավնայ (կուժովնայ ու կգիրանայ), ու տղայ ցաղայ կբերա... Ացղիկ ու տղայ (էգ ու արու) սրբանոցներ են ասոնք...»։

Թող տալով այդ ջրակերն ու գետը ձորի մէջ՝ մենք բարձրացանք 450—500 ոտք դէպի լեռան գագաթները, ուր, գետի աջ կողմը, դէպի վանք տանող յատուկ չինուած ճանապարհն հազիւ մէկ թիզ լայնութեամբ աստիճան առ աստիճան չինուած էր մինչև վանքն, ահագին քարեր ու ժայռեր կտրտելով, որու անունն էր, ըստ Համբարձումի, «ածալ պէսիկի»

(էճէլ-պէշիկի—մահուան օրօրոց), ուրկէ քարերն ու ծառերը խարխափելով՝ քայլ առ քայլ կյառաջանային։ Ճանապարհը գէշ և միանգամայն խիստ դժուարագնաց էր։ Անկարելի էր որ մարդ մ՚իր աչքերը շեղէր ճանապարհի վրայէն, որովհետև ամեն մէկ քայլափոխին՝ վար, գետին մէջ գլորուելու զարհուրելի վտանգ կսպառնար նորան։ Աստուած մի արասցէ, եթէ մարդ մը գլորուէր, ամ փշուր-փշուր լինելով՝ ամենամեծ կտորը ականջը կմնար։ Վեր բարձրանալու արդէն ճար ու ճամբայ չկար։

Դա՝ Հալորու Ս. Կարապետ տանող միակ ճանապարհն էր որ կար։

Երեկոյ էր՝ երբ հասանք վանքը։ Վանքը, որ շրջապատուած էր 25—30 հայ քրդախառն տներով՝ հաստատուած էր Մնձուրի աջ ափէն բաւական բարձրը, փոքրիկ, բայց գեղեցիկ մշակուած լեռնալանջի մը վրայ, ուր այլևս կվերջանար մութ ու մռայլ ձորը՝ իր առջև ունենալով Ցուժիք-պապան։ Վանքի տեսարանը խիստ գեղեցիկ ու զմայլելի էր։ Նորա չորս կողմերը կբարձրանային բարձրաբերձ կանաչազարդ լեռներ, որոնց ծաղկաւէտ հովիտներուն ու լանջերուն վրայ հաստատուած էին զանազան փոքրիկ գիւղեր ու հիւղեր։ Ամենուրեք լեռներէն վար կհոսէին փոքրիկ առուներ, որոնք երբեմն հանդիպելով բարձր գահավէժ ժայռերու՝ կկազմէին նոյնպէս փոքրիկ ջրվէժներ, որոնց բիւրեղեայ լեզուակներու անուշ-անուշ կկկլուկներն ու խոխոջիւնները կդիւթէին և կգերէին նայողի սիրտն ու հոգին։ Եւ այս հրաշալի տեսարաններուն մէջ վանքն իր ճարտարապետական գեղարուեստական կաթողիկէով կեցած էր սիգապանծ

վեհութեամբ մը և լռելեայն մտիկ կընէր թուչուններու գեղգեղանքին ու անուշ մրմունջքին, որ երբեմն իր կամարներուն տակ որոտացող հոգևորականներու հոգերուխ շարականներու փոխարէն՝ հեռու-հեռու դրսերէն ճըլվըլուկներ կհասցնէին իրեն, ու ինքն ալ խուլ արձագանգ միայն կուտար նոցա ճըլվըլոցին։

Մտանք վանքը շրջապատող գիւղը—Թորուտը, որն յաճախ վանքի անունով կճանչցուի, և նախ քանի մը նեղ փողոցներով անցնելով՝ հասանք վանքի դրսի դռան առջև։ Մտանք վանքի հոյակապ կամարաձև դռնէն ներս, որ կբացուէր դէպի հարաւ, ուրկէ քանի մը քայլ հեռաւորութեան վրայ կեցած էր անտառապատ բարձր լեռ մը՝ Խօջաթի և վանքին մէջտեղ, որու ստորոտը, ճիշտ վանքին դիմաց, կտեսնուէր հոչակաւոր ոսկու հանքը։—Անցանք ծածկ-գաւիթը, աջ կողմը թողնելով վանքի դոմ ու մարագը, և փայտէ սանդուխներէն վեր բարձրանալով՝ հասանք վանքի խուցերը—վանահօր սենեակը, միանդամայն եկեղեցւոյ միջնադուռը թողնելով սանդուխներու ներքևի կողմը։

Խուցը, որու մէջ կրնակէր վանահայր Տէր Պողոս քահանան՝ մեծկակ սենեակ մ'էր, երեք-չորս խոշոր լուսամուտներով, որոնք բացուած էին Մնձուրի և դէպի վանք բերող ճանապարհին վրայ։ Սենեակը կահաւորուած էր արևելեան ճաշակով և զարդարուած էր գեղեցիկ գորգերով ու նշխուն քէշէներով։ Սենեակի վերևի կողմը շինուած էր գեղեցիկ քանդակուած քարեղէն օճախ մը, որու մէջ բոցափայլ կճարճատէին կաղնու սէզ կոճղերը։ Նորա երկու կողմերը կային երկու խոշոր դարակներ, որոնց մէջ խառն ի խուռն բարդուած կերևէին զանազան հին և նոր կող-

քերով գրքեր։ Իսկ պատերէն կախուած էին ամենաընտիր զէնքեր, որոնց ոսկիէ և արծաթէ զարդերն օճախի մէջ վառուող բոցերուն առջև կշողշողային ու կշողացնէին նայողներու աչքերը։

Սենեակին մէջ մտազբաղ կճեմէր միջահասակ, գիրուկ, սևադէմ և միջին տարիքով պատկառելի մէկը, որուն սև մետաքսի նման երկար գիսակներն իր փառահեղ մօրուքին հետ եկած էին մինչև գօտեղը։ Նա հագած էր լեռնականի տարազ և զինուած էր ըէվոլվէրով մ'ու արծաթապատ փոքրիկ դաշոյնով մը, և առանց շուրջը նայելու՝ երբեմն պեխերն ոլորելով և երբեմն ալ մօրուքը շոյելով՝ հանդարտ քայլերով կճեմէր։

Դա՝ Տէր-Պօղոս քահանան էր, վանահայրը, ինչպէս յետոյ հասկցանք։

—∞—

Զարաթ երեկոյ էր։ Եկեղեցի պիտի երթայինք։ Վանահօր առաջնորդութեամբ իջանք վանքին բակը, ուրկէ—փայտէ սանդուխներու տակէն քանի մը նեղ ու մութ անցքերէ անցնելով՝ հասանք վերջապէս եկեցոյ ներսի դուռը։ Վանահօր վեց եղբայրներէն աւագը (ինքն աւագագոյնն էր), որ ժամակոչի պաշտօն կվարէր՝ երկաթեայ հաստ բանալիով մը բացաւ դուռը, ու մենք մտանք ներս։ Եկեղեցին ունէր մեծ նախասենեակ մը, ուր ժամերգութիւն կլինէր միայն լուր օրերը և հասարակ կիրակիները. իսկ տօն օրերը պատարագի արարողութիւնը կկատարուէր մայր տաճարին մէջ, որն այդ նախասենեակի յետևի կողմը կմնար՝ փոքրիկ քարաշէն դուռ մ'ունենալով նախասենեակի

ճիշտ դիմաց։ Սոյն դռնէն ներս մտանք. փոքրիկ եկեղեցի մ'էր այն, գեղեցիկ զարդարուած սեղանով մը, որ այս վերջինը եկեղեցւոյ հիւսիսային կողմն էր շինուած (թերևս արևելք կարծելով այն)։ Տաճարին մէջ խառն ի խուռն շարած էին զանազան արծաթէ և արծաթ-ոսկեզօծ խաչեր, սկիհներ, աշտանակներ, սրբութեան տուփեր, մասունքներ [1]) և այլն և այլն։ Սեղանին մէկ կողմը կրացուէր միջակ պահարան մը, ուր նոյնպէս անկարգ կերպով թափթփած էին զանազան ձեռագրեր՝ մագաղաթի ու թղթի վրայ գրուած։ Վերջապէս, վանքը կարծուածէն աւելի հարուստ էր հին ձեռագրերով և ոսկի ու արծաթ իրեղէններով։

Ժամակոչը, որ միանգամայն տիրացուի պաշտօն ալ կկատարէր, թէև գիր-կապ ընելով հագիւ կկարողանար քերական մը կարդալ՝ սկսեց անգիր երգել «Լոյս զուարթ»ը։ Ականջ պէտք էր այլևս, որ համբերութեամբ կարողանար լսել լեռնական տիրացուի ահռելի ձայնն ու անճոռնի եղանակը, որ բոլորովին յարմարցուցած էր տէրսիմցու «Լաւուկ»ի եղանակին։ Նա նոյնպէս անգիր երգեց մէկ-երկու շարական, որոնց բառերէն շատերը յարմարցուած էր տեղական բարբառին, ու եղանակը նոյնպէս լեռնականի ճաշակին։ Տէրտէրն սկսեց կարդալ Աւետարան. բայց նա ևս շատ տեղեր ամբողջ նախադասութիւններ բաց կթողնէր

---

[1]) Ուղևորութեան յուշատետրիս մէկ կարևոր մասը կորսուած լինելուն համար, չեմ կարող յիշել, թէ որո՞նց մասունքներն էին այնտեղ շարած։ Նոյն առթով ստիպուած եմ նաև լռել կարգ մ'արձանագրութիւններու մասին։

ու յաճախ կանգ կառնէր երկար բառերու վրայ, մինչև որ գիր-կապ ընէր նոցա և ապա թէ արտասանէր։

Ժամերգութիւնը վերջացաւ տասը րոպէի մէջ։ Աղօթքնիս ըրինք ու դուրս ելանք։ Եւ երբ վերադարձանք վանահօր սենեակը՝ հարցուցի նորան, թէ որտեղ ուսեր է և որմէ քահանայ ձեռնադրուեր է։ Նա պատասխանեց. «Երբ ես փոքրիկ տղայ մ'էի՝ այս վանքն ունէր հարուստ միաբանութիւն։ Այստեղ կը նստէր արքեպիսկոպոս (?), որ իր ձեռքին տակ ունէր երեք-չորս եպիսկոպոս, տասը-տասներկու վարդապետ և վեց-եօթը սարկաւագ ու տիրացու։ Ես կարդալ գրել սորվեցայ նոցա մօտ։ Բայց երբ ժամանակի ընթացքով այդ միաբանութիւնը վերացաւ, այսինքն ոմանք մեռան, ոմանք հեռացան, առանց նորերն յաջորդելու՝ վանքը մնաց անտէր ու անխնամ։ Նոցա մնացորդներէն վարդապետ մը միայն կար, որ կկառավարէր վանքն ու ժողովուրդը. բայց նա ալ ասկէ 14—15 տարի առաջ մեռաւ, ու վանքը մնաց բոլորովին թափուր։ Սոյն վարդապետին եղբայր մը կար, որուն օրէնքով կվիճակուէր վանահայրութիւնը, բայց նա ալ քիչ մ'ապուշ լինելուն համար անյարմար էր և չէր կարող վարդապետ կամ քահանայ լինել [1]։ Մեր ժողովուրդը տեսաւ, որ այդպէս չլինիր՝ ընտրեց դիս և ուղարկեց Քարբերդ, որ այնտեղ Յակոբոս եպիսկոպոսէն (ձգնաւորեան) քահանայ ձեռնադրուիմ —որովհետև ատկէ առաջ ամուսնացած էի ու տակաւին ամուսինս ալ կենդանի էր—և դամ կառավա-

1) Դա մեզի հալորուէն վանք առաջնորդող Թոթովախոս համարձումն էր։

ռեմ վանքն ու հովուեմ ժողովուրդը։ Երբոր ես մեռնիմ՝ վանահայրութիւնն օրէնքով(?) կվիճակուի ինձմէն փոքր եղբօրս, որ այժմ ժամկոչ և տիրացու է այստեղ, մանաւանդ որ անկէ աւելի ուսեալ մէկը չունինք, որ կարողանայ ինձ յաջորդել»։

—∞—

Վանքը, ինչպէս նախորդ էջերուն մէջ յայտնեցինք՝ մեծ նշանակութիւն ունի տէրսիմցի հայերուն և ղըզըլբաշներուն առջև։ Չնայելով որ վանքն իր նախկին շքեղութիւնն ու հարուստ միաբանութիւնը կորսնցուցեր է, որ անտարակոյս մեծ ազդեցութիւն կընէր լեռնականներուն վրայ, զօրացնելով նոցա հաւատքն առ Աստուած և ամրապնդելով նոցա սիրտն ու հոգին դէպի հայոց սրբատեղին, որ միակ կենդանի վանքն է Տէրսիմի մէջ՝—դարձեալ իր բարոյական ազդեցութիւնը խիստ մեծ է ամենուրեք Տէրսիմի մէջ։ Նա, Հալորու Ս. Կարապետ, ամենու համար է, իսկ ամենը՝ նորա համար։ Ամենքն ալ—հայ և քուրդ—հաւասարապէս կպաշտեն նրան և տարին մէկերկու անգամ մեծագին նուէրներով ու զոհերով ուխտ կուգան Տէրսիմի ամեն կողմերէն։ Ամեն ոք երդում կընէ վանքին վրայ, և այդ ըրած երդումն աւելի մեծ նշանակութիւն ունի՝ քան եթէ մէկն յանուն Աստուծոյ կերդուի, որովհետև նոքա երբեմն տեսեր են նորա հրաշալիքները, որ դէպի զինք թերահաւատողներուն անմիջապէս պատժեր է—կուրացուցեր, համրացուցեր, խլացուցեր և կամ բոլորովին անդամալոյծ դարձուցեր է։

Երբ ես վանքի նկատմամբ զանազան հարցերով

կհետաքրքրուէի՝ վանահայրն այս առթիւ պատմեց. «Անգամ մ'երբ դեռ նորընծայ էի՝ առաւօտուն կանուխ, դեռ մթնշաղ՝ եկեղեցի գնացի աղօթելու, և ի՞նչ տեսնեմ, Աստուած իմ. եկեղեցին ամբողջ կողոպտուած, լուսամուտներու վանդակները խորտակուած և ամեն բան ցիր ու ցան եղած էին։ Սարսափահար ճիչ մ'արձակելով՝ վաղեցի դուրս, որ օգնութեան կանչեմ եղբայրներուս՝ գողերը բռնելու համար. բայց դեռ եկեղեցւոյ դռնէն դուրս չելած՝ յանկարծ քթիս ու բերնիս վրայ ընկայ գետին։ Ուզեցի ելլել, բայց տեսայ ոտքերուս տակ բան մը կը գալարուէր։ Ջօշափեցի զայն և տեսայ, որ շալակաւորուած մարդ մ'էր—տաճարին կողոպտողը։ «Ո՞վ ես», հարցուցի. բայց պատասխան չկար։ «Ոտքի կանգնիր», ըսի. բայց նա անկարող էր, որովհետև կատարեալ անդամալոյծ մ'եղած էր այն, համր լինելով հանդերձ։ Եղբայրներս եկան, ճրագ բերին ու լուսաւորեցին։ Լուս աչքով դիտեցինք եկեղեցւոյ մութ անկիւնները և տեսանք, որ չորս-հինգ քրդեր ևս, նոյնպէս շալակաւորուած՝ ընկած էին այս ու այն կողմը, առանց շարժուել կարողանալու։ Եղբայրներս վազեցին դուրս և տեսան այնտեղ, եկեղեցւոյ խորտակուած լուսամուտներուն առջև, փրփրած բերաններով ու բոլորովին անդամալոյծ եղած քրդեր, որ կարծես կատղած ու դիւահարուած՝ ընկած էին այս ու այն կողմ, եկեղեցւոյ պատերուն տակ։ Բռնեցինք բոլորին ու ներս բերինք։ Վար առինք դոցա շալակները, որ լեցուցած էին եկեղեցւոյ ամբողջ ոսկի արծաթ զարդերով։ Բան չըրինք գողերուն, այլ թող տուինք իրենց նոյն դրութեան մէջ և շուտով կանչեցինք դո-

ցա ընդհանուր կրօնապետ սէյիտը, որ վանքէն ոչ շատ հեռուն տուն ունէր։ Եկաւ կրօնապետը, եկան նաև անհամար քրդեր և ականատես եղան մեր Ս. Կարապետի հրաշալի զօրութեանը։ Եւ երբ բոլորը մէկէն տեսան այդ գողերուն պատժուիլը՝ ծունը դրին տաճարին առջև ու ամենաջերմեռանդարար աղօթեցին, որ Ս. Կարապետը գոցա—գողերուն—պատճառով իրենց ալ վրէժխնդիր չըլլի։ Կրօնապետն ի վերջոյ համբուրեց ձեռքերս, ոտքերս, խոստովանելով միանգամայն մեր սրբի ճշմարտութիւնը, խնդրեց որ բարեհաճիմ աղօթել գողերուն վրայ և բարեխօս լինիմ Ս. Կարապետին, որ գթայ տէրսիմցիներուն ու աղատէ գողերն իրենց կասանքներէն։ Նոքա բոլորը մէկէն երաշխաւորեցին գողերու կողմէն, որ ուրիշ անգամ այդպէս չեն թերահաւատիր. խոստացան նաև, որ աղատուելուց յետոյ շատ մատաղներ մորթեն վանքի շեմքին վրայ՝ գողերու մեղքերուն (որ իրենց կպատկանի) քաւութիւն և թողութիւն լինելու համար։

«Խուռպան ըլլիմ ես Ս. Կարապետի զօրաց զօրքին,—շարունակեց վանտհայրը.—վերջապէս աղօթեցի ու մէկ-երկու գլուխ ալ Ս. Աւետարան կարդացի գողերուն վրայ, որմէ յետոյ նոքա, Աստուծոյ կարող զօրութեամբ, բժշկուեցան. միայն աջ ձեռքերու մատներէն մէկ-երկուքը մնացին թմրած, որպէսզի, թերևս, երթան և ցոյց տան բոլոր թերահաւատներուն մեր վանքի անսուտ զօրութիւնը։ Նոքա բժշկուելուց յետոյ բոլորիս պատմեցին, թէ ինչպէս պող-ձիաւոր Ս. Կարապետը, երբ իրենք ամբողջ ոսկիներն ու արծաթները շալկած դուրս ելլալու կպատրաստուէին՝ սպառազինուած ներս մտաւ և իրենց բոլորին այն-

տեղ կապեց, կաշկանդեց ու ձգեց այս ու այն կողմ։ Նոքա ուխտ ըրին, որ տարին մէկ-երկու հեղ վանքը գան և մէկ-երկու կով ու ոչխար մատաղ ընեն Ս. Կարապետին։ Երդուեցան նաև, որ այնուհետև ոչ միայն հայոց սրբերուն, այլ և ամենայնեին հայու մ'իսկ չի դպչին։ Դոցա կրօնապետը լսելով այն ամեն հրաշագործութիւնները, որ պատմեցին ենթականները, և տեսնելով նոցա կրկին բժշկուելը մեր Ս. Աւետարանի զօրութեամբը, թէև հայ չդարձաւ, բայց հաւատաց հայու հաւատին ու անմիջապէս մէկ-երկու կով մատաղ ըրաւ Ս. Կարապետին, նաև զանազան նուէրներ տուեց եկեղեցւոյն։ Քրդերն այնքան հաւատք ունին մեր սրբերու վրայ, որքան չունին բուն իսկ հայերը»։

Եւ ահա սա ցոյց կուտայ, թէ տէրսիմցիներու հաւատքն որ աստիճանի հասեր է։ Նոքա ոչ միայն կհաւատան վանքին ու հայոց մէն-մի սրբերուն, այլ կպաշտեն վանահօրը, որովհետև նա «*զիր կարդալ գիտէ*», կարող է, հակառակ պարագային, մէկ-երկու տող մրոտելով՝ ամբողջ քրդերուն կամ գոնէ վանքին հակառակորդներուն «*անբան կենդանիներու դարձնել*» և կամ նոցա բոլորովին «*քար ու հող շինել*»։ Նա Աստուծոյ մարդն է, կըսեն, ամեն անգամ Աստուծոյ հետ կխօսի և կարող է ամեն բան ընել։ Եւ այսպէս, երբ ազդեցիկ ցեղապետ մը, որն ունի 15—20 հազար հոգուց բաղկացեալ բանակ մ'ամբողջ, Հալորու վանքն ուխտ կուգայ՝ բոլոր ծիսակատարութիւններն ընելուց յետոյ՝ հարկադրուած է, որպէս սուրբ մարդու՝ համբուրել վանահօր նախ փէշերը և ապա նորա ուսերը, մնալով կանգնած ոտքի վրայ՝ մինչև որ նա բարեհաճի տեղ մը ցոյց տալ իրեն նստելու։

Հալորու վանքն այսպէս է տէրսիմցիներուն մէջ։

Վանահայրը պատմեց ուրիշ դէպք մ'ալ, որ տեղի ունեցեր է 4—5 տարի առաջ։

«Խոզաթի թուրք կառավարութեան պաշտօնեաներուն մէջ լուր կպտրտի եղեր, թէ այստեղ, Հալորու վանքին մէջ, կարգ մ'սպառազինուած ապրստամբներ կան եղեր, որոնք որպէս թէ շահագործելով վանքին ոսկու հանքն, որով անհամար զէնք ու այլ ռազմամթերք հայթայթելով՝ կպատրաստուին եղեր արշաւել Տէրսիմի շրջակայ թրքական գաւառները։ Տեղւոյն միւթասարրիֆ փաշան անմիջապէս հրաման կարձակէ զինուորական հաղարապետի մը, որ վաշտ մ'ամբողջ զօրք հետն առած գայ և խուզարկէ վանքը հայրն։ Հազարապետը կհամաձայնի. բայց որովհետև ինքն անտեղեակ է տեղւոյն դիրքին ու ճանապարհներուն՝ Զէյնօյի տղայ անունով քուրդ ցեղապետ մը, որ Խոզաթի մէջ կրնակէր, առաջնորդ կընտրէ իրեն։ Դոքա առաւօտեան ճանապարհ կելլեն Խոզաթէն՝ Հալորու վանքը գալու համար, և չնայելով, որ ընդ ամենը վեց ժամուայ ճանապարհ է՝ դարձեալ կորսնցնելով ճանապարհի ուղղութիւնը՝ կխրուին անթափանցելի անտառի ցանցերուն մէջ, որմէ յետոյ մինչև իրիկուն ու գիշեր ամբողջ կթափառին այս ու այն կողմ այդ անտառին մէջ, մինչև որ առաւօտուն արևածագին կհասնին այս դիմացի լեռան վրայ, որուն առջևն է մեր վանքը։ Նոքա անակնկալ կերպով ինքզինքնին գտնելով վանքի մօտերը՝ սկսեցին արագարագ իջնել այդ զառիվայրը։ Եւ ես տեսնելով դոցա բազմութիւնը՝ նախ չի կրցի ստոյգ գիտնալ, թէ ինչ են։ Կանչեցի եղբայրս և ըսի, որ դուրս գայ վանքէն

և տեսնէ, թէ ովքեր են դոքա, որ լեռնէն վար կիջնեն։ Եղբայրս դեռ վանքէն դուրս չելած՝ այս տեղաց քրդերն յանկարծ դէն ի ձեռին դուրս եկան իրենց տներէն և սկսեցին դիմաւորել լեռնէն վար գալող զինուորներուն։ Քրդերը կարծելով, թէ Օսմանեան կառավարութիւնը դարձեալ անակնկալ կերպով պաշարեց Ցէրսիմը, որպէս միշտ սովոր է նա՝ սկսեցին «Հաւա՛ր, հա՛ հաւա՛ր» պոռալ, որոնց ձայներն արդէն արձագանգ դտան օդին մէջ, և հեռաւոր քրդերը բոպէապէս լսելով՝ հետզհետէ իրենց ցեղապետներով միասին, բոլորովին սպառազինուած, գունդ առ գունդ սկսեցին հաւաքուել այստեղ։ Շատերն ալ շատ հեռու լինելով մեզմէ և չկարողանալով ժամ առաջ տեղ հասնել՝ իրենց տեղերէն կամ կիսաճամբէն սկսեցին հրացաններ արձակել, հասկցնելու համար, թէ պատրաստ են շուտով օգնութեան հասնել։

Ղերջապէս զօրքերն իջան վար. բայց քրդերը կտրեցին նոցա առջևն և հարցուցին.—«Ո՞վ էք, ինչո՞ւ եկեր էք և ի՞նչ կուզէք»։ Հաղարապետը տեսնելով, որ գործն ուրիշ կերպարանք ստացաւ՝ ամենայն մեղմութեամբ պատասխանեց՝ պատճառաբանելով.— «Հիւանդ էի, ուստ ըրի Հալորու Ս. Կարապետին ոտքը գալու. բայց երկար ժամանակ ուխտս չի կատարեցի, ոչ թէ թերահաւատելով, այլ գործեր ունենալուս համար։ Այնուհետև գիշերներն հանգիստ չէի, միշտ կանջուէի քնուս մէջ զանազան երազներու ազդեցութեան տակ, կայլն... Ղերջապէս այսօր անարժանաբար բախտ ունեցայ գալ և համբուրել Ս. Կարապետի շիմքը»։

«Քրդերը երբ լսեցին հաղարապետին այս խօսքերը, որոնց շինծու լինելն ինքնին կմատնուէր՝ իսպառ մերժեցին թող տալ նրան՝ առարկելով. «Մենք երբէք չենք կարող թոյլ տալ քեզ, որ ոտք դնելով մեր վանքին մէջ՝ պղծած լինիս նրան»։—«Ո՛չ, չենք թողո՛ւր, սրբապղծութիւն կըլլի»,—պօռացին ամբողջ քրդերը, որ զէն ի ձեռին շրջապատեր էին ամբողջ զօրքերը։ Հաղարապետը դիմեց ինձ և աղաչեց, որ թոյլ տամ իր ուխտը կատարելու։—«Իբրև ուխտաւոր՝ իրաւունք ունէք մտնել եկեղեցւոյ մէջ»,—ըսի։ Բայց քրդերը դարձեալ չընդունեցին, թէ «Փափաղ էֆէնտի, չենք թողուր մենք օսմանցուն, որ աս մեր վանքը պղծէ»։ Ի՞նչ գլուխդ ցաւցնեմ. վերջապէս, երկար-բարակ խօսելուց յետոյ՝ հազիւ հաղ կարողացայ քրդերուն համոզել, որ մեր եկեղեցին ամենու համար բաց է. թող մտնեն ու իրենց ուխտը կատարեն։ Նոքա, որ մինչև այդ բոլէին 10,000 հոգիէն աւելի հաւաքուած էին զանազան կողմերէ և տակաւին գունդ-գունդ ալ կուգային մէկ ու միւս կողմէն՝ պահանջեցին, որ նախ քան եկեղեցի մտնելը, բոլոր զօրքերը և կամ նոքա, որոնք միայն կցանկան ուխտ ընել՝ երթան Մնձուրի մէջ լոգնան, մաքրուին ու յետոյ դան ուխտ ընեն։ Այդ պահանջն ևս ջրեցի, որ աւելորդ է բոլորովին. թող սրտերը միայն մաքուր ըլլի։—«Ուրեմն թող նախ համբուրեն վանքի դրսի դռան շեմքը և ապա ծնկաչոգ երթան ներսն ու աղօթեն»—խստիւ պահանջեցին քրդերը, և աւելցուցին, որ եթէ այս ևս մերժուի՝ ստիպուած են յանուն Հայոց Ս. Կարապետին մեռնիլ կամ մեռցնել բոլոր զօրքերուն, որ պիտի յանդգնին սրբապղծութիւն գործել «Ցէրսիմի» վանքին մէջ։

«Հաղարապետը կամաց-կամաց ընդունեց քրդերու առաջարկած պայմանը, և բոլորովին զինաթափ լինելով՝ նախ համբուրեց դռան շեմքը և ապա ծունկաչոգ սկսեց իր բոլոր զօրքերով յառաջանալ դէպի ներս, եկեղեցւոյ մէջ։ Եւ երբ նոքա հասան մայր տաճարին առջև՝ սկսեցին ջերմեռանդարար աղօթել ու աղի-արցունք թափել (թէև կեղծ)։ Քառորդ ժամ ամբողջ աղօթեցին ու լացին, և հինգ-հինգ դուրուշ ալ, որպէս խաչհամբոյր, ձգեցին եկեղեցւոյ դանձանակին մէջ ու դուրս եկան։

«Սեղան պատրաստել տուի և ամբողջ զօրքերուն հրաւիրեցի նախաճաշի։ Նախաճաշն ըրին։ Քրդերը շրջապատեցին բոլոր զօրքերուն և սկսեցին դիտամամբ քաղաքավարի կերպով կողոպտել նոցա՝ ուզելով «Այս ըէվոլվէրն ինձ միայն կյարմարի. տուր ինձ —Այս դաշոյնը խիստ լաւ է. տուր ինձ.—Այս զըլխարկը շատ գեղեցիկ է. տուր ինձ.—Ո՜րչափ շատ փամփուշտներ ունիս, իմս լմնցեր է. կէսը (կամ բոլորը) տուր ինձ», և այլն։ Զօրքերէն ոմանք նախատինք մը սեպելով այդ՝ վիրաւորուելցան և սկսեցին ընդդիմութիւն ցոյց տալու փորձեր ընել, որու անմիջական հետևանքն անշուշտ արիւնհեղութիւն կլինէր. բայց հաղարապետը նկատելով այդ խլրտումը՝ հանդարտեցուց զօրքերը՝ ըսելով. «Ցուէք ինչ որ կը պահանջեն և գրեցէք դայն իմ հաշւոյս. երբոր կըրկին Խոզաթ հասնինք ողջ-առողջ՝ կվճարեմ բոլորիդ»։ Վերջապէս զօրքերը կիսով չափ կողոպտուելուց յետոյ, հաղարապետի ու Զէյնոյի տղու առաջնորդութեամբ ճանապարհ ընկան յետ, դէպի Խոզաթ։ Ամբողջ քրդերն սկսեցին պօռալ. «Հէյ վախկոտ Օսման-

ցիներ, նայեցէք, թէ ինչպէս անամօթ կերպով կը փախչին, հէ՛յ, հէ՛յ...»։ Հազարաւոր հրացաններ կրակեցին օդին մէջ և կրկնեցին ու կրկնեցին իրենց ծաղրանքը դէպի զօրքերը, որոնք, սակայն, առանց յետ նայելու՝ բարձրացան լեռան վրայ և անհետացան անտառին մէջ։

«Անհամար սպառազինուած քրդեր, որ երեքշորս ժամուայ ընթացքին մէջ հաւաքուած էին այս տեղ՝ զօրքերը ճանապարհ դնելուց յետոյ մոռթեցին տաս-քսաններով ոչխարներ, խորովեցին, կերան, խմեցին ու սկսեցին ձիարշաւ մը, հրացանաձգութիւն մը... և ամբողջ ութը-տասը օր շարունակ մնացին այստեղ, կարծելով թէ զօրքերը Խօզաթէն, նոր ոյժ ստանալով՝ կրկին յետ կդառնան Տէրսիմի վրայ կռիւ մղելու համար. բայց երբ տեսան, որ այլևս գալող ու գացող չկայ՝ թող տուին վանքն ու հեռացան գնացին իրենց տեղերը»։

Երրորդ օրինակ մ'ևս, ցոյց տալու համար տէրսիմցի քրդերուն հաւատքն առ հայոց սրբերը։

«Անգամ մը,—սկսեց պատմել վանահայրը,—Երզնկայի առաջնորդարանէն նամակ մ'առի, որով կ'յայտնէին... «Տէր հայր, կարգ մը քուրդ աւազակներ գիշեր ժամանակ յարձակեր են մեր Ս. Լուսաւորչայ վանքին վրայ և կողոպտեր են անոր բոլոր արդն ու զարդը, որոնց մէջն էր նաև Ս. Ներսէսի (?) նուիրական մասունքը։ Լսելով որ աւազակները ձեր կողմերը բերած են յիշեալ մասունքը՝ կխնդրեմք, որ եթէ կարելի ըլլայ՝ ուէ դումար մը խոստանալով անոնց՝ յետ առնես մասունքն ու ղրկես մեզի։ Որչափ որ ծախք կըլլայ՝ մենք պատրաստ ենք վճարել ըստ ձեր հրա-

մանին։ Պարտաւորցուցած կըլլաս մեզի և ազգին»։ Կարդալով նամակն՝ անմիջապէս, բաւական ծախսեր ընելով՝ լրտեսներ ուղարկեցի ամենուրեք Տէրսիմի քրդաբնակ տեղերը, որ եթէ իմանան ս. մասունքի տեղն՝ շուտով լուր տան ինձ։ Վերջապէս այդ լրտեսներէն մէկը լուր բերաւ, որ մասունքն այս-ինչ տեղն է և այս-ինչ մարդու տան մէջն է, ուր գիշեր-ցորեկ մոմ վառելով մասունքին առջև՝ ամբողջ քրդերն երկրպագութիւն կընեն նորան, ըսելով թէ սա մեր սուրբն է, որ ժամանակով հայերը գողցեր էին մեզմէ... այժմ նրան դարձեալ բերինք մեզ մօտ, որ պիտի պաշտպանէ բոլորիս»։ Ես անմիջապէս քանի մը էրիձորցի քրդեր և քանի մը հատ ալ կարիճ հայեր ուղարկեցի այն քրդու տունը, ուր պահուած էր մասունքը, որ երթան ինձ մօտ բերեն աւազակն ալ, մասունքն ալ։ Ղրկած մարդերս գնացին, ու երեք-չորս օր յետոյ մասունքն ալ, աւազակն ալ բերին այստեղ։ Աւազակը լաւ մը ծեծել տալէ յետոյ՝ երեք օր երեք գիշեր անօթի ծարաւ բանտարկել տուի, ու յետոյ, քանի մը տեղացիներու ներկայութեամբ, մահուան վճիռ արձակեցի՝ սրբապղծութիւն գործելուն համար։ Ցեղապետներն իրաւունք տուին։ Բայց երբ հասաւ այն օրն, ուր այլևս մահապարտն իր պատիժը պիտի՝ ստանար՝ մէկ ալ տեսայ, որ կարգ մը պառաւ ու երիտասարդ կանայք, իրենց փոքրիկ-փոքրիկ երեխաներով միասին, լալով ու ողբալով եկան մօտս և թանկագին նուէրներ տալով մեր ս. Կարապետին՝ աղաչեցին ինձմէ, որ խնայեմ իրենց մէկ ու ճար զաւկին, որու պատժուելէն յետոյ բաղմաթիւ որբեր անտէր ու անխնամ պիտի մնային։ Ես նախապէս չի հա-

մաձայնեցայ այդպէս պարապ խօսքերով ազատ արձակել աւազակին, թէև պատժելու երբէք միտք չունէի. բայց երբ քանի մը ցեղապետներ մէջ մտնելով՝ երաշխաւորեցին աւազակի կողմէ, որ այլևս չի համարձակի այդպէս սրբապղծութիւններ ընել՝ կանչեցի աւազակը և ցեղապետներու ներկայութեամբ ըսի. «Նայէ, Ալիշան—այսպէս էր աւազակի անունը,—այս անգամ դթալով թշուառ գաւակներուդ աղի-արտասունքին՝ կներեմ յանցանքդ և այս բարի պէկերու երաշխաւորութեամբ կազատեմ քեզ այն պայմանով, որ այսուհետև ուխտելով յետ կենաս աւազակութենէ և միշտ հաւատարիմ մնաս դէպի հայոց սրբութիւնները. իսկ հակառակ պարագային, եթէ օձու ծակն ալ մտած ըլլիս՝ դարձեալ ազատում չունիս ձեռքէս. կհասկընաս: Այժմ պիտի ազատուիս, ուրեմն համաձայն ես ուխտելով ընդունել առաջարկած պայմաններս»: Աւազակը մինչև գետին խոնարհելով՝ ուխտեց, որ այլևս ոչ միայն հայու սրբութիւններուն չի դպչի, այլև եթէ ամենայեսին հայու մ'ալ հանդպի՝ չհամարձակի նորա երեսն իսկ նայիլ և «աչքիդ վրայ յօնք կայ» ըսել՝ դէշ նպատակով: Աւազակն յարեց, որ ինքն այդ բանն ընելով՝ երբէք նպատակ չէ ունեցել հայոց վնասներ հասցնել, այլ ինքն իր մեծ մօրմէն լսելով, որ «Իրենց սուրբը» Լուսաւորչայ վանքին մէջ կգըտնուի՝ դորա համար ալ գնացեր բերեր է դայն:—Այդ աւազակն հիմայ ամեն տարի ուխտ կուգայ և մէկ-երկու ոչխար ալ մատաղ կընէ մեր վանքին»:

—Վերջն ինչպէս ըրիր,—հարցուցի իրմէն.—վերադարձուցիր մասունքը, թէ ոչ:

—Ո՛չ, չի վերադարձուցի, որովհետև կարդ մ'ա-

նախորժութիւններ առաջ եկան իմ և Երզնկայի առաջնորդարանին միջև։ Նոքա աւաղակ անուանեցին ինձ, որպէս թէ ես եղած լինիմ այդ աւաղակութեան առիթ տուողը, այսինքն նոցա թելադրողը, որ երթան վանքը կողոպտեն։ Վերջապէս տեսայ, որ անկարելի է դոցա հետ ոչէ կերպով յարմարուիլ՝ գրեցի որ չեմ իտար ս. Ներսէսի մասունքը. եթէ այդ հայու սրբութիւն է՝ մենք ալ հայ ենք, եթէ այդ հայու վանք է, այս ալ հայու վանք է. հետևարար աւելի լաւ է, որ այդ մասունքը մեր վանքին մէջ մնայ, քան թէ այնտեղ, ուր միշտ երկիւղալի է գողերու պատճառով։ Եւ այդպէս ալ մնաց մինչև այսօր»։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ՑԷՐՄԻՄԻ

ՏԷՐՍԻՄ

ԲՆԱԿԱՆ ԴԻՐՔ

Տէրսիմը Բարձր-Հայոց արևմտեան ծայրը՝ Կարնոյ, Տիգրանակերտի և Քարբերդի միջավայրը կմնայ, որ ծովու մակերևոյթէն 9—10 հազար ոտք բարձրութեան վրայ կգտնուի։

Տէրսիմի լեռնաշղթան արևելքէն Պինկեօլ (Բիւրակն) լեռներէն սկսելով՝ կհասնի մինչև Խաղաջուր լեռներն և կվերջանայ Ակնայ մօտերը՝ Եփրատն իրեն սահման ընդունելով, միանգամայն իր ընդարձակ տարածութեան մէջ թողնելով Ճէյթան, Քէշմէր, Ղըզըլ-Քիլիսէ, Սիլպուլ, Պաղուր, Մէրճան, Սէլ, Մալ, Տուժիկ-պապա, Ղուրու-պապա և Մնձուր բարձրաբերձ լեռները, որոնք առանձին-առանձին լեռնագօտիներ կը կազմեն Տէրսիմի մէջ։

Տէրսիմի հիւսիսային և հարաւային ստորոտներէն դէպի արևմուտք կհոսեն Եփրատի երկու մեծ ճիւղերը և այն երկրի վերջաւորութեան վրայ, Զմշկա-

ծագի և Կապան-Մատէնի միջավայրը, իրար կխառնուին։ Այս երկու ճիւղերէն մէկը—Արածանին, որ Մշոյ դաշտէն անցնելուց յետոյ կխառնուի ճապաղջրին՝ Տէրսիմի հարաւային սահմանը քերելով՝ Բալուայ ջուր անունով կհոսէ Բալահովտի, Փերնայ, Բերդակի և Զմշկածագի սահմաններէն և նրանց իր աջ կողմը թողնելով կխառնուի Սև-ջրին կամ Ակնայ-ջրին հետ, այս ընթացքի մէջ նաև իր ձախ կողմը կթողու Քարբերդի արգաւանդ դաշտը։ Իսկ միւսը—Սև-ջուրը, Տէրսիմի հիւսիսային կողմէն կանցնի, նախ՝ իր աջ եզերքին վրայ թողնելով Մամախաթուն (Դերջան) և Երզնկա, և ապա խոնարհուելով դէպի հարաւ, իր ձախ կողմը թողնելով Փինկեան և Զմշկածագ, իսկ աջին վրայ՝ Ակն։

Եփրատի այս երկու մեծ ճիւղերու մէջ՝ բարձր և կղզիացած դիրք մը բռնած է Տէրսիմը, որ ունի ընդարձակ տարածութիւն, որ կերկարի արևելքէն դէպի արևմուտք 5—6 օրուայ ճանապարհ, 3—4 օրուայ ճանապարհ լայնութիւն ունենալով—գրեթէ բոլորը լեռնային և մասամբ անտառապատ։

Տէրսիմի մէջէն երկու մեծ ջրեր (Լըշըգ և Մընձուր) դէպի հարաւ հոսելով՝ նախ Փերնայ մօտ միմեանց կխառնուին և ապա Փերնայ-ջուրը կազմելով՝ Ուռիկ գիւղի մօտ կխառնուին Արածանուն մէջ։ Լըշըգ-չայը Պինկիոլ լեռներու արևմտեան հիւսիսային կողերէն կբղխի, նախ դէպի արևմուտք հոսելով կը մտնէ Տէրսիմ, և ապա Տէրսիմի արևելեան կողերը քերելով՝ դէպի հարաւ-արևմուտք կհոսէ, մինչև Մընձուր կամ Մուղար-չային խառնուիլը։ Իսկ Մընձուրն, որ Տէրսիմի արևմտեան ծայրերէն սկիզբ կառնէ՝ նախ

դէպի հարաւային արևելք կհոսէ և ապա վերջն հարաւ իջնելով՝ Փերնայ-ջրին հետ կխառնուի։ Այս ջուրը թէև մեծութիւն և երկարութիւն չունի, բայց բուն Տէրսիմի մէջէն կպրտրտի։

ՕԴՆ ՈՒ ԿԼԻՄԱՆ

Տէրսիմի օդը զով ու խիստ առողջարար է, միանգամայն մաքուր ու պայծառ է. բայց ամառը շատ չոր է, որովհետև ամռան շատ քիչ անձրևային օրեր կլինին, և երբեմն ալ՝ ամառնային արևադարձէն մինչև հոկտեմբերի վերջերը հաղիւ բաւականացուցիչ անձրևներ կտեղան։

Տէրսիմն արդարև բարեխառն գօտիի մէջ կգտնուի, բայց իր տարօրինակ բարձրութեան պատճառով սաստիկ ցուրտ կընէ, մանաւանդ ձմեռները չափէն աւելի ձիւն կտեղայ նորա բարձրաւանդակներուն վրայ, այնպէս որ ձմեռները շարունակ երկուերեք արշէն ձիւն նստելը սովորական է այնտեղ, իսկ երբեմն ալ կպատահի, որ ձմեռը սաստիկ և երկար լինելուն պատճառով՝ 4—5 արշէն ձիւն կնստի Տէրսիմի մէջ, մանաւանդ հիւսիսային կողմը։

Տէրսիմի բարձրաւանդակներուն վրայ և հիւսիսային կողմը ձմեռը երկար և աւելի սաստիկ ցուրտ կլինի, քան հարաւային կողմը. սորա պատճառը պարզ է։ Տէրսիմի բարձունքներուն վրայ ամառները սովորաբար մէկ կամ աւելի արշէն ձիւն կլինի, մանաւանդ ծմակները, ուր երբէք ձիւնը չի հալիր, նորը հինին

վրայ կբարդուի շարունակ, և այդպիսի տեղուանքնր արդէն ձիւնը փոքր ինչ կարմրած ու որդնոտած կլինի։

Տէրսիմի լեռնաշղթային մէջ տարուան չորս եղանակները միմեանց կյաջորդեն այսպէս.—գարունը կսկսի ապրիլի 15-էն կամ մայիսի սկիզբներէն, միշտ տեղատարափ անձրևներով ու կարկուտներով. այդ ժամանակ յորդ հեղեղներու պատճառով Տէրսիմի ամենափոքր վտակներէն իսկ մարդիկ կդժուարանան անցնել, առանց այլևայլ միջոցներու դիմելու կամ հնարելու։ Ամառը կսկսի յունիսի 15-էն կամ յուլիսի սկիզբներէն, իր հետ բերելով զովիկ հովեր ու անուշ-անուշ զեփիւռներ։ Աշունը կսկսի օգոստոսի 15-էն, քիչ պակաս կամ երբեմն աւելի, և շուտով կը վերջանայ, որուն կյաջորդէ սաստկարուք ձմեռը, որ ընդհանրապէս հոկտեմբերէն կսկսի իր մառախլապատ սաստկասառույց թևերով տարածուիլ ամենուրեք Տէրսիմի լեռնագօտուն մէջ, և հետզհետէ սաստկանալով մինչև յունվարի վերջը կամ փետրվարի կէսերը և աստիճանաբար մեղմանալով կվերջանայ ապրիլի վերջը։ Այդ միջոցին, երբ ձիւնը արշընները կբարդուի միմեանց վրայ՝ տէրսիմցիները կհանեն իրենց սովորական շարուխները և նորա տեղ կհագնին տեսակ մը լայն-լայն—դաւուկի նման—կօշիկներ, որոնք իրենց այլանդակ լայնութեամբ ու երկարութեամբ երբէք չեն խրուիր փոքր ինչ կարծրացած ձիւնին մէջ. սորան կըսեն «Հէտիկ»։

Ուրեմն Տէրսիմի ձմեռը կտևէ ուղիղ $5^1/_2$—6 ամիս, գարունը՝ 2 ամիս, ամառը՝ 2—$2^1/_2$ ամիս, իսկ աշունը՝ $1^1/_2$—2 ամիս։ Երբեմն կպատահի, որ ձմռան և գարնան եղանակները վերը գրուածէն 15

օրերու չափ յետ կամ առաջ կլինին։ Տեղացիները փորձած են այս, որ եթէ ձմեռը վաղ կամ ուշ սկսի՝ գարունն ալ նոյն չափով վաղ կամ ուշ կուգայ իր սովորական ժամանակէն։

Տէրսիմի գարունը թէև կարճատև, բայց խիստ գեղեցիկ, դալարագեղ և զուարճալի է. մանաւանդ յուլիսի սկիզբներն ամբողջ բնութիւնը կխայտայ. մանաւանդ խիստ հրապուրիչ տեսարան մը կներկայացնեն լեռները, ծաղկաւէտ հովիտներն և կարկաջահոս աղբիւրներն ու վտակները, որոնք մամռոտած ժայռերու ծերպերէն դուրս կցայտեն ջինջ յստակութեամբ։ Օդը ջինջ, զով ու պայծառ է, լեռներու և հովիտներու ծաղկաղարդ և գունագեղ վայելչութիւնն սքանչելի է, նոյնպէս և նորափթիթ ծառերու և ծաղիկներու մէջ երգող անթիւ թռչուններու քաղցրահնչիւն ճռուողիւնն ու դայլայլիկը։ Գիշերուան աստղալից կապոյտ երկնակամարին ջինջ պայծառութիւնն և ցորեկուայ կանաչազարդ լեռներու և հովիտներու երփներանգ գեղեցկութիւնը մարդուս սիրտն ու հոգին միանգամայն կպարարեն և կաքանչացնեն։

ՋՐԵՐԸ

Տէրսիմը ձիւնապատ լեռնային երկիր մը լինելով՝ բնական է որ ջրերու կողմանէ ևս առատ պէտք է լինի։ Բացի Եփրատի երկու մեծ ճիւղերէն—Եփրատ և Ուրածանի—որոցմով երեք կողմերէն շրջապատուած է նա և որոնց մէջ կթափին բազմաթիւ վտակներ,

բուն Տէրսիմի մէջէն ծնունդ առած՝—ունի նաև երկու անկախ գետակներ, Մնձուր և Լըչըգ, որոնք նոյնպէս շրջապատեր են գինքը՝ որպէս անխորտակելի պարիսպներ։ Այս ջրերն ոչ սակաւ ձկնեղէններ կը մատակարարեն տէրսիմցիներուն՝ քան ինչ որ Արածանին Բալուայ և Քարբերդի, և Եփրատն՝ Երզնկայի և Ակնայ. հետևաբար տէրսիմցին զրկուած չէ նաև ձկնեղէն կերակուրներէ։

Ակերու և աղբիւրներու մէջ նշանաւոր են Սօվուդ-Փունար, որ Խուզուչանի և Քեղուայ միջավայրը կմնայ. Զիարէթ (Մնձուրի բուն ակը), որ Օվաճուղի Զիարէթ (սրբանոց) գիւղի մօտերէն կրգիսի և հինգ վեց ջրաղաց դարձնելու չափ առատ է. Սնտամոսը [1]), որ համանուն ժայռի գագաթէն կրգիսի։ Եւ անհամար, անհաշիւ ակեր ու աղբիւրներ, որոնք եթէ քաղաքներու մէջ եղած լինէին՝ անշուշտ իրենց որոշ նշանակութիւնը կունենային, բայց Տէրսիմի համար դոքա սովորական բաներ են, այնպէս որ տեղացիներն հազիւ թէ անուն կամ կարևորութիւն տուած լինին նոցա։

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Տէրսիմը բուսականութեան կողմանէ Հայաստանի ամենահարուստ մասերէն մէկն է։ Նորա ճոխ և

---

[1]) Սնտամոսը միապաղաղ ապառաժէ մեծ լեռ մ'է՝ Մեծկերտէն դէպի արևելք, որու բարձր գագաթէն առատ ու վճիտ աղբիւր մը կրգիսի, որուն որպէս սուրբ կպաշտեն տէրսիմցիները, կխմեն ու կլոգնան նորա սառն ջրովը, որով բուժուած կլինին զանազան ախտերէ։

հարուստ անտառներն արդէն ամեն բանով և ամեն տեղի համար յատուկ են։ Տէրսիմի լեռնային մասերը գրեթէ բոլորովին անտառապատ են. կան և այնպիսի կողմեր, որտեղ գտնուած անտառներուն կարելի է ըսել կուսական անտառ. օրինակի համար՝ Խութի-Տէրէսիին, Հալսորիկի կամ Հալսորու, Ղըզըլ-Քիլիսէի և Խուզուչանի կողմերը, որոնց մէջ հազիւ թէ մարդկային ոտքը կոխած լինի մինչև ցայսօր։ Ճէյթանտաղիի անտառը նոյնպէս հսկայ և միանգամայն յատուկ է։

Անտառները մեծ մասամբ կաղնիի ծառեր են, որոնք, ո՞վ գիտէ, քանի՞ հարիւր տարուայ հսկայ տունկեր են, որոնք ինքն իրենց աճեր ու բազմացեր և վերջապէս փտելով՝ տապալուեր են գետնի վրայ, իրենց խոր արմատներէն նոր ծիլեր արձակելով։ Այս անտառներու մէջ կաղնիէն անմիջապէս յետոյ ուշադրութիւն կգրաւեն նաև ընկուզենիները, որոնք տեղ-տեղ վիթխարի հասակով մեծ կամ փոքր անտառներ կկազմեն։ Կան նաև այնպիսի տեղեր, ուր անտառներուն մեծ մասն պտղատու ծառեր են, որոնց պտուղները միմիայն վայրենի գազանները կվայելեն, մանաւանդ արջերը, որ ամառ ձմեռ ընկոյզ ու տանձ ուտելով կապրին այդ խիտ անտառներու անթափանցելի ցանցերուն մէջ։

Այժմ այստեղ թուենք պտղատու ծառերուն տեսակները, որքան որ կարող ենք յիշել.—ընկոյզ, կաղին, նուշ, խնկենի-ալուճ, կարմիր-ալուճ, ցըռ-ալուճ, պօղ-փալուտ, լոդ-փալուտ, լէպ-փալուտ, ճերմակ-փալուտ, կարմիր-փալուտ, սև-փալուտ, գղթոր (որ կաղնիի պտուղներ են). պոռուխի, հաւկուտի, տօխուզ-

տօնի, մայլամի, որ կարծը փայտ ունի և որուն վրայ կեռաս կպատուաստեն։ Սորա հոտէն օձերը կփախչին, իսկ պտուղը, որ սիսեռի չափ խոշոր և սև է՝ ժողովուրդը կգործածէ որպէս փորացաւի դեղ։—Ալաճա, որու կեղեր եօթը տեսակ գոյն ունի. սորա մանր պտուղներէն թանաք կպատրաստեն։ Չատանայ (չէդէնէ, բեեկնու ծառ, որու խիժէն խնկի բուրմունք կուգայ, որը երբ դանակի կամ սրի վէրքերու վրայ կդնեն՝ կլաւանայ), մասրենի, փշահատի, մուրտար, դէմուրճուգ, ղըզըլճուղ (հոնի), յունապ, բալ, կեռաս, դժնկի, ղարանայ, շքոքի (տեսակ մը վայրենի տանձ), սալոր՝ իր տեսակներով, տանձ, խնձոր, թթի, արտուճ (ցրդի), փաթաթուկի (շեշտի), մորմենի, բռնշի և այլն։ Իսկ անպտուղները.—խարա-ղաւաղ (թեղի), բարտի, ուռի, թարղի (որուն փայտը տօսախի նման կարծր է), պոծեղի, մայրի (չամ), սորխուն, վայրի կաղնի և այլն, և այլն։ Եթէ վայրի կաղնիներն անպտուղ են՝ նոքա ալ կարտադրեն մանանայ (գաղպէ), որ ամռան շոգերուն կիջնէ նոցա լայն տերևներուն վրայ։ Ամբողջ տէրսիմցիներն անխտիր կվայելեն այս ի վերուստ արուած մեղրի նման քաղցր և միանգամայն կաթնահամ բարիքը, որով լեռնականները կարող են նոյն-իսկ իրենց համար հարստութիւն դիզել՝ եթէ դիջանին իրենց մերձաւոր քաղաքները տանելով վաճառել վաճառականներուն. այս վերջինները դայն կփոխադրեն դէպի Եւրոպա։

Ամբողջ հովիտները, ձորերն ու լեռներու բարձունքները խոտաւէտ ու ծաղկաւէտ են։ Տեղ-տեղ (նայելով այլևս տեղւոյն) խոտերը կաճին ու կրարձրանան աւելի քան մէկ մարդապոյ. իսկ առնուազն,

ուր որ անջրդի է՝ կէս կամ մէկ արշին բարձրութեամբ կաճին և շատ առատ։ Մէկն իր նստած տեղէն, առանց սակայն այս ու այն կողմ շարժուելու, կարող է 35—40 տեսակ դանազան գոյներով ծաղիկներ հաւաքել—այնքան բազմազան են ծաղկի և խոտի տեսակները։ Ուր որ բնակիչներ կան՝ նոքա իրենց գիւղի կամ խրճիթներու շուրջը կհնձեն այս խոտերը տարեկան երկու անգամ, ու երկու անգամն ալ միևնոյն առատութեամբ կաճին. նոյն տեղերը կարածեն նաև իրենց տաւարներու բազմաթիւ հօտերը։

Այս խոտերու և ծաղիկներու մէջ կան նաև բանճարեղէններու բոլոր տեսակները, բայց բոլորն ալ վայրենի, որովհետև մշակող ու սերմանող չկայ։ Ցէրսիմցիներէն շատ քչերը բանճարեղէն կսերմանեն, ու այն ալ՝ շատ քիչ տեսակներ. իսկ միւս մնացած մեծ մասը կապրին բոլորովին վայրենի բանճարեղէններով, այնպէս և վայրենի պտուղներով գոհ կլինին լիովին։

Ցէրսիմի մէջ, ի միջի այլոց, կգտնուի նաև քիմիա-օթի, որու տերևները ձմերուկի տերևներու նման են։ Ոչխարները այս խոտէն երբ կուտեն՝ բոլոր ատամներն ոսկու պէս կսկսին փայլել, որ կտևէ ամիսներով։ Կրսեն որ այս քիմիայի հետ՝ պղինձն ոսկի կդառնայ, որ ամենափորձառու ոսկերիչն իսկ հաղիւ թէ կարողանայ դանազանել ճշմարիտ ոսկիէն, որովհետև փորձաքարը քիմիա-պղինձ ու իսկական ոսկին իրարմէ որոշել չէ կարող։

Հայ գիւղերէն մէկուն մէջ տեսայ ձեռագիր փոքրիկ տետրակ մը «Հէքիմարան» վերնագրով, որուն մէջ ի միջի այլոց գրուած էր քիմիայի մասին հե-

տեսակը. «եթէ 70 տրամ քիմիա-օթին, 20 տրամ միսկը և 10 տրամ խալիս (զուտ) ոսկին խառնես 300 տրամ խալիս պախըրին (պղինձ) հետ՝ 400 տրամ (=1 օխայ) խալիս ոսկի կունենաս»։ Այս խոտը բացի Տէրսիմի լեռներէն՝ Հայաստանի միւս մասերուն մէջ հաղուագիւտ է։

Տէրսիմի մէջ կանոնաւոր մշակուած ցանքերն առհասարակ գոհացուցիչ են այնպէս, ինչպէս Քարբերդի, Տիգրանակերտի, Մշոյ և Սեբաստիոյ արգաւանդ դաշտերուն մէջ։ Այստեղ կանոնաւոր մշակութեան համար շատ հոգ չեն տանիր, որովհետև իրենց տարուայ ուտելիքովը միայն կրաւականանան, որու պատճառով որոշ չափով մը միայն կսերմանեն։ Սոքա չեն երևակայեր անգամ, թէ երկրի հողերը մշակելով և մէջէն զանազան բերքեր վաստակելով՝ կարող են հարստանալ։ Ճիշտ այս պատճառով ալ ցարդ անկանոն, կամ լաւ է ըսել՝ նախնական վիճակի մէջ է թէ իրենց երկրագործութիւնը և թէ միանգամայն իրենց կեանքը։ Տէրսիմի մէջ, մանաւանդ դաշտային կողմը, բացի բամբակի մշակութենէն, կարելի է ամեն տեսակ սերմ ցանել և մէկի փոխարէն ութը—տասը ստանալ։

Տէրսիմցիներու սովորական ցանքերն են ցորեն, գարի, կորեկ, կըլկըլ, եգիպտացորեն, կտաւատ, շուշմայ, սիսեռ, սև-սիսեռ, կարմիր ու ճերմակ լոպի, ոսպ, քուշնայ, ճուլպանտ և նմանօրինակ թեթև սերմեր, որոնք կարող են աճել ցուրտ երկրներու մէջ։

ՎԱՅՐԵՆԻ ԴԱՂԱՆՆԵՐ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՒ ԹՌՉՈՒՆՆԵՐ

Ի հարկէ, երբ երկիր մը ամբողջ պատուած լինի այնպիսի խիտ անտառներով, ինչպէս է Տէրսիմը՝ նա զրկուած չի լինիր և՛ վայրենի դաղաններէ և՛ կենդանիներէ և՛ թռչուններէ, որոնց որսալով՝ տէրսիմցիները կապրին նոցա մսոյն ու մորթովը, շատ անդամ բաւականութիւն դգալով անտառի մէկ խորշին մէջ քաշուած ապրել։

Այս անտառներուն մէջ լիքն են—արջ՝ կարմիր, սև, ճերմակ (բայց վերջինս հազուագիւտ է), խոզ, դայլ, շնագայլ, աղուէս, նապաստակ, ճագար, սանսար, սամուր, եղնիկ, եղջերու, այծեամ, փորսուղ և այլն, և այլն... Թէև ոմանք կվկայեն, թէ առիւծ իսկ տեսնուած է Տէրսիմի խիտ անտառներուն մէջ՝ բայց մինչև այսօր տակաւին չէ եղած մէկը, որ ըսէր թէ տէրսիմցիներն առիւծ մ'որսացած են։—Իսկ թռչունները նոյնպէս լիքն են ամեն կողմ։ Մեր յիշածներէն կարող ենք թռուել այստեղ.—կաքաւ, վայրենի աղաւնի, քար-աղաւնի, տատրակ, լորամարդի, ճնճղուկ, սոխակ, դեղձանիկ, սարեակ, ծիծեռնակ, ճայեկ, բադ, բազէ, արծիւ, արօս, կաչաղակ, ագռաւ, ուրուր, սապօն-գող, բու, բուրու, խուզի-խալաբրան [1]) և ուրիշ շատ տեսակները, որոնց անուններն իսկ անծանօթ են ինձ։

---

[1]) Խուզի-խալաբրանը արծիւին մէկ տեսակն է՝ բոլորովին ճերմակ փետուրներով, որ շատ անդամ օդի մէջէն սուրալով դէպի վար ոչխարներու հօտին վրայ՝ ամբողջ գառ մ'իր սուր-սուր ճանկերով կյափշտակէ. այս պատճառով խուզի-

Էլ չենք ուզեր յիշել թունաւոր սողուններն ու միջատները, որոնք առհասարակ կվխտան ամեն կողմ. բայց այսչափ միայն ըսենք, որ Տէրսիմի օձերը նշանաւոր են. սոցա զանազան տեսակները կան, օրինակի համար, սև-օձ, կարմիր-օձ, քարկապոյտ-օձ, որոնց շատերն ոչխարի նման երկար ու ոլորուն եղջիւրներ ունին ու ոչխարի նման ալ ձայն ու աղաղակ կարձակեն։

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Տէրսիմցիներու խնամած ընտանի կենդանիներն են—կով, եզ, ոչխար (մաքի), այծ, գոմէշ, (այս վերջինէն միայն Զարսանճագի մէջ կգտնուի). խըվըրճըգ (այծի մէկ տեսակն է, որու բուրդը մետաքսի նման փայլուն ու փափուկ է), ձի, ջորի, էշ և այլն։ Տէրսիմի եզներն առհասարակ յատուկ և անուանի են իրենց դիմացկուն և ուժեղ լինելնուն համար։

ՀԱՆՔԵՐ

Տէրսիմը լինելով ամբողջապէս լեռնային շեղջակոյտ մը՝ հանքերու կողմանէ ևս հարուստ է Հայաստանի մէջ։ Նորա բոլոր կողմերու թէ քարերը, թէ

խալտոբան (գառ վերցնող) կկոչուի։ Այս թռչուններէն տեսնուած է երկու և նոյն-իսկ երեք լիտր (=2½ փութ) ծանրութեամբ. սոցա միսը շատ իւղալի և միանգամայն ոչխարի մսէն ալ աւելի համեղ է։

հողերը, բոլորն ալ գունաւոր են և միանգամայն ապակու նման կփայլին արեգակի ճառագայթներուն առջև։ Մինչև այժմ գիտցուած նշանաւոր հանքերն են.— ոսկի, բորակ, աղ և քարիւղ (նաւթ կամ գաղ-եաղի)։

1. *Ոսկու հանք.*—Այս հանքը կգտնուի Տուժիկ-պապա լեռան մօտերը, Հալլորու Ս. Կարապետ վանքէն հազիւ 40—50 քայլ հեռաւորութեամբ դէպի հարաւ։ Հանքը շատ մեծ և նշանաւոր է նորա համար, որ կըսեն թէ հողին $^1/_{10}$-ըդը մաքուր և աղնիւ ոսկի դուրս կուգայ։ Այս հանքին համար կիսօսուի նաև, թէ Հռովմայեցւոց տիրապետութեան ժամանակ կշահագործուի եղեր, և այն ժամանակէն մնացած ոսկու քաֆերը դեռ կմնան հանքի այրին մօտ։ Իսկ ոմանք ալ կպնդեն, թէ այս հանքը, Հռովմայեցւոց տիրապետութենէն անմիջապէս կամ քիչ յետոյ, Միրագեանները շահագործեր են, որմէ դուրս եկած ոսկիով դրամներ տպած են իրենց անունով։ Կըսեն որ այս ոսկէ դրամներէն տեսնուած է Տէրսիմի մէջ, որու կշիռքը թէև յայտնի չէ, բայց մեծութիւնը իշու պայտի մը չափ կայ եղեր։ Կըսեն նաև, որ այն դրամներէն, դեռ ոչ-շատ առաջ, ահագին քանակութեամբ գտնուած է Խուզուչանի Սօվուգ-փունարի ճանապարհին վրայ, որը սակայն թուրք կառավարութիւնը գրաւած է յետոյ, վասնզի գանձի գտնուած տեղը Քեղուայ վիճակէն շատ հեռու չէ։ Կիսօսուի թէ Տէրսիմի այլ և այլ կողմերն ալ կգտնուին ոսկու, արծաթի, պղնձի, կապարի և նման հանքեր, որոնք սակայն դեռ հասարակութեան մէջ յայտնուած չեն, որովհետև տեղացիները թոյլ չեն տար գիտնալու։

2. *Բորակի հանք.*—Բորակը ընդհանրապէս

Տէրսիմի մէջ առատ է։ Իղոլի կամ Խռանի կողմերը լեռ մ'ամբողջ բորակ է։ Բարեկամներէս մէկը, Վարդան անունով, որ յետոյ առաջնորդ եղաւ ինձ ուղեւորութեան ժամանակ՝ անգամ մ'ահագին տոպրակով սոյն բորակախառն հողէն բերաւ մեզ մեր պահանջմամբ։ Լուծեցինք դայն և աշխատեցանք ըստ կարելւոյն զտել հողէն. զտեցինք և մէկ-չորրորդ մասը մաքուր բորակ դուրս եկաւ։ Բացի այս լեռնէն՝ Տէրսիմի այլ և այլ կողմերը զանազան այրերու և քարանձաւներու մէջ զտուած ու ինքնիրեն պատրաստուած գունա-գունա շատ բորակ կայ, որոնցմով տէրսիմցիներն իրենց համար կպատրաստեն շատ լաւ վառօդ։

3. *Քարիւղի հանք.*—Բարձրարերձ Տէրսիմն իր ծոցոյն մէջ անհամար հարստութիւններ պահելուց յետոյ, ունի նաև քարիւղի հանք, որը կարող է ապագային իր միակ հարստութիւնը և միւսներուն նսեմացնողը լինել և որը սակայն այսօր բոլորովին անանշան և միանգամայն անգործածելի կմնայ. ով գի գիտէ, որու համար։ Այս հանքը, որ բարակ աղբիւր մ'է Ջրախառն՝ կրղեի Դէրջանի մէջէն, Մամախադունէն երկու ժամ հեռու դէպի Երզնկայի կողմը։ Վաղուց գիտցուած է այս, որու համար կարնեցի վաճառական մը թուրք կառավարութենէն թոյլտուութիւն խնդրեց, սակայն չարաչար մերժուեցաւ իր խնդիրքը։

4. *Աղի հանք.*—Տէրսիմն աղի կողմանէ ևս շատ հարուստ է։ Նա ունի վեց գլխաւոր աղահանքեր, որոնք են Քէմիր-տուզլասի, Աղա-տուզլասի, Փլիմուր-տուզլասի, Վարդենիկ-տուզլասի, Մեծկերա-տուզլասի և Տուզլա-տէրէսի։

1. *Քէմիր-տուզլասին*, որ իր մէջ կպարունակէ շատ առատ կարմիր-աղ՝ կմնայ Քամաղի մօտերը, որու աղը մեծ քանակութեամբ փոխադրուելով Հայաստանի զանազան գաւառները, կվաճառուի որպէս փորձուած ու ճանչցուած պատուական աղ։

2. *Աղա-տուզլասին*, որ առանձնապէս Խուզուշանի իշխան Շահ-Հիւսէյնի պէկի սեփականութիւնն է՝ Շահ-Հիւսէյնի գիւղէն (Աղայի-Զէնլիք) մէկ ու կէս կամ երկու ժամ հեռուն դէպի Երզնկայի կողմը կմնայ. ունի պատուականագոյն ճերմակ աղ։

3. *Փլիմուր-տուզլասին* կմնայ Փլիմուրի (Խուզուշանի գիւղաքաղաքը) մօտ. սա ևս ունի ճերմակ տեսակէն պատուական աղ։

4. *Վարդենիկ-տուզլասին* կմնայ Դերջանի և Քղուայ միջավայրը, որ ունի ճերմակ աղ։

5. *Մեծկերտ-տուզլասին* կմնայ Մեծկերտէն երկու ժամ հեռաւորութեան վրայ դէպի արևմուտք, որու ճերմակ աղը կտարածուի ամբողջ Շար-Սանճագի և մերձակայ գաւառները։

6. *Տուզլա-տէրէսին*, որ Քղիէն դէպի Դերջան տանող ճանապարհին վրայ կմնայ չորս հինգ ժամուայ տարածութեամբ՝ խոր ձոր մ'է, որն իր մէջ ունի հինգ նշանաւոր աղահանքեր, որոնք են—Վենեատիկ-տուզլա, Պարմաղսըզ-տուզլա, Մուխլուս կամ Կեկվերէն-տուզլա, Քէօռ-տուզլա և Խըզըր-տուզլա։ Բացի սոյն հինգ աղահանքերէն, որ ձորի մէջ կճանչցուին որպէս նշանաւոր ձորն ամբողջ արդէն աղահանք մ'է, և ուր որ փորուի՝ այնտեղէն դուրս կուգայ բաւական առատութեամբ աղի-ջուր, որը լճացնելով՝ մէջի աղը կդառնայ ջրէն և ինքն իրեն կտոր-կտոր լինելով՝ կիջնայ ջրին

յատակը, որ յետոյ փոսին մէջէն պարպելով լճացած ջուրը՝ մաքուր աղը դուրս կհանեն։

Այս Տուզլա-տէրէսին նշանաւոր է արդէն, բայց որովհետև աղահանքի տեղը թուրք կառավարութեան իրաւասութեան ներքոյ է՝ գրեթէ բոլորովին արգելած է ժողովրդին՝ սոյն ձորէն աղ հանելը, մինչդեռ առաջ ձորն ամբողջ տեղացի ժողովրդին կպատկանէր։ Սորա պատճառն եղած են տեղւոյն և մերձակայ գաւառներու աղի վաճառականները, որոնք տեսնելով որ ժողովուրդն ու մասնաւոր անհատներ սոյն աղահանքը շահագործելով, աղի արժէքը տասէն մինչև ինը վար կձգեն՝ թուրք կառավարութեան կաշառելով՝ աղահանքը խափանել տուած են, որով իրենց աղի արժէքը վար չընկնելէն զատ, աւելի ևս կբարձրանայ։

Տէրսիմն ունի անշուշտ և ուրիշ հանքեր, որոնք մինչև այսօր անտեսանելի մնալով մասնագէտ մարդերու աչքերէն՝ թաղուած և միանգամայն բոլորովին անյայտ կմնան լեռներու մէջ, որովհետև Տէրսիմի մէջ մուտք գործելու և մանաւանդ դայն ուսումնասիրելու համար՝ կարծուածէն աւելի դժուարութիւններ կան՝ թէ թուրք կառավարութեան կողմէն և թէ տեղւոյն անսանձ ու կիսավայրենի ժողովրդեան կողմէն. այս վերջինները մանաւանդ խիստ կասկածանքով կվերաբերուին դէպի օտարականները, կամ լաւ է ըսել՝ դէպի իրենց համար նորելուկ մարդիկ, և նոյն-իսկ յաճախ կպատահի, որ նոցա կեանքերուն վերջ կդնեն, իբրև իրենց երկրի շահերուն վնասակար մարդ նկատելով։

ՋԵՐՄՈՒԿՆԵՐ

Տէրսիմի մէջ ցայժմ ճանչցուած ջերմուկներէն ամենանշանաւորն է Խուզուշանի Փերկինի-չայի մօտ Սօվուգ-սու ըսուած հանքային ջուրը, որ համարուելով ուխտատեղի և ամեն տեսակ ցաւերու ու տկարութիւններու բուժիչ սուրբ ակ՝ Տէրսիմի ամեն կողմերէն ուխտ կերթան յիշեալ հանքային ջուրը և այնտեղ կրժշկուին առհասարակ ամեն տեսակ քոսերէ և նմանօրինակ ախտերէ և միանդամայն քամի (rhumatisme) հիւանդութենէն։

Տէրսիմի այլ և այլ կողմերը կան նաև զանազան տաք ու պաղ ջրեր, այսինքն հանքային ջրեր ու ջերմուկներ, որոնք մնացեր են նոյնպէս անյայտ կամ բոլորովին աննշան՝ ինչպէս որ անյայտ կմնան շատ ուրիշ հանքեր, որոնց գիտնալ, ճանչնալ և ստուգելը մեզ պէս անճար, այսինքն միջոցներէ զուրկ ճանապարհորդներու կարողութենէն շատ վեր է. որովհետև տէրսիմցիները դոցա իսկական նշանակութիւնն ու արժէքը չի հասկանալով՝ գիտակցաբար կամ անգիտակցաբար կթագցնեն օտարականներու առջև, կասկածելով որ նոքա տեղեկանալով և ուսումնասիրելով իրենց երկրի ամեն մէկ նիւթը՝ պիտի մատնեն զայն իրենց թշնամւոյն—թուրք կառավարութեան։ Եւ ճիշտ այս պատճառով ալ ուղևորը չէ կարող երբէք իր մօտ թուղթ ու գրիչ պահել, նշանակելու համար գէթ լսածներն ու տեսածները, և նոյնիսկ չէ կարող հետաքրքրուիլ նոցանով՝ տեղացիներու աչքին կասկածելի մէկը չի նկատուելու համար։

Ինչպէս ըսինք արդէն՝ անհամար հարուստ հանքեր պարունակող Տէրսիմը ունի իր մէջ և՛ հանքային ջրեր ու ջերմուկներ, որոնց ճշմարիտ նշանակութիւնն ու արժէքը լեռնական ժողովուրդը այնչափ չի հասկընար։ Տէրսիմցիներու հասկացողութիւնն այս հանքային ջրերու մասին ուրիշ բան չէ՝ բայց եթէ սոսկ հաւատալիք և պաշտամունք, որոնց մասին դեռ երկիւղածութեամբ կխօսի լեռնային և նահապետական սովորութեամբ ապրող ժողովուրդը։ Եթէ մէկն յանդգնի բացատրել հանքային ջրի դառնութեան, թրթռութեան կամ տաքութեան իսկական պատճառը՝ անտարակոյս նոքա կատարեալ հերետիկոս կճանչնան զայն և ոչինչ հաւատք չեն ընծայեր նորա խօսածներուն։

ՏԷՐՍԻՄԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Տէրսիմն երկու մասի կրաժնուի—դաշտային և լեռնային։ Դաշտային Տէրսիմն է ամբողջ Հար-Սանճաքը (չորս վիճակք) ու Դերջանը. այս վերջինը Տէրսիմի հիւսիս-արևելեան կողմի ստորոտները կբռնէ, իսկ առաջինը, Հար-Սանճաքը, գրեթէ Տէրսիմի ամբողջ հարաւային մասը։ Իսկ լեռնային Տէրսիմն կը բռնէ այս երկու մասերու միջավայրը և կը կազմէ Տէրսիմի իսկական լեռնաշղթան։

Այս երկու գլխաւոր մասերն ունին երեք գլխաւոր բաժանումներ կառավարական տեսակէտով. այն է՝ հպատակ, ֆէս-հպատակ և անկախ կամ անսանձ։

Հպատակները կապրին Տէրսիմի դաշտային մասերուն մէջ, կէս-հպատակները կապրին Տէրսիմի շուրջը՝ գեղեցիկ լեռնալանջերուն վրայ, իսկ անկախները, այն կիսավայրենի անսանձ ցեղերը, կապրին Տէրսիմի ձիւնապատ բարձունքները, այն մութ ու մռայլ անտառներուն խորերը և այն անմատչելի, անառիկ սոսկալի խոր լեռներուն ու միապաղաղ ժայռերուն գագաթները, որոնց մասին ըստ կարելոյն պիտի պատմենք հետզհետէ։

Ա. Հպատակներն են.

1. Փերին
2. Բերդակ
3. Զմշկածագ
4. Դերջան

} Խարաչոր կամ Զար-Սանճագ։

Մենք ամենէն առաջ պիտի խօսինք Զար-Սանճագի գլխաւոր գիւղաքաղաքին, Փերնայ մասին, որ ունի բաւական ընդարձակ տարածութիւն և բաւական ալ հայ-քրդախառն գիւղեր, որոնց մէջ հայերը մեծամասնութիւն կկազմեն և ընդհանրապէս բոլորն ալ երկրագործներ են, բայց ոչ հողատէրեր։

ՉԱՐ-ՍԱՆՃԱԳԻ ԳԻՒՂԵՐԸ ԵՒ

Թիւ	Գիւղերու անունները [1])	ՀԱՑ		ՔՈՒՐԴ		ԴՈՒՄԱՐ	
		Տուն	Ջունչ	Տուն	Ջունչ	Տուն	Ջունչ
1	Փերին	653	5224	100	500	753	5724
2	Հոշէ	10	80	—	—	10	80
3	Բաղնիք	15	120	4	20	19	140
4	Խուշին	20	160	3	15	23	175
5	Խուլաղսրդ-Թիլ	16	128	3	15	19	143
6	Հայվալի	15	120	—	—	15	120
7	Քիւրէքէն	20	160	—	—	20	160
8	Ճանիկ	12	96	20	100	32	196
9	Մասատան	—	—	60	300	60	300
10	Պաղին	8	64	—	—	8	64
11	Գարնաոր	8	64	—	—	8	64
12	Լամբք	16	128	3	15	19	143
13	Զորակ	17	136	10	50	27	186
14	Ղայաշին	26	208	5	25	31	233
15	Մրգեն	5	40	—	—	5	40
16	Ուրձ	18	144	10	50	28	194
17	Կոդաոիճ	22	176	10	50	32	226
18	Բասուն	21	168	—	—	21	168
19	Իսմայիլցիք	40	320	8	40	48	360
20	Կէկ-Թէփէ	60	480	30	150	90	630
21	Բաշաղակ	100	800	16	80	116	880
22	Վերի Խաճար	10	80	1	5	11	85
23	Վարի Խաճար	25	200	1	5	26	205
24	Ուռեկ	16	128	2	10	18	138
25	Զոռատան	10	80	15	75	25	155
26	Ցանա-պուռուն	15	120	—	—	15	120
27	Դամդաղ	15	120	6	30	21	150
28	Դիլան-օղլի	4	32	—	—	4	32
29	Լաղվան	15	120	3	15	18	135
30	Մրգան	3	24	8	40	11	64

Ծանօթ. 1. Պաղմուած է 1893—1894 թուականներուն։

Ծանօթ. 2. Գիւղերու անունները և նոցա մէջ քանի տուն և իւրաքանչիւր տան մէջ քանի հոգի լինելը՝ մասամբ մենք անձամբ գիտենք, իսկ մասամբ ալ լսած ենք բնիկ Չար-Սանճագի գիւղացիներէն և նոցա մէջ գիշեր-ցերեկ շրջող հայ փերեզակներէն (չարչի). և այդ լսածնիս հաստատել ենք

ՆՈՑԱ ԹՈՒԱՀԱՄԱՐՆԵՐԸ[1])

Թիւ	Գիւղերու անունները	ՀԱՑ		ՔՈՒՐԴ		ԴՈՒՄԵՐ	
		Տուն	Զուն՝	Տուն	Զուն՝	Տուն	Զուն՝
31	Կորման	15	120	3	15	18	135
32	Ղըզըլճուղ	20	160	1	5	21	165
33	Խոզնզեղ	25	200	7	35	32	235
34	Էսիրիք	4	32	10	50	14	82
35	Թիրիշմէկ	25	200	10	50	35	250
36	Սորբիան	20	160	10	50	30	210
37	Սվնոզ	30	240	10	50	40	290
38	Վերի Հաւսիկ	18	144	8	40	26	184
39	Վարի Հաւսիկ	15	120	6	30	21	150
40	Ղարափուղար	8	64	3	15	11	79
41	Խանիկ	20	160	5	25	25	185
42	Ջամցիք	10	80	1	5	11	85
43	Կոտոսան	15	120	16	80	31	200
44	Վասկերտ	50	400	10	50	60	450
45	Սմախ	10	80	3	15	13	95
46	Լուսատառիմ	20	160	4	20	24	180
47	Լայ-Մրգեն	7	56	1	5	8	61
48	Պալաշէր	15	120	2	10	17	130
49	Մէրճիմէք	32	256	8	40	40	296
50	Թանց	14	112	2	10	16	122
51	Նոր գեղ	15	120	2	10	17	130
52	Մղրան	20	160	8	40	28	200
53	Խարեսիկ	25	200	10	50	35	250
54	Բերդակ	30	240	700	3500	730	3,740
55	Թիլ (Թորդան)	25	200	—	—	25	200
56	Երկան	3	24	16	80	19	104
57	Վերի Զմբրդ	10	80	5	25	15	105
58	Վարի «	15	120	4	20	19	140
59	Ցաղման	20	160	14	70	34	230
60	Վայնա	18	144	7	35	25	179
		1,769	14,152	1,204	6,020	2,973	20,172

քանիցս անգամ։ Իսկ ինչ կվերաբերի սոյն գիւղերի մարդահամարին՝ այդ դեռ մինչև այսօր ոչ ոք չգիտէ, որովհետև կանոնաւոր աշխարհագրութիւն կազմուած չէ տակաւին, ու չի՝ալ կարող կազմուիլ նոյն դրութեան մէջ՝ ինչ դրութեան մէջ որ տեսանք մենք։ Այժմ յենուելով միմիայն տեսածներուս ու լսածներուս վրայ, թէ հայերը Հար-Սանճագի մէջ մնծա-

1. **ՓԵՐԻՆ.**—Փերնայ քաղաքը շինուած է Լըչըգ-չային աջ եզերքին վրայ։ Նա, որպէս Զար-Սանճագի առևտրական կենդրոնատեղի, ունի իր մէջ 55—60 խանութ, որոնց մէջ կմնան դանազան արհեստաւորներ—երկրագործ, թիթեղնագործ, պղնձագործ, կլայագործ (խալէյչի), մսագործ, ատաղձագործ, պայտառ (նալպանտ), դերձակ, կօշկակար, չարուխչի, քէչէճի (թաղիք կամ քէչէ պատրաստող), բրուտ, սէմէրչի (թամբ պատրաստող), սափրիչ, ոսկերիչ և ի միջի այլոց նպարավաճառներ կամ մրգավաճառներ, վաճառականներ (չիթ-չէմպէր, մանուսայ ծախողներ) և մանրավաճառներ (աթտէր)։ Փերնայ ամբողջ արհեստը, գեղարուեստը, վաճառականութիւնը և նմանօրինակ բոլոր գործերն առանց բացառութեան հայերու ձեռքն են. եթէ երբէք դանուին թուրք կամ քուրդ (այս վերջինը հրաշք պէտք է սեպուի)

մասնութիւն կկազմեն, որովհետեւ հայ տունները բազմանդամ են 3—17 (Ղազրլճուղ գիւղի մէջ հայ տուն մը 100 անդամներէ բաղկացած էր), հետևարար մենք դոցա միջին թիւն հանեցինք միայն ութը հոգի, որն հայ տան համար քիչ է ու շատ չէ։ Իսկ քրդերը քանի որ ընդհանրապէս բազմանդամ չեն, ու դեռ լսուած ալ չէ, որ ըսեն թէ քրդու մը տուն 20 հոգուց բաղկացած է՝ ուրեմն դոցա միջին թիւն ալ հաշուեցինք միայն 5 հոգի, որովհետև քրդու բազմանդամութիւնն է 2—8 կամ 9, իսկ աւելին՝ ոչ։

Մենք երբէք նկատի չառինք, այսինքն չբաժնեցինք, թուրքը, քուրդը և ղրզբլ-բաշը, որոնք ազգութեամբ բոլորովին տարբեր են միմեանցմէ, մանաւանդ վերջինը, ղրզբլ-բաշը, կրօնով իսկ տարբեր է առաջիններէն. հետևարար եթէ դոցա ազգաբնակութեան թուահամարը բաժնէինք միմեանցմէ՝ տարակոյս չկայ որ այլազգիներէն իւրաքանչիւրը հայերի մէկ ութերորդը հազիւ կազմէին։

սոյն գործերու մէջ, այսինքն առևտրական ասպարէզին վրայ՝ ընդհանրապէս բոլորն ալ սոխ ու սխտոր ծախողներ են. սոցա մէջ կլլին նաև հալվաճիներ և փաչաճիներ։ Իսկ ինչ կվերաբերի զարգացողութեան ու կրթութեան՝ դարձեալ հայերն առաջին տեղը կը բռնեն։ Հայերն առհասարակ, տեղւոյն զարգացմանը համեմատ, գիտուն, խելացի, ճարպիկ և հնարագէտ մարդեր են. այնպէս որ եթէ մէկը (թուրք կամ քուրդ) որևէ աղերսագրի կամ նամակի մը գրութեան պէտքն ունենայ և կամ կնճռոտ դատի մը բռնուած անճարացեր է՝ իսկոյն եթէ կդիմէ դրացի հայուն, որ նա բարեհաճի (վարձով կամ բարեկամաբար) պէտք եղածը գրել կամ խորհուրդ տալ։

Փերնայ մէջ հողատէր հայեր ևս պակաս չեն. նոցա թիւն հետզհետէ կաւելանայ՝ եթէ սակայն տեղւոյն կառավարութիւնը նպաստաւոր լինի հպատակներու շահերուն և երկրի խաղաղութեան։

Փերնայ մէջ աւելի քան 600 տուն հայեր կան։ Նոքա բաժնուած են երկու դաւանութեանց—հայ-լուսաւորչական և հայ-բողոքական. հայ-կաթոլիկներ հաղիւ թէ գտնուին։ Հայ-լուսաւորչականներն ունին եկեղեցի մը և նորան կից վարժարան մը՝ հայոց Միացեալ Ընկերութեան իրաւասութեան ներքոյ։ Հայ-բողոքականները նոյնպէս ունին իրենց համար առանձին ժողովարան մը՝ նոր շինուած, և նախակրթարան մը՝ Քարբերդի Ամերիկեան միսիոնարներու իրաւասութեան ներքոյ։ Թուրքերն ևս ունին իրենց համար մզկիթ (ճամի) մը և նորա մէջ մէարէսէ (դպրանոց) մը։

Փերին, որպէս դայմագամանիստ քաղաք՝ ունի

իր մէջ պիտայէթ-տայրէսի (դատարան) մը, ուր շաբաթը երկու-երեք անգամ ժողով գումարելով՝ կվճռեն թէ հասարակական խնդիրներ և թէ ոճրագործներու դատեր։ Ժողովին ներկայ կգտնուին, ըստ սահմանադրութեան, երկու քրիստոնեայ (հայ), մէկը աշխարհական և միւսը հոգևորական—տեղւոյն քահանան կամ վարդապետը։

Քաղաքն ունի նաև իր զինուորականութիւնն ու ոստիկանութիւնը, որոնց կառավարողն է թուրք կամ քուրդ հաղարապետ մը։ Զինուորականութիւնը բաղկացած է մէկ վաշտ զինուորներէ, իսկ ոստիկանութիւնը՝ կէս վաշտ ժանտարմներէ։

Փերնայ կառավարութեան և զինուորականութեան առևտրական գործերը (հագուստի և ուտեստի կապալառուութիւնը) բոլորովին հայերու ձեռքն է, որովհետև Փերնայ մէջ կպակսին ուրիշ ազգէ ձեռնհաս և ընդունակ մարդեր։

—oo—

Աւելորդ չվինիր կարծեմ՝ եթէ այստեղ հարևանցի ակնարկ մը ձգենք Զար-Սանճագի գիւղերուն վրայ, որոնց անուան ցուցակը տուինք արդէն։

Զար-Սանճագի 60 գիւղերը, որոնց մէջ հայ և քուրդ ազգաբնակութիւնը խառն կրնակին՝ ընդհանրապէս բոլորն ալ մարապա (կիսնորդ) հողագործներ են, որ կվարեն ու կցանեն աղաներու և պէկերու հողային կալուածները։ Սոցա աշխատութեան արդիւնքին հինգէն մէկը կառավարութիւնը կառնէ որպէս տասանորդ, իսկ մնացածի կէսն ալ կառնէ հողատէրը՝ որպէս արդար իրաւունք։

Ամեն գիւղ, ուր որ հայ կայ՝ այնտեղ կայ նաև եկեղեցի և դպրոց և քահանայ։ Եկեղեցիներու շատերուն մասին կըսեն, թէ ս. Թադէոս առաքելոյ ժամանակէն մնացած ու նորա ձեռամբն ալ շինուած են։ Փոքր և անկարող գիւղերու եկեղեցին ու դպրոցը փակ է. մեծ գիւղերու քահանաները կայցելեն տարին մէկ-երկու անգամ, Զատկին և Ծնունդին. իսկ ննջեցեալ, կնունք կամ պսակ եղած ժամանակ՝ գիւղացիներն իրենք կհրաւիրեն մօտակայ գիւղերու քահանաները։ Շար-Սանճագի հայ գիւղացիներն առհասարակ խեղճ և անուս մարդեր են, և սորա բուն պատճառն իրենց անտեսական չափազանց անձկութիւնն է։

Շար-Սանճագի մէջ երկու նշանաւոր պէկեր կան. —Օսման պէկ և Իսախ պէկ, որոնք բացարձակապէս կիշխեն բոլոր բնակիչներու վրայ և ինք զիրենքնին տէր կհամարեն երկրին. իսկ մնացած պէկերն ու աղաները, որոնք թէև քիչ թէ շատ հողային կալուածներ և նոյն-իսկ ամբողջ գիւղեր ունին որպէս իրենց սեփականութիւն՝ բայց դարձեալ երկրորդական և երրորդական տեղ կբռնեն Օսման և Իսախ պէկերու մօտ։

Օսման պէկը, որ մեծ ազդեցութիւն ունի Քարբերդի և Շար-Սանճագի մէջ՝ գլխաւորապէս կընակի երբեմն Փերնայ և երբեմն ալ Քարբերդի մէջ, որոնց իւրաքանչիւրին մէջ ունի մէկ-մէկ խօնախ (տուն), և իւրաքանչիւր խօնախին մէջ երկ-երկու կին, որոնց մօտ կարգով կապրի ինքն, Օսման պէկը։ Սորա ծառաներուն (ոչ-հայ) թիւը կհասնի 75-80, որոնք խումբ-խումբ կամ առանձին-առանձին կշրջին իրենց տիրոջ հողային կալուածներուն վրայ և մասնաւորապէս կհսկեն հայ-

երուն (ի հարկէ՝ իրենց մարապաներուն) գործերուն վրայ, որ չլինի թէ նորա գեղծում մ'ընեն։ Եւ այդ ծառաները կապրին հայ գիւղացու հաշուով։ Իսկ Իսախ պէկը, որ վերջին տարիներս փաշայութեան տիտղոս ստացաւ սուլթանէն և իր կուրծքը զարդարեց նորա խոշոր շքանշաններով իր դէպի թուրք կառավարութիւնը ցոյց տուած եռանդուն գործունէութեան համար՝ կընակի Զար-Սանճագի զանազան գիւղերուն մէջ, ունենալով ամեն կողմ տուն և ամեն տան մէջ կին, որոց իւրաքանչիւրին համար յատկացուցած է ծառաներ ու աղախիններ և որոնց մօտ կապրի կարգով։ Սա վաղուց հետէ թշնամութիւն ունենալով Օսման պէկին հետ՝ վերջապէս 1893 թուականին դատի բռնուելով իր հակառակորդին հետ՝ յաջորդ տարին, 1894 թուականին, Քարբերդի բանտին մէջ մեռաւ։

Իսկ մնացած երկրորդական պէկերն ու աղաները, որոնք նոյնպէս առաջիններու տոհմէն սերուած կհամարուին՝ կընակին Մնճուր գետի աջ և ձախ կողմի գիւղերուն մէջ։ Աջին վրայ—Մէրճիմէք, Խարեսիկ, Վասկերտ, Բաջաղակ, Պալաշէր, Քալուքուր, Միղան, Խունիկ, Ոլճող հայլն, իսկ ձախ կողմը—Ցանապուռուն, Իսմայիլցիք, Կէկ-Թէփէ, Կորճն, Զիրին, Փերին, Բաղնիք, Ղուլին, Զորակ, Ուրձ և Ղայաչին հայլն։ Այս գիւղերու մէջ կընակին հոդատէր պէկեր, որոնք իրենց բազմաթիւ կիներով, աղախիններով ու ծառաներով կապրին միմիայն հայ գիւղացու ճակտին քրտինքով։

2. **ԲԵՐԴԱԿ.**—Բերդակը, որ Զար-Սանճագի գիւղերէն ամենամեծն է՝ երկուքի կրաժնուի,—Հին Բեր-

դակ և Նոր Բերդակ։ Հին Բերդակը Քարբերդէն չորս ժամ հեռուն՝ ուղիղ դէպի հիւսիս՝ Եփրատ-Արածանու աջ եզերքին վրայ կմնայ. բոլորովին աւերակ և անմարդաբնակ է. իսկ Նոր Բերդակը, որ գրեթէ Զար-Սանճագի արևմտեան մասը կբռնէ՝ Հին Բերդակէն դէպի հիւսիս երկու-երեք ժամուայ հեռաւորութեամբ՝ լեռներու ստորոտը ծառազարդ հովտի մը մէջն է, որու բնակիչները Հին Բերդակի նախկին բնակիչներն են մասամբ, որոնք զանազան անախորժութիւններու, կամ լաւ է ըսել՝ սոսկալի հալածանքներու ազդեցութեան տակ ընկճուելով՝ քաշեր—հեռացեր են դէպի լեռներու ստորոտները և այնտեղ հիմներ են իրենց բնակութեան տեղը, որ դարձեալ հին տեղւոյն անունով ճանչցուած է—Բերդակ։

Բերդակը, ուր այժմ կմնան բնակիչները՝ քաղաքի մը չափ կարևորութիւն ունի տէրսիմցիներուն համար։ Այստեղ քրդերն ու թուրքերը մեծամասնութիւն կկազմեն։ Իսկ հայերը, որ մեծ մասամբ Քարբերդի գիւղերէն գաղթած են, թէև փոքրամասնութիւն կկազմեն, բայց այսու ամենայնիւ տեղւոյն հրապարակի գործերն ու արհեստն իրենց ձեռքն են։ Առանց հայու՝ Բերդակը կարող է կորսնցնել իր նշանակութիւնը, որով շրջակայ բնակիչները, մանաւանդ տէրսիմցի քրդերը, հարկադրուած կլինին դիմել հեռաւոր տեղեր՝ իրենց պիտոյքներն հոգալու համար, որ շատ ալ ձեռնտու չէ իրենց համար։

Բերդակի հայերն աւելի կրթուած ու հարուստ են, քան երենց դրացիներն ու շրջակայ հայ և քուրդ գիւղացիները։ Սոքա ունին վանքի նշանակութիւն ունեցող եկեղեցի մը, Սբ. Տիկին անունով, ուր ամեն

կողմերէ կդիմեն ուխտի։ Ունին նաև դպրոց մը՝ իրենց սեփական միջոցներով բացուած. իսկ թուրքերն ունին մզկիթ մը միայն։ Տեղացի թուրքերն առ հասարակ պարտիզպաններ են, և ոմանք ալ, հայերուն օրինակին հետևելով՝ հողագործութիւն կընեն։

Իսկ Հին Բերդակը, որ ինչպէս ըսինք արդէն, Եփրատ-Արածանու աջ ափին վրայ կմնայ՝ բոլորովին անմարդաբնակ է։ Այցելուն պահ մը խորին տխրութեամբ կհամակուի, երբ առաջին անգամ կտեսնէ Բերդակի կիսակործան աւերակները, որոնց մէջ միայն բուեր կթառին, այն-ինչ ընակութեան համար ամենահիանալի տեղ մ'է։ Նա թէև ամբողջապէս աւերակներու կոյտ մ'է, կիսակործան փոքրիկ բերդով մը, (որու անունով թերևս ճանչցուած է առաջները), բայց դարձեալ աւելի մեծ նշանակութիւն ունի Տէրսիմի համար, քան ուրիշ մօտ կամ հեռաւոր տեղեր։ Տէրսիմի հեռաւոր վայրերէն այստեղ կհաւաքուին ամեն ուրբաթ օրեր, ուր կլինի մեծ քանակութեամբ իրերու փոխանակութիւն, որ տեսակ մը տօնավաճառի կերպարանք կստանայ։ Հինգշաբթի օրուանէ սկսեալ քարբերդցի արհեստաւորներու և մանրավաճառ շարշիներու առագին բաղմութիւն մը կսկսի խռնուիլ Բերդակի աւերակներուն մէջ, իրենց հետ բերելով կօշիկ, կտաւ, լաչակ, շիթ-շէմպէր, գլխարկ, կոճակ, ասեղ, թել, մանած, պատրաստի հագուստներ քրդական ճաշակով, զանազան տեսակ զէնքեր հայլն հայլն։ Իսկ քրդերն իրենց հետ կբերեն իրենց ունեցածները—ընկոյզ, մանանայ (դաղդէ), պանիր, իւղ, շորթան, բուրդ, կովու և ոչխարի մորթ, վայրենի կենդանիներու մորթ, կապերտ, քիլիմ, գոյդ, գուլ-

պայ, ոչխար, գառ, ջորի, մատակ ձի կայլն կայլն։ Առևտուրն ուրբաթ առաւօտէն կսկսի։ Քաղաքացին ամեն կերպով կաշխատի իր ունեցած իրեղէնները սուղ-սուղ ծախել, այսինքն փոխել քրդու ունեցածի հետ, մէկի փոխարէն երեք-չորս և նոյն-իսկ տասնապատիկ առնելով։ Իսկ լեռնական քուրդը, որ երբէք դաղափար չունի ոչ առևտրի և ոչ ալ դրամի և կամ իր ունեցածներու արժէքի մասին, և մանաւանդ որ քաղքցու ունեցած փայլուն-փայլուն իրեղէնները կշլացնեն ու միանդամայն խիստ կհրապուրեն զինքը, պահ մը կարծել տալով, որ նոքա աշխարհիս ամենաթանկագին իրերն են՝—կաշխատի և ամեն ջանք ու ճիգ ի գործ կդնէ և նոյն-իսկ կաղաչէ ու կպաղատի քաղքցուն, որ նա բարեհաճի իր հետ առևտուր ընել, այսինքն փոխել իրը իրի հետ։ Եւ այս այսպէս լինելուն պատճառն ուրիշ բան չէ, եթէ ոչ—բացառութիւնն յարգելով—տէրսիմցուն քաղաք երթալու արգելքը, և քաղքցուն ալ Ծէրսիմ երթալը։ Սորա պատճառները պարզ են և պիտի պարզուին հետզհետէ, —կառավարութեան մօտ պիտի փնտռել։

Բերդակը, որպէս առևտրական կենդրոն քարբերդցիներու և տէրսիմցիներու համար՝ ամեն ուրբաթ օր գրեթէ անխուսափելի է պազար լինելուց։ Սակայն ամեն շաբթու որ կհամախմբուին քարբերդցի հայ և տաճիկ առևտրականներ տէրսիմցիներու հետ՝ յաճախ անախորժ դէպքեր տեղի կունենան և նոյն-իսկ արիւնհեղութիւններ յառաջ կուգան քրդերու և տաճիկներու միջև, որուն առիթ տուողն անշուշտ տաճիկներն եղած կլինին իրենց անպարկեշտ, հայհոյալից և միանդամայն մոլեկրօն վարքովն ու

բարքովը, այնպէս որ քրդերը չկրնալով համբերել իրենց դէմ եղած անարգանքներուն՝ կյարձակին նոցա վրայ և կթալլեն բոլոր ապրանքներն ու կխոշխոշեն նոցա շատերուն։ Եւ չնայելով որ գետեղերը, ճիշտ աւերակներու մօտ՝ թուրք պահակատուն մ'ալ կայ, որուն մէջ դրուած ոստիկանները պարտ են այստեղ հսկելու, այսինքն խաղաղութիւնը պահպանելու՝ շատ անգամ նոքա ևս զոհ կերթան այդպիսի խառնակութեան ժամանակ։ Եւ այսպիսի մանր-մունր դէպքերէն յաճախ առաջ կուգան թուրք կառավարութեան և տէրսիմցիներու մէջ արիւնահեղ խոշոր-խոշոր կռիւներ, որոնք գրեթէ ամեն տարի կպատահին, մէկը միւսէն աւելի կամ պակաս ծաւալով. բայց այնու ամենայնիւ քուրդն իր ուղղութիւնը շարունակելով՝ միևնոյն պատմութիւնը կկրկնուի, և միշտ անյաղթ կմնայ։ Իսկ եթէ թուրք կառավարութիւնն՝ այդպիսի անախորժութիւններու առջևն առնելու համար, արգելէ Բերդակի առևտուրը՝ այն ժամանակ տէրսիմցին ստիպուած կլինի արշաւանքներ կազմակերպել՝ շրջակայ գիւղերու և քաղաքներու վրայ յարձակելու, միմիայն իր կենսական պիտոյքներն հայթայթելու համար, որ սակայն առանց այդ արգելքին ալ յաճախ կպատահի Տէրսիմի այլևայլ կողմերը։

3. **ՉՄՇԿԱԾԱԳ.**—Չմշկածագը Չար-Սանճագի արևմտեան կողմն առանձին խասապայ մ'է, Խոզաթի միթասարիֆութեան ներքոյ. մէջը կնստի գայմագամ կառավարիչ մը՝ մէկ վաշտ զինուորներով և կէս վաշտ ալ ոստիկան զինուորներով։

Քաղաքը բաղկացած է աւելի քան 1500 տուներէ, որոնց մէկ մասը հայեր են, իսկ միւս մասն

ալ՝ թուրքեր ու քրդեր։ Հայերն ունին եկեղեցի մը և երկու-երեքդասարանեայ վարժարան մը։ Թուրքերը նոյնպէս ունին իրենց համար մզկիթ մը և մէտրէսէ մը։ Ամբողջ քաղաքն ունի 40—45 խանութներ, որոնց մէջ կմնան հայ առևտրականներ, արհեստաւորներ հայլն։

Զմշկածագն ունի 25—30 գիւղեր, որոնց մէջ հայը մեծամասնութիւն կկազմէ։ Այս գիւղերու մէջ սակայն հողագործութիւնն այնպէս զարգացած չէ, ինչպէս Զար-Սանճագի մէջ. որովհետև սորա տեղն արդիւնաւոր չէ՝ մեծ մասամբ անջրդի լինելուն համար։ Եւ այս պատճառով ալ հայ գիւղացիներէն շատերը կստիպուին պանդխտել օտար երկիր, ուր ոմանք արհեստներով կպարապին, ոմանք հասարակ ծառաներ են և ոմանք ալ թուրք կառավարութեան շրջանի մէջ զանազան պաշտօններ կվարեն, օրինակի համար՝ սեղանաւոր, գրագիր և նմանօրինակ համեստ պաշտօններ. մէկ մասն ալ օտար գօնսուլներու մօտ, ինչպէս Հալէպի և Կ. Պոլսոյ մէջ՝ թարգման, գրագիր կամ նոցա ծախսարարներն են։ Սոքա բոլորն հարուստ և ճոխ մարդեր են. բարքով ու վարքով գովելի, մաքուր և բարոյականի տէր, պարկեշտ ընտանիքներ կկազմեն։ Ամեն գիւղ իր առանձին եկեղեցին և նախակրթարանն ունի, ու վերջապէս բոլորն ալ ուսման սիրահարներ են, օրէ օր յառաջդիմելու վրայ են. նոցա մայրենի լեզուն շատ մաքուր և գրեթէ անխառն բարբառ մ'է, որ այժմ ընտանեկան շրջանի մէջ կգործածեն։

4. **ԹԵՐՋԱՆ.**—Թերջանը կմնայ Ցէրսիմի հիւսիս արևմտեան կողմը, լեռներու ստորոտները, Կար-

նէն Տրապիզոն տանող ճանապարհին վրայ, որու գիւղաքաղաքն է՝ Մամախաթունը, ուր գայմագամ կնստի։ Այս խասապան ենթարկւում է Երզնկայի միթասարիֆութեան և ունի 650—700 տուն, որոնց մէկ մասը հայեր են, որոնք գլխաւորապէս կպարապին առևտրով և արհեստներով։ Իսկ գիւղերուն մէջ, որոնց թիւը մօտաւորապէս 75—80-ի կհասնի՝ քրդերը մեծամասնութիւն կկազմեն. Հայերն ևս մեծ թիւ մը կկազմեն Թերջանի գիւղերուն մէջ, որոնք մեծ մասամբ հողատէր և ընդհանրապէս երկրագործներ են. օրինակի համար, Վերին-Բաղառիճ գիւղը, որ ունի 1000 տուն հայ, իսկ Վարի-Բաղառիճ գիւղն ունի 200 տուն հայ։

Տէրսիմի հպատակած մասերուն վրայ մեր ունեցած տեղեկութիւնները տուինք։ Այժմ բիչ մ'ալ դառնանք դէպի կէս-հպատակները, որոնք ոչ սակաւ կզբաղեցնեն կառավարութեան։

Բ. Կէս-հպատակներն են՝

1. Ղըզըլ-Քիլիսէ
2. Փախ
3. Մեծկերտ
4. Խօզաթ
5. Օվանուխ
6. Խուդուչան կամ Աղբան։

1. **ՂԸԶԸԼ-ՔԻԼԻՍԷ.**—Ղըզըլ-Քիլիսէ կթարգմանուի *Կարմիր-վանք* կամ *Կարմիր-եկեղեցի*. առաջինն աւելի հաւանական է։ Սա Տէրսիմի արևելեան կողմը՝ հաստատուած է բարձր լեռնալանջի մը վրայ, որ ունի մօտաւորապէս 250—300 տուն, որոնց 20—25 տունը հայեր են, բայց ոչ բնիկներ, այլ Քարբեր-

դէն, Բալուէն, Քղիէն, Երզնկայէն և այլ կողմերէն եկուորներ, որ կպարապին մասնաւորապէս առևտուրով ու արհեստներով և ոմանք ալ թուրք կառավարութեան գործերով (կապալառուներ)։

Խասապային մէջ կնստին քուրդ կամ թուրք գայմագամ մը և 2—3 հարիւր զինուորներ,—նայելով այլևս լեռնականներու տրամադրութեան։

Ղըզըլ-Քիլիսէի շրջականները կան նաև 70—75 քրդական վոքրիկ գիւղեր, որոնց մէջ կգտնուին քանի մը տուն հայեր՝ Միրագեան անունով։ Սոքա արևելքէն սահմանակից են Քեղուայ վիճակին, իսկ արևմուտքէն՝ Խութի-Տէրէսիին։ Այս տեղացիները թէև հպատակ են, բայց ամեն ինչ առ երեսս է։ Գիւղացի քուրդն երբ կմտնէ խասապային մէջ, ուր կառավարիչ և զինուորներ կան՝ ինքզինքը կձեացնէ հլու հպատակ, բայց երբ խասապայէն դուրս կելլէ, ուր այլևս քրդական աստուածն ու անվեհերութիւնը կը թագաւորէ՝ ինք զինքը այլևս անկախ իշխան մը կը նկատէ, և, Աստուած իմ, ո՞վ կարող է նորա վրայ բռնութիւն բանեցնել։

Խասապային մէջ բնակող հայերն ոչ եկեղեցի ունին և ոչ ալ դպրոց, այլ հին ժամանակներէն մնացած խարխուլ եկեղեցի մը կայ, որուն անունով, կարծեմ, կճանչցուի խասապան Ղըզըլ-Քիլիսէ։ Քանի մը տարի առաջ, երբ թուրք կառավարութիւնն ուզեց սոյն եկեղեցւոյ ընտիր սրբատաշ քարերով բաղնիք մը շինել զինուորներուն համար՝ շրջակայքի քրդերն իրենց լեռնցիներով հանդերձ յայտարարեցին կառավարութեան, որ եթէ յանդգնի հին ժամանակներէն մնացած սրբութիւնը պղծել՝ ստիպուած կլինին զի-

նու զօրութեամբ արդելել թուրքի սրբապիղծ ցանկութիւնները։ Կառավարութիւնն յետ կեցաւ իր որոշումէն, նոր նոր կռիւներու առիթ չի տալու համար։

2. **ՓԱԽ.**—Փախը՝ Զար-սանճագի հիւսիսային բարձրութեան վրայ՝ բաւական ընդարձակ լեռնաշատի մը վրայ հաստատուած է, որ ունի 200—250 տուն, որոնց մէկ մասը նոյնպէս եկուոր հայեր ու թուրքեր են, որոնք կպարապին մասնաւորապէս կառավարութեան գործերով։ Հայերն այստեղ ոչ եկեղեցի ունին և ոչ ալ դպրոց։

Փախի շրջակայքը տարածուած են 35—40 քրդական գիւղեր, որոնք նոյնպէս քաղաքին մէջ հպատակ են, իսկ քաղաքէն դուրսը ոչ։ Այս քրդական ցեղը կկոչուի Աշան, որոնց ցեղապետն է Կիւլապի աղան։ Սոցա մէջ խառնուած են նաև 60—70 տուն տեղացի ընիկ հայեր, Միրագեան ցեղին պատկանող, որոնց մասին պիտի խօսինք հետեւեալ էջերուն մէջ։

Փախի մէջ նոյնպէս գայմագամ կնստի, որ հաղարապետի մ'օգնութեամբ երբեմն մէկ և երբեմն ալ երկու վաշտ զինուոր կպահէ քաղքին մէջ։ Կառավարութիւնն ունի նաև բաւական մեծ ռազմամթերանոց (դէպօ) մը, որ սակայն շատ անգամ լեռնական քրդերէն, մասնաւորապէս Խութի-տէրէցիներէն, կթալլուի ու կհրդեհուի։

3. **ՄԵԾԿԵՐՏ.**—Մեծկերտը հաստատուած է նոյնպէս Զար-Սանճագի հիւսիսային կողմը, սև ապառաժ լեռներու ստորոտը։ Սորա հարաւ-արևմտեան կողմը, հինգ բոպէ հեռաւորութեան վրայ, կգտնուի Մեծկերտի հին միջնաբերդը, որ իր վաղեմի ռազմական դիրքն ու նշանակութիւնը կորսնցուցեր է այժմ՝

իր հիւսիսային կողմը,—ուր անսանձ քրդեր կընակուին—իրմէն բարձր լեռներ ունենալուն համար, որոնց բարձրութենէն ոչ միայն կարելի է քաղաքը քարերով տակն ու վրայ ընել, այլ և ամբակոծել բերդը և նոյն-իսկ կարելի է ատրճանակներով գնդակահարել բերդին վրայ գտնուողները։

Մեծկերտի խասապան բաղկացած է մօտաւորապէս 700—800 տներէ, որոնց մեծ մասը թէ տեղացի և թէ եկուոր հայեր են։ Այս վերջինները կը պարապին միայն կառավարութեան գործերով և խանութպանութիւնով։ Հայերն ունին օրինաւոր եկեղեցի և դպրոց։

Մեծկերտը կառավարողներն են թուրք գայմագամ մը և մէկ վաշտ զինուորներ ու կէս վաշտ ալ ոստիկան ժանտարմաներ։ Քաղաքի շրջակայքը կը գտնուին 25—30 քրդական գիւղեր, որոնց մէջ կան նաև փոքր թուով հայեր։

4. **ԽՕՋԱԹ.**—Խօղաթը կգտնուի Քարբերդէն երկու օրուայ ճանապարհ ուղիղ դէպի հիւսիս, Տէրսիմի արևմտեան կողմը, ընդարձակ ձորահովտի մէջ։ Սա, որպէս Տէրսիմի ընդհանուր *վիլայութիւն*՝ բաւական բազմամարդ քաղաք մ'է, որուն մէջ կնստի միթէսարիֆ կառավարիչ մը՝ երկու վաշտ զինուորներով և մէկ վաշտ ալ ոստիկան հեծելազօրներով։ Ունի նաև *Պիտայէթ-տայրէսի* և *Ճեզա-տայրէսի* (դատարան) մը, որոնց մէջ իմիջի այլոց կնստին երկու հայ անդամներ՝ կառավարութեան կողմից ընտրուած։

Խօղաթ առաջ վիլայէթ էր, ընդհանուր Տէրսիմը իր նահանգը ճանչցուելով (վիլայէթութենէն առաջ ոչինչ չունէր). իսկ վերջը զանազան հանգամանքնե-

ռու տակ սոյն վիլայէթուԹիւնը միԹէսարիֆուԹեան փոխուեցաւ, միւս մնացածները չորս գաղաներու փոխուելով, այսինքն Ղըզըլ-Քիլիսէն, Փախը, Մեծկերտը և Օվաճուղը, որ անմիջական իրաւասուԹեան տակն են Խոզաթի. այս վերջինն ալ պատասխանատու է Քարբերդու կուսակալուԹեան:

Խոզաթն ունի մօտաւորապէս 1500 տուն, որոնց մեծ մասը տեղացի և եկուոր հայեր են, իսկ մնացածներու մէկ մասը նոյնպէս եկուոր Թուրքեր են, որ կվարեն կառավարուԹեան պաշտօններ, մէկ մասն ալ քրդեր են, որ սոսկ ծառայուԹիւն կընեն առաջիններուն: Իսկ եկուոր հայերը, որ գլխաւորապէս կպարապին արհեստներով ու առևտուրով, (որու համար ալ եկած են)՝ մեծաւ մասամբ Քարբերդի, Արապկերի, Ակնայ և Զմշկածագի քաղաքներէն ու գիւղերէն գաղԹեր են: Սոքա ունին եկեղեցի և դպրոց: Իսկ Թուրքերն մզկիԹ մը, որ ի հարկէ միայն եկուոր Թուրքերուն (օսմանցի) համար շինուած է:

Խոզաթի զօրանոցը, որ քաղաքէն դէպի Քարբերդ տանող ճանապարհին վրայ կմնայ՝ նշանաւոր է իր մեծակառոյց շինուԹեամբն ու գիրքով, որուն մէջ երբեմն բանակներ կմնային: Խոզաթի շուրջը տարածուած են 30—35 քրդական փոքրիկ գիւղեր, որոնց մէջ խառն կապրին տեղացի հայեր խիստ աննշան Թուով:

Խոզաթը կարտադրէ ամենապատուական ընկոյզ, որ իր աղնուԹեամբը յայտնի է ամբողջ շրջակայ նահանգներուն մէջ, նոյնպէս և բուրդ ու գորգեր:

5. **ՕՎԱՃՈՒՂ.**—Օվաճուղը Տէրսիմի ծայրագոյն արևմուտքը, Ակնայ սահմանակից, Մնձուր գետի սկզբ-

բնաւորութեան վրայ կմնայ բաւական մեծ տարածութեամբ և ամենագեղեցիկ դիրքով։ Ունի 35—40 քրդական գիւղեր, որոնց մէջի բնակիչները զուտ ղզլբաշներ (Տէրսիմցի, կարմիր-գլուխ) են. հայեր չկան ամենևին։ Սոքա բաժնուած են գլխաւորապէս երկու ցեղերու, այսինքն աշիրէթներու, որոնց ցեղապետներն են Տիապի-աղայ և Ահմէտ աղայ, որոնք—երբեմն անկախ և երբեմն ալ կէս-հպատակ,—բայց միշտ ապըստամբներ եղած են Թուրք կառավարութեան դէմ։ Այժմս իսկ յաճախ արշաւանքներ կընեն դէպի Զմշկածագի, Փինկեանի և Ակնայ շրջակայ գիւղերուն վրայ և բնակիչներուն ղինու զօրութեամբ կստիպեն, որ իրենց տուրք վճարեն. չի վճարողը կսպանուի։

Այս տեղը մօտ լինելով Զմշկածագի և Ակնայ՝ ամառներն ընդհանրապէս հայ արհեստաւորներ և առևտրականներ, որ խիստ պատիւ ու յարգանք կվայելեն քրդերէն՝ կուգան և կսկսին իրենց գործերն այնպէս, որպէս Բերդակի մէջ քարբերդցիները կընեն։

Օվահուղ դաշտին արտադրութիւնները թէև առատ են, բայց տեղացիները զայն արդասաւորելու փոյթը չունենալով՝ թշնամաբար միշտ իրարու տնկածն ու մշակածն ալ ոչնչացունելու հաճոյք մ'ունին։ Արդարև, բանճարեղէններն ու մրգեղէնները խիստ առատ և բեղմնաւոր կլինին, բայց այսու ամենայնիւ իրենց ծուլութեան և չարութեան պատճառով միշտ սոխի ու սխտորի կարօտը կքաշեն։

Դաշտին արևմտեան կողմը, Ակնայ մօտերը, Մընձուր գետի սկզբնաւորութեան վրայ, կայ Զերինիկ կամ Զերինիկ գիւղը, ուր կնստի Թուրք դայմագամ մը, իր տրամադրութեան տակ ունենալով փոքրա-

թիւ զինուորներ, որոնք միայն գայմագամի գոյութիւնը կպաշտպանեն քրդերու դէմ։ Կառավարութիւնն ամառները կոստիպուի Քարբերդէն ոստիկան զինուորներ բերել տալ մէկ-երկու վաշտ, Օվաճուղի զանազան կէտերուն, այսինքն կարևոր ճանապարհներուն վրայ պահել տալու համար, որտեղերէն որ առևտրականները կամ ճանապարհորդները յաճախ անց ու դարձ կընեն, որպէսզի օվաճուղցի աւազակները, որ ամեն կողմ խմբերով կվխտան՝ վնաս մը չտան նոցա։ Բայց, հակառակ այդչափ զգուշութեան, շատ անգամ պահակատուններն իսկ աւարի կառնուին աւազակներու կողմէն և շինութիւնները կհրդեհուին ու ոստիկան զինուորներն ալ մեծ մասամբ կխողխողուին, ջարդ տալով միանգամայն իրենց վրայ յարձակող քրդերուն։

Այս ոստիկան զինուորները, որ ամառները վաշտերով կղրկուին դէպի Օվաճուղ՝ ձմեռներն ընդհակառակը բոլորը մէկէն յետ կդարձուին դէպի իրենց տեղերը. որովհետև Օվաճուղը ձմեռն այնչափ սաստիկ ցուրտ կընէ ու այնչափ շատ ձիւն կտեղայ, որ ոչ մի ճանապարհորդ չէ կարող իր տեղէն քայլ մ'իսկ շարժուիլ, և բնականաբար ոստիկան զինուորներուն սպասել տալն այլևս բոլորովին ի զուր է։ Օվաճուղցիներուն անսանձ մնալու բուն պատճառներէն մէկն ալ այս է, որ միայն ամառներն ոստիկան զինուորներու հետ գործ կունենան, իսկ ձմեռը ոչ։ Նոքա, քրդերը, լաւ գիտեն, որ թշնամին իր տեղէն քայլ մ'իսկ չէ կարող առնել դէպի Օվաճուղ ձիւնին ու ցրտին սաստկութեան պատճառով. բայց իրենք, օ՜, գայլերու նման կկատղին ձմեռները և կարծես այդպիսի սաստիկ

ձիւնի ու բուքի կապասին անհամբեր։ Սոցա հպատակութիւնն առ երեսս է, այն ալ միայն ամառները։

6. **ԽՈՒԶՈՒՀԱՆ.**—Խուզուշանը, որ Տէրսիմի հիւսիսային կողմը կմնայ՝ Տէրսիմի միւս բաժանումներէն ամենէն մեծն է. ունի աւելի քան 300—360 քրդական գիւղեր, որոնց լիազօր իշխանն ու ցեղապետն է հռչակաւոր Զահ-Հիւսէյնի պէկ Բ.ը (այժմ իր տղան՝ Հայտար պէկն է)։ Տէրսիմի այս բաժնին մէջ հայերը փոքր թիւ մը կկազմեն. ամբողջ Խուզուշանի մէջ միայն 10—15 հայ գիւղ կայ, որոնց ամենամեծն է 250 տուն ունեցող Ալթուն Հիւսէյնի գիւղը, որու մէջ կընակուի նաև Զահ-Հիւսէյնի պէկ Բ.-ի եղբայրը, Իպրահիմ պէկը։ Սոյն գիւղը միայն եկեղեցի և դպրոց ունի, իսկ միւսները՝ ոչ. բայց բոլորն ալ իրենց մայրենի լեզուն կպահեն՝ քիչ մ'աղաւաղուած վիճակի մէջ։

Գ. Անկախներն են՝

1. Խութի-Տէրէսի.
2. Տուժիք կամ Ապասան։

1. **ԽՈՒԹԻ-ՏԷՐԷՍԻ.**—Խութի-Տէրէսին (Խութացոր), որ կմնայ բուն Տէրսիմի՝ կենդրոնը՝ մեծ ու ահռելի ձոր մ'է՝ հիւսիսէն դէպի հարաւ ձգուած։ Այս մեծ ձորի աջ և ձախ կողմերը կբարձրանան ահռելի ժայռերով վիթխարի լեռներ՝ բոլորովին անտառապատ։ Ձորի մէջէն կանցնի բաւական մեծ վտակ մը, որ սկիզբ կառնէ Մերճանու լեռնէն։ Սոյն ջրի երկու ափերուն վրայ, ճիշտ ձորի մէջ տեղը, կգտնուի Հայտարան կոչուած մեծ գիւղը, ուր կընակուի, 750—800 տուն ազատ քրդեր, որոնց ցեղապետն է Մամօ պէկ կոչուած քաջառողջ հսկայ երիտասարդը,

որ նոյնպէս կրնակուի Հայաստանի մէջ, որու իշխանութիւնը կտարածուի ամբողջ Խութիի կողմերը, որ կը կոչուի Հայաստան։

Խութի-Տէրէսիին մէջ բացի հայտարացիներէն, որոնք բուն տիրող տարրը կհամարուին՝ կրնակուին նաև Ալանցիք, ձիպանցիք կամ ձիպրանցիք և այլ կողմերէ հալածական եղած փախստական ցեղեր, որոնք չուզելով հպատակուիլ օսմանցուն՝ իրենց միակ ապահով ապաստանն ընտրած են Տէրսիմի ամենաանառիկ տեղը—Խութի-Տէրէսին, ուր օսմանեան հզօր թագաւորութիւնն Հայաստանի տիրապետելէն մինչև այսօր դեռ չէ տեսած ու մինչև իսկ չգիտէ տակաւին, թէ Խութի-Տէրէսի ըսուած տեղն ո՞րպիսի դիրք ունի. որի մէջ բնակող ափ մը ժողովուրդը կարող է իր անկախութիւնը պահպանել օսմանեան լայնաբերան մեծ-մեծ թնդանօթներուն դէմ։

Տէրսիմի այս մասին մէջ հայ բնակութիւն երբէք չկայ. բայց հայ արհեստաւորներ ու առևտրականներ միշտ կգտնուին, որոնք մեծ ընդունելութիւն կգտնեն այս լեռնականներու մէջ։ Քրդերն ամենայն սիրով միշտ կյարգեն ու կպատուեն նոցա, որովհետև նոցանով կկարողանան իրենց պիտոյքները լրացնել, այսինքն հնացած զէնքերը նորոգել տալ, նորերը շինել տալ, տան կահկարասիներ պատրաստել տալ և այլն և այլն. իսկ հակառակ պարագային՝ բոլորովին զրկուած կլինին, եթէ հայ արհեստաւորները չի ցանկան կամ դիւրութիւններ չունենան մուտք գործել Խութիի մէջ։

Խութի-Տէրէսիին, որ ինչպէս ըսինք արդէն, Տէրսիմի ամենէն անառակ դիրքն ունի՝ արևելեան

կողմը, որ ձորի ձախը կմնայ՝ կբարձրանայ բարձրաբերձ Սէլ լեռը, որ իր գագաթին վրայ ունի բաւական ընդարձակ լեռնադաշտ մը՝ աղբիւրներով ու դալարագեղ մարգերով օժտուած։ Այս լեռը, ինչպէս Մամօ պէկն անձամբ պատմեց ինձ,—որուն զուգադիպութեամբ մը հանդիպեցայ Հալորու Ս. Կարապետ վանքին մէջ,—ձորի մէջէն միայն ճանապարհ մ'ունի բարձրացող, ժամ ու կէս կամ երկու ժամուայ տեւողութեամբ, ուրկէ վեր բարձրանալու համար հարկաւոր է այծեամներու նման մագլցել։ «Ճանապարհին վրայ, լեռան բարձունքէն,—ըսաւ Մամօ պէկը,—երեք-չորս մարդ բաւական են միմիայն քարերով արգելք լինել թշնամու ամբողջ բանակին, որ չկարողանայ վեր բարձրանալ»։ Բաւական հսկայ բերդ մ'է այն, որ կուսական անտառով շրջապատուած է չորս կողմերէն, և որ զարմանալին կամ գովելին է՝ տէրսիմցիներու պահապան հրեշտակն եղած է մինչև այսօր։ Իսկ ձորի արևմտեան կողմը, որ աջը կմնայ՝ նոյնպէս սաղարթախիտ անտառով պատուած՝ Մալ լեռան շարունակութիւնն է, որ գրեթէ նոյնչափ անմատչելի է՝ որչափ որ Սէլ լեռն է։ Սէլ լեռը հայտարանցիներու եայլան է (ամարանոցը)։

2. **ՏՈՒԺԻՔ**, կամ ըստ Մ. Խորենացու **ԱՌԻԽ**։

Տուժիքը, որ կճանչցուի Տուժիք-Պապա լեռան անունով՝ կմնայ Խութ ի-Տէրէսիի հարաւ-արևմտեան կողմը, Օվաճուղի արևելեան սահմանի մօտ։ Սա անկախ Տէրսիմի ամենամեծ մասն է, ուր կապրին մօտաւորապէս 65—70 հազար Ղըզըլբաշ քրդեր՝ զանազան ցեղերու բաժնուած, որոնց գլխաւոր ցեղապետ և միանգամայն Տէրսիմի ընդհանուր կրօնապետն

է Սէյիտ Իպրահիմ պէկը, Կուրէշանցիներու [1]) ցեղէն սերած։ Սոքա պատրաստ ունին 35—40 հազար սպառազինուած երիտասարդներ, որոնք ի պահանջել հարկին պատրաստ են կռուիլ թշնամու դէմ։ Տէրսիմի այս բաժնի մէջ կայ նաև Միրագեան կոչուած հայ ցեղը, որոնց բնակութեան գլխաւոր տեղն է Հալորու և Հալորու Ս. Կարապետ վանքը, որոնց մարդահամարը ընդամենը կհաշուուի 7—8 հազար։

Տուժիք-Պապան, որ սկիզբէն ի վեր տէրսիմցիներու պահապան հրեշտակն եղած է և որ տակաւին կպաշտուի ամբողջ տէրսիմցիներէն որպէս Տէրսիմի աստուածը՝ Խութի-Տէրէսիէն 6—7 ժամ հեռաւորութիւն ունի ուղիղ դէպի արևմուտք։ Այս լեռն երեք կողմէն—հիւսիս, արևմուտք և արևելք—բոլորովին անմատչելի է. անհպելի ժայռերով կբարձրանայ աւելի քան 9000 ոտք. միայն հարաւային կողմէն, որ Խալաթի կողմն ըսել է՝ ունի դժուարագնաց նեղ-նեղ շաւիղներով ճանապարհ մ'ուղիղ դէպի հիւսիս բարձրացող, ուրկէ մինչև Տուժիք-Պապայի գագաթը հասնելու համար հարկաւոր է անթափանցելի խիտ անտառի մէջէն անընդհատ ճանապարհորդել ամբողջ ինը ժամ, եթէ սակայն ճանապարհորդողը տեղւոյն քաջածանօթ է։ Այս սոսկալիթխար լեռը, որուն մեր նախնիքը ի հարկէ զուր չէ որ Առիւծ անուաներ են՝ տէրսիմցիներու համար պատմական մեծ նշանակութիւն ունի, մանաւանդ տասնեիններ-

[1]) Կուրէշանցիներն առանձին ապդեցիկ ցեղ մ'են Տէրսիմի մէջ, որոնցմէ զատ ուրիշներն իրաւունք և կարողութիւն չունին կրօնական լինելու։

բորդ դարուն մէջ, որ տակաւ առ տակաւ զարհուրելի արիւնահեղութեան բեմ եղած է օսմանցիներու և տէրսիմցիներու մէջ։ Տէրսիմցիները կպատմեն, և շատերն ալ որպէս ականատես վկաներ կվկայեն, թէ արտաքին թշնամին, այսինքն օսմանցին, երբ բուռն զօրութեամբ կպաշարէր Տէրսիմի լեռնաշղթան և մանաւանդ Տուժիք-Պապան, ուր համախմբուած կլինէին տէրսիմցի ազնուական տոհմերն և ամենակարևոր պատերազմողները, ու երբ թշնամին զօրաւոր էր, իսկ տէրսիմցիները՝ տկար, մանաւանդ ուտեստի ու ռազմամթերքի կողմանէ՝—Տուժիք-Պապան որպէս փրկիչն տէրսիմցիներու, ինչպէս եղած էր ու է տակաւին՝ հրաշալի և անբևոյթ թնդանօթներով կռըմբակոծէր թշնամուն բանակը և վայրկենապէս ցիրուցան կընէր նոցա բազմութիւնը։ Սոյն հրաշալի և անբևոյթ թնդանօթներու ռումբերը միապաղաղ կլոր քարեր եղած են, որ կնեռուին եղեր աւելի քան 3—4 ժամուայ հեռաւորութիւն ունեցող տեղից։ Այս քարէ ռումբերէն մէկ քանիսը—եթէ ուղևորուող լինի—տէրսիմցիները ցոյց կուտան անծանօթին և ամենայն ջերմեռանդութեամբ ու երկիւղածութեամբ կպատմեն Տուժիք-Պապային (ըստ իրենց արտասանութեան՝ Տիզկին-Պապայի) անսուտ և անսխալ զօրութիւնը, և միանդամայն նորա անխուսափելի աջակցութիւնը դէպի տէրսիմցի հաւատացեալ ու արդար քրդերը, որոնք չեն խնայեր իրենց կեանքն իսկ զոհ բերել Տուժիք-Պապային, որուն վրայ կրնակուի Ղըզըրը (Ս. Սարգիսը)։

Տուժիք-Պապայ լեռն ունի իր վրայ բաւական ընդարձակ լեռնադաշտ մը՝ առատ աղբիւրներով ու

ճոխ բուսականութեամբ օժտուած, որուն վրայ կարող են բնակուիլ աւելի քան տասը հազար մարդ, առանց կարօտ լինելու ուրիշ տեղերու, այսինքն՝ կարող են իրենց ուտեստի պաշարն հայթայթել լեռնադաշտէն՝ խնամելով միանգամայն իրենց համար բաւական եղածին չափ մսացու և կաթնատու ոչխարներ և այլ կենդանիներ։

Անկա՛խ... Այս բառն անշուշտ ընթերցողի ականջին խիստ տարօրինակ պիտի հնչէ, և միանգամայն պիտի զարմանայ նա, տարակուսելով պահ մը, որ պետութեան մէջ պետութիւն չլինիր և երևակայելն իսկ աւելորդ է։ Բայց այստեղ զարմանքի կարիք չկայ։ Համոզուելու համար բաւական է միայն նկատի առնել օսմանցուն, որ երկրին տիրող կառավարութիւնն է, և տէրսիմցու բնաւորութիւնները. առաջինն՝ իր գոռող բռնակալութեամբ, իսկ վերջինն՝ իր ազատ ու վեհանձն բնաւորութեամբ. սորա հետ միասին նկատի առնել պէտք է նաև Տէրսիմի անառիկ դիրքը, որ արդէն ինքը, բնութիւնը, կպատերազմի անծանօթին—թշնամոյն դէմ։

Այն անսանձ ցեղերը, որ այժմ կբնակուին Խութիի և Տուժիքի կողմերը բոլորովին ազատ՝ բոլորն ալ բնիկներ են։ Նոքա առաջուց, երբ տակաւին Տէրսիմի ստորին մասերը հպատակուած չէին, կբնակէին իրենց նախկին բնավայրերուն մէջ, որոնք մինչև այսօր ալ դեռ կճանչցուին նախորդ բնակիչ ցեղի անուններով. օրինակի համար՝ Խռան, Իզոլ, Պուլա-

նուզ [1]) և այլն։ Բայց յետոյ, երբ օսմանցին տիրելով այդ ստորին մասերուն, սկսեց անարդարութեամբ վերաբերուել դէպի ղըզըլբաշ քրդերը, և քրդերը տեսան, որ իրենց անարատ պատիւն իսկ ոտնակոխ կը լինի՝ թողուցին ամեն-ինչ—տուն, տեղ, կալուած, հարստութիւն, և դիմեցին դէպի Խութի-տէրէսին ու դէպի Տուժիքը, ուր օսմանցին տակաւին չէր կարողացեր մուտք գործել։ Եւ այսպէս հալածական ղըզըլբաշներն համախմբուելով Խութիի և Տուժիքի շրջակայքը՝ տեղական ազգակից ցեղերու հետ միացան և կազմեցին քաջաց աշխարհ մը և կամ կատարեալ Արշակաւան մը։



Տէրսիմցիներու, մանաւանդ անկախներու մէջ աշխարհագրութիւն կազմել և տալ նորա որոշ և ստոյգ մարդահամարը պարզապէս անկարելի է ոչ միայն անճար ճանապարհորդի մը համար, որ նոցա մէջ հաղիւ իր գոյութիւնը կարող է պահպանել, այլ անկարելի է նոյն-իսկ օսմանեան հզօր պետութեան համար, որ մինչև այսօր ալ իրեն հպատակուած մասերու (Տէրսիմի) քուրդ ազգաբնակութեան որոշ մարդահամարն իսկ չունի տակաւին։—Եւ ինչու։ Ով որ շատ թէ քիչ ծանօթ է լեռնականներու կեանքին՝ նորա համար պարզ է այս հարցը. որովհետև լեռնականները, որոնց վրայ է մեր խօսքը՝ չունին որոշ բնակութեան տեղ, այսինքն—բացառութիւնը յարգե-

[1]) Մշոյ Պուլանուղը չէ. սոքա բոլորովին տարբեր են միմեանցմէ և երեք-չորս օրուայ ճանապարհ հեռու։

լով—չկայ այնպիսի հաստատուած գիւղ մը, ուր լեռնական ընտանիք մը բնակուի 5—6 տարի շարունակ։ Լեռնականներն առհասարակ սովոր են այս-ինչ ամսին բնակել այս-ինչ հովտին մէջ, միւսին՝ այն-ինչ լեռնալանջին վրայ, որով չէ կարելի գիտնալ նոցա մարդահամարը։ Եւ, Աստուած իմ, ո՞վ կարող է հետաքրքրուել կամ կարող է յանդգնել դոցա մէջ խօսք մը ընել մարդահամարի մասին, եթէ չուզեր ինքզինքն յօշոտել տալ.—ոչ ոք։ Տէրսիմ գնացողը, լինի նա սոսկ հետաքրքիր ճանապարհորդ կամ արհեստաւոր, կամ վաճառական կամ նոյն-իսկ պաշտօնական մարդ՝ դարձեալ չէ կարող հետաքրքրուել այնպիսի հարցերով, որպիսին է մարդահամարը, որովհետև լեռնականները խիստ կասկածանքով կվերաբերուին ամեն անոնց, որոնք օտարականներ են, որոնք իբր թէ լրտեսելով երկիրը՝ թշնամոյն պիտի մատնեն զայն, և այլն։ Նոքա կընակին ամենուրեք Տէրսիմի լեռնաշղթայի մէջ, և պատերազմի ժամանակ մէկ «հաւաք» («օգնութիւն») մը միայն բաւական է՝ նոցա բոլորին զէն ի ձեռին համախմբելու որոշ տեղ մը։ Նոքա լսելով «հաւաք»-ը՝ ուրուականներու նման դուրս կը թափին լեռներու ծերպերէն և հնամեայ կաղնիներու ու ընկուզենիներու խոռոչներէն և այնչափ, որ կարող կլինին դիմադրել քաջութեամբ թշնամու մեծ բանակին։

Խութիի և Տուժիքի մէջ կհաշուուի մօտաւորապէս 100,000 զբզբլբաշ քուրդ բնակիչ, որոնք բաժնուած են 18 և ալ աւելի զանազան ցեղերու, օրինակի համար՝ Իզոլցիք, Պուլանուղցիք, Խռանցիք, Հայտարանցիք, ձիպրանցիք կամ ձիպանցիք, Ալանցիք, Տու-

ժիքցիք, Խութեցիք, Ապասանցիք, Հալուրեկցիք կամ Հալուրուցիք, Զէյթ-Հասանցիք, Մամրգցիք, Միրագեանք կամ Միրագցիք (հայ), Կուրէշանցիք, Խարաշոլցիք, Եուսուֆանցիք, Խուզուշանցիք և այլն [1]: Ինչպէս ըսինք արդէն՝ սոցա ընդհանուր կրօնապետն է Սէյիտ Իպրահիմ պէկը, որ կրնակուի Հալորու Ս. Կարապետ վանքին մօտերը՝ Հառուկ գիւղին մէջ, թէև սոյն ցեղերու իւրաքանչիւրն ունի իր առանձին ցեղապետը և սէյիտն ու ատաէն:

Արտաքին թշնամին (օսմանցին) Տէրսիմի սպառնացած ժամանակը՝ վերոյիշեալ ցեղերն ի մի խմբուելով՝ իբր 40,000 զինուոր կհանեն, թէև ոմանք այս թիւը մինչև 60,000-ի և ալ աւելի կհաշուեն, յենուելով այս բանի վրայ, որ երբեմն օսմանեան ահագին բանակի (100—120 հազար զինուորի) դէմ կռուած և անյաղթ մնացեր են:

—∞—

Ամբողջ Տէրսիմի մէջ կրնակին իբր 200,000, քիչ աւելի կամ պակաս, ոչ-մահմեդական քրդեր՝ առանձին-առանձին ցեղերու բաժնուած, որոնց առհասարակ Ղըզըլբաշ անունը կուտան, որ կնշանակէ Կարմրագլուխ: Սոցա մէջ կայ նաև մաս մ'ալ, որոնց Զը-

[1]) Երկրորդական տեղ բռնող ցեղեր.

Զամ-ուշաղի, Խոշ-ուշաղի, Տէվրիշ-ձէմալ, Կիւլապի, Կալան, Կէօրշէր-ուշաղի, Թօփուզ-ուշաղի, Կեավ-ուշաղի, Էօզպէթ, Պէգկէր-ուշաղի, Ասլան-ուշաղի, Պրիմ-ուշաղի, Պէթ-ուշաղի, Տիրէք-ուշաղի, Խարապալ-ուշաղի, Մունզուր-ուշաղի, Տամ-ուշաղի, Լերթիք-ուշաղի, Խրբխան, Սբռ-օղլի, Բիլվանք, Ախ-ուշախ:

-ռահ-Սէօնտիւրէն (ճրագ-մարողները) կրսեն։ Դեռ մին չև այսօր հասատատուն ապացոյց մը չկայ, թէ դոքա ինչ ցեղի կամ ազգութեան կպատկանին, այսինքն ուրկէ, ո՞ր ցեղէն ծագում առած են, որ մինչև այսօր գրեթէ անկախ մնալով՝ տեսակ մը հասարակապետութեամբ կապրին մեր հայրենիքին մէջ։ Ոմանք կրսեն և նոյն-իսկ կպնդեն, թէ դոքա հին պարսիկներէն են, այսինքն արևորդիներ, կրակապաշտ ու արևապաշտ պարսիկներ են, կամ հին մազդեզականութեան անգիտակից ժառանգներ են, որոնք ժամանակով իրենց հայրենիքէն գաղթեր եկեր, բնակեր են Տէրսիմի լեռներուն մէջ, ուր մինչև այսօր կղզիացած մնացեր են՝ աղաւաղելով միանգամայն իրենց նախնի բարբառը [1]։ Այսպէս ըսողները մանաւանդ կպնդեն այն բանի վրայ, թէ պարսիկներուն ալ երբեմն կըսուի Ղըզըլբաշ և անոնց սովորութիւններն ու կրօնական զանազան պաշտամունքները կտեսնուին տէրսիմցիներուն մէջ և այլն [2]։ Արդարև տէրսիմցիներուն մէջ

---

[1]) Տէրսիմցիներու լեզուն կատարեալ խառնուրդ մ'է պարսկերէնի, քրդերէնի (գուռմանճ), թուրքերէնի, արաբերէնի, հայերէնի և մանաւանդ զազայերէնի (տըմըլի), որ անոնց լեզուի մէջ $^3/_4$ մասը կկազմէ, և այլ ազգաց լեզուներու, որոնք ժամանակի ընթացքով եկեր ու գնացեր են՝ հայատատանին տիրապետելով պահ մը։ Իւրաքանչիւր ցեղ ունի իր առանձին բարբառը, որ սակայն հասկանալի է միմեանց, թէև երբեմն չեն ալ հասկնար։ Միմեանց չհասկցած ժամանակ՝ կը խօսին քրդերէն լեզուն, որ տա հասարակ ամենուն ծանօթ է, որպէս պաշտօնական լեզու։

[2]) «Հայկական և քրդական բարձրաւանդակների ցեղերի մէջ գտնւում են ոչ միայն մահմեդականութեան և քրիստոնէութեան բոլոր աղանդները, այլ և հին մազդեզականու-

միշտ նկատելի են հին պարսկական, կամ լաւ է ասել՝ հեթանոսական սնոտի պաշտամունքներն ու հաւատալիքներ. բայց այստեղ նկատի առնել պէտք է և այն, որ մինչև այսօր նոյն հեթանոսական հաւատալիքներն ու սովորութիւնները դեռ ևս կտեսնուին ամեն հայ-քրիստոնեայ գիւղացու ընտանեաց մէջ։ Ուրեմն դոքա ևս պարսկական ծագում ունեցած եղան.—ոչ։ Հետևարար կսխալին անոնք, որ կրսեն, թէ տէրսիմցիները պարսկական ծագում ունին, և եթէ չեն սխալուիր՝ գոնէ իրաւունք չունին պնդելու կամ վեր-

---

թեան անգիտակից ժառանգներ. Կրզել-բաշ կամ «կարմրագլուխները»—բառ որ Աղուանիստանում և Արևելքի միւս երկիրներում գործ է ածւում պարսկական ցեղի մարդկանց համար,—մեծ մասամբ քուրդ են։ 400,000 աղանդաւորներից (Տայլորը նրանց հաշուում է 250,000-ից ոչ աւելի) 15,000-ը միայն պատկանում են թուրքմէն ցեղին և երկու երեք ցեղ էլ իրենց Աբար են անուանում։ Կարմրագլուխները, որոնց գլխաւոր հասարակութիւնները բնակւում են միջին Եփրատի աւազանում Դիրմելիի ափերում և վերին Կրզել-Իրմագի հովտում՝ մուսիլմաններից համարւում են իբրև քրիստոնէական աղանդ, որովհետև նրանք խմում են գինի, չեն քօղկում իրենց կանանց, կատարում են մկրտութեան և հաղորդութեան ծէսերը։ Բոլոր աղանդաւորներից աւելի Կրզել-բաշներն են բացարձակապէս դատապարտուած իրենց դրացիներից—իրաւամբ թէ անիրաւացի, այդ յայտնի չէ—իբրև դիշերային տօնախմբութիւններ կատարողներ, ուր տիրում է ամենակատարեալ խառնակութիւն սեռերի, որից և առնուած է Զըռահ Սէօնտիւրէն (լոյս մարողներ) անունը, որով կոչւում են նրանք ընդհանրապէս»։

Էլիզէ Ռէկլիւ, «Աղվանստան, Հայաստան և Քիւրտիստան». թրգմ. «Միաբան». Վաղարշապատ, 1893։

ջնական վճիռ մ'արձակելու, որովհետև յիշեալ փաստը բաւական չէ իրենց կարծիքներն հաստատելու։

Իսկ ոմանք ալ կըսեն, թէ տէրսիմցիները Պարթեւաց ցեղին կպատկանին, որովհետև հասակով ու դիմագծութեամբ Պարթեւաց կնմանին, այսինքն հսկաներ են։ Ոմանք կաւելցնեն. տէրսիմցիները Մարաց ազգին կպատկանին, այսինքն Մարական ծագում ունին, որովհետև, չգիտեմ, պատմութեան որ էջին մէջ, ամենաթեթև ակնարկութիւն մը նշմարած են, թէ Մարք գործ ունեցեր են այդ կողմերը և այլն։ Ուրեմն տէրսիմցիներու ծագումը կնճռոտ հարց մ'է, որուն դրական պատասխան տալը գրեթէ անկարելի է, որովհետև Տէրսիմի մէջ այժմ կգտնուին 25 և ալ աւելի զանազան ցեղեր (ոմանք անկախ, ոմանք հպատակ), որոնց ցեղային անուններէն կարող ենք հետևցնել, որ դոքա ոչ օսմանցի են, ոչ պարսիկ, ոչ քուրդ, ոչ հայ, ոչ պարթև, ոչ մար, և ոչ ալ՝ չգիտեմ ինչ, այլ ամենու խառնուրդն են, ինչպէս և իրենց լեզուն ու կրօնը, որ ինչպէս ըսինք՝ Բաբելոնի խառնակութեան նման կատարեալ խառնուրդ մ'է Հայաստանի մէջ գոյութիւն ունեցող և անհետացած ազգերէն։

Արդ ո՞վ կարող է դրականապէս վճռել, թէ նոքա այս կամ այն ցեղին կամ ազգին կվերաբերին, երբ իւրաքանչիւր ցեղի անունն առանձին եղրակացութեան մը կյանգի, այսինքն իւրաքանչիւր ցեղի անունն իր մէջ պատմական նշանակութիւն մ'ունի։

Օրինակի համար՝ կայ ցեղ մ'ալանաց, որ այժմ Ալանք կամ Ալանցիք կկոչուին։ Եւ միթէ դժուար է կասկածել, որ դոքա հին Ալաններէն լինին։ Բայց Տէրսիմը դոցա նախահայրենիքը չէ. հետևաբար երբ

և ինչ հանգամանքներու տակ դոքա բաժնուելով իրենց մայր հայրենիքէն՝ քանի մը հարիւր մարդերով եկած ու բնակած պիտի լինին Տէրսիմի բարձունքները, քանի որ առանց պատճառի անկարելի է որ մարդ մը իր ծննդավայր հայրենիքը թողու իսպառ։ Եւ որովհետև մեր ամբողջ հին մատենագիրները [1]) գրեթէ բոլորովին կլուեն այսպիսի տարագրութեան, կամ որ նոյնն է, գաղթականութեան մասին՝ մենք ևս չենք կարող որոշակի բան մ՚ըսել։

Աւելցնենք այստեղ քանի մը խօսք բուն իսկ տէրսիմցիներու կարծիքներէն՝ իրենց ծագման մասին։ Տէրսիմցիներուն եթէ ոչ բոլորը, գէթ մեծ մասն այն կարծիքն ունին, որ իրենց նախահայրերը Հայեր են։ Նոքա կխօսին բոլորովին համոզուած ու կաշխատին համոզել, որ իրենց կարծիքներն երբէք

---

[1]) Թովմաս Արծրունին կը յիշէ. «Յաւուրս յայսոսիկ մասն ինչ ի զօրաց Դելմկաց հասեալ ի քաղաքն Հաղամակերտ և ի գաւառն Աղբագ, գերփեալ զինչս և գերեալ զկանայս և զտղայս, որչափ և ձեռն հասանէ։ Եւ գայն լուեալ արքային՝ հրաման տայ զօրաց իւրոց հետամուտ լինել զկնի նոցա քաջի առնեմիոյ. որոց առեալ զհրաման յարքունուստ՝ վաղագոյն աճապարեալ ժամանեն նոցա, յանհոգս լինելով յաշխարհին Անձևացեաց, և ի դիմի հարեալ քաջամարտիկ նիզակախառն Դելմկացն զօրաց՝ կոխան իբրև զխուլ դաշտաց յոտս երիվարացն Հայոց, յորոց վերայ սուր եդեալ կոտորեցին իբրև 2000 և առեալ զբանակս նոցա յաւարի, փրկեալ և զգերեալսն՝ դարձան յիւրաքանչիւր տեղիս մեծաւ յաղթութեամբ»։ Ս. Պետերբ. 1887, եր 302—303։ Մեզ կթուի, թէ սոքա միևնոյն Դիմիկներն են, որ այժմ Տէրսիմի և այլ կողմեր ցրուած՝ կճանչցուին որպէս Դրմբլի կամ Տրմբլի անունով, որոնց լեզուով գլխաւորապէս կխօսին տէրսիմցիները։

արտառոց չեն։ Ուղևորութեանս միջոցին, երբ ականաւոր սէյիտի մը մօտ հիւր էի, ուր կհետաքրքրուէի նոցա աւանդութիւններով և մանաւանդ ցեղային Դազման խնդրով՝ սէյիտը պատմեց. «Մենք տարաբոյս չունինք, որ մեր նախնիքը հայեր եղած են։ Ապացոյց շատ կայ։ Պապս կպատմէր, որ իր մեծ պապի հօրեղբայրը Հալորու ս. Կարապետ վանքին երբեմն վանահայրն եղած է, որմէ մնացած քանի մը գրքեր ունինք մինչև մեր ձեռքն հասած, որոնք որպէս սրբութիւններ կամ նուիրական ժառանգութիւններ որդոց որդի կմնան»։ Սէյիտը որպէս հաստատուն ապացոյց իր խօսքերուն՝ ցոյց տուաւ ինձ քանի մը կտոր մագաղաթեայ քրքրուած դրչագիր գրքեր, որոնց մէջ կար. ի միջի այլոց, Աւետարան մը՝ տոհմագիր յիշատակարանով[1]) հանդերձ։ Ո՞րչափ աշխատեցայ սոյն Աւետարանը գնել կամ ինչ որ կուզէ փոխարինել, բայց անօգուտ եղաւ. սէյիտը պատասխանեց. «սուրբը ոչ կծախուի և ոչ ալ նուէր կտրուի»։

Կասկածեցայ, կարծելով որ, ո՛վ գիտէ, որ եկեղեցին կամ վանքը թալլելով բերած են դոքա որպէս հայոց սրբերը. որովհետև տէրսիմցիները միշտ կաշխատին հայոց տաճարներէն մասունքներ գողնալ ու

---

[1]) Սոյն յիշատակարանն ուզեցի արտագրել, բայց սէյիտը չի թողուց, կասկածելով որ գրքի մէջ եղածները կգողնամ. որովհետև նոքա այնպէս համոզուած են, թէ մէն մի գիր իր մէջ թըլըսմայ (գաղտնիք) մ'ունի, որն արտագրուելուց յետոյ կաւրուի այլևս. ուստի չի թողուց իսկ, որ կարդամ, առարկելով որ՝ «լաւ չէ կարդալը. աչքիդ շար և բարի ոգիներ կերևին, որոնց հարցերուն դու անկարող կլինիս պատասխանել ու կմնասուիս»։

բերել դնել իրենց տներուն մէջ՝ միանգամայն մոմ վառելով նոցա առջև, մանաւանդ գրքերը, որոնց մասին այնպէս կհաւատան, թէ նոցա մէջն այնպիսի գաղտնիք ու զօրութիւն կայ, որ ով ունենայ զայն՝ ազատ կլինի որևէ փորձանքէ։ Այսպիսի պարագային նոքա կպարծենան ըսելով, թէ «Հայոց սրբերը մեզ մօտ են. ալ այսուհետև նոքա մեզ պիտի պաշտպանեն ու մեզ համար պիտի բարեխօսեն»։

ՏԷՐՍԻՄՑԻՆԵՐՈՒ ԿՐՕՆԸ, ԾԷՍԵՐԸ ԵՒ ՀԱՆՇԱՀԱՆ ՊԱՀՏԱՄՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՀԱՒԱՏԱԼԻՔԸ.

Տէրսիմցիներն, առանց կրօնական որոշ գրքի մը, ունին իրենց առանձին կրօնը—հաւատալիքը, որը աւանդաբար կհաղորդեն միմեանց. բայց այդ կրօնին ի՞նչ անուն պէտք է տալ՝ չգիտենք։ Ո՛չ քրիստոնեայ են, ո՛չ մահմետական և ոչ ալ մովսիսական, այլ բոլորի խառնուրդը, խառնուրդ մը հին և նոր բոլոր կրօններու։ Ըստ երևոյթին, աւելի յարած են մովսիականութեան, որու կրօնական ծէսերը գրեթէ մեծ մասամբ ընդունուած են իրենց մէջ, բայց Ալին կընդունին որպէս Աստուծմէն առաքուած միակ սուրբ մարդը. Քրիստոսին ևս միևնոյն յարգանքը կուտան՝ ինչ որ Ալիին. որովհետև սէյիտներն ու տէտէները կպնդեն, թէ «Աստուծմէն առաքուած միևնոյն անձն յայտնուեցաւ քրիստոնէից աչքին որպէս Իսայ (Յիսուս), իսկ մեր աչքին որպէս Ալի. հետևաբար, կըսեն, մեր և ձեր մէջ կրօնի մեծ տարբերութիւն չկայ, բայց եթէ անուան մէջ, այն է՝ Ալիի և Իսայի»։

Տէրսիմցիներու մէջ ընդունուած է թլփատութիւնն այնպէս՝ որպէս Մովսիսականութեան և Մահմեդականութեան մէջ։ Բամաղանջամսուն օրուն (ծոմ) չեն պահեր, և ոչ ալ ուրիշ օրեր՝ պահք։ Ս. Սարգիսի պահքը (առաջաւորաց պահք) ամենայն ջերմեռանդութեամբ կպահեն, և շատերն ալ երեք կամ հինգ օր բոլորովին ծոմ կպահեն։ Ս. Սարգիսն ու ս. Գէորգը նոցա միակ պաշտելի սրբերն են, որոնց առաջինին կանուանեն Խըզըր, որ է ցամաքի սուրբ զօրավարը, իսկ վերջինին՝ Խըտըր, որ է ջրերու սուրբ զօրավարը։ Սոցա մասին այսպիսի աւանդութիւն մը կայ տէրսիմցիներու մէջ, թէ Խըզըրն ու Խըտըրը որպէս սուրբ մարդեր՝ նախապէս կիշխէին մէկը Մուրատին (Արածանուն), միւսը Ֆրատին (Եփրատ, Սև-ջուր), և յետոյ Ապուհայաթէն [1]) խմելով անմահացան, (այսինքն մարմիններովը միասին համբարձան երկինք), ուր Աստուծոյ հրամանով սկսեցին վարել ցամաքի և ծովու զօրավարութիւնը։ Նոքա երկինք քաշուեցան Տիզկին պապայի (Տուժիք-պապա) դագաթէն, ուր տակաւին կտեսնուի նոցա ձիերու սմբակներուն տեղը, որ չորս մատ խորութեամբ իջած է ապառաժ քարին մէջ [2])։

Տէրսիմցիներու ամենանուիրական հաւատալիք-

---

[1]) Ապուհայաթ՝ ս. աղբիւր մ'է Տէրսիմի լեռնաշղթային մէջ, որուն մեծ հաւատք կընծայեն զրզբաշները և նոյն-իսկ տեղացի և մօտակայ գիւղերու հայերը։

[2]) Ս. Սարգիս անունով ուխտատեղի մը կայ Քարբերդի հարաւ-արևելեան կողմը՝ Հիւսէյնիկ գիւղի հիւսիսային բարձրութեան վրայ, որ կամարաձև միապաղաղ մեծ ծակ-քար մ'է, որու մասին նոյնպէս կպատմուի նմանօրինակ աւանդութիւն մը։ Ծակ-քարին վրայ կտեսնուին,—ինչպէս որ ես անձամբ տեսած եմ—չորս տեղ, քարին մէջ մէկ մատնաչափ խոր իջած,

ներէն մէկն ալ է նաև Էրքեանը (հաւատոյ հիմ կամ Մովսէսի գաւազանը)։ Սաստիկ կղայրանան և մինչև իսկ կսպառնան նորա կեանքին՝ ով որ յանդգնի Մովսէսի գաւազանը հայհոյել։ Սէյիտներն ու տէտէներն արդէն Մովսէսին կընդունին որպէս իրենց նախապապը, և ոմանք ալ կաշխատին համոզել, որ իրենք, մանաւանդ սէյիտներն ու տէտէները, Մովսէսէն սերած ու յառաջացած են։ Նոքա իրենց համար յատուկ եկեղեցի չունին և ոչ ալ սովորական կամ օրական աղօթքներ, այլ եթէ բան մ'ունենան Աստուծմէն խնդրելու՝ ուխտ կընեն զանազան սրբատեղիներ երթալու. յաճախ մեծ-մեծ նուէրներով ու զոհերով (նայելով այլևս կարողութեանը) ուխտ կերթան Հալէպու ս. Կարապետ վանքը և վանքին կվերաբերուին այնպէս՝ որպէս չի վերաբերուի ինքը հայը։ Սոյն վանքը ուխտ գնացած ժամանակ, 40—50 քայլ հեռուէն ծունր չոգած—թէ կին, թէ այր—կյառաջանան դէպի եկեղեցին, և եկեղեցիէն ներս մտնելու ժամանակ երեք կամ հինգ անգամ դրսի և ներսի դռներուն շեմքը պիտի համբուրեն, որպէսզի յատոյ համարձակութիւն ունենան ներսը ս. սեղանին առջև ներկայանալու։ Եթէ մէկն ուզէ միւսին երդում ընել

ձիու սմբակի նշաններ, որոնց համար կըսուի, թէ ս. Սարգիս իր ձիով միասին երկինք համբարձած ժամանակ, ձիու ոտքերը խրուեցան քարին մէջ, և այդպէս անջնջելի մնաց նորա յիշատակը, որ ով որ ուխտի գայ իր ճգնարանը՝ նա կըստանայ ս. Սարգիսէն իր մուրատը (իղձը, փափաքը)։ Քարբերդի թէ հայ, թէ տաճիկ և թէ քուրդ ու բոշայ ազգարնակութիւններն ուխտի կուգան սոյն ծակ-քարը. ի մի բան՝ ամենքէն ալ կպաշտուի այն, որպէս ճշմարիտ սուրբ և միանգամայն միւս սրբերու գլխաւորը։

տալ՝ անտարակոյս Հաւլորու ս. Կարապետ վանքին համար կառաջարկէ, և եթէ մարդն երդում ըրաւ՝ կը նշանակէ, որ ինքն անմեղ է, իսկ եթէ չըրաւ՝ իր մեղքը կխոստովանի հրապարակաւ, եթէ երբէք ամենասոսկալի ոճիր ալ լինի այն, բայց միայն սուտ երդում չըներ Հաւլորու վանքին վրայ։ Եթէ մէկն ուխտէ Հաւլորու վանքն երթալ, ու զանազան աննպաստ հանգամանքներու պատճառով չկարողանայ ուխտը կատարել՝ իր խիղճն հանդարտեցնելու համար մեծ քար մը կտնկէ ու 40—50 քայլ հեռուէն ծնկաչոգ կմօտենայ տնկած քարին, կերկրպագէ և ամենայն ջերմեռանդութեամբ կհամբուրէ զայն, իբրև թէ վանքի սեղանն եղած լինի այն։

Սէյիտներն ու տէտէները, որպէս հոգևորականներ, պարտական են անաչառ կերպով այցելել իւրաքանչիւր քրդու տուն և յորդորել նոցա կրօնական—բարոյական խրատներով։ Երբ սէյիտը կամ տէտէն կայցելեն մէկուն տունը,—որ յաճախ խմբով կամ երկուսով կլինի,—տնեցիները—կին, աղջիկ, տղայ, ծեր, երեխայ—բոլորը մէկէն ընդ առաջ կուգան և ամենայն խոնարհութեամբ կհամբուրեն նախ նոցա փէշն ու գօտին, և ապա թևն ու ուսը. իսկ սէյիտներն ու տէտէները, որ մխիթարելու համար այցելած են՝ իրենց սաղը,—որ իրենց անբաժան ընկերն է այնպէս, ինչպէս քրիստոնեայ հոգևորականի համար Աւետարանը,—ձեռք առնելով կնստին տան վերևի կողմը և կսկսին ածել ու երգել զանազան աւանդական երգեր, ողբերգութիւններ և մեծ մասամբ դիւցազներգութիւններ, որոնք եթէ սակայն հնար լինէր հաւաքելու՝ թերևս Հոմերոսի նման կարևորութիւն ու-

նեցող բաներ դուրս գային. որովհետև դոցա երգերը, ինչպէս որ ասինք՝ մեծ մասամբ հիմնուած են իրենց պատմական անցեալին վրայ, որ գրեթէ բոլորովին դիւցազներգութիւններէ կրաղկանայ։

Կուրէշան ցեղին պատկանող իւրաքանչիւր տղամարդ սէյիտ է։ Եւ երբ սէյիտին մէկուն տէտէ ընելու համար կոչում պիտի տան՝ հետևեալ արարողութիւնները կկատարեն նորա գլխին։—Եօթը տէտէներ կհաւաքուին կոչում ստացող սէյիտի տան մէջ և կսկսին իրենց սաղերն ածել ու միանգամայն երգել ամենասրտառուչ երգեր։ Երգելուց յետոյ, տէտէներէն մէկն—անշուշտ քաւորը—վեր կկենայ և կսկսի իր սանի, կամ աւելի լաւ է ըսել՝ իր ձեռնասուն սանի մօրուքն ու երկար գիսակները խուզել։ Խուզելուց յետոյ եօթը տէտէներն ալ իրենց աջ ձեռքերը կդընեն ձեռնադրուողի գագաթին վրայ ու կրկին զանազան երգերով ու սաղի նուագածութեամբ կձեռնադրեն, կամ որ նոյնն է՝ կոչում կուտան նորան, որով նա կստանայ աստիճան Տէտէի։

Տէտէի պարտականութիւնն է միշտ հաշտ պահել ժողովուրդը միմեանց հետ։ Ով որու հետ որ խռոված է՝ տէտէն է նոցա միակ հաշտարար միջնորդը. և ով որ տէտէի յորդորներուն չանսայ՝ այլևս բանադրուած ու նզովուած կլինի, որմէ յետոյ ոչ սէյիտը և ոչ ալ տէտէն կայցելեն նորա տունը։ Բանադրուած և նզովուած կլինի նաև նա՝ ով շնութիւն ըրած է կամ ցանկութիւն ունի ընելու, որմէ ոչ միայն սէյիտն ու տէտէն, այլ և սովորական դրացիներն իսկ կխզեն իրենց յարաբերութիւնները։

Տէրսիմցիներն հաստատապէս կհաւատան հոգե-

փոխութեան։ Նոցա սէյիտներէն մէկը պատմեց ինձ, թէ մարդ մը մեռնելուց յետոյ վերստին աշխարհ կուգայ անբան անասուններու կերպարանքով, և այնուհետև սողուններու, թռչուններու, միջատներու, թիթեռներու, ճանճերու և վերջապէս մժղուկներու կերպարանք առնելով։ Եւ այսպէս հոգին մէկէն միւսին փոխանցելով՝ կապրի մինչև վերջին դատաստանին օրը՝ իր մէկ մաղն իսկ չկորսնցնելու պայմանով, որովհետև ահեղ դատաստանին առջև կանգնած՝ պիտի հաշիւ տայ աշխարհիս մէջ շար և բարի գործերուն համար։ Թերևս տէրսիմցիները ճիշտ սորա համար ալ երբ մաղերը և եղունգները կարելու լինին՝ անպատճառ պիտի պահեն կամ դեռնի տակ թաղեն զայն, որ քամին չի ցրուէ աշխարհիս զանազան կողմերը, որու պատճառով ալ յետոյ, վերջին դատաստանին, դժուարութիւններու հանդիպին։—Ծերացած տէտէներէն մէկը կպատմէր, որ, իբրև թէ, ինքն իր իշութիւնը կյիշէ, մանաւանդ այն ժամանակը, երբ իր վրայ փայտ բեռցուցած՝ Պինկէօլէն կանցընէին, ուր. ծերացած ու տկարացած լինելով՝ Պինկէօլի թաթախուտներուն մէջ խրուելով՝ հոգին փչեր է, որմէ յետոյ կրկին մարդկային մարմնով աշխարհ եկեր է՝ իր պակասը լմնցնելու համար, որովհետև նախօրօք մարդ եղած ժամանակ պատերազմի մէջ անբնական մահով մեռած լինելուն համար—որմէ յետոյ էշ եղած էր—իրեն համար նախասահմանուած կեանքին մէկ մասը մնացեր էր ապառիկ։

Տէրսիմցիներն ամենայն երկիւղածութեամբ կը պաշտեն նաև արևը, լուսինը, զանազան փայլուն աստղեր (մոլորակներ), արշալոյսը, վերջալոյսը և օդի

զանազան երևոյթները, առանձին առանձին նշանակութիւն տալով նոցա։ Կհաւատան ու կպաշտեն նաև երկրի վրայ գտնուածներէն՝ կրակը, ջուրը, հողը, քարը, փայտը, բոյսը, ծառը, և այլն և այլն։

Մեծ հաւատք կընծայեն երազներու, որոնց համար ունին առանձին մեկնիչներ։ Եթէ մէկը դէշ երազ տեսնէ, ու մեկնիչն ալ աննպաստ կերպով մեկնաբանէ զայն՝ երազատեսը բոլոր քրդերէն ուտելիք—հաց, կորկոտ, իւղ, միս և այլն—կհաւաքէ և հարիսայ կամ քէշկէկ կդնէ, որով կսկսի կերակրել բոլոր աղքատներուն, ճանապարհորդներուն և ամեն մէկ հանդիպողի՝ Աստուծոյ բարկութիւնը մեղմացնելու համար։ Եթէ մէկը—այր կամ կին—լուսնոտութիւն կամ վերնոտութիւն ունի, որով յաճախ մէկէն մինչև հինգ օր զառանցանքի կամ բոլորովին մարած վիճակի մէջ կգտնուի՝ կըսեն թէ նա արդար է, որովհետև Աստուծոյ բարի հրեշտակները նորա հոգին տարեր են երկինք՝ Աստուծոյ փառքերը ցոյց տալու համար, ուր նաև անշուշտ տեսած կլինի մահկանացուներուս համար որոշուած տեղերը։ Նա, հիւանդը, տեսած կլինի դրախտի հրաշալի հրեշտակները և դժոխքի զարհուրելի արհաւիրքները։ Եւ երբ հիւանդն ուշքի կուգայ՝ կսկսի մէկիկ մէկիկ պատմել տեսածները, և իւրաքանչիւր ծանօթ մարդուն հաղորդել դրախտի կամ դժոխքի մէջ իրեն համար պատրաստուած յատուկ տեղը։ Շատ անգամ քրդերն օրերով ճանապարհ կուգան՝ հիւանդէն իմանալու իրենց տեղերը հանդերձեալ կենաց մէջ։

Ցէրսիմցիները կըսեն, ինչպէս նաև շատ գաւառացի հայեր.

Որոտմունքի ժամանակ, երբ փայլակը կկայծկըտայ՝ Աղբայէլն է (Գաբրիէլ հրեշտակապետ), որ կը հալածէ Եւայ նախամօրը խաբող սատանին, որ օձի կերպարանք ստացեր էր։ Փայլակը Աղբայէլի հրեղէն սուրն է, իսկ որոտմունքը՝ սատանայի սարսափահար աղաղակն է։ Անիրաւ սատանան այնչափ ճարպիկ ու ռազմագէտ է, որ ո՛չ կբռնուի և ոչ ալ կյաղթուի, այլ միայն կփախչի ու կփախչի արտասուելով, որուն աղի արտասուաց կայլակներն են, որ կտեղան երկրի վրայ։ Իսկ ոմանք ալ կըսեն. անձրևն Աստուծոյ մէզն է, ձիւնը՝ աղբը, իսկ կարկուտը՝ չգիտեմ այլևս՝ ի՞նչը... որ երբեմն երբեմն, որպէս ողորմութիւն կամ պատուհաս՝ կտեղացնէ մեր վրայ։

—Արևն ու լուսինն երկնքի դռներն են, որոնց մէկը կամ միւսը խաւարած պահուն՝ սատանաներու վոհմակն ու հրեշտակներու դասը միմեանց հետ կընդհարուին, և այդ ընդհարումն անշուշտ յառաջ եկած է անմեղ հոգիի մը համար, որ սատանաները կուզեն դժոխք տանել, իսկ հրեշտակները կարգելեն նոցա։ Ուստի ամեն անգամ որ արևը կամ լուսինը կխաւարի՝ տէրսիմցիները հրացաններ ու ատրճանակներ կարձակեն դէպի խաւարող լուսինը կամ արևը, որ սատանաներն հալածուին, ու անմեղ հոգին ազատուի։

—Ծիածանն Աստուծոյ գօտին է, որու երևնալը նշան է, թէ Աստուած դեռ չէ մոռցեր իր ստեղծած ծառաներուն։ Այս ծիածանի տակէն անցնող տղան աղջիկ կդառնայ, իսկ աղջիկը՝ տղայ։ Երբ ծիածանը չերևի երկար ժամանակ՝ նշան է, թէ Աստուած մոռցեր է իր ստեղծածներուն, և վերջին դատաստանը մօտ է։

—Երաշտութեան տարիները՝ նոր մեռած մարդու մը գլուխ կկտրեն (մեռելի ազգականներէն գաղտնի) ու կտանին զայն կթաղեն գետափը կամ կօլի մը ներքևի կողմը, որ անձրև գայ։ Եթէ անձրևը չափէն աւելի կտեղայ՝ խաչերկաթն անձրևի առջև կը ձգեն, որ կտրի։

—Երբոր ձիերը խրխնջան և կովերն ու եղները բառաչեն՝ փոթորկի և կարկուտի նշան է։ Իսկ երբ սոյն կենդանիները վզերնին երկարացնեն ու օդն հոտոտան՝ անձրև կուգայ։

—Երբոր հաւերը շատ ուտեն՝ անձրևի նշան է։

—Երբոր մեղուներն իրենց փեթակէն դուրս չելլեն՝ անձրևն անխուսափելի է։

—Երբոր կատուն իրեն վրան-գլուխը լիզէ՝ հիւր կուգայ. իսկ եթէ մռմռալով լիզէ՝ թշնամի կուգայ։

—Երբոր ամպերը դէպի հիւսիս կուտակուին՝ անձրևի համար կպատրաստուին, իսկ երբ դէպի հարաւ դառնան՝ անձրևն անխուսափելի է, վասնզի հիւսիսէն ջուր խմած են։

—Երբոր ծիծեռնակն իր սովորականէն վար թռչի՝ փոթորկի նշան է. իսկ եթէ չափէն վեր թռչի՝ պարզութեան նշան է։

—Եթէ օճախի ծուխը ծխնելոյզէն վեր չի բարձրանայ՝ վաղանցուկ փոթորկի, կամ մաղ-մաղ անձրևի նշան է։

—Երբոր տօթագին օրերը ծառերու տերևները շարժին առանց քամու՝ անձրև կուգայ։

—Երկնակամարին վրայ գիսաւոր աստղ մ'երևալը Աստուծմէն պատուհաս գալու նշան է։ Իսկ երբ հասարակ աստղ մը մարի՝ մէկը մեռաւ անշուշտ.

վասնզի իւրաքանչիւր ոք իր յատուկ ասպղն ունի երկնից մէջ, որը կենաց ջահն է, որ յանկարծ կշիջանի։

—Երբոր տուղտի ծաղիկը գոցուի՝ կարկուտ կուգայ։

ՏԷՐՍԻՄՑԻՆԵՐՈՒ ՖԻԶԻՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Տէրսիմցիներն առ հասարակ 90% բարձրահասակ են, իսկ 10% միջահասակ։ Դէմքերնին՝ թուխ, մորթերնին՝ դեղնագոյն, գէր ու կոպիտ կազմուածք մ'ունին։ Կանանց մորթը քիչ մ'աւելի ճերմակ է, կազմուածքը՝ նուրբ, փոքր ինչ նիհար, և ոսկրային դրութիւնը զարգացած է։ Դիմագծութիւններն՝ արտայայտիչ ու համակրելի են. աչքերնին՝ խոշոր, սև ու հայկական աչքեր են. նայուածքնին՝ խելացի, բարի ու գիտակցական և հասունութեամբ լեցուն են (ոմանց աչքերու ճերմկուցը կարմիր, արեան գոյն ունին և նայուածքը՝ դաժան)։ Քթերնին՝ արծուային, բերանները՝ մեծ, շրթունքները՝ կարմիր ու զարգացած և վարինը վերինէն աւելի բարձր, ծնօտներն՝ ընդհանրապէս ուղիղ իրարու վրայ դրուած են. ատամներն՝ խիտ ու միջակ մեծութեամբ (թէև ոմանց խոշոր ու այլանդակ սուր-սուր ատամները միշտ նկատելի են խօսած ժամանակնին). դունչերնին՝ աւելի բարեձև կամ կլոր ու կատարեալ են. մազերնին՝ երկար, խիտ ու սիր-սև են (կանանց շատերն, երկար մազեր չունենալնուն համար, մետաքսէ կամ հասարակ սև բրդէ հիւսուած շինծու մազեր կգործածեն).

մաղերու մէջ տիրող գոյնն է սևը, հաղիւ թէ գըտնուին շագանակագոյն կամ բոլորովին չէկ մաղեր։ Կուրծքերնին ու թիկունքնին՝ լայն ու խիստ զարգացած են, ճակատները՝ բաց, գանգերը՝ հարթ, ծոծրակները՝ փոքր ինչ կլոր։ Ոտքերնուն ու ձեռքերնուն թաթերն ու մատները՝ խոշոր ու առնական են։

Ցէրսիմցիները մեծահոգի ու վեհանձնեն, բայց ոչ գոռող. և խիստ նախանձոտ՝ երբ նախանձի իսկական առիթ կայ։ Սաստիկ վրէժխնդիր են իրենց դէմ դաւադրութիւն ընողներուն և նոյն-իսկ զիրենք բամբասողներուն ու չարամիտներուն. կպատժեն նոցա այնպէս, որպէս վայել է պատուասէր մարդու մը։ Նոքա զուարթաբարոյ ու կատակասէր են, բայց միանգամայն լուրջ և գործերուն տէր։ Հեզաբարոյ և խոնարհ են բարեկամներու առջև, իսկ յանդուգն՝ թշնամու դէմ։ Թշուառութեան կամ վտանգի ժամանակ երևան կուգայ իրենց հզօր կորովը։ Երբ թշնամին կսպառնայ ու վտանգը մօտ է՝ բոլորը մէկէն թող կուտան իրենց ներքին հաշիւները և մէկ սիրտ ու մէկ հոգի լինելով՝ մինչև վերջին շունչերը կգիմադրեն թշնամոյն, յաղթելու կամ մեռնելու համար, որպէսզի չտեսնեն նոքա յաղթութիւնը։ Մէկը երբ միւսին հետ կռիւ ունենայ, լինի այն մեծ կամ փոքր, ու երբ տկար ու անկարող է՝ իր ազգակիցները կամ դրացիները սրբազան պարտք կհամարին օգնել նոքան։ Սրբազան պարտականութիւն է նաև թշնամոյն ներել՝ երբ նա արդէն իր ըրածին վրայ զղջացած է։ Մէկը երբ միւսին մին ու ճար տղան կամ ուրիշ սիրականի մ'սպաննած է, ու երբ իր ըրածին վրայ զղջալով կուգայ ներում կխնդրէ՝ դատախազն առանց

այլևայլի նրան կընդունէ իր գրկին մէջ, որպէս իր սպանուած սիրականը. իսկ հակառակ պարագային, այսինքն երբ ոճրագործը չուզէ զղջալ իր ըրածին վրայ և ներում չխնդրէ՝ դորանով կունենայ իր ու մինչև անգամ իր թոռան թոռներուն դէմ վրէժխնդիր մարդեր, որոնք տասնեակ տարիներ յետոյ տակաւին իրենց սրտին մէջ կպահեն թշնամական հին ոխը և վրէժխնդրութեան ոգին հետզհետէ կաճի ու կրոնկի, որ շատ անգամ ցեղային թշնամութեան կերպարանք ստանալով՝ յառաջ կբերէ սոսկալի արիւնհեղութիւններ։

Տէրսիմցիները գթասիրտ և ողորմասէր են. պարտականութեան գաղափարը շատ զօրաւոր է նոցա մէջ. նուիրական և սուրբ պարտականութիւն է օգնել տկարին, կարեկցել թշուառին, կերակրել քաղցածին, հագցնել մերկին, և՛ ներել թշնամոյն, և՛ պատժել թշնամոյն,—ահա ինչ որ տէրսիմցիներու բնաւորութեան էական մասը կկազմէ։ Նոքա իրենց աղքատ դրացին, աղքատ աղգականը (որ շատ քիչ կգտնուի), աղքատիկ հեռաւորը, լինի այն աղգակից կամ այլաղգ, կկերակրեն ու կհագցնեն, առանց ձայն չշուկ հանելու, և կջանան իրենց ըրածն հրապարակի վրայ չխօսել, որպէսզի տրուած «Ողորմութիւնն ընդունակ լինի առաջի Աստուծոյ։ Հիւրասիրութեան մասին ևս խօսք չլինիր, որովհետև «Աստուծոյ հիւրն է», կըսեն, ունեցածն ու չունեցածը նրա համար է. պէտք տանը միակ կաթնատու այծը կամ ոչխարը մորթել և դուռը կոտրել ու հիւրին համար կերակուր պատրաստել, որպէսզի նա դժգոհ չմնայ հիւրընկալութենէն։ Մէկը երբ զանազան հանգամանքներու տակ

հալածուած կամ հարստահարուած լինելով կապաստանի Տէրսիմի մէջ, ինչ ազգի կամ կրօնի պատկան լինի այն՝ տէրսիմցին, հայ թէ քուրդ, սիրով կընդունին նրան, և իւրաքանչիւր տուն, որպէս անհրաժեշտ պարտք՝ ծնուած ոչխար մ՝ու տան վերաբերեալ կահկարասիներէն քանի մը բաներ կնուիրեն նոր հիւրին կամ գաղթականին, որ անտարակոյս յանձն կառնէ մնայուն բնակիչ լինել Տէրսիմի և միանգամայն կուխտէ հաւատարիմ մնալ տեղային թէ հայերուն և թէ քրդերուն և, եթէ հարկը պահանջէ՝ պատրաստ լինել կեանքն իսկ զոհել իր նոր հայրենիքին համար։ Ցաճախ կպատահին սիրահար-հալածականներ, որոնք աղջկայ մը հետ սիրահարուած լինելով, չեն կարողանար ամուսնանալ զանազան կրօնական կամ քաղաքական մեծ-մեծ արգելքներ ունենալով իրենց դէմ, և որու պատճառով ալ՝ ստիպուած կլինին փախչիլ ու ապաստանել Տէրսիմի մէջ, որոց համար տէրսիմցիներն ահագին զոհողութիւններ կընեն՝ նոցա թրշուառ կամ անմխիթար չի թողնելու համար։ Ցաճախ կպատահի, որ արիւնահեղ կռիւներ կմղեն նոցա դէմ՝ որոնք կաշխատին հալածել Տէրսիմի մէջ ապաստանողին։ Մէկը,—եթէ երբէք լինի այն տէրսիմցու ամենամեծ թշնամին,—երբ տէրսիմցիներու ճանկին մէջ ընկած ժամանակ ըսէ, թէ «նշանուած եմ»՝ կը խնայեն նորա կեանքին։ Կխնայեն նաև որբերուն ու այրիներուն. որբի մէկ մազին իսկ չեն դպչիր, «մեղք է» ըսելով։ Կանանց ևս տէրսիմցիները մեծ յարգանքով կվերաբերուին։ Կին մը կարող է վայրկենապէս բոլոր տէրսիմցիներուն ի զէն կոչել և վայրկենապէս նոցա զինաթափ ընել։ Արիւնահեղ պատերազմներու

մէջ, ուր մահու և կենաց խնդիր կայ՝ մասնակից կը լինին նաև անշուշտ կանայք. բայց այնու ամենայնիւ հակառակորդ կողմն երբէք իր հրացանը չուղղեր կանանց վրայ և սոսկ վախցնելու համար անգամ իր սուրը չի վերցներ նոցա վրայ։ Խիստ մեղք է և մինչև անգամ տղամարդութեան համար մեծ ամօթ է՝ կնոջ վրայ ղէնք կամ ձեռք բարձրացնել։

Կարիճութիւնը տէրսիմցիներու միակ իտէալն է. կարիճ և միանգամայն բարոյական նկարագիր ունեցող մարդուն կպաշտեն նոքա։ Եթէ քաջին մէկն ուրիշէ մը բան մ'ուզէ՝ նա անպատճառ պարտաւորուած է տալ ուզածը, հակառակ պարագային (եթէ չիտայ քաջի ուզածը) շատերը կմեղադրեն չտուողին և վրէժխնդիր կլինին նորա դէմ, որ չգնահատեց բաջութիւնը, այսինքն քաջ մարդուն։ Իսկ թուլասիրտ և փոքրոգի մարդուն չարաչար կնախատեն և շատ անգամ ալ կսպաննեն, աւելորդ համարելով նորա ապրելը։

ՏԷՐՍԻՄՑԻ ՀԱՅԵՐԸ ԿԱՄ ՄԻՐԱԳԵԱՆՆԵՐԸ

Տէրսիմի, մանաւանդ Տուժիքի կողմերը, կան բաւական թուով հայեր՝ բոլորովին անկախ և ազատ որևէ հարկատուութենէ, որոնք կճանչցուին Մ'իրազեանք, Մ'իրազցիք կամ Մ'իրազեաններ անունով։ Սոցա մարդահամարը կհասնի 7000 մարդու, որոնք պատերազմի ժամանակ, ինչպէս նաև միշտ, պատրաստ ունին իրը 3000 կամ քիչ պակաս քաջամար-

տիկ զինուորներ, հմուտ՝ զինուորական բոլոր վարժութիւններուն, ինչպէս են նաև քրդերը։

Միրագեաններու գլխաւոր բնակատեղիներն են Տէր-Ովան, Զոխուր, Էքրզ, Հաւլորու, Թորուտ կամ Հաւլորու Ս. Կարապետ վանքը, և դանդան մեծ ու փոքր գիւղերու մէջ կապրին քրդերու հետ խառն և անխառն։

Միրագեաններն իրենց անվեհեր բնաւորութեամբ արդէն նշանաւոր տեղ մը կը բռնեն ամբողջ լեռնական քրդերու մէջ։ Սոքա զինեալ մարդ կուգան ամենուրեք Տէրսիմի մէջ. յաճախ երթևեկութիւն ունին նաև Տէրսիմի շրջակայ մեծ և փոքր քաղաքներու հետ, օրինակի համար՝ Քարբերդ, Բալու, Քեղի, Երզնկա, Ակն, և նոյն-իսկ Արաբկիր, Կապան-Մատէն ու մինչև Մալաթիա։ Ուր որ երթան՝ ոտքէ ցգլուխ զինուած են, և ոչ ոք կարող է նոցա վրայ ծուռ ակնարկ ձգել։ Ով կուզէ լինի, երբ լսէ թէ գալողը Միրագ ցեղին պատկանող հայ մ՝է՝ անմիջապէս նորա ամենախիստ պահանջներուն իսկ կդիջանի, նմանապէս թուրք կառավարութիւնն երբէք չի համարձակուիր նոցա երթևեկութեան արգելք լինել և կամ նոցա ցեղին պատկանող որևէ մէկուն ձերբակալել, որովհետև նա շատ լաւ կհասկանայ, որ Միրագեաններն իրենց մէկ կորուստի փոխարէն տասը-քսան առնել գիտեն թշնամիէն։

Միրագեաններն ամեն կերպով կգերազանցեն իրենց դրացի քուրդ ցեղերէն. գերազանց են թէ քաջութեամբ, թէ անվեհերութեամբ, թէ զինավարժութեամբ, թէ հարստութեամբ, թէ առևտրականութեամբ ու մասնաւոր արհեստաւորութեամբ, թէ հիւ-

բասիրութեամբ, թէ ընկերասիրութեամբ, թէ անկեղծութեամբ ու բարոյականութեամբ և թէ վարքով ու բարքով, և վերջապէս նահապետական սովորութեամբ պարզ, միամիտ ու անխարդախ ժողովուրդ մ'են։ Սոքա թէև համեմատաբար քրդերու $^1/_{25}$-ըդ մասն հազիւ կկազմեն, բայց այնու ամենայնիւ իրենց բարոյական ազդեցութիւնը խիստ մեծ է նոցա վրայ, որով նոքա պարտաւորուած են սովորել հայ լեզուն այնչափ՝ որչափ գիտեն իրենց դրացի Միրազեանները։

Միրազեաններու տները.—Միրազեանները, որպէս պարզ և նահապետական սովորութեամբ ապրող ժողովուրդ մը, կընակին գետնափոր տներու մէջ, որոնք աւելի նման են այրերու, քան թէ գիւղական խրճիթներու. հազիւ կտեսնուին մէկ մարդապոյ բարձրութեամբ տան պատեր, այն ալ կամ անկոփ քարերով շինուած են, կամ ցեխով։ Բնակատեղիները, ուր շինուած են տները կամ գիւղերը՝ շատ թէ քիչ ռազմական դիրք ունեցող տեղեր են, որոնց համեմատ ալ հաստատուած են գիւղերը։ Գիւղերը շինուած են քառանկիւնի կամ եռանկիւնի ձեով, մէջն առանց փողոց կամ որևէ անցք թողնելու։ Հազիւ կպատահի գիւղ մը, որ իր մէջ ունենայ մէկ կամ երկու նեղ փողոց, այն ալ, ի հարկէ, մեծ ու բազմամարդ գիւղերուն մէջ։ Գիւղերն ամբողջ բերդերու կամ գետնափոր մարտկոցներու տպաւորութիւն կթողուն տեսնողներուն վրայ։ Գիւղի ամբողջ տները (10—25-էն մինչև 50-ի չափ) միմեանց կցուած են, որոնց նեղ ու ցած դռները կբացուին դէպի գիւղին բոլոր կողմերը։

Տնները շատ պարզ ու կատարեալ գեղջկական են—ամենամեծ տունն ունի առ առաւելն չորս աշք (սենեակ)։ Տան դրսի դռնէն ներս մտած ժամանակ իսկոյն ուշադրութիւն կդրաւէ խոշոր և քառակուսի անծածկ բակ մը, ուր կարգիլեն 1—2 և մինչև 5 հազար ոչխարներ։ Բակին մէջ երկու փոքրիկ դռներ կտեսնուին, որոնց մէկը կտանի դէպի ախոռը, ուր կգիշերեն տաւարները, իսկ միւսը՝ դէպի «կրակ-տունը»—մեծ ու երկար կամ քառակուսի սենեակ մը, որ թէ կրակ-տուն է (խոհանոց), թէ հիւրատուն է, թէ աշխատութեան սենեակ է և թէ միանգամայն բոլոր տնեցիներու ննջարանն է։ Կրակատան մէկ կողմը կնկատուի մրոտած դուռ մը, որմէ ներս կդետեղեն իրենց համար պատրաստած տարուան ուտելու պաշարը և այլն։

Նոցա հագուստը.—Ինչպէս որ Միրագեաններու տներն անշնորհք և տձև են (թէև իրենց համար պալատի նշանակութիւն ունին) այնպէս և տան կահկարասիքը համեստ և աղքատ են, նոյնպէս և հագուստները խիստ համեստ և անպաճոյճ են։ Տղամարդու սովորական հագուստն է—բրդէ գործուած շալվար մը, կտաւէ շապիկ մը, այծի մազէ հիւսուած հաստ շափրգ (կրկնարաճկոն) մը, բրդէ կամ մազէ գոտի մը և նոյնպէս բրդէ գործուած քուլայ (քօլօղ—թաղիք) մը, որուն վրայ կփաթթեն 5—10—15 գոյնզգոյն լաչակներ։ Իսկ կանանց հագուստը՝ շրջազգեստ մը, կամ ճերմակ կտաւէ շապիկ մը, որուն վարի փէշերը մինչև ծնկներէն վար իջնելով՝ շրջազգեստի տեղ կը ծառայէ։ Կտաւէ շինուած, վերը կապոյտ, վարը կարմիր վարտիք մը. գունաւոր կամ անգոյն բրդէ գոտի

մը. իսկ գլուխները, առանց գլխարկ դնելու, կփաթաթեն մէկ-երկու կանգուն կապոյտ կամ այլ գոյներով լաչակներ, որոնց ծայրերը կիջնեն մինչև քթերուն ու բերաններուն վրայ, որպէս զի տղամարդու գայթակղութիւն չպատճառեն։ Իսկ ոտքերը, տղամարդ թէ կինմարդ, կհագնին խամ-չարուխ (անհասիլ տրեխ)։

Կանանց զարդեր.—Ականջի օղեր, մատանիներ, պլազուկներ, պաշլըգ (արծաթէ մանր դրամներով շինուած գլխարկ), զիլիֆլըգ (արծաթէ շղթաներ, որոնց վրայ շարուած են զանազան արծաթ դրամներ. այս շղթաները կախ կուտան ճակտէն մինչև գունչերուն վրայ), խըզմայ (արծաթէ կամ ոսկիէ զարդ, որ քթի մէկ կողմը ծակելով—մէջէն կանցընեն), կեղծ մազեր, որ հիւսուած կլինին սև բրդէ, սև մետաքսէ և կամ մազէ։ Այս սովորութիւնը ընդհանրացած է Տէրսիմի բոլոր կանանց մէջ։

Զէնքերը.—(Տես էջ 67)։

Ապրուստի գլխաւոր միջոցը.—Միրագեանների, ինչպէս նաև բոլոր տէրսիմցիներու համար, ապրուստի գլխաւոր միջոցն է անասնաբուծութիւնը, այսինքն ոչխար կամ այծ խնամելը, որոնցմէ ստացած կաթովն ու բրդովն առատօրէն կապրին։ Իւրաքանչիւր ընտանիք (նայելով բազմանդամութեան) մէկէն մինչև հինգ հազար ոչխար ու այծ կխնամէ. իւրաքանչիւր ոչխար կամ այծ միջին հաշուով կուտայ տարեկան մէկ լիտր ամենամաքուր սև կամ ճերմակ բուրդ, երկու լիտր ամենապատուական կարագ իւղ և տարեկան մէկ-մէկ հատ ալ դառ կամ ուլ, հետևաբար հազար ոչխար ունեցողը տարեկան կունենայ

հազար լիտր բուրդ, (որու լիտրն արժէ առնուազն մէկ մէճիտիյէ—20 դահեկան), երկու հազար լիտր կարագ իւղ, (որու լիտրն արժէ նոյնպէս մէկ մէճիտիյէ), և բնականաբար հազար ոչխարն աճելով կրնի երկու հազար կամ քիչ մը պակաս: Եւ ինչ կկարծէք, միթէ մեծ դժուարութիւն մը կայ այդչափ ոչխար խնամելու և կերակրելու համար: Ոչ. ընդհակառակը, անտառապատ և ծաղկաւէտ լեռներու, ձորերու և հովիտներու մէջ շատ հեշտութեամբ կարածեն նոքա ամառ և ձմեռ, միայն փոքրիկ կամ չափահաս տղու կամ աղջկայ մ'առաջնորդութեամբ և չորս-հինգ հովուական շներու հսկողութեամբ:

Արհեստն ու գործը.—Միրագեանները, մանաւանդ նոցա գործունեայ ու ժրաջան հարսներն ու աղջիկները, չբաւականանալով ոչխարներէն ստացուած կաթովն ու բրդովը, որ ոչ միայն իրենց, այլև իրենց նման շորս-հինգ ընտանիք կկերակրէ—ամբողջ ձմեռը կաշխատին ունեցած բրդի մէկ մասը զգել, մանել, ներկել գանազան գոյներով, և կսկսեն գործել գորգեր, կապերտներ, քիլիմներ, գուլպաներ և նման բաներ, իսկ բրդի մնացեալ մասն ալ գանազան ձևով կգործածեն իրենց տան պիտոյքներուն, մասնաւորապէս հագուստներուն և անկողիններուն համար:

Տղամարդիկ իրենց կանանց ձեռագործները և ոչխարներէն ստացած կարագ իւղի աւելորդ մասը կբառնան ջորիներու վրայ և կտանին դէպի հեռաւոր կողմեր, այսինքն դէպի Շար-Սանճագի, Քղիի, Բալուայ և մինչև-իսկ Քարբերդի գիւղերը, ուր իրենց ունեցածն, առանց դրամի ակնարկութիւն ընելու, կփոխեն գիւղացիների այն ունեցածին հետ, ինչ բան

որ իրենք, Միրագեանները, չունին, որ մեծ մասամբ կլինի բամբակի հետ փոխանակութիւն։ Եւ այսպէս մարդն իր ունեցածը բամբակի հետ որոշ չափով մը փոխելուց յետոյ, կվերադարձնէ զայն իր տունը, ուր կանայք կսկսին նոյնպէս գզել, մանել և կտաւ գործել։ Եւ երբ բամբակն ալ կտաւի կվերածուի, տանը համար պէտք եղածին չափ առնելուց յետոյ՝ մնացածն այս անգամ կտանի Տէրսիմի խորերը, այսինքն Խուլթի-Տէրէսիի կողմերը, ուր նոյնպէս որոշ չափով մը՝ կտաւը կփոխէ իւղի, պանիրի, բրդի և զանազան իրեղէններու ու կենդանիներու հետ, որով իրենց ունեցածը կկրկնապատկեն օրէցօր։

Հողագործութիւն.—Տէրսիմի մէջ առհասարակ հողագործութիւնը սակաւ է, որովհետև երկիրը լեռնային լինելուն համար նպաստող ու քաջալերող չէ հողագործութեան։ Ամեն մարդ կսերմանէ ցորեն, գարի, կորեկ, կըլկըլ, եգիպտացորեն և այլն այնչափ՝ որչափ որ իր տարեկան ապրուստին պէտք է, աւելի ոչինչ։ Սոքա ինչ որ կսերմանեն՝ արդիւնքն ամբողջովին իրենցն է, որովհետև կառավարութիւն չունին, որ տասանորդ առնէ, հողապետ չունին, որ վաստակը կիսէ, այլ ինչ որ է՝ իրենցն է։

Ծխախոտի մշակութիւն.—Միրագեանները, բացի վերոյիշեալ արդիւնքներէն, ունին նաև ծխախոտի մշակութիւն, որ աւելի լաւ և ազնիւ է՝ քան Սամսունի ծխախոտը։ Սոցա ծխախոտի անունը դեռ հեռաւոր տեղեր չէ տարածուած, որովհետև միշտ զուրկ են յարաբերութենէ, բացի Տէրսիմի մօտակայ գաւառներէն, որոնց մէջ արդէն խիստ գովելի է և միանգամայն առաջնակարգ նշանակութիւն ունի Մի-

բագեաններու ծխախոտը, ինչպէս նաև կարագ իւղը, բուրդը, գորգերն ու կապերանները։

Տնտեսութիւն.—Միրագեաններն, ինչպէս ըսինք արդէն, ընդհանրապէս բազմանդամ են. իւրաքանչիւր տուն ունի իր տան մեծը, որուն յանձնուած է տան կառավարութեան ղեկը, այսինքն տնտեսութիւնը։ Տնտեսութիւնն երկու մասի բաժնուած է, այն է՝ արտաքին և ներքին։ Արտաքին տնտեսութեան պաշտօնը կպատկանի տան մեծին—նահապետին. իսկ ներքին, այսինքն տնային գործերու տնտեսութեան պաշտօնը՝ յանձնուած է նահապետի կնոջը—մամիկին։ Եթէ սոցա մէկը կամ միւսը մեռնի՝ յաջորդողը կլինի տան աւագագոյն տղան կամ նորա կինը. իսկ եթէ երկուքն ալ մեռնին՝ այն ժամանակ տան երիցագոյնները կժառանգեն նահապետի և մամիկի վարած տնտեսութեան պաշտօնները։

Նահապետը կտնտեսէ առհասարակ իր զաւակներու վաստակը, նոցա աշխատութեան վրայ ինքն անձամբ կհսկէ ու հաշիւը ինքը կպահէ։ Զաւակներն, այր և կին, օրն ի բուն կաշխատին և ամեն իրիկուն հաշիւ կուտան իրենց տան մեծին։ Իսկ մեծն իր տան անդամներուն ինչ որ պէտք է ծախու առնել՝ անխտիր կերպով բոլորին ալ համար կառնէ, և առածները բոլորն ալ միատեսակ կլինին, որպէսզի մէկը միւսէն լաւ կամ վատ չնկատուի, կամ մէկին ու միւսին խտրած չլինի։ Իսկ մամիկը, որուն ընդհանրապէս տան տիկին կըսեն՝ անխոնջ կերպով կաշխատի տնտեսել—ինայել դրսէն բերուած ուտելու և հագնելու պաշարը։ Տան տիկինն ինքն է կերակուրներ եփողը և նոցա տեսակներն ընտրողը։ Նա հարսներու կամ աղ-

ջիկներու օգնութեամբ ամեն օր երեք անգամ տան մէջ և երբեմն ալ տնէն դուրս երեք տեղ սեղան կդնէ, մէկը տղամարդերու, մէկն երեխաներու, իսկ երրորդը կանանց համար. որովհետև այս վերջինները չեն համարձակիր տղամարդու հետ սեղանակից լինել, վասն զի «անվայել է, կըսեն. կնիկներն ու աղջիկներն համեստ ա՛ըլլին» և այլն։ Տան տիկինը պարտաւորուած է նոցա բոլորին հաւասարապէս կերակրել, առանց ամենաթեթև խտիր մ՚իսկ դնելու։ Եթէ երբէք պատահի խտրութիւն մէկին կամ միւսին մէջ՝ յայնժամ ղրկուածը կըսէ.—

Տնտես, հաւասար տես,
Օր դատաստանին
Ցերթաս [1]) սևերես, և այլն։

Վերջապէս ամեն բան տանտիկինէն կախում ունի. առանց տանտիկնոջ հրամանին ոչ ոք իրաւունք չունի պատառ մը հաց իսկ կիսելու։ Տան տիկինն իր որոշ ժամերն ունի կերակրելու համար տան ամեն մէկ անդամին։

Ուսում։—Զնայելով Միրագեաններու վերին աստիճանի աշխատասիրութեանն ու հարստութեանը՝ խիստ անուս և միամիտ ժողովուրդ մ՚են, որոնց մասին դրացի հայ-գիւղացիները ծաղրական առածներ

---

1) Ցերթաս՝ կնշանակէ չերթաս, որովհետև Միրագեաններու բարբառին մէջ չ և ջ հնչիւններու փոխարէն միշտ ց կհնչեն. իսկ շ-ի ձայն երբէք չի լսուիր. օրինակի համար, շաքար ըսելու փոխարէն կըսեն սաքար, փոխանակ գէշ ըսելու՝ կըսեն գէս և այլն։ Այսպէս շատ տեղեր տառերու հնչիւնները փոխեր են. օրինակի համար՝ ճ-ի տեղ ծ, ժ-ի տեղ պ և այլն։

օրիներ են ու կըսեն՝ երբ պատահին Միրագեանի յմը։ Սոքա ոչ դպրոց ունին և ոչ ալ եկեղեցի, թէև սրբատեղիներ ու եկեղեցիներ ու կիսակործան աւերակներ շատ ունին, որոնց միայն քարերուն ուխտ կերթան անընդհատ։ Ամբողջ Միրագեաններու մէջ հաղիւ երեք-չորս հոգի սաղմոս կարդացողներ լինին. մնացածները բոլորովին անգիտակ են հայ գրականութենէն։ Սոցա ամենալաւ ուսումնականն ու գիտնականն այն է, ով որ լաւ զինավարժ ու ռազմագէտ է և միանգամայն Սամսոնի պէս հուժկու ու Աքիլլէսի պէս քաջ, որ պատերազմի ժամանակ (լինի այն մեծ կամ փոքր) ինք զինքը կմղէ կռուի ամենատաք կողմը։

Հաւատք եւ կրօնական սովորութիւններ. — Միրագեաններն եկեղեցի ու քահանայ չունենալով՝ ունին սակայն վերին աստիճանի ջերմեռանդ հաւատք դէպի քրիստոնէութիւնն և դէպի նախախնամութիւնն, որպիսի հաւատք չունին եկեղեցի ու քահանայ ունեցողները։ Սոցա մէջ անխուսափելի և ամենասրբազան պարտականութիւն է՝ տարին երկու անգամ, Ծնունդի և Զատկի առթիւ, հեռաւոր տեղերէ հայ քահանայ բերել տալ և խոստովանուիլ ու հաղորդուիլ, որմէ յետոյ օրհնել կուտան տունը, օրհնել կուտան տան մէջ գտնուած բոլոր կենդանիներն ու իրեղէնները, այսինքն զէնքերը, երկրագործական գործիքները, սերմացու հատիկները, հացը, ջուրը, ալիւրը, կորկոտը, ընտանի կենդանիները—տաւարները և այլն. այս բոլորն օրհնել կուտան հայ քահանային, որպէսզի «անօրհնէք», այսինքն պիղծ բաներ չգտնուին իրենց տներու մէջ։

Եթէ տարուայ որևէ եղանակին մէջ Միրա-

գեաններեր ունենան կնունք, թաղում և կամ պսակ կամ բոլորովին այլ գործեր, որոնց համար հոգևորականի անհրաժեշտ պէտքն զգացուի՝ կփութան շրջակայ գաւառներէն, օրինակի համար, Մեծկերտէն, Փախէն կամ Զար-Սանճագի մէկ գիւղէն, քահանայ մը հրաւիրել, որ առանց յապաղելու կփութայ ներկայ գտնուիլ հրաւիրուած տեղը և կատարել կրօնական պատշաճ արարողութիւնները։

Սոցա մէջ հիւանդութիւնները սակաւ են, բայց երբ պատահին՝ Աւետարանը և կամ Նարեկը, որպէս սրբութեան մատեաններ, կդնեն հիւանդի գլխուն վրայ, որով—կհաւատան—պիտի բժշկուի իրենց հիւանդը։

Մեծ պահոց մէջ՝ Ս. Լուսաւորչի վիրապը մըտնելու օրը՝ Միրագեանները, ինչպէս նաև ամբողջ Զար-Սանճագցիներն ու Քարբերդի գիւղացիները, մեծ պղնձով մը ջուր կդնեն տան մէջ և ամբողջ գիշեր մը պղնձին վրայ ճրագ կվառեն, որուն (պղնձին) վրայ դրուած կլինի անպատճառ Նարեկն, որով կունենան օրհնուած ջուր։ Սոյն ջրէն, որպէս թրլրսմային (կախարդուած) ջուր, ամբողջ գիւղացիները կը խմեն ու կլուացուին և տանը բոլոր անկիւնները կը սրսկեն, որպէսզի ամառն, երբ թունաւոր միջատները, մանաւանդ կարիճները, իրանց ծակտիքներէն դուրս ելլեն՝ անկարող լինին կծել կամ թունաւորել, ինչպէս որ Ս. Լուսաւորիչ հայրը քառասուն (40) տարի Խորվիրապին մէջ մնալով չթունաւորեցաւ միջատներէն՝ Ս. Նարեկի—խուրպան ըլլիմ ես ընոր զօրաց զօրքին—ս. աղօթքը մրմնջալով [1])։

---

[1]) Ոչ միայն Միրագեանները, այլև շատ տեղեր՝ հայ

Նշանտուք եւ հարսանիք.—Մէկն իր տղան նշանելու կամ պսակելու համար չափազանք ծախսեր կունենայ։ Ընծաներու մասին այլեւս աւելորդ է խօսել, որովհետեւ նայելով այլեւս տեղւոյն և կարողութեան՝ չափէն աւելի են։

Տղաները—բացառութիւնն յարգելով—տասն և հինգէն մինչև քսան երկու տարեկան անպատճառ պսակուած կլինին. իսկ աղջիկները՝ տասներկուքէն մինչև տասն և վեցը։

Աղջիկ մ'իրաւունք չունի իր փեսացուն ընտրելու և ոչ ալ իր համար ընտրուածին հակառակելու։ Ինչպէս որ աղջիկը՝ այնպէս և տղան իրաւունք չունի իր համար ընտրուած հարսնցուն (որ անշուշտ իր մեծերն ընտրած կլինին) մերժելու, թէև սա, համեմատաբար, մինչև մէկ աստիճան ազատ է, երբ արդէն որոշած է՝ ապստամբել իր մեծերու դէմ. այսպէս կարող է պատահել նաև աղջկան հետ՝ երբ նա արդէն իր պաշտպանն ունի։ Սակայն այսպիսի պարագաներու տակ նորա նահատակուել յանձն առած պէտք է լինին, որովհետեւ իրենց ըմբոստութեամբն իրենց տոհմային պատուոյն արատ բերած կլինին։

Մէկը երբ կտեսնէ, որ իր տղու «չափը լեցած է»՝ կսկսի այս ու այն կողմ նայել ու փնտռել աղջիկներ և նոցա մէկն ու մէկը ընտրել իր տղուն հա-

---

գիւղացիներն հաստատ հաւատացած են, թէ Լուսաւորիչն այդ «40 տարուայ» ընթացքին մէջ Նարեկն անգիր շարադրած է, որն ինչ հիւանդի վրայ որ կարդան՝ կրժշկուի, եթէ մեռած է՝ հոգին արքայութեան արժանի կ'ըլլի։

Հայ գիւղացիներէն մեծագոյն մասը Գրիգոր Նարեկացին կշփոթէ Գրիգոր Լուսաւորչին հետ։

մար. բայց նախ քան ընտրուած աղջկայ նշանի խօսքն ընելը՝ ամենայն ուշադրութեամբ հետամուտ կլինի նորա տոհմային ազնուութեանը և նորա ծնողաց համեստութեանը և վարք ու բարքին: Մարդն այս ամենը լաւ կուսումնասիրէ, որպէսզի իր ապագայ հարսնցուն «հայալ կաթ ուտող ադամորդի» մ'եղած լինի, որովհետև «մարդիկ հում կաթ կերած են», նոցա առերևոյթ պարկեշտութեանց կամ քաղաքավարական համեստութեանց հաւատարմութիւն չելլիր: Եւ ճիշտ սորա համար է, որ ծնողներն իրենց չափահաս տղաներուն որպէս խրատ կրսեն.

Առա՛ աղկէկ մօր գէս (գէշ) աղջիկը,
Ինցու օր անի կոլբրուի, կը բոլորուի՝
Իր մօր պէս կելլի:
Ամա (սակայն) մա՛ռնէր գէս մօր աղկէկ աղցիկը,
Ինցու օր անի կոլորուի կը բոլորուի՝
Իր մօր պէս կելլի:

Կամ՝

Քնարն (եղը, ափ) հայիր՝ կտաւն առ,
Մօրը հայիր աղցիկն առ...

Տղու ծնողներն, երբ որևէ աղջկայ մը հաւանին՝ գիւղի քահանային միջոցով և կամ (եթէ քահանայ չկայ) գիւղի պատուաւոր մէկուն միջոցով աղջկայ ծնողներուն կյայտնեն իրենց ցանկութիւնը, որ «Աստու հրամանով իրենց աղջիկը մեր տղուն տան»: Աղջկայ ծնողները կմերժեն միանգամայն, առարկելով, որ իրենց տղջիկը տակաւին «անչափահաս» է ամուսնութեան համար: Բայց տղու տէրն առանց կարևորութիւն տալու նոցա առարկութեան՝ կթախանձէ և միանգամայն միջնորդներու թիւը կաւելցնէ՝ նոցա

իւրաքանչիւրին առանձին առանձին նուէրներ խոստանալով։ Աղջկայ տէրը կձգձգէ գործը, մինչև որ միջոց ունենայ ուսումնասիրել տղու վարքն ու բարքը և ամբողջ կեանքը, թէ նա տղամարդու յատկութիւններ ունի, քաջագործութիւններ ըրած է և այլն։ Եթէ նա զուրկ է տղամարդու յատկութիւններէն՝ (որ տեղական հասկացողութեամբ պէտք է անպատճառ քաջագործութիւններ ըրած լինի, որ չէ ըրած) կը նշանակէ կին մ'է նա, հետևաբար կնոջ կին տալ չը լինիր...։ Եւ երբ ամենայն ինչ կատարեալ է երկուստեք՝ աղջկայ ծնողները բոլորովին չէզոք ձևացնելով ինք զիրենք՝ կպատասխանեն. «աղջիկն աղբար ունի, ամու (հօրեղբայր) ունի, և այլն և այլն. գացէք անոնց ըսէք. ակար (եթէ) կուզեն՝ թող տան, մենք ինց տ'ըսենք. ակար Ասուած գրեր է՝ կըլլի, ակար ցէ գրեր՝ ցըլլիր»։

Սա արդէն կիսախոստում մ'է, որ կտրուի աղջկայ ծնողներէն։ Իսկ տղու միջնորդները կսկսեն մէկիկ-մէկիկ դիմել աղջկայ մերձաւոր ազգականներուն և նոցա իւրաքանչիւրին, նայելով թէ մարդը որ աստիճան մերձաւոր ազգական է՝ կկաշառեն, այսինքն «հա տէմասին» (այո՛ ըսելիքը) կուտան, մինչև որ բոլորէն ալ կատարեալ համաձայնութիւն առնեն։ Եթէ մէկի «հա դէմասին» քիչ լինելով հաւանութիւն չէ տուած՝ ալ անկարելի է գործի իրականացումը. հակառակ պարագային նա կլինի նոցա ոխերիմ թշնամին, որպիսի թշնամութիւնը անտարակոյս արիւնով պիտի վերջանայ։

Այսպէս երկար-բարակ արարողութիւններէ յետոյ, քաւորի և միջնորդներու հետ կուղարկեն նշանը,

որ կլինի, ըստ կարողութեան, զոյգ մը օղեր, զոյգ մը պլազուկներ, զոյգ մը կարմիր կօշիկներ, կարմիր ֆէս մ'ու շիթ մը և կամ միայն շիթ մը և մատանի մը, որոնք մէկիկ-մէկիկ կօրհնէ քահանան և կյանձնէ, աղջկայ ներկայութեամբ, ծնողներուն, մաղթելով միանգամայն, որ «կապը խավի ըլլի» (հաստատուն լինի նշանի կապը)։ Եւ այդ օրէն մինչև հարսանիքի օրը, որ մէկէն մինչև վեց-եօթը տարիներ կանցնին՝ աղջիկն այլևս, պարկեշտութեան համար, պէտք է չերևի իր նշանածին և նորա կողմի որևէ մէկուն։ Եթէ դաշտին մէջ անակնկալ կերպով պատահի աղջիկն իր «կնոսանց» կողմի մարդերուն՝ պէտք է թագնուի ցանքերուն մէջ կամ թմբերուն յետև. եթէ լեռան վրայ եղաւ՝ պէտք է նոյնպէս թագնուի քարերու յետև կամ անտառի մէջ, որպէսզի նորա չնկատեն զինքը։ Այսպիսի ժամանակներ, երբ յանկարծ զուգադիպութեամբ մը տղան ու աղջիկը միմեանց կհանդիպին դաշտին մէջ կամ լեռան վրայ՝ աղջիկը կթագնուի որևէ բանի մը յետև և կսկսի գաղտագողի նայել իր սիրականի «պօյն ու պօսը». իսկ տղան նկատելով զայդ՝ կսկսի կտրուկ եղանակով մ'երգել.—

Ուսկո՞ւց կուգաս յուսիկ-մուսիկ (յուշիկ-մուշիկ),
Ոտքըդ մըտնայ վարդի փըսիկ (փշիկ),
Դուն պըզտուտիկ՝ պագդ անուսիկ...

Անշուշտ կուսական շիկնածութիւն մ'աղջկան թշերը կաս-կարմիր կներկէ այդ ըսպէին, երբ տղան դէպ իր կողմ մօտենալով՝ կերգէ ու դանդաղ քայլերով կհեռանայ, որպէս թէ չգիտէ նորա ուրեղ թագնուած լինելը։ Աղջիկը կաշխատի աւելի ևս լաւ թագ-

նուել իր սիրականի աչքերէն, որ իրը թէ նախապէս անզգուշութենէ մ'առաջացաւ այդ անպատշաճութիւնը. բայց դորանով աւելի ևս ինքզինքը կմատնէ և գրեթէ դիտմամբ թոյլ կուտայ զինքը տեսնելու, եթէ սակայն ինքն արդէն գեղեցիկ է։

Տղան կշարունակէ.—

Ուսկո՞ւց կուգաս, ցիմ իմանայ, (չգիտեմ),
Տարտէգ եղեր եմ տիվանայ (խենթ),
Պացիկ (պաշիկ) մի տուր, մարդ ցիմանայ...։
Ուսկո՞ւց կուգաս. վարի էքուն,
Կօղ (ողկոյզ) մի խավող փրթուր քօքուն (արմատէն),
Պացիկ մի տուր պապուդ հոդուն...։

Եւ այսպէս շարունակ երգելով՝ տղան կհեռանայ աղջկայ մօտէն, առանց սակայն զգացնելու, որ ինքը նրան տեսած է. իսկ աղջիկն, երբ կնկատէ, որ տղան 20—30 քայլ հեռացաւ իրմէն՝ թուփերու մէջէն կսկսի երգել.—

Մըզրայ (Մնձրուրի) լառան ես կուգամ,
Քըրտրներ իմ ու կուլամ...
Ո՞ւր կերթաս, աղէկ եարըս,
Պաղ մի ցէ՝ երկուք կուտամ։
Սիլայ-փուսաթ փէծկըլտայ (զէնքերը կշողշողան)
Տեսէք եարըս ո՞ւր կերթայ.
Նոր ծըլած պէխերին մառնեմ,
Իմ թո(յ)լ սրտիս ուզ (ուժ) կուտայ։

Կամ եթէ գիշեր ժամանակ է՝ նոյն սիրերգներուն հետ կաւելցնէ.—

Լուսընկայ գիսեր դուրս ելայ,
Մուզուրն անուս կըցոլայ,
Կըցոլայ վըր մենծ սարին,

Սատ բարև իմ աղկէկ եարին...
Անման գիսեր, հոմն անուս,
Եար սեուլիկ, պագն անուս...

Եթէ տղան աներեսութիւն ընէ՝ աղջիկը կղգացնէ նորան՝ երգելով.—

Ելայ գացի մենծ լառը,
Եռես եկաւ իմ եարը.
Ինցու՞ եկար աս լառը,
Պալքէ (կարելի է) ցըլլէի քու եարը...

Տղան կպատասխանէ, որ ինքն երբէք սխալուած չէ.

Կարմիր վարդ ես ծաղկանց մէց,
Ու բուսեր ես մէսին (անտառին) մէց.
Ես իմ եարը կըծանցնամ,
Տասը հազար մարդուն մէց։

Եւ ահա այսպէս անցնելով երկար տարիներ՝ կհասնի վերջապէս ամուսնութեան օրը։ Հարսանիքը կսկսի մեծ ուրախութիւններով, տավուլով ու զուռնայով և զանազան կատակերգութիւններով (ներկայացում)։ Կատակերգութիւններն, որ առհասարակ ժողովրդի կեանքէն են՝ կսկսին կէս օրին, երբ արդէն ամեն մարդ կերած ու խմած՝ կպարէ տավուլով ու զուռնայով։ Այդ ժամանակ քանի մ'երիտասարդներ հիւրերուն զուարճացնելու համար կյղանան ներկայացման ծրագիրը, թէ ինչ կամ որպիսի մարդու կեանքէ պէտք է ներկայացնել, որով զուարճանան հիւրերը և միանգամայն գոհ մնան. և առանց նախապատրաստուելու, այսինքն առանց անգիր ընելու ներկայացման խօսակցութիւնները, որն անշուշտ որևէ տեղ մը գրուած կամ հէքեաթի նման պատմուած չէ,—կսկսին գործողութիւնը՝ իւրաքանչիւրն ստանձ-

նելով որոշ դեր մը, և նկատի ունենալով իր դերը՝ գիտէ այլևս, թէ ինչպիսի տարազ պիտի հագնուի, ինչպիսի ձայներ պիտի հանէ կամ ո՞ր բարբառը պիտի խօսի, ո՞ր աստիճան հասկացողութիւն պիտի ունենայ միւսներու առջև և ինչ քաջագործութիւններ կամ ոչ-քաջագործութիւններ կամ թերութիւններ պիտի ունենայ. նկատի առնելով այս ամենը՝ կսկսի իւրաքանչիւր հարցին պատասխանել այնպէս՝ որպէս թէ շարաթներով պատրաստած ու սերտած էր գրքի մը մէջէն։

Հարսանիքը կտևէ երեքէն մինչև հինգ օր։ Հարսանիքի միջոցին փեսան «թագաւոր» կկոչուի, որը «փեսամանուկ»-ներն իր յետև ունենալով, որպէս զօրքեր և թիկնապահներ՝ կատարեալ իրաւունք ունի իշխելու գիւղին վրայ. կարող է նաև հրաման արձակել շատ աւելի ծանր գործերու մասին, որը սակայն մասամբ կիրագործուի։

Աղջիկն՝ հարս լինելուց յետոյ, կապոյտ կամ գոյնզգոյն լաչակներով կծածկէ իր դէմքը, որմէ յետոյ այլևս նա իրաւունք չունի ոչ ոքի հետ խօսելու, բացի իր փեսայէն։ Հարսն այսպէս անխօս կմնայ տարիներ ու երկար տարիներ, մինչև անգամ կպատահի, որ հարս մ՚իր սկեսրոջ և սկեսրայրին հետ հարսնութիւն կընէ մինչև 25—30 տարի, այսինքն երբէք նոցա հետ չի խօսիր, մինչև որ նոքա, նուէր մը տալով՝ բարեհաճին թոյլ տալ հարսին իրենց հետ խօսելու, այն ալ, ի հարկէ, շատ սակաւ։ Հարսն երկար տարիներ պարտաւորուած է նաև շարունակել իր «հարսնութիւն»-ը (անխօսութիւնը) սկեսրանցը դրացիներուն, մանաւանդ մեծերուն դէմ։ Նա իրա-

ունք չունի իր դէմքը բաց ման գալու. հակառակ պարագային՝ նա «հարամ կաթ կերած է» կըսեն։

Այսպէս երկար տարիներ հարսնութիւն ընելով խեղճ աղջիկները, որոնք իրենց հօր տան մէջ եղած ժամանակն ազատ թռչնիկի մը պէս ամենուրեք թըռչկոտելով երգած էին ազատ սարերուն վրայ՝ մատաղ հասակին մէջ յանկարծ ենթարկուելով վաղ ամուսնութեան անսովոր լուծին՝ երկար ու բարակ կտանջուին ու կշարշարուին անխօսութեան դատապարտուած լինելուն համար, որմէ յառաջ կուգան յաճախ դանազան անախորժ հիւանդութիւններ, ապշութիւններ ու խենթութիւններ։ Սակայն այժմ զգալով այս սովորութեան ազէտալի հետեւանքը՝ շատերն արդէն սկսած են իրենց հարսներուն ազատ թողուլ այնպէս, ինչպէս նոքա իրենց հօր տան մէջն էին։

Աղջիկ մ'երբ իր անչափահասութեան ժամանակ (12—13 տարեկան) հակառակ իր կամքին կամուսնացնեն,—որմէ յետոյ անշուշտ դատապարտուած կլինի անխօսութեան, որով նաև կսկսի ողջ-ողջ նահատակուել,—երբ ինքը մենակ լինի տանը մէջ զրաղուած՝ միտքը բերելով իր անցեալը, այսինքն իր հօր տան մէջ վարած ազատ կեանքը՝ կսկսի երգել ու ողբալ իր վրայ.—

Մարիամ ցատրը (վրան) զարկեր
Մըղուրայ (Մընձուր) լառները,
Մէկ դի սիրին (հօտ) կարծէր,
Մէկ դի՝ գառները։

Նա այս տողերն երգելով՝ կյիշէ իր անցեալը, ազատ սարերու վրայ իր հովուական կեանքը, ուր երջանիկ էր. և ապա կերգէ՝ ներկան յիշելով.

Մարիամ թոնիր վառեր,
Ցընակը մուխ է,
Երեսը մալ՛ուլ (տրտում) է,
Աչերը թուխ է...
Եւ կսկսի լաց լինել ու ինքն իրեն մխիթարել.
Մի՛ լար, Մարիամ, մի՛ լար,
Աչերդդ կ'աւրի,
Քեզ պըզտիկ կարգողին
Ցընակն աւերի...

ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ ՏԷՐՍԻՄՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Տէրսիմցիներն ունին իրենց մէջ առանձին բժշկութիւն։ Իւրաքանչիւր բոյս, որ կաճի Տէրսիմի լեռներուն մէջ՝ ունի իր առանձին անունն ու նշանակութիւնը, որ ծանօթ է ամեն մէկ տէրսիմցուն։ Իւրաքանչիւր բոյս կամ ծաղիկ առանձին հիւանդութեան մը համար է, որու անունով ալ յաճախ կճանչցուին նոքա տեղացիներէն։ Օրինակի համար՝ զորտնուկ-խոտ, որ կկերցնեն զորտնուկ (սիկիլ) ունեցողներուն, որն խսկոյն և եթ կանհետանայ մարմնոյ վրայէն։ Քոսի-խոտ, որ կկերցնեն կամ նորա խաշած ջրովը կլոգցնեն հիւանդին, և կառողջանայ։ Իսկ ինչ կվերաբերի վիրաբուժութեան՝ աւելորդ խօսք չուզեր, որովհետև այս կողմէն առաջնակարգ տեղը կը բռնեն տէրսիմցիները։ Եթէ մէկը սրով կամ հրացանի գնդակով վիրաւորուած է՝ բևեկնու խէժով, մեղրամոմով, սև-ձիթով և այլ խառնուրդներով կպատրաստեն սպեղանի մը, որով երեք-չորս օրուան մէջ

վէրքը կլաւանայ։ Եթէ հրացանի գնդակը մարմնոյն մէջ մնացեր է՝ մուկ մը կճեղքեն և կկապեն վէրքին վրայ, որմէ չորս-հինգ բոպէ յետոյ գնդակն ինքն իրեն դուրս կուգայ, կամ եթէ մուկ չգտնեն՝ գնդակի ծակած տեղը կծծեն, մինչև որ գնդակը դուրս գայ վէրքի խորերէն։

Այսպէս ամեն մարդ իր հիւանդին բժշկել գիտէ։ Բայց երբեմն ալ ծանր կամ նոյն-իսկ թեթև հիւանդներ, արեան սակաւութեան կամ այլ պատճառներէ, յաճախ զոհ կերթան իրենց անհասկացողութեան պատճառով։ Օրինակի համար՝ երբ մէկն արեան պակասութիւն ունենալով, աչքերը կխաւարին ու կընկնի վար, կարծելով որ դա արեան շատութենէն կամ արեան ապականութենէն յառաջացաւ՝ անմիջապէս սափրիչին կհրաւիրեն, որ հիւանդին կարևոր երակներէն մին կճեղքէ, ուրկէ ժամերով արիւն հոսեցնելով՝ յաճախ կմեռցնեն հիւանդին։

Բարեկամիս մէկը, որ քանիցս ուղևորած էր դէպի Տէրսիմ՝ կպատմէր երբեմն... «Երեք օր յետոյ, երբ հասանք Խութի'ի Հայտարան գիւղը, ուր պիտի օթևանէինք այդ գիշեր՝ արտասովոր իրարանցում մը կար հոն։ Բոլոր գիւղացիները խռնուած էին օտարականի մը մօտ, որն ըստ երևոյթին սափրիչի կնմանէր. և արդարև, դա բախտախնդիր թուրք սափրիչ մ'էր, որ ինքզինքը քուրդ ձևացնելով՝ կշրջէր Տէրսիմի մէջ։ Գիւղացիներէն շատերը, զանազան երիզներ խոստանալով՝ սակարկութիւն կընէին սափրիչի հետ, որ նա բարեհաճի արիւն առնել իրենցմէ, որով —կյուսային —պիտի բժշկուին։ Վերջապէս, տասն և հինգ տղամարդերու և տասը կիներու սակարկութիւնը

վերջացաւ։ Թուրք սափրիչը դոցա բոլորին կարգով շարեց գետակի ափին, որ կանցնէր գիւղի մէջէն՝ գիւղն երկուքի բաժնելով, և սկսեց զուլ նաշտէրով մը (փոքրիկ զմելին) ճեղքել միւշտէրիներու թեւերէն մէկ-մէկ կարեւոր երակ, ուրկէ կարմիր արիւնն սկսեց առատապէս հոսել։ Թէև ժամացոյց չունէի (որովհետև ժամացոյց չէի կարող պահել Տէրսիմի մէջ), բայց գիտէի որ մօտաւորապէս մէկ ժամ տևեց արիւնհոսութիւնը դոցա երակներէն։ Եւ ես կզարմանայի, զարմանալէ աւելի կասկէի, ապուշ-ապուշ կդիտէի երբեմն քրդերուն և երբեմն ալ սափրիչին։ Աւելի թոյլերը, որոնց երակներէն արիւնն աղբիւրի պէս կհոսէր՝ սկսեցին մարիլ ու նուաղիլ... ապա հուսկ համբերութիւնս հատաւ, ու ես կարեկցարար մօտեցայ տկարներուն ու ըսի. «բաւ է որչափ արիւն հոսեց ձեր երակներէն. ամբողջ տարի մը դուք չէք կարող այդչափ արիւն հաւաքել ձեր մէջ. դադրեցնել տուէք, եթէ ոչ՝ կմեռնէք»։ Տկարները նայեցան սափրիչի երեսին ու լռեցին։ Սափրիչն արհամարհական նայեցաք մը ձգելով վրաս՝ ըսաւ «Խելքդ տեղ չըներ... դադրեցնել կամ չի դադրեցնել իմ գործն է...»։ Լռեցի։ Անցաւ պահ մ'ալ, մինչև որ տկարներէն մէկ քանիսն ալ ուշաթափուեցան ու գլորուեցան մէկ կողմ։ Ապա թէ սափրիչն սկսեց կապել իր հիւանդներու պատառած երակները, որ կարծես, սուինի վէրքեր լինէին...»։

ՏԷՐՍԻՄՑԻՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԸ

1. Տէրսիմցի ղըզըլբաշներու կեանքը:—2. Նոցա յարաբերութիւնը Միրագեանների հետ:—3. Ցեղային (ներքին) կռիւները:—4. Դատավարութիւնները:—5. Տէրսիմցիներն որպէս պատերազմասէր եւ կռուի ընդունակ մարդեր: 6.— Թէ ի՞նչպէս են միմեանց հետ հաղորդակցելու միջոցները:

—∞—

1. Տէրսիմցի ղըզըլբաշները բոլորովին հովուական կեանք մ'ունին: Նոցա գիւղերն ընկած են անդնդախոր ձորերու և սաղարթախիտ վիթխարի անտառներու մէջ: Բնակարանները մէկ-մէկ հիւղերու կնմանին, քան թէ լեռնականներու խրճիթներին: Իրենք ևս աւելի նախամարդոց կնմանին, քան թէ այժմու զարգացած մարդերուն: Կեանքերնին՝ պարզ, ուտելիքները՝ սակաւ, իսկ հագուստները խիստ համեստ: Տղամարդու հագուստն է ճերմակ շապիկ մ'ու վարտիք մը, բարակ քաշիկ մը՝ որպէս գօտի, մազէ հիւսուած բաճկոն մը կիսատ թեւերով, բրդէ քօլոզ մը, զոյգ մը չարուխ (ոմանք չարուխ ալ չունին) և հովուական հաստ ու բիրտ ցուպ մը: Իսկ կիներունը՝ ճերմակ շապիկ մը, մինչև ոտքերուն վրայ իջած, կարմիր վարտիք մը, նոյնպէս մինչև գետին քսուելու չափ երկար ու լայն, բարակ քաշիկ մը գօտու փոխարէն (ոմանք այդ քաշիկն էլ չունին) և մէկ-երկու դեղին ու կարմիր լաչակներ՝ գլխուն ձգած, իսկ ոտքերը բոլորովին բոպիկ: Բայց զէնքերու մասին աւելորդ է խօսել, որովհետև չափազանց հարուստ են: Իւրաքանչիւր ընտանիք, որ իր տան առջև ունի իրեն համար վարելահողեր՝ տարուան մէջ միայն մէկ-երկու

շաբաթ (ամառները) կաշխատի վարելու, ցանելու, հնձելու և շտեմարանելու հասարակ չուալներու մէջ՝ որպէս ուտելու պաշար ամբողջ տարուան մը համար. իսկ միւս մնացած ժամերը կպարապի որսորդութեամբ ու հովուութեամբ։ Լաց, ողբ, կոծ, կսկիծ ու հառաչանք ըսուած բաներն անծանօթ են տէրսիմցիներուն համար։ Լալկաններուն վրայ ոչ միայն չեն կարեկցիր, այլ և կծաղրեն նոցա՝ որ լացի մէջ մխիթարութիւն կորոնեն։

2. Տէրսիմցի քրդերն իրենց դրացի հայերուն, Միրագեաններուն հետ թէև ըստ երևոյթին մօտիկ արիւնակցութիւն մը և կամ խնամութիւն մը չունին, բայց այնու ամենայնիւ սերտ կապ ունին նոցա հետ. ոչ միայն իրենց դրացի հայերուն, այլև բոլոր հայերուն առանձին համակրութիւն մը ցոյց կուտան, որպէս «սուրբ դրացիներու» կամ, իրենց ըսելով՝ եղբայրներու»։ Նոքա միշտ սերտ յարաբերութեան մէջ են հայերուն հետ. նոցա տուներն հիւր կլլնին, նոցա եկեղեցիներն ու վանքերն ուխտ կերթան, նոցա լեզուն (հայերէն) մեծ մասամբ գիտեն, ու կխօսին՝ երբ հայու մը հանդիպին։ Նոյնպէս և հայերը մօտ յարաբերութեան մէջ են քրդերու հետ. իրենց բարոյական ազդեցութիւնը մեծ է նոցա վրայ, թէև նոքա թուով շատ ու շատ աւելի են տեղացի հայերէն։ Հայերն ու քրդերը միմեանց մէջ երբէք խտիր չեն դներ, որպէս հարազատ եղբայրներ, ու միմեանցմէ երբէք չեն գարշիր, ինչ որ յաճախ կամ միշտ կընեն օսմանցիները հայերու և ղզղլբաշներու նկատմամբ։ Այս վերջիններն, օսմանցիներու ըսածով՝ ռաֆազիներ (անհաւատ, սնապաշտ) են, իսկ իրենք ալ ղզղլբաշնե-

բու մօտ՝ նեխուած մահմեդականներ են, կամ ըստ ընդհանուր քրդաց՝ Հոռոմներ են (Հոռոմներէն սերուած, պոռնկորդիներ): Հայերն ու քրդերը եղբայրական օգնութեան ամենամեծ պարտականութիւն մը կրնան օգնել դրացի ցեղին՝ երբ նա արդէն թշնամու հետ կռուի բռնուած՝ օգնութեան կկարօտի: Միմեանց օգնելու համար ցեղերով պատերազմի դաշտ կիջնեն և կկռուին քաջարար, եթէ երբէք իրենց ամենավերջին մարդն իսկ ջարդուի: Տէրսիմցիներն յաճախ կունենան ցեղային ներքին կռիւներ, բայց ոչ հայու հետ: Հայերը կօգնեն նոցա՝ ոչ ցեղային, այլ արտաքին կռուի ժամանակ: Տէրսիմցիներն յաճախ կարօտեր են ու կկարօտին տեղացի հայերուն օգնութեանը, երբ մանաւանդ օսմանցու հետ գործ կունենան:

Տէրսիմցիները կըսեն, թէ հայք միշտ բարեկամ եղած են մեզ, և մինչև իսկ հայ քահանայ մը մեր Իմամ Հիւսէյնը իւր տունը պահած ըլլալով, երբ մահմեդականք խնդրած են զայն սպանել՝ քահանայն չէ տուեր և իւր եօթն զաւակներն ալ գլխատելով՝ նոցա գլուխներն հետզհետէ մահմեդականաց ներկայացուցեր է իբրև Իմամ Հիւսէյնի գլուխը. բայց վերջի տղուն դէմքը քիչ մը նմանութիւն ունի եղեր Իմամ Հիւսէյնի. սորանով յաջողեր է թէ Իմամ Հիւսէյնին ողջ պահել և թէ զիրենք պահպանել կրօնական հալածանքէ:

Հետևեալ պատմական տաղը իրենց կրօնական երգն ըլլալով՝ սրտառուչ եղանակ մ'ալ ունի, զոր արտասուալից աչօք կերգեն «Տէտէ» կոչուած կրօնաւորները: Ահա այդ երգի բառացի թարգմանութիւնը:

Տես Աստուծոյ գործը.—
Հայ քահանայն գլխատեց
Իւր եօթն զաւակները,
Որոնց կեանքը ես կողբամ։
Քեաֆիրներն հետամուտ էին
Զիմամ Հիւսէյինն սպանել.
Քահանայն զաւակներն զոհեց
Ի փրկանս իմամին։
Իմամը դառնապէս լացաւ,
Երկնից հրեշտակները կոծեցին,
Երկիրն այս ողբոց արձագանգ տուաւ,
Արիւններն բողոք բարձին։
Ցետոյ քեաֆիրք յուսահատ
Մեկնեցան քահանային տնէն,
Եւ մեր միւս իմամները
Գլխատեցին այլուր։
Աստուած վարձահատոյց քահանային,
Որ վասն ազատութեան իմամին
Իւր զաւակներն գլխատելէն ետքը
Բանտարկուեցաւ քեաֆիրներէն։
Իմամ ճաֆար գաղտնապէս բանտը մտաւ,
Քահանային ձեռքը համբուրեց,
Անոր օրհնութիւնն առաւ,
Եւ կենդանի աչօք Յիսուսը տեսաւ։
Քահանայն կաղօթէր միշտ,
Իւր աղօթքը երկինք կհասնէր.
Օդերուն մէջ ճրուողող թռչունք
Աստուծոյ վրէժխնդրութիւնը կհայցէին։
Վերջին դատաստան պիտի ըլլայ,
Յիսուս դատաւոր պիտի կանգնի,

Հասան և Հիւսէյն պիտի ամբաստանեն,
Քեաֆիրները պիտի պատժուին։
Յիսուս արդէն լոյս էր,
Ալին ալ լոյս պիտի ըլլայ,
Հաճի Պէկթաշն ալ բարձրագոյն պաշտօնեայ,
Որոնք մեզի կարմիր թագեր պիտի բաշխեն։
Վասնզի նա կարմիր թագ դրած է,
Վարդի պէս կարմիր, կրակի պէս փայլուն
Եւ իւր արագընթաց ձին հեծած է
Աղեղն լարած ընդդէմ քեաֆիրներուն»[1])

3. Տէրսիմցիներու տեղային կռիւներն, որ յա ճախ կկրկնուին՝ շատ շնչին պատճառներէ կառաջանան և այս պատճառները պարզապէս իրենց անկանոնութիւնն է։ Երբ մէկ ցեղին պատկանող մարդ մը միւս ցեղին պատկանող մէկուն ոչխարը, հաւը և կամ մի այլ բանը գողնայ՝ անմիջապէս երկուքի մէջ նախ անհատական կռիւ կծագի և ապա ցեղային թշնամութեան կերպարանք ստանալով՝ վերջապէս մեծ արիւնհեղութիւններու առիթ կդառնայ։ Հնայելով որ ամենուրեք Տէրսիմի մէջ խիտ անտառներ են, անտէր ու անխնամ թողուած, այնու ամենայնիւ երբ մէկը միւսին պատկանող անտառէն—իսկապէս սեփականութիւն չկայ, այլ սոսկ ցեղային անուանական սահմաններ միայն—ամենաչնչին փայտ մ'որ փրցնէ՝ յանկարծ մեծ-մեծ կռիւներու առիթ կլինի այն։ Այսպիսի ժամանակներ ով որ զօրաւոր է՝ իրաւունքը նորանն է, ի մի բան՝ ոյժն իրաւունք և միանգամայն

---

1) «Մասիս» թիւ 2638, 5 յունիս, 1880
Թ. Թաթարեան, Յերարկիր։

արդար օրէնք է Տէրսիմի մէջ։ Նոցա արիւնահեղ կռիւներն երկիր գրաւելու համար չէ, և ոչ ալ աւարառութեան նպատակով, (թէև այս վերջինն ոմանց մէջ համոզում ու նպատակ եղած է), այլ սոսկ վրէժխնդրութեան համար, որու մէջն է իսկապէս իրենց միակ հաճոյքը, կամ աւելի լաւ է ըսել՝ չեն ուզեր իրենց ցեղային անունը, որ մեծ-մեծ քաջագործութիւններով հռչակ ու անուն հանած է անշուշտ՝ նսեմացնել կամ բարոյական անկման ենթարկել՝ քանի մը մարդեր չկորսնցնելու համար։ Ահա ինչ որ (մանաւանդ վերջինը) տէրսիմցիներու ցեղային կռիւներու էական պատճառը կկազմէ։ Այսպիսի ժամանակ կլինին նաև անհատներ, որ թշնամի ցեղէն աւարառութիւն ալ կընեն. բայց աւարուողը, որ յաղթուած կլինի անշուշտ, կդիմէ բոլորովին տարբեր ու աւելի զօրեղ ցեղապետի մը միջամտութեան. այս վերջինն ուղարկելով մարդեր յաղթողի կողմի ցեղապետին՝ կպահանջէ որ առնուած աւարն յետ դարձուի, եթէ ոչ՝ ստիպուած կլինի ոյժով միջամտել։ Աւարն, որ անշուշտ ոչխարներ և նմանօրինակ բաներ կլինին և ոչ թէ իրեղէններ, սուս ու փուս յետ կդարձնեն, միայն ցեղային քէն պահելով նոցա դէմ՝ որ վատաբար ուրիշի միջամտութիւնը խնդրեցին։ Եւ այս քէնը կշարունակուի տարիներ ու տասնեակ տարիներ, մինչև որ երկուստեք շատ մարդեր կկոտորուին ու վերջապէս խաղաղարար պարագլուխները կմեռնին, ապա թէ հաշտութիւնն առերևոյթ կկնքուի։

4. Բացի ցեղային կռիւներէն՝ միևնոյն ցեղն իր մէջ ալ ներքին կռիւներ կունենայ—աւարառութիւններ ու գողութիւններ կլինին—բայց բոլորովին ան-

հատական։ Այսպիսի ժամանակ, երբ մէկը կկողոպտուի կամ կհարստահարուի՝ կդիմէ իր ցեղապետին, որն ինչպէս դատաւոր՝ կաշխատի արդարութիւն ընել, այսինքն գողացուած բաներն յետ դարձնել կուտայ, և գողին, կամ եթէ ոճիր կայ գործին մէջ՝ ոճրագործին լաւ ծեծել կուտայ, առանց սակայն բանտարկելու զայն, (որովհետև տէրսիմցիները բանտ չունին, որ բանտարկելու ալ օրէնք լինի)։ Երբ օտարական ճանապարհորդ մը կողոպտուի ու գիտնայ, թէ զինքը կողոպտողներն որ ցեղին կպատկանէին՝ կարող է դիմել նոյն ցեղապետին և խնդրել իր կողոպուտը։ Եթէ ցեղապետն ինքը կողոպտել տուած չէ այդ օտարականին՝ ուր որ ալ լինի աւազակն՝ անտարակոյս գտնել կուտայ զայն և յետ կառնէ կողոպուտը, և եթէ ցեղապետն անտեղեակ էր կողոպուտին՝ (ըստ քրդական օրինաց՝ ամեն մէկ գողութիւն պէտք է ցեղապետին գիտցնել) ըստ կարելոյն կպատժէ՝ միայն ծեծ տալով կողոպտողին. իսկ եթէ ցեղապետն ինքը դիտմամբ կողոպտել տուած է օտարականին՝ ոչ միայն մտիկ չըներ նորա խնդիրքն, այլև ճանապարհ ձգելով՝ սպանել կուտայ զայն։

5. Տէրսիմն իր խրոխտ բնութեամբ ստեղծեր է միանգամայն խրոխտ բնակիչներ, որոնք անտառի մէջ ապրող կատաղի գազաններու նման կմռնչեն դէպի թշնամին յառաջանալով, և բարձրաբերձ լեռներու սաստկարուք մրրիկներու նման կյուզեն ու կխառնակեն չորս դին։ Նրանք վախ չունին, որովհետև նոցա կեանքն ուրիշ նպատակ չունի՝ բայց միայն *կռիւ ու արիւն*։ Նոքա դիտմամբ առիթ կուտան՝ քանի մը զինուորներ կամ ճանապարհորդ կառավարական պաշ-

տունեայ մ'սպանելով, գիտնալով հանդերձ, որ գործի հետեւանքը կարող է խիստ աղէտաբեր լինել. սակայն ապաւինելով իրենց անվեհերութեան և իրենց անառիկ դիրքերուն՝ ամենայն համարձակութեամբ հանդէս կուգան թշնամուն առաջ, և կգրաւեն լեռներու անառիկ դիրքերն ու կիրճերը՝ նոցա ճանապարհը կտրելով, և կսկսին օրերով ու շաբաթներով կռիւ մղել թշնամու դէմ, նորա կատարելագործուած հրացաններու և լայնաբերան թնդանօթներու դէմ. կը կռուին անընդհատ, միայն իւղին մէջ տապակած հորթան կրծելով, որն առաջուց պատրաստած կլինին։ Եւ երբ իրենց ռազմամթերքը կհատնի՝ կսկսին քարերով ու փայտերով հալածել թշնամուն, միանգամայն նորա կեցած տեղը, որ անտառի մէջ կլինի անշուշտ՝ հրդեհել։ Սոքա կարծես ստեղծուած են պատերազմի մէջ, ու կապրին միայն պատերազմի համար։ Վախ ըսուած բանը չգիտեն. բաւական է միայն Կռուի ձայն լսեն՝ իսկոյն և եթ կվազեն այնտեղ, եթէ երբէք կեանքերնին իսկ վրայ տան։ Կռուի մէջ մեռնել՝ նոցա ամենալաւ մահն է—ուրախութիւն է, իսկ բնական մահով մեռնել՝ ցաւ է—փոքր-հոգիութեան նշան է։

6. Տէրսիմի մէջ բնակող ցեղերն ոչ հեռագիր ունին և ոչ ալ սուրհանդակ, որոնցմով կարողանան ի պահանջել հարկին միմեանց հետ հաղորդակցիլ։ Նոցա լուրերը միշտ բերնէ բերան կտարածուին ամենուրեք Տէրսիմի մէջ։ Նոցա նամակները սոսկ բերանացի ապսպրանքներ են, որ հասարակ մարդու մը, այսինքն յատուկ կամ պատահական ճանապարհորդի մը միջոցով կուղարկեն այս կամ այն մարդուն կամ

աղային. իսկ հեռագիրը՝ լեռնէ լեռ պոռալն է։ Մէկը բարձրանալով բարձր լեռան մը և կամ բլրի մը վրայ՝ (նայելով այլևս, թէ մինչև ուր պիտի տեսնայ) այնտեղէն կսկսի բարձրաձայն պոռալ ու արտասանել իր ուղածը. և այդ ձայնն օդի մէջէն սուրանալով՝ կարծես հրեղէն ֆշանքի մը պէս արձագանգ գտնելով լեռներուն մէջ՝ կանցնի կերթայ հեռուն ու շատ հեռուն, մինչև իր ցանկացած տեղը,—և փոխադարձաբար։ Այսպէս մանաւանդ վտանգի ժամանակ, երբ մէկն օգնութեան պիտի կանչէ իր հեռաւոր ցեղակցին կամ դաշնակից կամ բարեկամ ցեղին՝ լեռնէ լեռ պոռալով, այսինքն իր ուղած խօսքերը ցեղ առ ցեղ և սահման առ սահման (ձայնի հաղորդակցութեան միջոցով) հաղորդելով՝ հինգ բոպէի մէջ դայն Ցէրսիմի մէկ ծայրէն մինչև միւս ծայրը (որ 5—6 օրուան ճանապարհ է) կհասցնէ։ Եթէ Ցէրսիմի արևելեան սահմանի վրայ որևէ դէպք մը և կամ ամենաչնչին բան մը պատահած է՝ այդ լուրը ըերնէ բերան, աղաւաղումներով կամ յաւելումներով, մինչև երեկոյ կհասնէ Ցէրսիմի արևմտեան սահմանի վրայ և բոլոր կողմերը։ Զարմանալի արագութեամբ կշրջին լուրերը, և ամենաչնչին բաներու համար իսկ նոքա կհետաքրքրքրուին։ Մէկն առաւօտեան, դեռ իր երեսը չլուացած՝ կհետաքրքրքրուի հեռաւոր և մօտակայ քաղաքներու և գիւղերու մասին տեղեկութիւններ ունենալ, կհետաքրքրքրուի նամանաւանդ քաղաքական լուրերով, այսինքն կուզէ իմանալ, թէ արդեօք օսմանեան կառավարութիւնն ինչ ծրագիր ունի Ցէրսիմի մասին, նոքա զինուորականութիւնն հանդարտ է, թէ զէնքի կոչուած է, և այլն։ Այսպէս ամեն ինչով կհետաքրքր-

քրուին։ Եւ մի անծանօթ ճանճ իսկ որ պզզայ Տէրսիմի սահմաններուն վրայ կամ մէջը՝ հետաքրքիր են իմանալ, թէ նա ինչ է և ինչու պզզաց, ու ամենաթեթև կասկած մ'իսկ բաւական է նոցա բոլորին ի ղէն կոչելու, որպէս թէ արդէն թշնամիներով պաշարուած են կամ պաշարուելու վրայ են։

ՏԷՐՍԻՄՑԻՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐՆ ՕՍՄԱՆՑԻՆԵՐՈՒ ՀԵՏ (1828—1895 Թ.)

«Ամեն հեղ, որ Տաճիկը ծեծիւ (պատերազմ) էրած է Մոսկովին (Ռուսին) հետ՝ ավալ-ավալ (առաջ-առաջ) իրեն ուժը չափած է տէրսիմցոց վրայ. ու սողը (վերջը) ե(ր)ը որ Մոսկովէն յաղթուած է՝ իրեն հայիֆն (վրէժ) առեր է կէնէ (նորէն) տէրսիմցոցմէն»,—կըսեն ժողովրդական պատմիչները։

Մենք Տէրսիմի անցեալ կեանքի մասին գիտենք գրեթէ ոչ աւելի՝ քան կէս դար, որը պարզ, որն աղօտ, որ աւանդութիւններով կպատմուի Տէրսիմի դրացի ժողովրդեան մէջ. իսկ անկէ անդին գրեթէ բոլորովին անտեղեակ ենք։ Միայն կ'յիշենք 120 տարեկան ծերունի մեծ-մօրս պատմած զանազան պատմութիւններն ու պատկերները, որ յաճախ կպատմէր նա Տէրսիմի կեանքէն։ Նա Տէրսիմի պէկերուն շատ անգամ «թագաւոր» կանուանէր, որմէ հետևցնելով կարող ենք եզրակացնել, որ կէս դարէն անդին Տէրսիմն ունի եղեր բոլորովին ինքնիշխանութիւն մը,

առանց սակայն կազմակերպուած օրէնքներով (ինչպէս նաև այժմ) կառավարութիւն մը ճանչցուելու այն, և միշտ զբաղուած է եղեր ներքին ցեղային կռիւներով։

Տէրսիմի—եթէ կարելի է այսպէս ըսել—քաղաքական պատմական կեանքը կսկսի 1828-էն, որովհետև Հայաստան մինչև այդ ժամանակ ենիչէրիական կառավարութիւն մը ունէր, երբ կատարեալ անիշխանութիւն կտիրէր սուլթաններու հաւանութեամբ։ Բայց Ռուսիան երբ ազգերու ազատութեան համար առաջին անգամ պատերազմ հրատարակեց օսմանեան խալիֆայական գահուն վրայ բազմող Սուլթան Մահմուտին դէմ և ամենայն քաջարիութեամբ ջարդ ու փշուր ըրաւ նորա ոյժը, միանգամայն անկախ հրատարակելով Յունաստանը՝—սուլթան Մահմուտն զգաց, որ իր լայնածաւալ տէրութեան մէջ բնակող զանազան մանր մունր ազգութիւնները շուտով կարող են Յունաստանի օրինակին հետևել, որով խալիֆայական սրբազան գահը կենթարկուի կորստեան վտանգին [1]։ Հետևաբար այդ շարագուշակ փորձութենէն ազատուելու

1) Բոլոր ժամանակակից մարդիկ ընդհանրապէս կըսեն, թէ երբ սուլթան Մահմուտ ռուսներէն յաղթուելուց յետոյ սաստիկ ՝մտահոգութեան մէջ էր՝ երազ մը տեսաւ, իբր թէ Կ. Պոլսոյ մէջ կատաղի վիշապ մը մռնչելով ու ֆշշալով դէպի Եըլտըզ-Քէօշկ կմօտենայ. յանկարծ փոթորիկ մը կբարձրանայ, վիշապն օդին մէջ կհանէ, որտեղ նա երկու մասի բաժնուելով՝ կէսը (պոչի կողմը) կընկնի Միջերկրական ծովուն մէջ ու կխորասուզուի, իսկ միւս կէսն ալ (գլխի կողմը) կերթայ կընկնի Եփրատի կողմը, ուր հաւերը կացահարելով զայն կանհետացնեն։ Երազահաններն այս բանը կմեկնեն, ասելով, թէ վիշապն՝ ինքը սուլթանն է, նորա պոչի կողմը՝

և իր դահը միշտ անսասան պահելու դիտաւորութեամբ, անմիջապէս դուրս տուաւ բարձրագոյն հրովարտակ մը, որով կհրամայուէր կոտորել ու կրօնափոխ ընել օսմանեան տէրութեան մէջ ապրող բոլոր ազգերը։ Բայց չգիտենք ինչ վայրկենական փոփոխութեան ենթարկուելով՝ սոյն անգութ հրովարտակը փոխեց կայսերական բոլոր նահանգներու բարենորոգմանց ողոր-

---

Եւրոպական Թուրքիան է, որ պիտի ընկղմի Միջերկրականի մէջ, այսինքն պիտի գրաւուի այլազգիներէ. իսկ միւս կէսը, որ գլուխն է՝ Ասիական Թուրքիոն է, որը պիտի լափեն Եփրատի կողմերը բնակող ազգերը, այսինքն այդ կողմի հպատակ ազգերը գլուխ պիտի բարձրացնեն, որով Օսմանեան խալիֆայութիւնը խստատ պիտի տապալուի ու կորչի։ Եւ որովհետև երազի մէջ հաւ տեսնելը կնշանակէ քրիստոնեայ՝ ուստի սուլթան Մահմուտն այս զարհուրելի վտանգին առաջն առնելու համար դուրս տուաւ բարձրագոյն իրատէ (հրովարտակ) մը, որով կհրամայուէր կոտորել այն բոլոր քրիստոնեաները, որ կընակէին Եփրատի ամեն կողմերը։ Ոմանք սուլթանին խորհուրդ են տուել, որ եթէ այն իրատէն շուտով իրագործէ՝ երազն իսկոյն ևեթ կկատարուի, իսկ եթէ յետաձգէ կամ բոլորովին յետ թողու՝ թերևս երազն ուշանայ կամ բոլորովին սուտ լինի։ Սուլթանը կհամոզուի։ Եւ որպէսզի իր հրամանն յետ չառնուի՝ քրիստոնեան—որն անշուշտ իրենց հասկացողութեամբ հայն էր—հաւի փոխեցին, իբր թէ սուլթանը «հաւ» ըսած ժամանակ՝ զրագիրները «հայ» հասկցեր են։ Որմէ յետոյ Եփրատի բոլոր կողմերը գտնուող հաւերը ջարդեցին, ըսելով թէ երկինքէն ժժտահար (վիշապ) մ'իջած է մանր-մունր կոբեկներուն պէս, և հաւերը կերած լինելով նոցա՝ կարող են հաղարաւոր ժժտահարներ ծնուել, որոնք աշխարհ գալով՝ կարող են բոլոր մարդկանց ուտել ու վերջացնել։—Այս դէպքը ժողովրդական աւանդութեան մէջ մեծ տեղ մը բռնած է, որու մասին մինչև այսօր ալ ապշութեամբ կխօսին։

մած ծրագրի, որու գլխաւոր կէտերն էին—1) բառնալ կայսերական բոլոր նահանգներու մէջ տիրող ենիչէրիութիւնը, 2) կազմակերպել երկրի բոլոր ոյժերը և 3) մացնել կառավարութեան բոլոր շրջաններու մէջ նոր օրէնքներ ու կանոններ (նիզամ), որովհետև մինչև այդ ժամանակ բոլոր նահանգները լինելով մոլլաներու և շէյխերու իրաւասութեան տակ՝ կը կառավարուէին սոսկ կրօնական դատարաններով, այսինքն «շարահաթ»ի օրէնքներով ու կանոններով, Ղուրանի ոգուն համաձայն։

Սոյն բարեկարգման ծրագիրը գործադրող ոյժը, որ բաղկացած էր աւելի քան երկու բանակ կանոնաւոր զօրքերէ, երկու ճիւղի բաժնուեցաւ՝ Կ. Պոլսէն դէպի կայսերական նահանգներն ուղարկելու, այն է՝ մէկը Ռաշիտ փաշայի առաջնորդութեամբ Սև Ծովէն դուրս եկաւ ի Սամսոն, Սեբաստիա, Արարկիր. իսկ միւս բանակը, որ կայսերական թիկնապահ փաշայի մը առաջնորդութեամբ Տրապիզոնէն Երզնկա և Կարնոյ վրայով դէպի Վասպուրական յառաջացաւ՝ ճանապարհին մեծ ընդդիմութեան մը հանդիպեցաւ. դա տէրսիմցիներն էին, որ Երզնկայի և Քամախի կողմերը կասաղի ընդդիմութիւն ցոյց տուին օսմանեան բարեկարգիչ բանակին։

Այդ ժամանակ Խուզուշանի իշխան Զահ-Հիւսէյնի պէկ Ա.-ը, որ ազնուական տոհմէ սերած լինելուն և միանգամայն իր բացառիկ կառավարչական ընդունակութեան ու քաջութեանը պատճառով հանուր Տէրսիմի տէր և իշխան կճանչցուէր—կազմակերպեց ամբողջ տէրսիմցիներու թարմ ոյժերը և ամենայն համարձակութեամբ հանդէս եկաւ թշնամուն

դէմ, որով կատաղի ընդհարումն յամառութեամբ շարունակուեցաւ երկուստեք և ըստ աւանդութեան տեւեց մինչև մէկ ամիս։ Օսմանեան բանակի հրամանատարը վաշան տեսնելով, որ իր ունեցած այժով ոչ միայն տէրսիմցի լեռնականներուն չէ կարող նուաճել, այլ և ինքը հետզհետէ տկարանալով կնուաճուի, որով իր մեծ նպատակէն պիտի չեղուի՝ ստիպուեցաւ թողուլ տէրսիմցիներն իրենց վիճակին մէջ՝ ուրիշ առթիւ մը հպատակեցնելու նոցա, և ինքն իր կարծածէն աւելի կորուստ տալով՝ հեռացաւ գնաց Տէրսիմէն։ Իսկ տէրսիմցիները, որ մինչև այդ ժամանակ երբէք չէին ակնկալեր այդպիսի մեծ ու կանոնաւոր արշաւանք մը իրենց վրայ՝ յանկարծ ինքնագիտակցութեան եկան, գուշակելով միանգամայն ապագայի գալիքը, որ արիւնահեղ մեծամեծ ընդհարումներ կարող են պատահել իրենց և օսմանցիներու միջև, ուստի իրենց կարողութեան չափով սկսեցին պատրաստուել, առանց սակայն կանոնաւորապէս կազմակերպուելու։

Անցան տարիներ, սակայն օսմանեան պետութիւնը միշտ աչքի առաջ ունէր, ի միջի այլոց, ապըստամբ Տէրսիմը, որուն համար երբեմն երևակայեր էր, թէ նոքա մահմետականներ են և հարկը պահանջած ժամանակը պիտի օգնեն իրեն,—բայց ի զուր։ Նոքա, տէրսիմցիները, ոչ միայն չէին օգներ օսմանցիներուն, այլ և կվնասէին, թշնամի էին նոցա, ի մի բան՝ կարող էին յարմար առիթին արիւնով ողողել շրջակայ գաւառները և ամբողջ երկիրն աղմկել։ Սուլթանը կուզէր փորձ մ'ընել Տէրսիմը հպատակեցնելու. բայց ինչպէս կարող էր ընել այդ, քանի որ լսած էր Տէր-

սիմի սոսկավիթխար լեռներու անառիկ դիրքի և նորա կուսական անթափանցելի անտառների մասին, որոնց մէջ անկարելի էր կանոնաւոր կամ անկանոն զօրք մղել. և քանի որ նա փորձով տեսած էր Զահ-Հիւսէյնի պէկ Ա.-ի անվեհեր քաջութիւնը և նորա քաջ ռազմագէտ լինելը, որով նա մեծ հեղինակութիւն կվայլէր ամբողջ Տէրսիմի մէջ՝ ուստի օսմանեան կառավարութիւնը կսպասէր յարմար առիթի մը, որը վերջապէս ներկայացաւ Զահ-Հիւսէյնի պէկ Ա.-ի մահովը, որուն յաջորդեր էր տղան Ալի պէկը։

Ճիշտ այս ժամանակներն Ռուսիոյ և Թուրքիոյ մէջ նորէն պատերազմ հրատարակուեցաւ (1855—1856)։ Եւ օսմանեան բանակը, որ Հայաստանի մէջէն պիտի յառաջանար դէպի արևելք, Ռուսիոյ դէմ՝ նախ քան պատերազմի դաշտը հասնելը, անակնկալ կերպով պաշարեց Տէրսիմը և սկսեց իր ոյժը փորձել—ռմբակոծել լեռները և հրդեհել անտառները։ Իսկ Ալի-պէկը, որ իր հօր նման կառավարիչ ու միանգամայն պատերազմող քաջ ռազմագէտ չէր, չկարողացաւ պէտք եղածին չափ դիմադրութիւն ցոյց տալ։ Նա տեղի տալով օսմանեան բանակին՝ ինքն իր մարդերով քաշուեցաւ դէպի Խութի-Տէրէսին և ամրացաւ Տուժիք-Պապա լեռան վրայ, ուր, տեղւոյն անառիկութեան շնորհիւ, պաշտպանուեցաւ մինչև վերջը։ Իսկ օսմանեան բանակը մտնելով Տէրսիմ—(միայն ստորոտները, այսինքն դաշտային մասերը, ուր խիտ անտառներ չկան)—աւերեց և հրդեհեց ամեն ինչ որ կար։ Հրդեհեց նաև Ալի-բէկի շքեղ ապարանքն ու տոհմային գերեզմանատունը, որ սակայն ճաշակով զարդարուած՝ ամենաշքեղ տեսք ունէր։ Օսմանեան բանակն ամենուրեք

Տէրսիմի ստորոտներն աւերակութիւններ անելով յառաջացաւ դէպի այն կողմը, ուր ապաստանած էին տէրսիմցիներու մեծագոյն մասը։ Սակայն փոխանակ յաղթելու՝ ինքը յաղթուեցաւ և յետ նահանջեց, որմէ յետոյ տեսնելով, որ այլևս ի զուր է յամառութեամբ զբաղուել այդ կիսավայրենի լեռնականներուն հետ, որովհետև մեծ թշնամին, Ռուսը, դեռ յետևն է՝ թող տուաւ նոցա օձիքը, բաւականանալով միայն գրաւած տեղերով, որոնց մէջ անմիջապէս հաստատեց թուրք ոստիկանութիւն և կառավարիչներ։ Բայց երբ բանակը, թողնելով Տէրսիմ, յառաջացաւ դէպի արևելք՝ սոյն նորահաստատ կառավարութեան պաշտօնեաներն այն ոստիճան հալածանք կրեցին լեռնական քրդերէն, որ ոմանք փախան, իրենց շոր կեանքն ազատելու համար, ոմանք բոլորովին զոհ դարձան քրդերու յարձակումներուն և ոմանք ալ հազիւ հազ իրենց գոյութիւնը կարողացան պահպանել։ Տէրսիմը դարձեալ շարունակեց իր ապստամբ վարմունքը ու այս անգամ սկսեց մնասել իր շրջակայ գաւառներուն ու գիւղերուն, որոնց մէջ կբնակէին օսմանցիներ կամ մահմեդական քրդեր. կմնասէին նաև այն հայերուն, որոնք օսմանցիներուն աջակցութիւն ցոյց կուտային։ Տէրսիմցիներու այս սոսկալի ահէն՝ Տէրսիմի շրջականերէն ոչ մի կարաւան, ոչ մի ճանապարհորդ կամ փոքրաթիւ զինուորականութիւն չէր կարող անցնել։ Նոքա բռնած էին Տէրսիմի բոլոր կիրճերն ու կարևոր ճանապարհները և անինայ կերպով կկողոպտէին ու կխողխողէին իւրաքանչիւր, մանաւանդ եւրոպական տարազ կրող օտարական, (ինչպէս նաև մինչև հիմայ), որ կյանդգնէր Տէրսիմի սահման-

ներու մօտերովն անցնել։ Հար-Սանճագի կամ Խարաչորի հայ գիւղացիներէն շատերը, որոնք օսմանցիներուն աջակցեր էին՝ ենթարկուեցան զարհուրելի հալածանքներու տէրսիմցի քրդերու կողմէն, որմէ յետոյ կամայ-ակամայ ստիպուեցան թողուլ իրենց ծննդավայրը և գաղթել դէպի շրջակայ գաւառները, որոնց մէջ հայ ազգաբնակութիւնը մասամբ հանգստութիւն կվայելէր. նոյնպէս նաև շատ մահմեդական քրդեր ու ղըզըլբաշներ ենթարկուելով սոսկալի հալածանքներու,—որովհետև օսմանցիներու կողմն էին բուներ,—գաղթեցին դէպի Քարբերդ և այլ կողմեր։ [1])

Տէրսիմն այսպէս հարստահարիչ դեր մը կատարեց, մինչև որ երկու թշնամի պետութիւններու (Թուրք և Ռուս) մէջ հաշտութեան դաշն կապուեցաւ։ Ու երբ օսմանեան բանակը վերադարձաւ դէպի Հայաստան՝ կրկին զբաղուեցաւ տէրսիմցի լեռնականներով, որովհետև այս վերջինները կատաղի գայլերու նման չորս դին կաղմկէին և սոսկալի կերպով կկըռուէին։ Բայց օսմանցիներու ոյժը, մանաւանդ այն ջախջախուած ու խորտակուած ոյժը, անբաւական լինելով Տէրսիմը բոլորովին նուաճելու՝ աշխատեցաւ միայն նախօրօք գրաւած տեղերը կրկին ձեռք բերել և նոցա մէջ կրկին վերահաստատել օսմանեան կառավարութիւն։ Եւ այդ ընելու համար նա մեծ դժուա-

---

1) Քարբերդու Ապարհէր թաղին, որ քաղաքի յետ ընկած, բայց ամենամեծ թաղերէն մէկն է, բնակիչներն ամբողջ տէրսիմցի քրդեր են՝ սոյն ժամանակէն զաղթած։ Իսկ հիւսէյնիկ գիւղը, որ Քարբերդէն կէս ժամ հեռու է՝ ունի նաև Խարաչոր անունով թաղ մը, ուր նոյնպէս բնակողներն ամբողջ տէրսիմցի, այսինքն Հար-Սանճագի հայեր են։

ղութեան չհանդիպեցաւ, երբ արդէն Ալի պէկն իր հպատակութիւնն յայտնելով՝ վերադարձաւ իր աւերուած, մոխրակոյտ դարձած հայրենական ապարանքը և սկսեց նորէն շինել ու շիտակել դայն։ Բայց դորանով պէկը իր նախկին հեղինակութիւնը կորսնցուց ամբողջ տէրսիմցիներու առջև ու եղաւ սոսկ պէկ մը՝ ապրող իր ապարանքին մէջ։

Այդ ժամանակ օսմանցիներն առիթէն օգտուելով՝ Տէրսիմի հպատակուած, մանաւանդ Խուդուշանի կողմերէն 2—3 հազար խեղճ ու կրակ քրդեր բռնելով՝ Տրապզոնի գծով շղթայակապ քշեցին դէպի Կ. Պոլիս, որպէս պատերազմի մէջ բռնուած գերիներ։ Իսկ մնացած քրդերը, որ իբր թէ Ալի-պէկին հետ միասին հպատակութիւն ընդունած էին, տեսնելով այդ քրդերուն դէպի Կ. Պոլիս քշուելը, որոնց մասին շշուկ կար, թէ բոլորը մէկէն ծովուն մէջ պիտի «պալլը-էմինի» ընեն, թող տուին Ալի-պէկը, թող տուին տուն-տեղ և ամեն ինչ և քաշուեցան գնացին ամրացան Խութի-Տէրէսին և Տուժիքի վրայ, որտեղ ապրողները տակաւին իրենց անկախութիւնը կպահպանէին, միացան նոցա հետ ու սկսեցին աղմկել, ապստամբել այս ու այն կողմ։

Սոյն դրութեան մէջ անցան երկար տարիներ, մինչև որ Ալի-պէկը մեռաւ և նորան յաջորդեց իր տղան Շահ-Հիւսէյնի պէկ Բ.-ը։

Շահ-Հիւսէյնի պէկ Բ.-ն իր երիտասարդութեան ժամանակ բաւական տեղեր ուղևորած էր և հայաբնակ գաւառներու մէջ բաւականին աղդեցիկ թուրք և հայ բարեկամներ ունէր, որոնց շնորհիւ քաղաքական հանգամանքներուն լաւ ծանօթ էր։ Նա լսելով

իր պապի քաջագործութիւններն ու նորա ունեցած ինքնիշխանութիւնը՝ նախանձախնդիր էր կրկին ձեռք բերել բացարձակ ինքնիշխանութիւն Տէրսիմի վրայ. բայց գինքը շրջապատող հանգամանքներն ի նկատ առնելով՝ կհամբերէր, միանգամայն բանակցութիւններ կընէր և հաստատուն դաշն կնքելու նախապատրաստութիւններ կտեսնէր։ .

Եւ այսպէս մինչդեռ Շահ-Հիւսէյնի պէկ Բ.-ն իր յայտնի քաղաքականութեամբ կպատրաստուէր՝ յանկարծ քաղաքական աշխարհը յուզուեցաւ և երկու պետութիւններու մէջ նորէն պատերազմ հրատարակուեցաւ (1877 թ. Թուրք-Ռուսական պատերազմ)։ Օսմանեան կառավարութիւնն իր վաղուց փայփայած ու հպատակ կարծած Տէրսիմէն պատերազմի համար հարկ կամ զօրք պահանջեց։ Բայց Շահ-Հիւսէյնի պէկ Բ.-ը, որ միաք չունէր հարկ կամ զօրք տալու՝ սկսեց պայմաններ առաջարկել սուլթանին, թէ «մենք պատերազմի համար հարկ չենք կարող տալ. իսկ զօրք ալ կուտանք միայն այն պայմանով, որ տէրսիմցի զօրքերուն մէջ չխառնուին օտար (օսմանցի) ոչ զինուորներ և ոչ զօրավարներ, այլ Տէրսիմն առանձին բանակ ունենայ, որու ընդհանուր հրամանատարութիւնը ինձ յանձնուի»։ Սուլթանը, որ իրեն հպատակ կարծուածներուն հետ այդպէս պայմաններով խօսելու շատ գլուխ չունէր՝ չէր կարող ընդունիլ և միանգամայն չէր ալ կարող մերժել, որովհետև ժամանակն արդէն ուշ էր։ Նորա համար հարկաւոր էր ոյժ, որով կարողանար ռուսական սոսկավիթխար բանակին դէմ կենալ։ Ուրիշ միջոց չկար. վերջապէս նա ընդունեց պայմանը։ Բայց այդ պայմանը, բացի Շահ-Հիւսէյնի

պէկ Բ.-էն՝ տէրսիմցիները չընդունեցին։ Նոքա խսպառ մերժեցին, ըսելով որ «մենք ոչ հարկ կուտանք և ոչ ալ զօրք, որովհետև պարտական չենք։ Եթէ այդ պատերազմը մեր հայրենիքի պաշտպանութեան համար է՝ իր (սուլթանի) պաշտպանութեան երբէք պէտք չունինք. մենք մեր հայրենիքն առանց սուլթանին ալ կարող ենք պաշտպանել...»։ Տէրսիմցի բոլոր ցեղապետները, որ ժամանակի ընթացքով համակրած էին Զահ-Հիւսէյնի պէկ Բ.-ին ու նրան ճանչցած էին որպէս աւագագոյն ցեղապետ ընդհանուր Տէրսիմի՝ բոլորովին մերժեցին նրան և սկսեցին իրենք առանձին գործել, վնասակար համարելով Զահ-Հիւսէյնի պէկ Բ.-ի բռնած ուղղութիւնը։ Խուզուչանի քրդերէն մէկ մասն ալ նոյնպէս մերժելով Զահ-Հիւսէյնի պէկ Բ.-ին՝ միացան միւս ցեղապետներուն հետ, և սկսեցին ամենքը միասին պատերազմի պատրաստուել. որմէ յետոյ Զահ-Հիւսէյին անճար մնալով բոլորովին՝ հաղիւ-հազ կարողացաւ միայն Խուզուչանի մէջէն մօտաւորապէս 10,000 զօրք հաւաքել և գալ դէպի Կարին՝ միայն պատերազմի ժամանակ քաղաքը պաշտպանելու համար, և այդպէս ալ եղաւ։ Իսկ օսմանցիները Տէրսիմի ոյժերը պառակտած կարծելով՝ յարմար ժամանակ սեպեցին նուաճել զայն և բռնի կերպով հարկ և զօրք առնել անկէ, որ սակայն առիթ տուեց զարհուրելի արիւնհեղութիւններու, որ տեւեց աւելի քան մէկ ու կէս ամիս։

Մինչդեռ օսմանցիները մէկ կողմէն իրենց փոքրիկ ոյժերով Տէրսիմի այլևայլ ցեղերուն դէմ կռիւ կընէին, և միւս կողմէն չորրորդ բանակը շարժման մէջ կդնէին ամբողջ Տէրսիմի լեռնաշղթան պաշարե-

լու դիտաւորութեամբ՝ միւս կողմէն ալ տէրսիմցի-ները թէ օսմանեան փոքրաթիւ զինուորներու դէմ կռիւ կմղէին և թէ կպատրաստուէին աւելի մեծ-մեծ ընդհարումներու համար։ Նոքա իրենց այն բոլոր գիւղերն ու աւանները, որոնք ռազմական զիրք չունէին՝ դատարկեցին և «օյուկով ու ճուճուկով, մալով ու միւլքով» ամրացան Տուժիքի և Խութիի կողմերը։ Նոքա իրենց գլխաւոր ոյժը կենդրոնացուցին Տուժիք-Պապայ լեռան վրայ, որովհետև այնպէս համոզուած էին, թէ իրենք նեղն ընկած ժամանակ՝ «Տիդկին-Պապան» իր աներևոյթ և հրաշալի թնդանօթներով պիտի օգնէ իրենց՝ հալածելով թշնամուն։ Իսկ Խութի-Տէրէսին ամրացուցին՝ աւելի ևս սև բոպէներու համար։

Եւ այսպէս ամբողջ մէկ-երկու շաբաթ տէրսիմցիները թէ պատրաստուեցան և թէ կռուեցան, մինչև որ օսմանեան չորրորդ բանակը վերջնականապէս պաշարեց Տէրսիմը բոլոր կողմերէն և սկսեց անխնայ կերպով ռմբակոծել ու հրդեհել ամենուրեք, որ բնակութիւն կար։

Խոզաթի կողմը գտնուող օսմանեան զօրաբաժինն, ուժով լինելուն և մանաւանդ Տուժիքի գիւղերէն շատերը դատարկուած լինելուն համար, ամենայն համարձակութեամբ ու յաջողութեամբ, բոլոր գիւղերը վառելով՝ անարգելք հասաւ Տուժիք-Պապայ լեռան ստորոտը, ուրկէ վեր՝ դէպի լեռան գագաթն ելլել փորձեց. բայց հակառակ իր այնչափ բազմութեանը՝ սոսկալի ջարդ մը կրեց Տուժիքի ստորին լանջերուն վրայ, որով ստիպուեցաւ զինադադար ընել, մանաւանդ որ գիշերը վրայ հասաւ։ Բայց հետևեալ

առաւօտուն կռիւը շարունակելով՝ սկսեց կանոնաւոր ռմբաձգութիւն դէպի լեառը. իսկ Տուժիքի վրայ ապաստանողներն ամենայն անվհերութեամբ պատասխանեցին օսմանցիներու հրաշէկ ռումբերուն։

Միօրինակ յամառ կռիւը տեւեց ամբողջ երեք օր և երեք գիշեր, մինչև որ Տուժիքի քրդերն անճար մնալով՝ օգնութեան կանչեցին իրենց դրացի ցեղերն։ Բայց դրացի ցեղերը, որ նոյնպէս տաք կռուի մէջ էին օսմանցիներու հետ, ոչ միայն չէին կարող օգնութեան հասնել, այլև իրենք օգնութեան կկարօտէին. հետևաբար, Տուժիքի վրայ ապաստանողները լքուեցան և ոմանք մինչև-իսկ անձնատուր լինելու փորձեր ըրին։

Այս միջոցին Խռանցիները, որ Միրագեաններու խորհրդով իրենց գիւղերէն չէին հեռացեր՝ գոնէ պարտութեան առաջին աստիճանին վրայ ոտք չի դրած լինելու համար, իրենց գիւղերուն մէջ պաշարուած՝ միահամուռ կերպով—Խռանցիներն ու Միրագեանները [1]) —կկռուէին օսմանցի զինուորներու դէմ։ Բայց երբ լսեցին, որ տուժիքցիները սոսկալի կերպով պաշարուած լինելով, օգնութեան կկարօտին, որոնց մէջն էին նաև Կուրիշանցիները (Տէրսիմի կրօնաւորները), փութացին շուտով օգնութեան հասնել նոցա, որպէս զի նոքա անձնատուր չլինին, որովհետև Տուժիքն անձնատուր լինելուց յետոյ՝ ամբողջ Տէրսիմը գրեթէ նուաճուած կհամարուէր։

---

[1]) Թէ ինչ գործ ունեցեր են Միրագեանները Տէրսիմի նախորդ պատերազմներուն մէջ՝ մենք այդ չգիտենք, որովհետև մինչև այստեղ ժողովրդական պատմիչները բոլորովին կլռեն այդ մասին։

Միրագեաններն ու Խռանցիներն իրենց գիւղերու պաշտպանութիւնն յանձնելով իրենց կանանց և փոքրաթիւ երիտասարդ խմբի մը, իրենք բոլորը միասին դուրս եկան և սկսեցին մէկ կողմէն կռուել իրենց վրայ յարձակուող օսմանցի զինուորներուն դէմ, իսկ միւս կողմէն ալ խուճապ-խուճապ յառաջանալ դէպի Տուժիք-Պապայ լեռը։ Սոքա արդէն օսմանցիներուն հալածելով հասեր էին մինչև Փախայ դաշտը, երբ յանկարծ օսմանցի զինուորներն անակնկալ կերպով մէկ-երկու վաշտ զինուորներ օգնութիւն ստացան, որով վերակազմելով իրենց խորտակուած ոյժը՝ սկսեցին ուժգին կերպով պատերազմել, և այդտեղ տեղի ունեցաւ այն զարհուրելի ճակատամարտը Տէրսիմի, որու մասին մինչև այսօր ալ կխօսուի ժողովրդեան, մանաւանդ տէրսիմցիներու մէջ, որպէս առաջինը և գուցէ վերջինը։

Խռանցի քրդերը, տեսնելով օսմանցիներու կատաղութիւնը, որ նոքա նոր ոյժ ստանալով սկսեցին պատերազմել՝ թող տուին Միրագեանները Փախայ դաշտին մէջ մենակ ու իրենք փախան չեռ, դէպի իրենց գիւղերը, ուր արդէն ոչ մի հրացանաձգութիւն չէր պատահեր իրենց հեռանալուց յետոյ։ Իսկ Միրագեանները, տեսնելով որ քրդերն իրենց մենակ թողուցին՝ օգնութեան կանչեցին իրենց կանանց ու տղամարդերուն, որոնք գիւղերու պաշտպանութեան համար մնացեր էին գիւղերու մէջ, ու իրենք կռիւը շարունակեցին մինչև նոցա օգնութեան հասնելը։ Սոցա կառաջնորդէր քաջ Կիրօն (?), որ կռուի ամենատաք ժամանակ ձեռք ձգած էր հրամանատար փաշայի ձին, որով յառաջ խիղախելով՝ գոչեց. «Տղաք,

ասպէս ըլ մնել, անպէս ըլ մնել. ըմը պէլքէ (կարելի է) ասպէս աղատի՛լ... եկէք, մի վախնաք»։

Կիրոյի օրինակին հետևեցան նաև ամբողջ Միրագեանները, որ այդ տեղն էին։ Կատաղի կռիւը շարունակուեցաւ մօտ 5—6 ժամ, մինչև որ օսմանցիները տեղի տուին Միրագեաններուն։ Օսմանցի զինուորներէն շատերն իրենց զօրավարներով միասին խոյս տուին, մէկ մասն ալ՝ ոտաբոպիկ սկսեց կոտրուելով-կոտրուելով փախչել [1]։ Խուանցի քրդերը տեսնելով, որ օսմանցիները տեղի տուին՝ իրենք ևս նոր պաշար առնելով իրենց հետ, «դուա՜ն, դուա՜ն» աղաղակներով օգնութեան հասան Միրագեաններուն և մեծ ոյժով հալածեցին օսմանցիներուն մինչև Տուժիքի ստորոտները, ուր սոսկալի տեսարան մը տեղի ունեցաւ. այն է՝ հալածուած զինուորները Տուժիքի ստորոտը հասնելով՝ միացան այնտեղ պատրաստ կանգնած բանակին հետ, որոնք արդէն զրաղուած

---

[1]) Այս յաղթութեան մասին, երբ օսմանեան բանակի հրամանատար փաշան խոյս կուտայ՝ Միրագեաններն երգեր են հետևեալը, որն անշուշտ կռուէն յետոյ յօրինուած է.—

«Խըլըծըմըզ վուռուբխ տասայ,
Տաս եառըլտի պաստան պասայ,
Նէ՞բա խաղարսըն, Օսման փասայ,
Միրազլար տուր կալան խարսիայ»։

Այսինքն՝

Թրերնիս զարկինք ժայռին,
Ժայռը ճեղքաւ գլխէ ցգլուխ.
Ո՞ւր կը փախչիս, Օսման փաշա,
Միրագեաններն են դէմդ գալողը։

Այս երգը բաղկացած է 25—30 տուներէ, որը ամբողջութեամբ մէջ բերել աւելորդ սեպեցինք։

էին տուժիքցիներով և սկսեցին պատերազմել թէ այս և թէ այն կողմ։ Օսմանեան բանակը մնաց երկու կրակի մէջ։ Հրամանատարներու ռազմական հանճարն այլևս չէր անցնէր այդ սոսկավիթխար անտառապատ լեռներու մէջ։ Նոցա ամեն մէկ ռազմական շարժումը, որ սրաձայն փողերով կհրամայուէր՝ բոլորովին զուր էր, որովհետև զօրավարները կորսնցուցեր էին իրենց սովորական ընթացքը, և զինուորները շփոթուած ու խառնուած էին միմեանց։ Վերջապէս օսմանցիները խոշորկէկ ջարդ մ'ուտելով՝ խառն ի խուռն փախան, ամեն ոք իր շոր գլուխն ազատելու համար։

Այս փառաւոր յաղթութիւնը տանելուց յետոյ Խռանցիներն ու Միրազեանները քաշուեցան գնացին յետ, դէպի իրենց գիւղերը, իսկ տուժիքցիներն սկսեցին նորէն պատրաստուել գալիքին համար։

«Յաղթութեան օրէն միայն հինգ օր էր անցել,—կպատմէր յաճախ՝ կռուին մասնակցող սէյիդներէն մէկը,—երբ օսմանեան բանակը կրկին վերադարձաւ մեր (այսինքն Տուժիքի) վրայ և սկսեց կատաղի կերպով յարձակում ընել։ Թնդանօթի ռումբերն յաճախ կյաջողէին ձգել լեռան վրայ, բայց բոլորովին անվնաս էր։ Այս վերջին կռիւը տևեց ամբողջ 15 օր. ոչ մենք յաղթուեցանք և ոչ ալ նոքա, այլ երկուսնէք կռիւն յամառութեամբ կմղուէր։ Բայց երբ նոքա տեսան, որ կրակ ընելով մեր վրայ անկարելի է յաղթել՝ յարմար սեպեցին Տիզկինը պաշարման ենթարկել, որով զմեզ անճար թողնելով, այսինքն անօթի ու ծարաւ թողնելով՝ պէտք է ստիպէին անձնատուր լինել։ Սակայն մեր ուտելու, խմելու, հագնելու և վա-

ռելու պաշարն այնքան շատ էր, որ մեզ համար տարիներով կբաւէր։ Արտաքին յարաբերութեան երբէք կարօտ չէինք, որովհետև Տիզկին-Պապային վրայ կայ ճոխ բուսականութիւն, առատ աղբիւրներ, մարգագետիններ և այլն և այլն, որոնցմով կարող էինք մեր բոլոր պէտքերն հոգալ, մեր ոչխարներն—որ մեզ հետ տարած էինք լեռան վրայ—արածել և նոցա կաթովն ու բրդովը տասնեակ տարիներ ապրել։ Բայց ցաւալին այն էր, որ այդ պաշարման միջոցին մեր մէջ յիմար ու յամառ վէճ մը ծագեցաւ. ոմանք կպահանջէին, որ ամբողջս ալ թող տանք Տիզկինը և գնանք ամրանանք Խութի-Տէրէսին մէջ, ուր կարելի էր միշտ ապահով մնալ. իսկ ոմանք ալ կպնդէին, թէ պէտք է մնալ, որպէսզի ամօթալի պարտութեան մ՝առիթ չի տրուի, և այլն։ Եւ այսպէս քանի որ վէճը կսաստկանար՝ այնքան և պաշարումը կխստանար, ու նոքա հետզհետէ նոր-նոր ոյժեր կստանային, մինչև որ Խութի գնացողներն իրենց ընտանիքներով միասին զինու զօրութեամբ ճեղքեցին օսմանեան բանակը և անցան գնացին դէպի Խութի-Տէրէսին. իսկ մնացողներէս ալ մէկ մասը տեսնելով ոյժի պակասիլը, մանաւանդ որ Տիզկինն իր հրաշալի և աներևոյթ թընդանօթներով չօգնեց մեզի՝ անձնատուր եղանք, որմէ յետոյ օսմանցիներն առիթէն օգտուելով՝ վերջնական յարձակումով մ՝առին Տիզկին-Պապան, որու վրայ ապաստանողներէն մեծագոյն մասը զլորեցին ժայռերէն վար և սպանեցին»։

Օսմանցիներն այսպիսի յաղթութիւն մ՝ընելուց յետոյ, բոլոր ոյժով դիմեցին դէպի Խութի-Տէրէսին, և տակաւին Հալլորու ս. Կարապետ վանքը չհասած՝

ճանապարհին ուժգին դիմադրութեան մը հանդիպեցան։ Դա Միրագեաններն էին, որ Ալանաց հետ միանալով՝ թոյլ չէին տար օսմանցիներուն մուտք գործել ս. Կարապետ վանքը։ Օսմանցիներն այս անակնկալ դիմադրութեան հանդիպելով՝ ստիպուեցան բանակ դնել լեռան բարձունքը, առանց սակայն վար իջնելու, որ Մնձուր գետի աջ ափին վրայ էր։

Այս վիճակի մէջ մնացին օսմանցիներն ամբողջ երեք-չորս օր, մինչև որ Ալաններն ու Միրագեաններն իրենց ոյժերը դասաւորելին և աւելի ևս ամրացուցին Խութի-Տէրէսին, որ տակաւին խառն վիճակի մէջ էր։ Եւ երբ նոքա ամեն ինչ կարգի դրին՝ վանքէն վեր, ուղիղ թշնամու բանակի վրան յարձակեցան. բայց որովհետև իրենք ձորի մէջ լինելով չէին կարող կարգին պատերազմել՝ տեղի տուին օսմանեան բանակին և քաշուեցան անցան Մնձուր գետի ձախ կողմը, անտառապատ լեռան մը վրայ։ Իսկ օսմանցիները, կարծելով որ նոքա արդէն փախուստ տուին՝ մեծ աղմուկով իջան ձորի մէջ և սկսեցին հալածել Ալաններուն ու Միրագեաններուն։ Այս վերջինները սակայն Մնձուրի միւս ափէն սկսեցին կատաղի հրացանաձգութիւն մը օսմանեան բանակին վրայ։ Հրամանատար փաշան բանակի մէկ մասը թողուց ձորի մէջ, որ աշխատին Մնձուր գետն անցնել, իսկ միւս մասն ալ իր հետ առնելով՝ բարձրացաւ դէպի վեր և ամրացաւ վանքին մէջ, ուրկէ իր հետ բերած լեռնային թնդանօթներովն սկսեց ռմբակոծել դիմացի սարերը, ուր ամրացեր էին թշնամիները. բայց ի զուր, որովհետև Միրագեաններն ու Ալանները, որոնց հետ ի վեր-

ջոյ խառնուեցան նաև ճիպանցի քաջամարտիկ քրդերը՝ դարանամուտ եղած էին մերկարմատ ծառերու խոռոչներուն մէջ և ժայռերու յետև ու ոչ որի թոյլ չէին տար, որ Մնձուրն անցնի։

Օսմանցիները միայն Մնձուրն անցնելու համար մեծ կորուստ տուին, և դարձեալ չի յաջողեցան։ Նոցա մէջէն ալպանացի հազարապետ մը, օսմանեան դրօշակն իր ձեռքն առած՝ մեծ դժուարութեամբ անցաւ Մնձուրի միւս կողմը՝ «փատիշահըմ չօգ եաշա» գոռալով, սակայն իր յանդգնութեան համար գերի բռնուեցաւ։ Քրդերն ստիպեցին նրան՝ որ թքնէ օսմանեան դրօշակին վրայ. բայց նա յանձն չառնելով այդ—կարծելով որ յաղթութիւնն արդէն իրենց կողմն է,—բարձր ապառաժներէն վար գլորեցին։

Օսմանցիներն այսպէս մինչև երեկոյ անյաջող կռիւ մղելուց յետոյ զինադադար ըրին, զգալով միանգամայն իրենց անկարողութիւնը մինչև ԽութիՏէրէսին հասնելու, որու համար յառաջ խաղացեր էին. որովհետև իրենց զինուորներէն մէկ մասը կոտորուած էր Տէրսիմի զանազան մեծ ու փոքր ընդհարումներու ժամանակ, մէկ մասն ալ տեղւոյն կլիմային անսովոր լինելով՝ ծանր հիւանդացեր էր։ Վերջապէս այդ օրն այլևս վերջին օրը պիտի լինէր։ Նոքա վաղուց բարձրագոյն հրաման էին ստացեր՝ թող տալու համար Տէրսիմի վտանգաւոր կռիւները, որ թէև ինքնին փոքր՝ բայց մեծ-մեծ վնասներու և աւելի մեծ կռիւներու առիթ կդառնար։ Բայց ինչպէս պիտի անցընէին այդ գիշերը, որ վրայ կհասնէր։ Հրամանատար փաշան կկասկածէր գիշերային յարձակումէ, որ թերևս ընէին տէրսիմցիներն, օգտուե-

լով գիշերուայ մթութենէն և տեղւոյն դիրքէն, մանաւանդ որ այս վերջինը անպատասխ էր օսմանցիներուն համար, որովհետև ընդամենը չորս հազար զինուոր ունէին այդտեղ Ս. Կարապետի վանքին մէջ ամրացրած։ Նոքա թէև վանքին մէջ ամրացած էին որպէս բերդի մէջ, բայց այնու ամենայնիւ դրութիւնն անտանելի էր։ Փաշան վերջնական միջոց մ'ունէր, որ ի գործ դրաւ. այն է՝ անտառին մէջ չորս-հինգ հարիւր տեղ մեծ-մեծ խարոյկներ վառել տուեց՝ թշնամիներուն վախեցնելու համար։ Բայց մեծ եղաւ նորա արմանքն ու զարմանքն, երբ տեսաւ, որ տակաւին իրենց խարոյկները լիովին չվառած՝ թշնամիներն ամբողջ անտառները հրդեհեցին։ Փաշան վախենալով, որ տէրսիմցիներն արդէն պատրաստ են յարձակում ընելու՝ գիշեր ժամանակ թող տուաւ վանքը և առանց ձայն-ձուն հանելու հեռացաւ գնաց մինչև Խոզաթ, ուրկէ այլևս չի վերադարձաւ և ոչ մի զինուոր կռիւ մղելու դիտաւորութեամբ։

Հրամանատար փաշան, որ նախօրօք, այսինքն Տուժիք-Պապան գրաւելուց անմիջապէս յետոյ, հեռագրած էր սուլթան Ապտիլ Համիտ Բ.-ին, թէ «Տէրսիմ գալէլէրի ալընտի, վէ իսլահաթ գասլուլ օլունտի» (Տէրսիմի բերդերն առնուեցաւ և հպատակութիւնն ընդունուեցաւ), այլ ևս իր վերջին պարտութեան մասին ոչինչ չի տեղեկագրեց նորան, այլ այնպէս հասկացուց, որ իբր թէ Տէրսիմն այլևս բոլորովին նուաճուած ու հպատակած է, որմէ յետոյ սուլթանը Տէրսիմը առանձին նահանգ հրատարակեց, և Խոզաթը, որ 4—5 հարիւր տներէ բաղկացեալ սոսկ գիւղ մ'էր՝ նահանգական քաղաքի վերածեց, որու

մէջ ընդ միշտ պատրաստ կմնային երեք-չորս վաշտ վարժ ու կանոնաւոր օսմանեան զինուորներ։ Խօզաթը նահանգական քաղաքի վերածուելով միևնոյն ժամանակ նա «գայթակղութեան քար» դարձաւ ամբողջ տէրսիմցի լեռնականներու համար։ Տէրսիմցիներն իրենց ոյժերն առանձին-առանձին խմբերու բաժանելով՝ սկսեցին կանոնաւոր ապստամբութիւն ամենուրեք Տէրսիմի հպատակած կողմերը, որոնց օրինակին հետևեցին նաև նոքա, որոնք նախապէս առերեսս հպատակութիւն խոստացած էին օսմանեան կառավարութեան։ Եւ այս ասպատակային խմբերն այն աստիճան յանդուգն էին, որ յաճախ կարշաւէին Խօզաթի, Փախայ և Ղըզըլ-Քիլիսէի վրայ, կխողխողէին կառավարական պաշտօնեաները և կթալէին ամբողջ զօրանոցներն ու ռազմամթերանոցները և առհասարակ կառավարութեան բոլոր գոյքերը։ Իսկ կառավարութիւնը իր բազմաթիւ զօրքերով հանդերձ դարձեալ անկարող էր հալածելու այդ ասպատակային խմբերը, որովհետև նա, կղզիացած միմիայն գաւառական քաղաքներու մէջ՝ գրեթէ անկարող էր քայլ մ'իսկ հեռանալ այն տեղերէն։

Սոյն դրութիւնը շարունակուեցաւ ամբողջ 6—7 տարիներ, մինչև որ սուլթանն զգաց, թէ իր մղած այնչափ երկար պատերազմներով ոչ միայն ապստամբ Տէրսիմը չի հպատակեցուց և օգուտ չի կարողացաւ ստանալ, այլ ընդհակառակը աւելի ևս բորբոքեց նոցա մէջ պատերազմական ոգին և փոխանակ օգտի՝ կրկնապատիկ և եռապատիկ վնաս հասցուց օսմանեան կառավարութեան։ Հետևարար տեսնելով, որ այլևս բոլորովին ի զուր է իր ջանքն ու ճիգը՝ ստի-

պուեցաւ Տէրսիմի նահանգը լուծել, այսինքն հպատակած կողմերը, ուր կային մեծ կամ փոքր կառավարիչներ՝ ենթարկել Տէրսիմի շրջակայ նահանգներու պատասխանատուութեան. օրինակի համար՝ Դերջան ու Խուզուչանը տուեց Երզնկայի միութասարիֆութեան (Կարնոյ նահանգ). իսկ Խոզաթի վիլայէթութիւնն իջուց միութասարիֆութեան (Քարբերդի վիլայէթին ենթակայ), և նրա իրաւասութեան տակ դրաւ Փախը, Մեծկերտը, Ղըզըլ-Քիլիսէն, Փերին և Զմշկածագը, որոնց մէջ կային և կան գայմագամ—կառավարիչներ։ Բայց Տէրսիմի արևելեան կողմէն քանի մը գիւղեր, որոնք շատ հեռու ընկած էին այն գիւղաքաղաքներէն՝ դրաւ Քեղուայ գայմագամութեան իրաւասութեան ներքոյ։ Իսկ Տուժիքն ու Խութի-Տէրէսին, որ տակաւին կշարունակէին իրենց ապըստամբ վարմունքը՝ մնացին բոլորովին անկախ։

Սուլթանն անկարող եղաւ վերջապէս սանձել այդ ափ մը լեռնականներուն, որոնք դեռ մինչև այսօր ալ կշարունակեն իրենց ասպատակային կեանքը։

Սուլթանն հասկացաւ, որ այլևս անկարելի է Տէրսիմը զինու զօրութեամբ հպատակեցնելով իրեն գործիք դարձնել, ինչպէս միւս քրդերուն ըրած էր, ուստի դիմեց վերջին միջոցին, որ նա վաղուց ծրագրած էր. այն է՝ ենիչէրիութիւնը վերահաստատել *Համիտիյէ-Ալէյի* անունով, որ արդէն բացի Տէրսիմէն, զօրաւոր կերպով կազմակերպուած էր ամբողջ Արաբիստանի և Քիւրտիստանի կողմերը։ Նա պատուիրակներ ուղարկեց Տէրսիմի ցեղապետներուն մօտ և նոցա իր պատուիրակներու բերնով շայլօրէն խոստացաւ տալ զանազան տիտղոսներ, շքանշաններ,

պաշտօնները ու վերջապէս լաւ-լաւ զէնքեր՝ եթէ յանձն առնեն իր հրամանները կատարել։ Ցեղապետներէն ոմանք խոպառ մերժեցին սուլթանի առաջարկը և հրաժարուեցան նորա խոստացած տիտղոսներէն և շքանշաններէն, իսկ ոմանք էլ թէև ընդունեցին, բայց երբ օսմանեան կառավարութենէն լաւ-լաւ զէնքեր ստացան՝ դարձեալ կաղմակերպեցին իրենց հրոսակային խմբերը և այս անգամ աւելի ևս լաւ կանոնաւոր ոյժերով յարձակուեցան իրենց շրջակայ գաւառներու վրայ և սկսեցին թալլել, այրել ու խողխողել։

Սուլթանը զարմացաւ ու զայրացաւ։ Նա այս անգամ քանի մը վաշտ զօրք և 8—10 հատ լեռնային թնդանօթներ յանձնելով Ֆազլի-Ֆէրիդ փաշային ու Տէվրիշ-Միւշիր փաշային՝ հրաման ըրաւ, որ երթան Տէրսիմ և հպատակեցնեն այդ անսանձ քրդերուն այնպէս, որպէս ըրած էին Պուլղարիստանի վերաբերմամբ։ Այս երկու բարձրաստիճան զինուորական փաշաները, որ պուլկարները կոտորելով հերոսացեր էին՝ սոսկալի կատաղութեամբ Կ. Պոլսէն ճանապարհ ընկան դէպի Տէրսիմ, և երբ հասան Ակնայ քաղաքը՝ բանակ դրին Եփրատի (Սև-Ջրի) աջ ափին վրայ (1887—1888 թ.), որ հետևեալ օրն սկսէին իրենց ստանձնած դահճի պաշտօնը կատարել։ Այդ օրն Ակնայ ականաւոր անձինք, ի միջի այլոց մեր ազգայիններէն քանի մը փորձառու մարդեր, ներկայացան փաշաներուն և նոցա յաջողութիւն մաղթեցին։ Բայց այդ բոպէին, երբ հայերն յաջողութիւն կմաղթէին՝ չի զլացան նաև ըսել, թէ յետ կեցէք ձեր դիտաւորութենէն, որովհետև ամբողջ Տէրսիմն իր անտառ-

ներով բնական անաւիկ բերդ մ'է։ Փազլի-Փէրիզ փաշան կարծելով, որ դոքա տէրսիմցիներուն հետ որևէ կապակցութիւն մ'ունին՝ դայրանալով կպատասխանէ. «Դուք գիտէք անունս ինչ է. իմ անունս Փազլի-Փէրիզ փաշայ է։ Ես Պուլղարիստանի ապստամբութիւնը զսպողն եմ, ես Պուլղարիստանն ամբողջ քանդողն եմ... Գնացէք ըսէք այդ ռաֆազի քրդերուն, թէ ձեր վրայ եկողը Փազլի-Փէրիզ փաշան է. երդում ըրած է նա, որ ձեր վերջին ճիճուն իսկ սրէ պիտի անցնէ։ Հաւատացէք ինձ, որ վաղուանէ սկսեալ դեռ երկու օր չանցած՝ պիտի տեսնէք, որ Տէրսիմն ամբողջ մոխրակոյտ մ'է դարձած. պիտի ռմբակոծեմ նոցա հոյակապ բերդերը և պիտի խորտակեմ նոցա եկեղեցիները, որոնց մէջ թերևս պուլղարներու նման խորհուրդներ կկազմեն մեր Տէվլէթի-Օսմանիէի դէմ։... Վերջապէս Տէրսիմի ամբողջ ծովերն արիւնով պիտի ներկեմ։ Ազատում չկայ, երդում ըրած եմ, որովհետև եթէ այս անգամ ալ անյաջող յետ դառնանք՝ եւրոպացիները խրպտի կկոչեն մեզի [1])։

Եւ արդարև, երկու օր չանցած՝ Փազլի-Փէրիզ փաշան և Տէվրիշ-Միւշիր փաշան բոլորովին անյաջող գլխիկոր յետ դարձան և գնացին դէպի Կ. Պոլիս և պատմեցին սուլթանին, թէ Տէրսիմն աննկարագրե-

[1]) Ծիծաղելին այն է, որ այդպէս բարձրաստիճան զինուորական փաշայ մ'երբ իր երկրի մէջ փոքրիկ ապստամբակային ցեղ մը զսպելու համար վաշտերով զօրքերու առաջնորդ կլինի՝ դեռ չգիտէ թէ ուրպիսի երկրի և ուրպիսի ժողովրդի հետ գործ ունի. նա առանց ուսումնասիրած լինելու Տէրսիմի աշխարհագրական դիրքը, նորա մէջ բնակող ժողովրդի կեանքը՝ կկարծէ թէ Տէրսիմը մեծ ու ընդարձակ երկիր մ'է, որտեղ կան հոյակապ բերդեր, եկեղեցիներ, ծովեր ու լճեր։

լի դիրք մ'ունի իր սոսկավիթխար լեռներով ու անտառներով։ Այդ անտառներու իւրաքանչիւր ծառն ու ճիւղն աննահանջ զինուոր մ'է օսմանեան բանակին դէմ պատերազմող։ Քանի այդ անտառները գոյութիւն ունենան՝ այնքան նաև Տէրսիմ անյաղթելի կը մնայ։ Սուլթանը վճռեց միանգամայն հրդեհել Տէրսիմի անտառները և բոլորովին մերկացնել նորա բարձրաբերձ լեռները։ Նա Տրապիզոնի գծով Պաթումէն ահագին քանակութեամբ քարիւղ (նաֆթ) փոխադրել տուաւ դէպի Տէրսիմ, որով կարողանայ իր նպատակին հասնել։ Բայց երբ այդ բոլորը պատրաստ ունենալով, սկսեցին գործածել Խուզուչանի ու Հար-Սանճագի կողմերէն, այսինքն երբ բոլոր քարիւղը սրսկեցին անտառներուն վրայ և սկսեցին հրդեհել՝ ի զարմանս ամենուն այս անգամ ալ բնութիւնն սկսեց հալածել օսմանցիներուն. օդն ամպեց, լեռները մռայլեցան, որու հետևեցաւ սոսկալի տեղատարափ կարկուտ ու անձրև և սաստկաբուք քամի մը, որ ի դերև հանեց օսմանցիներու ձեռնարկը։ Այս զարմանալի երևոյթը օսմանցիները բացատրեցին նորանով, որ Նախախնամութիւնը տէրսիմցիներու հետն է։ Սուլթանն ակամայ հանդարտեցաւ և որոշեց այլևս կանոնաւոր ու անպութ պատերազմներ չմղել տէրսիմցի լեռնականներուն դէմ, այլ եթէ կարելի լինի՝ շահել նոցա սիրտը, որն իր պետութեան համար շատ մեծ կարևորութիւն ունի։ Նա բաւականացաւ եղածով և աշխատեցաւ ամրացնել Տէրսիմի սահմանները, որ նոցա հրոսակային խմբերը չասպատակեն մահմեական գիւղերը և չթալլեն անց ու դարձ ընող կարաւանները։

Անցաւ մի երկու տարի ևս. բայց մինչև այդ

ժամանակ Շահ-Հիւսէյնի պէկ Բ.-ն իր վերջնական հրապատակութիւնն յայտնելով՝ Փլիմուրի (Խուդուշանի) գայմագամ նշանակուած էր։ Իսկ Օվաճուղի և Զար-Սանճագի ցեղապետներէն ոմանք ալ դանական տիտղոսներ ու սուլթանական շքանշաններ ստանալով՝ Համիտիյէ Ալիյէ գրուած էին, որոնց շատերն այս ու այն կողմ հպատակ Տէրսիմի գիւղաքաղաքներուն մէջ գայմագամութեան պաշտօն կվարէին։

Ճիշտ այդ ժամանակ, երբ հպատակ Տէրսիմի մէջ առ երեսս խաղաղութիւն կտիրէր՝ Խօզաթի շրջակայքն յանկարծ անախորժ դէպքեր պատահեցան, որոնց պատճառով Երզնկայէն երկու-երեք վաշտ զօրք, փաշայի մը (Փէրիդ?) հրամանատարութեան ներքև դրուած, ղրկուեցաւ դէպի Խօզաթ (1889—90 թ.)։ Բայց այս փաշան, որ կուզէր ժամ առաջ հասնել Խօզաթ, վստահելով հպատակուած ցեղերու աջակցութեանը՝ իր զօրքը ճանապարհ ձգեց Երզնկայէն Խուդուշանի և Օվաճուղի միջով դէպի Խօզաթ, փոխանակ Երզնկայէն Ակն, Կապան-Մատէն, Քարբերդ և ապա Խօզաթ ղրկելու, ինչպէս որ ասկէ առաջ կընէին՝ ճանապարհ չունենալնուն համար, որ սակայն եօթնապատիկ երկար էր քան Խուդուշանի և Օվաճուղի վրայով. այս ճանապարհով մէկուկէս օրէն կը հասնէր, այն-ինչ միւսով հազիւ ինը-տասը օրէն։

Երբ այս զօրքերը, Խուդուշանի մէջէն մտնելով Օվաճուղ, անցան Մնձուր լեռները և հասան Խաղաջուր լեռնագօտւոյն ստորոտները՝ Օվաճուղի ականաւոր ցեղապետներէն Տիապի աղան իր վեց հազար անկանոն (քուրդ) զինուորներով դիմաւորեց Երզնկայէն եկող Փէրիդ փաշային և նորան կրկին ու կրկին

յայտնեց իր հլու հպատակութիւնը, մանաւանդ շեշտեց իր անկեղծ հաւատարմութիւնն առ օսմանեան կառավարութիւնը, որ նա եռանդուն կերպով ցոյց տուած էր նախօրօք։ Իսկ Ֆէրիդ փաշան ընդունելով Տիապի աղային հլու յարգանքները՝ սկսեց պատմել սուլթանական կառավարութեան պատկառելի զօրքերու առասպելախառն քաջագործութիւններն ու մեծահոգիութիւնը, և յորդորեց նրան, որ խօսի բոլոր տէրսիմցիներուն՝ հաւատարիմ ու հլու հպատակ լինել սուլթանին։ Տիապի աղան, օգտուելով խօսակցութեան նիւթէն՝ խնդրեց Ֆէրիդ փաշայէն. «որովհետև սուլթանին ցոյց տուած հաւատարմութեանս համար Ահմէտ պէկը [1]) խիստ թշնամացեր է ինձ հետ, որ թերևս օր մ'արիւնհեղութիւններու առիթ դառնայ,—կխնդրեմ ձերդ վսեմութենէն, որ բարեհաճիք այսօր, այս բոպէիս և եթ, պատժել նրան։ Եւ որովհետև դուք անծանօթ էք տեղւոյն և դիրքին՝ ես իմ վեց հազար զինուորներովս կառաջնորդեմ ձեզի... կամ կսպանենք այդ Ահմէտ պէկին, կամ ողջ կբռնենք ու կուղարկենք սուլթանին, որպէս նուէր...»

Ֆէրիդ փաշան, որ այսպիսի տեղական օգնութիւն մ'երկինքը կփնտռէր ու գետինը գտաւ՝ իսկոյն զինուորական փողերն հնչեցնել տուաւ և զօրքը քշեց առաջ, դէպի Ահմէտ պէկի բնակավայրը։ Բայց Ահմէտ պէկը, որ նախ քան օսմանցի զինուորներու յառաջխաղացումն ինքը զանազան լրտեսներէ լսած

---

[1]) Ահմէտ պէկն Օվանուղի ամենաազդեցիկ ցեղապետներէն մէկն է, որ ունի 5—6 հազար զինուոր և որ մինչև այսօր տակաւին հպատակած չէ սուլթանին։

էր Տիապի աղային լարած դաւադրութիւններն իր դէմ, որ նա միանալով օսմանեան զինուորներու հետ, կառաջնորդէ նոցա դէպ իր գիւղերը՝ վայրկենապէս ի զէն կոչեց իր քաջամարտիկ քուրդ երիտասարդները, միանդամայն ստիպելով գիւղացիներուն, որ փութան գիւղերը դատարկել և իրենք քաշուին երթան անտառի խորքերը։ Գիւղացիները դեռ լեռը չի քաշուած՝ Ահմէտ պէկն իր հինգ հազար քրդերով ամբացաւ կարևոր կիրճի մը բարձունքները, որու մէջէն պիտի անցնէին թշնամիները։ Եւ երբ օսմանեան զինուորներն իրենց թնդանօթներով մտան սոյն կիրճի մէջ՝ Ահմէտ պէկն սկսեց վերէն կատաղի հրացանաձգութիւն մը դոցա վրայ, որոնք անակնկալի հանդիպելով՝ չէին կարող ոչ առաջ և ոչ յետ կամ կողմնակի ուղղութեամբ փախչել։

Անգամ մ'երբ միայնակ կճանապարհորդէի դէպի Խոզաթ՝ ճանապարհին ինձ ընկերացաւ զինուորական յիսնապետ մը, որ անձամբ մասնակից լինելով սոյն կռուոյն՝ պատմեց.

«...Սոսկալի կիրճ մ'էր այն, ուրկէ պիտ՝ անցնէինք Ահմէտ պէկին վրայ երթալու համար։ Կիրճը նեղ և բաւական երկար էր։ Նորա երկու կողմերը պատած էին կաղնի անտառներով, որոնց մէջ հազիւ թէ մինչև այդ օր մարդկային ոտքը կոխած լինէր։ Երբ մենք կիրճին մօտեցանք՝ մեզի առաջնորդող Տիապի աղան իր չախմախներով (զինուոր) յետ կեցաւ, ու մենք յառաջացանք Փէրիդ փաշայի պահանջմամբ։ Եւ երբ բոլոր զինուորներս մտանք կիրճին մէջ՝ այդ անթափանցելի ցանցերուն մէջէն յանկարծ սկսեցին կարկուտի նման տեղալ մեր վրայ հրացանի գնդակ-

ները։ Ֆէրիդ փաշան հրաման ըրաւ, որ կռուինք. բայց որո՞ւ դէմ. մեր առջև մարդեր չկային. անտառներու մէջ մենք ոչինչ չէինք տեսնար։ Այլ միմեանց յետևէ շարուած՝ մերկ ու նեղ ճանապարհին վրայ կեցած էինք. իսկ անտառներու մէջ դարանամուտ եղող քրդերը կգնդակահարէին ու անխնայ կսպանէին զմեզ։ Հրամանատար Ֆէրիդ փաշան սկսեց իր ռազմական հանճարներն ի գործ դել։ Նա հրաման արձակեց, որ հինգերորդ ջոկատը բարձրանայ կիրճէն վեր և շրջապատէ քրդերուն։ Հինգերորդ ջոկատը բարձրացաւ անտառներու մէջ, ուրկէ այլևս ոչ մի մարդ չի վերադարձաւ, գէթ պատմելու իրենց գլխին պատահած դէպքը։ Փաշան փողերը հնչեցնել տուաւ, հինգերորդ ջոկատէն լուր պահանջեց, սակայն ի զո՞ւր. ձայն չըկար։ Նա կրկին հրաման արձակեց, այս անգամ երրորդ ջոկատին, որ նա շրջապատէ քրդերուն և, ըստ կարելւոյն, օգնութեան հասնի հինգերորդ ջոկատին։ Երրորդ ջոկատն ալ բարձրացաւ, բայց խեղճը միևնոյն ճակատագիրն ունեցաւ՝ ինչ որ ունեցած էր հինգերորդ ջոկատը։ Ֆէրիդ փաշան յուսահատուեցաւ։ Նա իր ձիուն վրայ նստելով՝ աղաղակեց. «եավրուլարըմ, ճան դուրթարըն». (ձագուկներս, հոգի աղատեցէք), ու սկսեց փախչել։ Սրտաճմլիկ տեսարան։ Տիապի աղան, որ անկեղծ աջակցութիւն խոստանալով՝ մեզի առաջնորդած էր, տեսնելով մեր պարտութիւնը և Ֆէրիդ փաշայի փախուստը՝ իր վեց հազար քրդերով պաշարեց զմեզ և սկսեց սոսկալի կերպով զընդակահարել։ Եւ այդ բոպէին վայ նորան, ով որ կը յանդգնէր զէնքերով փախչել. այլևս նա ազատում չունէր այդ վայրենի քրդերու ձեռքէն։ Ով որ իր զէն-

քերն այդտեղ կիրճին մէջ թողնելով կփախչէր՝ կաղատուէր»...

Եւ ահա այսպէս Ահմէտ պէկն 8—9 հարիւր դինուոր կոտորելուց և նոցա (երկու վաշտի) բոլոր ռազմամթերքն երկու թնդանօթներով միասին աւար առնելուց յետոյ, փառաւոր յաղթութիւն մը տարաւ, որն այսօր առասպելներու կարգն է անցեր։ Իսկ սուլթանն իմանալով սոյն կռուի բոլոր հանգամանքները՝ Ֆէրիդ փաշային աքսոր ուղարկեց դէպի Եմէն՝ իր ինքնագլուխ յանդգնութեանը համար, որ առանց բարձրագոյն իշխանութեան լուր տալու՝ կռուի սկսած էր՝ քուրդ պէկի մ'ապաւինելով։

Սոյն կռուէն երկու-երեք ամիս յետոյ, օսմանեան չորրորդ բանակի միւշիրը դիմեց Խօզաթի միւթէսարիֆին, որ աշխատի սոյն կռուի ժամանակ դերի ընկած երկու թնդանօթներն Ահմէտ պէկէն յետ առնել։ Խօզաթի միւթէսարիֆը շատ մ'անյաջող փորձերէն յետոյ, ստիպեց Խօզաթի մէջ վերարնակած Գաբրիէլ աղային (քարբերդցի), որ երթայ Ահմէտ պէկէն յետ առնէ երկու թնդանօթները, հակառակ պարագային նա (Գաբրիէլ աղան) իր գլուխը պիտի տայ երկու թնդանօթներու փոխարէն։ Գաբրիէլ աղան, որ կարևոր համարում մ'ունէր տէրսիմցի բոլոր ցեղապետներուն առջև՝ ակամայ յանձն առաւ այդ դժուար գործը։ Նա դիմեց Ահմէտ պէկին և շատ մ'աղաչանքներէն յետոյ, երկու հազար օսմանեան ոսկի խոստացաւ միմիայն երկու թնդանօթներու փոխարէն. իսկ Ահմէտ պէկը խել մ'ընդդիմանալէն յետոյ, համաձայնեցաւ և երկու հազար ոսկին առնելով՝ դերի առած երկու թնդանօթները յետ դարձուց՝ ըսելով.

«տարէք այդ թօփերը, սուլթանին աշիշը մէջ կոխեցէք. իմ մէկ շէշխանէ հրացանս իր տասը թօփերու դէմ կարող է կենալ այս լեռներու և անտառներու մէջ։ Տարէք. եթէ միւս անգամ ձեռք ձգեմ՝ հաւատացէք, բոլորը մէկէն կփշրեմ»։

Այսպէս վերջացաւ այդ փոքրիկ կռիւն ալ, որ Ֆէրիդ փաշայի մ'անխոհեմութեան արդիւնքն էր։ Տէրսիմցիներն այնուհետև նկատի առնելով օրուան հարցը, որն օրէցօր սուր կերպարանք կստանար՝ ինքնաբերաբար խաղաղեցան, չնայելով որ հրոսակային փոքրիկ խմբերը դարձեալ այս ու այն կողմ կշարունակէին իրենց սովորական աւարառութիւնները։

ԾԱՆՕԹ.—Այս արիւնահեղ ընդհարումների պատմութիւնն, որ ես գրեցի, լսած եմ ժողովրդական ժամանակակից և ոչ-ժամանակակից զանազան պատմիչներէ, ականատես և առաջին ու վերջին ընդհարումներու մասնակից եղող սէյիտներէ, որոնք ամենքն ալ միմեանցմէ շատ քիչ տարբերութեամբ պատմեր են. մանաւանդ 1877 թ. ընդհարումի մասին լսած եմ բուն կռուին մասնակցող և առաջնորդող քրդերէ ու սէյիտներէ, որոնց հետ երկար ամիսներ առիթ եմ ունեցել ապրելու։

ՎԵՐՋ

ЕЖК.

22 MAR 2013

3393